



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐՎԱՆԻ ԱՐԱՄԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱՆ

ԵՎ

ՍԵՃ ԵՂԵՌՆԸ

(1915-1918թթ.)

Աշխատությունը հրատարակության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի և ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի որոշմամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր  
**Լ.Ա.Բարսեղյան**

Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918թթ.),  
Երևան, 2000, 309 էջ:

Գրքում արխիվային, օժանդակ աղբյուրների և գրականության համալիր քննությամբ լուսաբանվում են և վերլուծության ենթարկվում առաջին աշխարհամարտի տարիներին Ֆրանսիայի քաղաքական, դիվանագիտական, ռազմական և գաղափարաքարոզչական դիքորոշումներն ու քայլերը, որոնք առնչվել են Մեծ եղեռնի հետ:

Մենագրությունը նախատեսված է պատմության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողության, ասպիրանտների, երիտասարդ դասախոսների, մասնագետների, Մեծ եղեռնի հիմնախնդիրներով հետաքրքրվողների և ընթերցասեր լայն հասարակայնության համար:

Հայոց Մեծ Եղեռնի բավիղաշատ պատմության գիտական, ճանաչողական և արդիական կարևորությունը սերտորեն կապված է առաջին աշխարհամարտի տարիներին Ֆրանսիայի ռազմաքաղաքական, դիվանագիտական և գաղափարաքարոզչական ակտիվ և ծավալուն գործունեության հետ:

Այդ տարիներին էր, որ Ֆրանսիայի կառավարական շրջանակները՝ հայոց մեծագույն ողբերգությունը դարձնելով իրենց դիվանագիտության շախմատային բարդ ու բազմաքայլ խաղերում անխնա օգտագործվող և մշտապես գոհաբերվող զինվորներից մեկը, հանուն Ֆրանսիայի եսամոլ կայսերապաշտական ու շահադիտական նպատակների, հետևողականորեն անտեսեցին արևմտահայության ցեղասպանությունը կանխելու, նրան բնաջնջումից փրկելու և ապա սկսված Եղեռնի ընդգրկումները սահմանափակելու բոլոր այն հնարավորությունները, որոնք, անկասկած, իրականություն դառնալու և հաջողության հասնելու մեծ հավանականություններ ունեին:

Հայ ժողովրդի պատմության ողբերգական և ճակատագրական այդ կարճատև ժամանակահատվածը ակնհայտորեն ապացուցում է այն ցավալի ու դաժան իրողությունը, որ հայոց ցեղասպանության նկատմամբ Ֆրանսիայի որդեգրած քաղաքական դիրքորոշումների և հաշվարկների մեջ խաղաղ գոյակցել և զարմանալի անամոթությամբ իրար են հաջորդել, մի կողմից, հայ ժողովրդին փրկելու, նրա «ասպետական» բարեկամն ու ազատարարը լինելու մասին արված պաշտոնական բազմաթիվ երդումներն ու խոստումները, և, իրականում անտարբեր, մեղսակից և հայ ժողովրդի համար վնասակար քաղաքական, ռազմական ու դիվանագիտական քայլերն ու գործողությունները, մյուս կողմից: Սակայն պատմագիտական ու ճանաչողական անժխտելի կարևորություն ունեցող «Ֆրանսիան և Մեծ եղեռնը» հիմնահարցը, որը վերջին տարիներին Ֆրանսիայում հայոց ցեղասպանության շուրջը ծավալված մասշտաբային քաղաքական քննարկումների հետ կապված ձեռք է բերել նաև արդիական ու գործնական հնչեղություն, ցայսօր շարունակում է մնալ թե՛ ֆրանսիական և թե՛ հայ պատ-

մագիտության կողմից գրեթե չուսումնասիրված, իսկ շատ ա-  
ռումներով խոսքի և անմշակ վիճակում թողնված, կոնկրետ և  
փաստարկված, համակողմանի և ամբողջական վերլուծության  
ու քննարկման կարող խնդիրների շարքում:

Անշուշտ, խնդրո առարկա հիմնահարցի գիտական ու-  
սումնասիրվածության տխուր և անմխիթար այդ վիճակը չի  
կարելի դիտել պատահականության կամ պարզ անուշադրու-  
թյան արդյունք, քանի որ այն բացատրվում է ինչպես պատմա-  
կան, պատմագիտական ու աղբյուրագիտական, այնպես էլ  
քաղաքական պատճառներով և թելադրանքներով:

Իհարկե, պարզապես անհիմաստ և անհնար կլիներ ա-  
ռաջին աշխարհամարտի տարիներին լույս տեսած Ֆրանսիա-  
ցի և հայ հեղինակների աշխատությունների<sup>1</sup> մեջ փնտրել ու  
գտնել արտացոլումն ու ուսումնասիրությունն այն իրական  
պատկերի, որն արդյունքն էր հայոց ցեղասպանության նկատ-  
մամբ Ֆրանսիայի որդեգրած և իրականացրած քաղաքական,  
ռազմական և դիվանագիտական կոնկրետ քայլերի ու ձեռ-

<sup>1</sup> Doumergue Paul, L'Arménie sous le joug turc, Paris, 1915; Macler Frédéric, Autour de l'Arménie, Paris, 1917; Domergue Emile, L'Arménie, les massacres et la question d'Orient, Paris, 1916; Bareille Bertrand, Les Turcs, Paris, 1917; Les Alliés et l'Arménie, Paris, 1918; Aslan T, Arménie-France. Leurs relations depuis les temps les plus réculés, Paris, 1917; Andréassian Dikran, Comment un drapeau sauva quatre mille Arméniens, Paris 1916; D'Ahy K, La fin de la politique des massacres et l'heure du châtement, Lausanne, 1919; Barby Henry, Au pays de l'épouvente, Paris, 1917; Mandelstam André, Le sort de l'Empire ottoman, Lausanne, 1917; Morgan Jacques de, L'Arménie, instrument de paix mondiale, Paris, 1918; Aigard Jean, L'Arménie, la plainte arménienne, Venise, 1917; Bregaud J, L'Arménie qui agonise, Paris, 1916; Brézol Georges, Les Turcs ont passé par là, Paris, 1917; Meillet A, La nation arménienne, Paris, 1918; Ostrolog L, Le problème turc, Paris, 1917; Ostrolog L, Pour la réforme Justice ottomane, Paris, 1918; Pinon R, Un plaidoyer turc sur la question des massacres, Paris, 1918; Valloton B, Au pays de la mort, Neuchatel, 1918; Turabian Aram, Les volontaires arméniens sous les drapeaux français, Marseilles, 1917; Mauclaire Camille, Pour l'Arménie libre, Paris, 1918; Pinon René, La suppression des Arméniens, Paris, 1916; Macler Fréd, La France et l'Arménie a travers l'art et l'histoire, Paris, 1917; Macler Fréd, Autour de Cilicie, Paris, 1916; Morgan J. de Contre les barbares de l'Orient. Etudes sur la Turquie, Paris, 1918, Morgan J, Essai sur les nationalités, Paris-Nancy, 1917.

նարկների: Պարզ և հասկանալի է, որ «ազատարար» և հայ ժո-  
ղովրդի «փրկիչ» Ֆրանսիայի վարկն ու հեղինակությունն  
ամրապնդելու նպատակներով կյանքի կոչված այդ աշխատու-  
թյուններում չէին կարող տեղ գտնել հայոց ցեղասպանության  
ողջ ընթացքում պաշտոնական Ֆրանսիայի անտարբեր, ան-  
պատասխանատու, իսկ երբեմն էլ բնաջնջվող արևմտահայու-  
թյան համար ծանր ու վնասակար ազդեցություն ունեցած քա-  
ղաքական, ռազմական ու դիվանագիտական դիրքորոշումնե-  
րի, վճիռների ու քայլերի կոնկրետ ու փաստարկված գնահա-  
տականներն ու արժևորումները, որոնք ակնբախ կդարձնեին  
այն աղաղակող իրողությունը, որ հայ ժողովրդի ֆիզիկական  
բնաջնջումը հրապարակայնորեն դատապարտող և Գերմանի-  
ային այդ ոճրի գլխավոր պատասխանատու այսպանող  
Ֆրանսիան, հակառակ վարչապետ Արիստիդ Բրիանի և մյուս  
բարձրաստիճան պետական այրերի երեսպաշտ և քաղաքա-  
կան ցինիզմով տոգորված այն հավաստիացումների, ըստ ո-  
րոնց Ֆրանսիան «պարզապես անգոր է եղել և հնարավորու-  
թյուն չի ունեցել բռնելու թուրք ղեկավարության բարբարոս  
ձեռքը»<sup>2</sup>, իրականում, հանուն իր ծավալապաշտ շահերի, նա  
հետևողականորեն պայքարել և ծախողել է արևմտահայու-  
թյան բնաջնջումը կանխելու, սկսված ցեղասպանությունը դա-  
դարեցնելու կամ նրա ընդգրկումները սահմանափակելու, Մի-  
ջագետքի մահասփյուռ անապատներում հայտնված հայ տա-  
րագիրներին փրկելու պատմության կողմից իրեն ընձեռնված  
բոլոր ռազմական ու դիվանագիտական հնարավորություննե-  
րը, ինչպես նաև Անգլիայի, Ռուսաստանի և հայ ազգային-քա-  
ղաքական ղեկավարության կողմից այդ նույն գործառնությու-  
ններն ու բովանդակությունն իրենց մեջ պարունակող բոլոր ա-  
ռաջարկները, հրավերները և խնդրանքները: Բնական է, որ  
Ֆրանսիայի հեղինակությունն ամեն կերպ բարձրացնելու և  
նրան արդարացնելու նպատակներով գրիչ վերցրած ֆրան-  
սիացի գրեթե բոլոր հեղինակները պատերազմի պայ-  
մաններում չէին կարող և չէին ցանկանում շոշափել և պատմա-

<sup>2</sup> Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918). Recueil de documents, Paris, 1983, doc. N281, p.261.



կան ճշմարտության պահանջներին համապատասխան ուսումնասիրել մի այնպիսի հիմնախնդիր, որի բացահայտումը հղի էր Ֆրանսիայի միջազգային վարկին ծանր հարվածներ հասցնելու վտանգներով:

Ինչ վերաբերում է նույն տարիներին Ֆրանսիայում և ֆրանկոֆոնս երկրներում ֆրանսերեն լեզվով լույս տեսած և հայոց ցեղասպանության հարցերն արծարծող հայ հեղինակների հրապարակումներին, ապա նրանք, նախ, հավատալով Ֆրանսիայի՝ Հայաստանն ազատագրելու խոստումներին ու հավաստիացումներին, ձգտում էին լռության մատնել Ֆրանսիայի օգտին չխոսող ու նրան հեղինակագրկող բոլոր հարցերը, և ապա, նրան հաճոյանալու և սիրաշահելու համար ձայնակցում էին «արդարադատ», «ասպետական», «վեհանձն» ու հայ ժողովրդի «փրկիչ» երկրի մասին անդադար շեփոդող ֆրանսիական պետական քարոզչությանը՝ պատմական ճշմարտությունը հերքական անգամ զոհաբերելով քաղաքական նպատակահարմարության պատրանքային ըմբռումներին:

Դժվար չէ նկատել, որ հայոց ցեղասպանության նկատմամբ Ֆրանսիայի դիրքորոշման կոնկրետ և փաստարկված պատկերը վերհանելու յուրաքանչյուր փորձ ի սկզբանե դատապարտված կլիներ անհաջողության, նախ, այն պատճառով, որ առաջին աշխարհամարտի տարիներին Գերմանիայի դեմ անզիջում գաղափարաքարոզչական պատերազմ մղող Ֆրանսիան պարզապես կարգել էր այն, երկրորդ, որ այն չէր ընդունվի և քաջալերվի հայ ժողովրդի ազատագրումն ակնկալող գրեթե բոլոր ղեկավար շրջանակների կողմից: Վերջապես, Ֆրանսիայի իրական դերակատարությունն ամեն կերպ թաքցնելու և լռության մատնելու գործում խստորեն շահագրգիռ ֆրանսիական կառավարությունը «յոթ փականների» հետևում էր թաքցրել իր այդ գործունեությունն արտացոլող և բացահայտող բոլոր «վտանգավոր» փաստաթղթերը, և ոչ մի ցանկություն չունեն՝ հանուն պատմական ճշմարտության բացահայտման ու պարզաբանման, բաց անելու իր միջազգային հեղինակությանն ու վարկին անխուսափելիորեն մեծ հարված հասցնելու իրական սպառնալիքներ պարունակող այն արխիվները, ուր դատապարտված էին խնդրո հիմնահարցի հետ սերտ առնչու-

թյուն ունեցող և Ֆրանսիայի արտաքին գործոց, ռազմական, ռազմածովային նախարարությունների և այլ պետական գերատեսչությունների կոնկրետ քայլերի ու գործունեության մասին պատմող փաստաթղթերը և վկայությունները:

Պետք է արձանագրել, որ իր վարկանիշին ու հեղինակությանը սպառնացող հրապարակումները բացառելու նպատակով Ֆրանսիայի ձեռնարկած այս նախազգուշական քայլը շուտով վերածվեց հետևողականորեն հետապնդվող քաղաքականության, որը ընդհուպ մինչև 80-ական թվականները ժառանգեցին իրար հաջորդող անխտիր բոլոր ֆրանսիական կառավարությունները՝ չհրաժարվելով պատմագիտությանը մշտապես «սոված» պահելու որդեգրումներից: Նրանք կարևորելով Ֆրանսիայի միջազգային հեղինակությանը չվնասելու առաջնահերթությունը, ամեն ինչ արեցին իրենց արխիվները փակ պահելու և այնտեղ գետեղված վավերագրերը գիտական շրջանառությունից ու ուսումնասիրությունից թաքցնելու համար:

Անդրադառնալով ֆրանսիական պատմագիտությանը, հարկ է նշել, որ նա ավելի քան 60 տարի շարունակ առաջին աշխարհամարտի պատմության ուսումնասիրության հիմքում դնելով «ամտանտաֆիլ» կոնցեպցիան, մշտապես հավատարիմ է մնացել սեփական կառավարության գործունեությունը գունազարդելու, նրա հեղինակությունը սասանող հիմնախնդիրների ուսումնասիրությունից խուսափելու և հեռու մնալու թելադրանքին<sup>3</sup>: Նա արտակարգ համառությամբ և հետևողականությամբ ձգտել է, որպեսզի իր կողմից հրատարակված և գիտական շրջանառության մեջ դրած փաստաթղթային ժողովածուներում և ուսումնասիրություններում<sup>4</sup> տեղ չգտնեն

<sup>3</sup> St'u, Виноградов К.Б., Буржуазная историография первой мировой войны, М. 1962, стр. 4-120.

<sup>4</sup> St'u, Pingaud A, Histoire diplomatique de la France pendant la guerre, t.I-III, Paris, 1938-1940; Allard P, Les dessous de la guerre révélés par les comités secrets, Paris, 1932; Histoire des relations internationales, publiée sous la direction P. Renouvin, vol. I-VIII, Paris, 1952-1958; Charles-Roux F. Souvenirs diplomatiques d'un âge révolu, Paris, 1956; Poincaré R., Au service de la France. Neuf années de souvenirs, vol 1-10, Paris, 1926-1933; Suarez G., Briahd.

հայոց ցեղասպանության նկատմամբ Ֆրանսիայի որդեգրած ռազմաքաղաքական, դիվանագիտական ու գաղափարաքաղաքական դիրքորոշումներն ու գործունեությունն արտացոլող ու բացահայտող փաստագրական որևէ նյութ կամ պաշտոնական վավերագիր:

Այս ամենի լույսի ներքո հասկանալի է դառնում, թե ինչու դարիս 20-80-ական թվականների ֆրանսիական պատմագիտության մեջ պարզապես անհնար է գտնել թեկուզ և *մեկ* ուսումնասիրություն, ուր փորձ կարվեր պատասխանելու այն հարցերին, թե ի՞նչ տեղ է զբաղեցրել հայոց ցեղասպանությունը Ֆրանսիայի քաղաքական կյանքում, թե ի՞նչ ռազմաքաղաքական նպատակադրումներ են հետապնդել Ֆրանսիայի կառավարող շրջանակները՝ որդեգրելով հայոց ցեղասպանության դատապարտման լայնամասշտաբ քարոզչությունը, թե այդ ճանապարհով նրանք ի՞նչ խնդիրներ են լուծել:

Իրերի այս վիճակը անփոփոխ մնաց մինչև 80-ական թվականները, երբ Ֆրանսիայում արագ քայլեր կատարող ընդհանուր ժողովրդավարության և «հրապարակայնացման», ինչպես նաև դեռևս մինչև վերջ չպարզված ու չբացահայտված քաղաքական շահագրգռությունների ու թելադրանքների զորու, որոշակի և շոշափելի տեղաշարժեր արձանագրվեցին տասնյակ տարիներ ամուր փականքների տակ գտնվող ֆրանսիական տարբեր գերատեսչությունների՝ արտաքին գործոց, ռազմական ու ռազմա-ծովային նախարարությունների արխիվներում զետեղված նյութերի հրապարակման գործում:

Այս իմաստով հիրավի բեկումնային նշանակություն ունեցավ 1983 թվականին Արթուր Բեհլերյանի երկար տարիների անդուլ ջանքերի արդունք հանդիսացող ֆրանսիական արխիվներում պահվող վավերագրերի «Les Grandes Puissances, l' Empire Ottoman et les Arméniens dans les archives françaises

Sa vie, son oeuvre avec son Journal, vol. I-VI, Paris, 1938-1952; Glemenceau G, Grandeur et misère d'une victoire, Paris, 1930.; Bourgeois E et Paques G. Les origines et les responsabilités de la grande guerre, Paris, 1922; Renouvin P. La crise européenne et la grande guerre, Paris, 1934; Pichon J. Les origines orientales de la guerre mondiale, Paris, 1937; Ferro Marc, La grande guerre 1914-1918; Paris, 1969.

(1914-1918)» ժողովածուի հրապարակումը: Այդ արժեքավոր ժողովածուի լույս աշխարհ գալու շնորհակալ գործում որոշակի դեր խաղացին ֆրանսիական պատմագիտության մեջ ծանրակշիռ ուսումնասիրողի վաստակ ու համարում ունեցող և «հայկական հարցի նկատմամբ չմարող հետաքրքրություն ցուցաբերող» Պիեռ Ռենուվենը (1893-1974) և Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ժան Բատիստ Դյուտոզելը<sup>5</sup>: Նրանց «մշտական քաջալերանքի, բարեհաճության ու աջակցության» շնորհիվ գիտական շրջանառության մեջ դրվեցին պատմագիտությանը գրեթե ամբողջովին անհայտ և անծանոթ 757 փաստաթղթեր՝ Ֆրանսիայի արտաքին գործոց, ռազմական, ռազմածովային նախարարությունների և մի շարք այլ պետական կառույցների գործունեությունն արտացոլող զեկուցագրեր, հրահանգներ, հեռագրեր, նամակներ ու հուշագրեր, որոնք պատմագիտությանը հիանալի և աննախադեպ հնարավորություն են ընձեռնում աղբյուրագիտական և փաստավավերագրական *բավարար և անհրաժեշտ* հենքի վրա բացահայտելու և գիտական ուսումնասիրման առարկա դարձնելու առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի մեծագույն ողբերգության նկատմամբ Ֆրանսիայի որդեգրած և իրականացրած ինչպես ռազմաքաղաքական ու դիվանագիտական, այնպես էլ գաղափարաքարոզական գործունեությունը:

Ցավոք, պետք է նշել, որ մինչ օրս ո՛չ ֆրանսիական և ո՛չ էլ հայ պատմագիտությունը գրեթե ոչ մի փորձ չեն արել այդ հնարավորությունից օգտվելու համար:

Դեռևս դարասկզբին Ֆրանսիայում հրատարակված՝ Հայկական հարցին, հայերի կոտորածներին և ցեղասպանությանը նվիրված ավելի քան 400 գրքերի, ժողովածուների և հոդվածների մեջ իրենց գիտական արժեքով ու կարևորությամբ առանձնանում են 1960-1980-ական թվականներին գրված ուսումնասիրություններն ու մենագրությունները, որոնցից հատկապես Ժան Մարի Կառզուի «Օրինակելի ցեղասպանություն: Հայաստան», Իվ Տերնոնի «Հայերը: Մի ցեղասպանու-

<sup>5</sup> Les Grandes Puissances, l' Empire Ottoman et les Arméniens dans les archives francaises(1914-1918), Paris ,1983, p.x.

թյան պատմություն», Պ. դը Մուշեթի «Ռասիզմը հազար նկարներում», Ա. Տեր-Մինասյանի «Հայկական հարց», Ժերար Շալյանի և Իվ Տերնոնի «Հայերի ցեղասպանությունը», Արթուր Բեյլերյանի մի շարք հոդվածները, Սեդա (Կլեր) Մուրադյանի, Ա. Ասլանյան-Սամուելյանի և այլոց աշխատությունները<sup>6</sup>: Ի տարբերություն համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում հրատարակված սակավաթիվ գրականության<sup>7</sup>, դրանցում տրված է հայոց ցեղասպանության բուրբական քաղաքականության բազմակողմանի ու հիմնավոր ապացույցը:

1980-ական թվականներին հրատարակված աշխատությունները առանձնանում են իրենց երկու էական և բնութագրական կողմերով: Ամենից առաջ այդ տարիներին լույս տեսած ուսումնասիրությունների հեղինակները քննարկման ու պարզաբանման առարկա դարձնելով ցեղասպանության համար պատասխանատվության հարցը, նախ, հանգեցին այն տիրապետող կարծիքին, ըստ որի Թուրքիան հայոց ցեղասպանությունն իրականացրել է ինքնուրույն՝ առանց հաշվի նստելու իր դաշնակիցների, այդ թվում Գերմանիայի հետ, և ապա ցուցաբերելով անկողմնակալ գիտնականին վայել քաղաքացիական համարձակություն և սկզբունքայնություն, հաստատագրեցին, որ պատասխանատվությունից զերծ չեն մնում *առանց բաշխողության* բոլոր մեծ տերությունները, այդ թվում նաև

<sup>6</sup> G. Chaliand, C. Mouradian et A. Aslanian-Samouelian, Le crime de silence. Le génocide des arméniens, Paris, 1984; Beylerian A., L'impérialisme et le mouvement national arménien 1885-1890, Paris, 1975; Ternon Yves et Chaliand G. Le génocide des Arméniens, Bruxelles, 1980; Ternon Yves, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977; Hamelin et Bruin, La mémoire retrouvée, Paris, 1983; Jean-Marie Garau, Un génocide exemplaire. Arménie 1915, Paris, 1978; Ter-Minassian A., La question Arménienne, Paris, 1983; Ternon Yves, La cause arménienne, Paris, 1983; Souches P., Le racisme dans des milles images, Paris, 1976.

<sup>7</sup> Paillares Michel, Le Kemalisme devant les Alliés, Paris, 1922; Rodan Pierre, La Cilicie et le problème arménien, Paris, 1921; Veau Paul du, La passion de Cilicie, 1914-1922, Paris, 1954.

Ֆրանսիան<sup>8</sup>:

1980-ական թվականների ֆրանսիական պատմագիտությանը շահեկանորեն առանձնացնող երկրորդ հանգամանքը պայմանավորված էր այն նոր, աննախադեպ երևույթով, որ պատմական ճշմարտությանը հետամուտ ֆրանսիացի պատմաբաններն իրենց վերջին գործերում զգալի տեղ են հատկացնում թուրք պատմագրության և պաշտոնական քարոզչության կողմից ցեղասպանության իրադարձությունների կեղծարարության նպատակապաշտ մերկացմանն ու քննադատությանը: Նրանց տեսադաշտից դուրս չեն մնացել նաև 80-ական թվականներին Ֆրանսիայում ասպարեզ եկած այն թրքամետ հեղինակների գրքերը<sup>9</sup>, որոնցում փորձ է արվում հովանավորության տակ առնել հայերի ցեղասպանության անմիջական և գլխավոր ոճրագործներին, պաշտպանել հայերի տեղահանության իբրև թե հարկադրական բնույթի մասին թուրքական պատմագրության տեսակետը<sup>10</sup>:

Միաժամանակ, ֆրանսիացի պատմաբաններն ակտիվորեն մասնակցում են ցեղասպանության խնդիրներին նվիրված միջազգային գրեթե բոլոր գիտական ժողովների աշխատանքներին, ուր, գործընկերների դատին ներկայացնելով իրենց անվիճելի գիտական պրպտումների արդյունքները, կոչ են անում «հանուն ապագայի» և «մարդկության», կոտրել «հանցագործ լուրջությունը» հայոց ցեղասպանության շուրջը և պայքարել նրա միջազգային ճանաչման համար:

Հայ պատմագիտական մտքի ջանքերով այսօր առաջացել է մեծաքանակ և արժեքավոր պատմական գրականություն՝ մենագրություններ, փաստաթղթերի ու վավերագրերի ժո-

<sup>8</sup> Տե՛ս, Սահակյան Ռ.Գ., Հայերի ցեղասպանությունը և ֆրանսիական պատմագրությունը, Հայկական հարց, էջ 272-274, Եր. 1996, նույնի «1960-80-ական թվականներին Ֆրանսիայում լույս տեսած ցեղասպանությանը նվիրված աշխատությունների գնահատականի շուրջը», Եր. 1990թ.:

<sup>9</sup> Maleville George de, La tragédie Arménienne de 1915, Paris; Jean Paul-Roux, Histoire des Turcs, Paris, 1985.

<sup>10</sup> Տե՛ս, Ternon Yves, Enquête sur la négation d'un génocide, Paris, 1989, նույնի, Lettre ouverte à Bernard Lewis et quelques autres par Yves Ternon, -Lesile A. Davis, La province de la mort, Paris, 1994, p.9-27.

ղովածուներ, հուշագրությունների հրապարակումներ: Հայ պատմաբանները մշակել են հայոց ցեղասպանության աշխարհայացքային դրույթները, այն դիտարկել Օսմանյան կայսրության ներքին և արտաքին համալիր խնդիրների շարքում, պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսության և քաղաքականության, մեծ տերությունների դիրքորոշումների տեսանկյուններից:\*

Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերի ու ժողովածուների մեջ հատկապես առանձնանում են Մ. Ներսիսյանի առաջաբանով ու խմբագրությամբ 1966-ին լույս տեսած «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», 1965թ. Բեյրութում Գերսամ Ահարոնյանի խմբագրությամբ հրատարակված «Հուշամատենան Մեծ Եղեռնի», Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ 1972թ. Երևանում լույս տեսած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Ա. Փափազյանի կազմած «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի (1988), Ս. Ստեփանյանի խմբագրած «Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին» (հ.1, 1991 ռուս.) ակադ. Վ. Միքայելյանի կազմած «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը Թուրքիայում: Կայզերական Գերմանիայի ԱԳ նախարարության Քաղաքական արխիվի նյութերը» (1995, ռուս), և 1995թ. Երևանում ռուսերեն լեզվով լույս տեսած «Ռուսական

\* Միմոնյան Հ. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, 1988, նույնի, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից; Եր., 1991, նույնի, Անդրանիկի ժամանակը: Երկու գրքով: Գիրք Ա, Եր., 1996; Բարսեղյան Լ. Ա., Միջազգային հանրությունը դա տապարտում է հայոց ցեղասպանությունը, Եր., 1998., Նույնի. Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, Եր., 1998, Կառպետյան Մ, Հայոց Մեծ եղեռնը պատմագրության մեջ. Եր., 1993, նույնի, Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Եր., 1998, Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, Համբարյան Ա., Ստեփանյան Ս., Հայոց ցեղասպանությունը, Եր., 1995, Հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր, Եր., 1995, Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ., Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Եր., 1995 :

աղբյուրները հայերի ցեղասպանության մասին» ժողովածուները: ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արժեքավոր հրատարակություններից են «Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո» (Եր., 1996), և Արտեմ Օհանջանյանի կազմած «Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին» (Եր., 1997 ) ժողովածուները:

Մեծ եղեռնի հանդեպ մեծ տերությունների որդեգրած դիվանագիտական ռազմական և քաղաքական գործունեության խնդիրներն իրենց առավել ամբողջական ուսումնասիրությունն են գտել Ջ. Ս. Կիրակոսյանի, Ս. Հակոբյանի, Ս. Ստեփանյանի, Գ. Ահարոնյանի, Ռ. Գ. Սահակյանի, Ե. Կուրդինյանի, Գ. Գալոյանի, Ե. Սարգսյանի, Ա. Ջ. Կիրակոսյանի Ա. Նասիպյանի և այլոց աշխատություններում<sup>11</sup>, որտեղ փաստական հարուստ նյութերի օգտագործմամբ, նրանք հայերի ցեղասպանության հիմնահարցերը քննարկելով միջազգային քաղաքականության, դիվանագիտության և իրավունքի տեսանկյունից, բացահայտել և ապացուցել են հակասությունների

<sup>11</sup> Կիրակոսյան Ջ. Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1965; Նույնի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 70-ական թթ.», Ե. 1978; Նույնի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ.», Եր., 2, Եր. 1982-83; Акопян С. М., Западная Армения в планах империалистических держав, Ер. 1967г.; Սահակյան Ռ. Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ. Եր.1970; Նույնի՝ Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Եր. 1964; Նույնի՝ Ցեղասպանության պատմությունից, Ե. 1990; Степанян С. С., Армения в политике империалистической Германии в конце (XIX – начало XX в) Е.1975, Кургиян Е., Армянская проблема в международных отношениях, М.,1969, Գալոյան Գ. Պատմության քառույթներում, Եր. 1982. Саркисян Е. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIXв и начале XX века, Е. 1972г; Ահարոնյան Գ, Մեծ Երազի ճանքում վրա, Լուսինջու; Նույնի՝ Խոհեր հիսնամյակի ավարտին, 1915-1965, Բեյրութ, 1966, Киракосян А. Дж., Великобритания и армянский вопрос, Е. 1990; Նասիպյան Ա., Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923թթ. 1994; Սահակյան Ռ. Գ. 1915թ. հայոց ցեղասպանությունը: Ե. 1995թ; Եսայան Ա.Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Եր. 1965թ.:

մեջ միասնական և միասնության մեջ խիստ հակասական մեծ տերությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Գերմանիայի դիվանագիտության ողջ անբարոյությունը, ցույց տվել, որ Եվրոպայից ակնկալվող օգնության փոխարեն հայերը հանդիպեցին մեծ տերությունների ակնհայտ անբարյացկամությանը՝ թե՛ ցեղասպանությանն անմիջապես նախորդող, թե՛ ցեղասպանության, և թե՛ ցեղասպանությանը հաջորդող տարիներին, և հիմնավորել, որ մշտապես շահադիտական խնդիրներով առաջնորդվող տերությունները իրենցից տնտեսական, առևտրական, ֆինանսական և ռազմա-քաղաքական կախման մեջ զգելով Թուրքիային, այդ երկրում *շահագործման գլխավոր* օբյեկտ դարձրին նրա *հումքային* պաշարները և ոչ թե *մարդկային աշխատանքը*, որը և *կործանարար ազդեցություն ունեցավ արևմտահայության* ճակատագրի վրա:

Այս ակնառու և արժեքավոր ձեռքբերումների հետ մեկտեղ հայերի ցեղասպանության ուսումնասիրության մեջ դեռևս կան էական բացթողումներ, որոնց շարքում իր կարևորությամբ առանձնանում է առաջին աշխարհամարտի տարիներին հայերի գոյության ու փրկության հարցերի նկատմամբ Ֆրանսիայի որդեգրած և իրականացրած քաղաքականության պարզաբանման ու բացահայտման խնդիրը, առանց որի լուծման հնարավոր չէ վեր հանել այն դառը, սակայն պատմական, ուսուցողական ու արդիական նշանակություն ու կարևորություն ունեցող *ճշմարտությունը*, որ պատերազմի տարիներին «Ֆրանսիայի *սեփական* շահերը Մերձավոր Արևելքում *ավելի կենսական էին*, քան մի ամբողջ ժողովրդի *փրկությունն ու ազատագրումը*, իսկ մեր ջարդերը, արյունը, ավերակները և տառապանքները ֆրանսիական մամուլի «Ոճիր ու արկած» սունյակները, ոչ ավելին և ոչ պակաս, լցնելու դատապարտված մանրամասնություն էին միայն, որոնք Ֆրանսիայում ստեղծում էին միայն պլատոնական համակրանք»<sup>12</sup>, որ Ֆրանսիան «նպատակ չի ունեցել փրկել թրքահայությանն ինչ գնով էլ լինի, որ «այդ մենք ենք նրան վերագրել մեր ցանկությունները, և երբ իրականաց-

<sup>12</sup> Միսաքյան Ժ. Մոսուլը շահելով-մնացյալը մոռացան», «Յառաջ», Փարիզ 20-ը հոկտեմբերի, 1934թ.:

ված չենք տեսնել դրանք՝ ապա դավադրություն ենք որոնել», որ արևմտահայության փրկությունը և ազատագրումը Ֆրանսիայի համար *մի միջանկյալ և փոքրարժեք հանգամանք* է եղել, այնքան *փոքրարժեք*, որ նա հարկ եղած դեպքում՝ առանց տատանվելու և հանգստությամբ կանցներ ու անցել է մեր դիակների վրայով», որ «մեր եզրակացություններում մենք պետք է հստակ հասկանանք, որ «Մեր *Դատը* Մեծ պատերազմի *ծանրության կենտրոնը*, *պատճառն ու նպատակը* չի եղել», որ «մենք լինելով այնքան միամիտ և անհեռատես, թույլ ենք տվել» Ֆրանսիային ու մյուս տերություններին «մեզ դնել այնպիսի դրության մեջ, որ նրա *քարոզչությունը կարողանա խաբել մեզ*»<sup>13</sup>, որ Ֆրանսիայի նյութական ու քաղաքական շահերը նրա համար ավելի հրամայական եղան քան» արևմտահայության փրկության խնդիրը, քան «տրված խոստումները», որ վերջիններս Ֆրանսիայի համար «*գործնական* արժեքավորում կարող էին ստանալ և Ֆրանսիային մղել գործնական քայլերի, երբ դրանք դառնային նրա *անխոստովանելի շահամոլության* սպասարկուն»<sup>14</sup>, և վերջապես, որ Ֆրանսիան «նախընտրեց շահագործել հայուն միսը, անոր *ահավոր ողբեգությունը* որպեսզի հաջողացներ գրավումի և յափշտակութեան իր ծրագրերը և կերտեր «խաչակիր գաղութներ»<sup>15</sup>:

Աշխարհը վերաբաժանելու և նրա քաղաքական քարտեզին իրենց շահերից բխող տեսք ու սահմանագծում տալու նպատակներով արյունահեղ պատերազմի մեջ մտած թշնամի խմբավորումներից յուրաքանչյուրը քաջ գիտակցում էր, որ հաղթանակի հասնելու համար ինքը գորակոչի պետք է ենթարկեր ոչ միայն իր տրամադրության տակ գտնվող նյութական բոլոր միջոցներն ու պաշարները, այլև իր գաղափարական ու քարոչական բովանդակ ուժերն ու կարողությունները:

<sup>13</sup> Քաջագունի. Հ. Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Պեյրուք, 1986, էջ 68:

<sup>14</sup> «Յուշամատեան Մեծ Եղեռնի», Բեյրութ, 1965թ., էջ 120-121:

<sup>15</sup> Ահարոնյան Գերսամ, Մեծ Երազի ճամբուն վրայ, Լոս-Անջելոս, 1968, էջ 89-90:

Նախադեպը չունեցող աշխարհամարտի յուրահատկությունն այն էր, որ այս պատերազմը ժողովուրդների պատերազմ էր և կռվող կառավարություններից պահանջվում էր հսկայական ջանքեր գործադրել ժողովուրդների երևակայության և սրտի վրա ազդելու համար, նյութական ու ֆինանսական մեծ միջոցներ հատկացնել իրենց շահերը չեզոք երկրներում պաշտպանելու ու տարածելու, գործերի դյուքունը իրենց տեսակետներով բացատրելու համար, քանզի պարզ էր ու ակնհայտ, որ միայն չար ուժերի կործանման և ավելի արդար աշխարհի ստեղծման հեռանկարը կարող էր ոգևորել կռվող միլիոններին և իրենց ազգային ու պետական զարգացման խնդիրների լուծումն ակնկալող փոքր ու կախյալ ժողովուրդներին :

Ահա թե ինչու թշնամի կողմերը բոլոր միջոցները գործադրեցին իրենց հակառակորդին միակ հանցավոր և ոճրագործ ներկայացնելու, աշխարհասասան պատերազմի սանձազերծման ողջ պատասխանատվությունն ու մեղսակցությունը նրա վրա բարդելու համար:

Այս ասպարեզում առանձնապես մեծ եռանդ և ջանքեր քափեցին Անտանտի երկրները: Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների ղեկավարությունը հետևողականորեն և միաբերան պնդում էին, որ գերմանական բռնապետությունն է բոլոր դժբախտությունների աղբյուրն ու պատճառը, իսկ իրենք ադավնու պես մաքուր են և հրեշտակի չափ անմեղ: Գերմանիան սկսեց պատերազմը, խախտեց Բելգիայի չեզոքությունը, ոտնահարեց միջազգային պարտավորությունները, ճնշեց փոքր ազգերին, մտցրեց և կիրառեց պատերազմի բարբարոս ձևեր: Ի հակադրություն աշխարհակալության ձգտող Գերմանիայի, Դաշնակիցները՝ իրենց իսկ պնդմամբ և հավաստմամբ կռվում էին հանուն արդարության, ազատության և մարդկայնության:

Ֆրանսիայի ռազմական գործոց նախարար Պենլվեն 1917թ. նոյեմբերի 2-ին խորհրդարանում արտասանած իր ճառում շեշտում էր, որ «Ֆրանսիան ու իր դաշնակիցները կռվում են նրա համար, որ աշխարհին պարզեն արդարություն և

եղբայրություն»:<sup>16</sup>

Աշխարհամարտի առաջին օրերից իսկ միմյանց հասցեին ուղղված մեղադրանքներն ու այպանությունները, որոնք սկզբում կրում էին դիպվածային ու անկանոն բնույթ, շուտով վերածվեցին կուռ և սեփական համակարգն ու զինանոցն ունեցող, իրեն հատուկ ռազմավարությամբ ու մարտավարությամբ, ճակատամարտերով ու ռազմաբեմերով բնորոշվող զլոբալ գաղափարաբարոզական պատերազմի: Այդ պատերազմը հաջողությամբ մղելու համար պահանջվում էր գտնել և լայնորեն օգտագործել գաղափարական ու բարոյական այնպիսի ազդու միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռնեին թշնամի կողմերին արդարանալու և չքմեղանալու, ապահովելու համաշխարհային հանրային կարծիքի՝ առաջին հերթին չեզոք երկրների հանրային կարծիքի բարեհաճությունը, սեփական երկրների ներքին միասնականությունը, և ստեղծելու այն անհրաժեշտ գաղափարաբարոյական հենքը, առանց որի օգնության շատ դժվար կլիներ հաղթանակի ձեռքբերումը աշխարհի չորս ծեզերում մղվող արյունահեղ ճակատամարտերում:

Ուստի, առաջին աշխարհամարտը դարձավ ոչ միայն զենքի, իրար ոչնչացնող բանակների միջև մղվող արյունահեղ ճակատամարտերի, այլև խոսքի և գրչի, գաղափարների ու բարոյական արժեքների լայնածավալ օգտագործմամբ բնորոշվող առաջին քարոզական աշխարհամարտը:

Քարոզական պատերազմ մղելու վերոհիշյալ առաջնահերթ կարևորումների ծիրում էլ թշնամի կողմերի միջև բորբոքվեց թե՛ պայքար հայոց Մեծ եղեռնի շուրջը, որի քարոզական ներուժն ու գործառնություններն Անտանտի երկրների համար դարձան, իրոք, որ լուրջ գաղափարական զենք՝ իր թշնամուն ծանր և անամոքելի հարվածներ հասցնելու համար:

Արևմտահայությանը ցեղասպանությունից փրկելու համար ոչ մի կոնկրետ և գործուն ռազմական քայլեր կատարել չցանկացող, անմեղ և անպաշտպան հայ ժողովրդի համար ոչ մի զոհողության չգնացող Անտանտի երկրները ընդհանրապես, և Ֆրանսիան մասնավորապես, դրսևորեցին մեծ եռանդ ու

<sup>16</sup> «Վեն» Փարիզ, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1934 թ., էջ 2.:

ջանք արևմտահայության գլխին եկած ողբերգությունն իրենց գաղափարաքարոզչական գլխավոր զենքը դարձնելու գործում:

Հայկական հարցի և Մեծ եղեռնի նկատմամբ ֆրանսիական կառավարության և պետական այրերի «քարոզչական» շահագրգռման փաստը նկատի առնելով, ֆրանսիացի հայտնի լրագրող Միշել Փայարեսը շեշտում էր, որ առաջին աշխարհամարտի տարիներին, «երբ Ֆրանսիայի ղեկավարները փոքր ազգերի կարիքն ունեին, շոայում էին իրենց քաջալերանքներն ու խոստումները, հանձն էին առնում ազատագրել ճնշված ժողովուրդներին: Եվ այս հանձնառությունները մենք գտնում ենք ոչ միայն ֆրանսիական բոլոր թերթերի սյունակներում լցված՝ «Le Temps»-ի գլխավորությամբ, այլ բոլոր նախարարների ճաների մեջ»<sup>17</sup>:

Եվ իրոք, պաշտոնական Ֆրանսիան, թեև որոշ հապադումով, սակայն հասկացավ, որ հայոց ցեղասպանության և արևմտահայության ճակատագրի նկատմամբ որդեգրած իր անտարբեր և անմարդկային դիրքորոշման շարունակումը և տարածումը նույն ցեղասպանության դատապարտման քարոզչական ներուժի և կարողունակության վրա արդեն չէր բխում իր ծավալապաշտ և եսամոլ շահերից, ավելին, ըմբռնեց և գիտակցեց, որ հենց իր այդ շահերը նրանից հրամայաբար պահանջում են հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությունը դարձնել իր գաղափարա-քարոզչական զինանոցի գլխավոր և հարվածային ուժերից մեկը:

Պարզ ու հասկանալի էր, որ արևմտահայության ցեղասպանությունն՝ իր քարոզչական և գաղափարաքաղաքական հզոր ներուժով ու կարողունակություններով դարձավ Ֆրանսիայի կողմից մղվող գաղափարա-քարոզչական պատերազմի գլխավոր ուժերից մեկը ոչ՝ թե այն պատճառով, որ կատարվել էր մարդկության դեմ աննախադեպ ոճիր և հանցագործություն, որին զոհ էր դարձել աշխարհի հնագույն ու քաղաքակիրթ, միևնույն ժամանակ անմեղ ու անպաշտպան ժողովուրդներից մեկը, ոչ թե այն պատճառով, որ այդ ժողովուրդը կարիք ուներ

<sup>17</sup> Paillarés Michel, Le Kémalisme devant les Alliés, Constantinople-Paris, 1922, p. 335.

Ֆրանսիայի ու իր դաշնակիցների ռազմական վճռագրու միջամտության ու օգնության, և ո՛չ թե այն պատճառով, որ Ֆրանսիան ու իր դաշնակիցներն իրենցից կախված *ամեն ինչ* արել էին կամ փորձել էին *ամեն ինչ* անելու այդ ոճիրը կանխելու, և ապա արևմտահայությանը վերջնական ու լիալիր բնաջնջումից փրկելու համար, այլ միայն ու միայն այն պատճառով, որ ա) այդ ոճիրը կատարվել էր Ֆրանսիայի գլխավոր թշնամու՝ Գերմանիայի դաշնակից Թուրքիայի կողմից, բ) որ Գերմանիան իրենից կախված ոչ բոլոր հնարավորություններն օգտագործեց իր ոճրագործ դաշնակցի ձեռքը բռնելու և արևմտահայության ցեղասպանությունը կանխելու, և կամ բնաջնջվող հայության վիճակը թեթևացնելու համար, գ) որ Գերմանիան համարձակություն չունեցավ կիրառելու Գերմանիայի հասարակական կարծիքին ազատություն տալու քաղաքականություն, որը, գերմանացիների իսկ խոստովանությամբ, կարող էր «ստիպել անգամ Թուրքիայի նման ցինիկ կառավարությանը հրաժարվել հայերի նկատմամբ նման ոճրագործություն կատարելուց»<sup>18</sup>, դ) որ Գերմանիան հայոց ցեղասպանության հարցում որդեգրեց լռություն պահպանելու, իսկ քննարկման պարագայում՝ հայերին մեղադրելու դիրքորոշում:

Հայոց ցեղասպանության նկատմամբ Գերմանիայի որդեգրած քաղաքականությունը շատ բանով պատճառ դարձավ, որ իր թշնամիների դեմ մղվող գաղափարաքարոզչական պատերազմում նա կանգնի պաշտպանական ռազմավարությամբ առաջնորդվող դիրքերի վրա: Վերլուծելով Գերմանիայի կողմից գաղափարաքարոզչական պատերազմի մարտադաշտերում կրած պարտության պատճառները, գերմանական միսիոներական շրջանակների կողմից հրատարակվող «Քրիստոնեական աշխարհ» օրաթերթում 1919թ. մարտի 20-ին տպագրված «Գերմանիան և Հայաստանը» խորագիրը կրող հոդվածի հեղինակը առանձնացնում էր այդ երևույթի վրա լույս սփռվող հետևյալ հանգամանքները. «Վերջին տարիների մեծ պայքարում Գերմանիայի ճակատագրական սխալը գաղա-

<sup>18</sup> Германские источники о геноциде армян, т. 1, Ер., 1991, стр. 302.

*փարի թերագնահատումը եղապ... Գերմանիայի կառավարվող շրջանները ոչ արակտիկ երագող էին համարում և խղճում բոլոր նրանց, ովքեր... կարևորում էին բարոյական գործոնների դերը: Մինչդեռ պատերազմի իրողությունները ավելի քան խոսում էին այդ գործոնների կարևորության մասին: Սակայն... մենք չհասկացանք թե ի՞նչ իրական իշխանություն են իրենց մեջ պարունակում գաղափարներն ու բարոյական գործոնները...», որոնք ստիպում էին Գերմանիային պաշտպանվելու հզորագույն կռալիցիայից:*

Հարցերից մեկը, որտեղ բարոյական գործոնի որպես պայքարի կարևոր միջոցի անտեսումը դարձավ ճակատագրական, հայկական հարցը եղապ... Հայաստանը, Բելգիայի հետ մեկտեղ դարձավ այն փաստարկը, որի օգնությամբ արդարացվում էր Անտանտի արշավանքը Գերմանիայի դեմ, և նույնիսկ Ամերիկան, պատերազմ հայտարարելով Գերմանիային, պատճառ էր բռնում և վկայակոչում Հայաստանը<sup>19</sup>:

Ավելացնենք, որ Գերմանիայի ղեկավարությունը թերագնահատելով ու անտեսելով միլիոններին հավատ ներշնչող, նրանց կարեկցանքն ու համակրանքն առաջ բերող արդար դատերի էությունը բացահայտող գաղափարների և բարոյական գործոնների կարևորությունը, առաջնորդվելով «պետական ողջամտությամբ», որոշեց հանուն նման գաղափարների չվտանգել իր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ, և հայկական սարսափների հարցում որդեգրեց իր հակառակորդների գործը շատ բանով հեշտացնող հետևյալ պաշտոնական դիրքորոշումը. «Հայկական սարսափների հարցը Թուրքիայի ներքին գործն է, և մենք որպեսզի վտանգի տակ չղնենք մեր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ, պետք է ձեռնպահ մնանք դրանց քննարկումից: Դրա համար պետք է լուրջությամբ պահպանել: Իսկ եթե, հետագայում արտասահմանում Գերմանիային կմեղադրեն հայերի բնաջնջմանը մեղսակից լինելու մեջ, ստիպված կլինենք սկսել այդ հարցի քննարկումը, սակայն մեծագույն զգուշությամբ և զսպվածու-

թյամբ, ապացուցելով, որ թուրքերին այդ քայլին մղել են հայերը:

Իհարկե, գերադասելի կլիներ պահպանել լուրջություն Հայկական հարցում»:<sup>20</sup>

Սակայն շատ շուտով պարզվեց, որ Գերմանիան չուզեց անգամ պահպանել այդ լուրջությունը, և թուրքական կողմնորոշում ունեցող բոլոր թերթերը սկսեցին անարգել տպել կեղծ հաղորդագրություններ հայերի չարագործությունների և ապստամբությունների մասին: Գերմանական մամուլը «Միլլի» գործակալության կոպիտ կեղծիք պարունակող տեղեկատվությունը ընդունում էր վստահությամբ, տպագրում էր այն՝ էլ ավելի կոպտորեն կեղծելով փաստերը:

Պարզ էր ու բնական, որ արևմտահայության ցեղասպանության մասին ճշմարտությունն ամեն կերպ թաքցնող, կեղծող և արդարությունն ակնհայտորեն ոտնահարող քարոզչական զինանոցով գաղափարական պայքարի մեջ մտած Գերմանիային կարող էին սպասել միայն դեպի պարտություն տանող, նրան վարկաբեկող անհաջողություններ ու ձախողումներ, իսկ նրա բազմահմուտ և փորձառու թշնամիները, որոնք գիտեին իրենց հակառակորդի սխալներից ու թույլ տեղերից վարպետորեն օգտվելու արվեստի բոլոր գաղտնիքները, իրենց ձեռքից բաց չթողեցին Գերմանիային, որպես արևմտահայության բնաջնջման գլխավոր մեղադրյալ ներկայացնելու այդ հոյակապ հնարավորությունը:

Ահա թե ինչու ցեղասպանության զոհ դարձած արևմտահայության փրկության համար անհրաժեշտ ռազմաքաղաքական քայլերի դիմելու ոչ մի ցանկություն և շահագրգռվածություն չունեցող Անհատի երկրները ընդհանրապես, և Ֆրանսիան մասնավորապես, «հանցանք համարելով թուրքերի և գերմանացիների կրկնապատկող ոճիրներից և սխալներից չօգտվելը»,<sup>21</sup> դրսևորելով շահագրգիռ եռանդ ու ջանադրություն, «արևմտահայության մեծ մասի բնաջնջման

<sup>19</sup> Германские источники о геноциде армян, т. 1, Ер., 1991, стр. 300-302.

<sup>20</sup> Германские источники о геноциде армян, т. 1, Ер., 1991, стр. 35.

<sup>21</sup> “Echo de Paris”, 25 août, 1916.



*քարոզչությունը դարձրին Գերմանիայի վրա քարոզչական հարձակում գործելու ամենաազդու միջոցներից մեկը»:<sup>22</sup>*

Հարկ է նշել, որ առաջին աշխարհամարտի բաղկացուցիչ մասը կազմող գաղափարաքարոզչական պատերազմի պատմությունը համաշխարհային պատմագիտության կողմից անուշադրության մատնված և հիմնավոր ուսումնասիրության չարժանացած հարցերից է: Այդ երևույթը, անշուշտ, ունի իր բազում հայտնի և անհայտ պատճառները, որոնց մեջ թերևս կարելի է առանձնացնել այն անժխտելի իրողությունը, որ գաղափարաքարոզչական պատերազմը մղելու համար այդքան ջանք ու եռանդ թափած կողմերից և ո՛չ մեկը մինչ օրս նվազագույն իսկ շահագրգռվածություն չի ունեցել և երևի երկար ժամանակ դեռ չի ունենալու, որպեսզի բացահայտվեն, և համաշխարհային հանրության սեփականությունը դառնան այդ պատերազմի պատմության բոլոր էջերը: Նրանց համար ավելի քան պարզ է եղել և հիմա էլ պարզ է, որ իրենց կողմից քարոզչական նպատակներով հայոց ցեղասպանության անբարո և անմարդկային չարաշահման եղելության բացահայտումն իրենց բացի հեղինակագրկումից ուրիշ ոչինչ չի կարող բերել: Այստեղից էլ, ինչպես հայոց ցեղասպանության իրողությունը միայն ու միայն իրենց պրագմատիկ շահերի համար օգտագործած Անգլիայի և Ֆրանսիայի, այնպես էլ այդ իրողությունը դարձյալ իր պրագմատիկ շահերի համար ժխտող և կեղծող Գերմանիայի շահագրգռվածությունը՝ համաշխարհային պատերազմի պատմության այդ կարևոր, սակայն մեծ տերությունների անբարո և անամոթ քաղաքական կեցվածքն ու որդեգրումները բացահայտող եղելության պատմության իրական պատկերը վերհանող էջերը մոռացության թանձր շերտերի մեջ մշտապես թողնելու գործում:

Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին անդրադարձող և դրանք գիտական վերլուծության ենթարկող հայ պատմագիտությունը, թեև չի ունեցել մեծ տերությունների պատմագիտական միտքը կաշկանդող վերոհիշյալ քաղաքական գործոնների արգելքները, այդուհանդերձ, ցայսօր, Մեծ ե-

ղեռնի քարոզչական օգտագործման վերաբերյալ մի մնայուն և ծանրակշիռ գործ չի ստեղծել, իսկ կատարվածն էլ շատ հաճախ կրել է դիպվածային, ոչ համակարգված անդրադարձների և մեկնաբանությունների խճանկարի բնույթ, և չի դիտվել որպես ինքնուրույն ու հիմնավոր ուսումնասիրության արժանի պատմական իրողություն:

Ցավոք, ցայսօր լուրջ և փաստարկված ուսումնասիրության առարկա չի դարձել Հայկական հարցի և Մեծ եղեռնի նկատմամբ առաջին աշխարհամարտի տարիներին Ֆրանսիայի գաղափարաքարոզչական քաղաքականությունը, որի ուսումնասիրությունը, որպես իր ինքնուրույն գործառնությունը ունեցող երևույթի, անշուշտ, բխում է ինչպես պատմագիտության առաջ կանգնած հիմնախնդիրները լուծելու հրամայականից, այնպես էլ խնդրի արդի քաղաքական կարևորության պահանջներից:

Բանն այն է, որ «Ֆրանսիական քարոզչությունը և Մեծ եղեռնը» հիմնահարցի անբավարար ուսումնասիրվածությունը պարարտ հող է ստեղծում պղտոր ջրում ձուկ որսալ ձգտող բոլոր այն «ուսումնասիրողների» համար, որոնք ջուր լցնելով թուրքական պետական քարոզչության և նրա հավատարիմ ծառա՝ թուրք պատմագիտության ջրաղացին, ջանք չեն խնայում գլխիվայր ներկայացնելու Ֆրանսիայի ողջ քարոզչությունը կապված հայոց ցեղասպանության դատապարտման հետ, և հատկապես, կեղծելու հայոց ցեղասպանության եղելությունն իրոք որ անժխտելիորեն ապացուցող ֆրանսիական քարոզչության կողմից շրջանառության մեջ դրված փաստաթղթային ժողովածուն, և ցույց տալու, որ 1915-1918թթ. ֆրանսիական քարոզչության կողմից հայոց ցեղասպանության իրողությունն ապացուցող փաստերն ու վկայությունները «կեղծ են և անհիմն», որ դրանք չեն արտացոլում իրականությունը, որ դրանք կյանքի են կոչվել միմիայն «ռազմաքաղաքական քարոզչության կարիքները բավարարելու նկատառումները ելնելով»<sup>23</sup>:

<sup>23</sup> Maleville Georges de, *La tragédie Arménienne de 1915*, Paris, 1988, p. 68-70.

<sup>22</sup> Германские источники о геноциде армян, т. 1, Ер., 1991, стр. 170.

Անժխտելի է, որ գիտական և արդիական կարևորություն ունեցող այդ հիմնախնդրի լուծումով է միայն, որ մենք կկարողանանք նախ, «իրապաշտորեն գնահատել *անուշ խոսքերն ու դառն իրականությունները*,... այդ հիման վրա դառնալ քաղաքականորեն ավելի իրատես, ... այլևս չտարվել պարագայական, քարոզչական նպատակներով արված, հաճախ ոչ մեր շահերից ելնող, արտահայտություններով և սնամեջ խոստումներով», որ մենք, նախ, կկարողանանք սահմանազատել, թե «Ֆրանսիացի հայասեր լրագրողի կամ անկեղծ մտավորականի՝ մեր դատին ի նպաստ արված արտահայտությունը կամ քայլը գովելի ու հաճելի, օգտակար բաներ են», և ապա հասկանալ, որ «*Ֆրանսիայի առանձնաշնորհյալ ընկերությունների շահերը շատ ավելի կարևոր էին ֆրանսիայի համար, քան փոքր ազգերի ոչ միայն պետություններն, այլև գոյությունն իսկ*»<sup>24</sup>, և երկրորդ՝ ըմբռնել այն տխուր և անողորմ իրողությունը, որ «*Հայկական ողբերգության պատասխանատուն Անտանտի երկրների անսանձ պրոպագանդն է*: Նրանք հայերին վստահեցրել էին թե իրենց քիկունքին կանգնած են օտար կառավարությունները, որոնք պատրաստ են արշավելու Օսմանյան կայսրության դեմ: Նրանց երևակայությունը «սևեռված էր Հայաստանը ազատագրելու համար պատրաստ կանգնած օտար բանակների բազմության վրա: Նրանք իրենց ճակատագիրը վստահել էին մի *պատրանքի*: Նրանք չէին կարողացել հասկանալ, որ իրենք զոհեր են *անպատասխանատու զգացումների և անխիղճ քաղաքականության*»<sup>25</sup>, և երրորդ՝ շատ բանով կօգնի ճիշտ կողմնորոշվելու և հստակ պատկերացնելու, թե ինչու ֆրանսիական կառավարությունն ամեն ջանք թափեց, որպեսզի 1998թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի պառլամենտի ստորին պալատի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման մասին որոշման մեջ տեղ չգտնեն պատգամավորներ Ֆուշեի, Ռոշեբլուանի, Բյումի, Լեուրայի, Սանտինիի և Պատրիկ Դեվեջյանի լրացումները, որոնք օրենքի

նախագագծին իրական բովանդակություն հաղորդելու անհրաժեշտությունից ելնելով, առաջարկում էին. 1) մատնանշել հայոց ցեղասպանության հեղինակներին, ինչպես նաև նրա ժամանակագրական սահմանները և տարածքային ընդգրկումները, 2) ապրիլի 24-ը ընդունել որպես ցեղասպանության հիշատակման օր, 3) Թուրքիայի անդամակցությունը Եվրոպական Միությանը պայմանավորել հայերի ցեղասպանության ճանաչմամբ, 4) հրավիրել Ֆրանսիայի կառավարությանը ակտիվ գործունեություն ծավալելու հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և մարդկության դեմ գործած այդ ոճրի զոհի հայ ժողովրդին վարձահատույց լինելու ուղղությամբ<sup>26</sup>, և վերջապես, ամեն ինչ արեց, որպեսզի Ֆրանսիայի Սենատը չքննարկի հայոց ցեղասպանությունը դատապարտող այդ օրենքի նախագիծը:

Արդ, պատմագիտական ու արդիական մեծ նշանակություն ունեցող «Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918թթ.)» հիմնախնդիրը լուսաբանելու ակնկալությամբ ձեռնարկած և հայ ընթերցողի դատին ներկայացվող մեր ուսումնասիրության համար աղբյուրագիտական ու պատմագիտական հենք են ծառայել փաստագրական հարուստ ու բնութագրական այն նյութերը, որոնք մեր կողմից ի հայտ են բերվել Ռուսաստանի արտաքին գործոց նախարարությունների, Հայաստանի պատմության պետական արխիվներում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում, հրապարակված փաստաթղթային ժողովածուներում, ժամանակի հայ և ֆրանսիական մամուլի էջերում և հուշագրային գրականության մեջ: Խնդրո առարկա հիմնահարցի հետ այս կամ այն չափով աղերս ունեցող աշխատություններում տեղ գտած արժեքավոր ձեռքբերումներն իրենց բաժին նպաստն են բերել քննարկվող շատ հարցերի պարզաբանման ու լուծման գործին:

Աշխատության առաջին՝ «Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1914-1916թթ.)» գլխում բացահայտվում ու պարզաբանվում են

<sup>24</sup> Գերսամ Ահարոնյան, Մեծ Երազի ճանփան վրայ, Լոս -Անջելոս, 1986, էջ 85-86:

<sup>25</sup> «Հայրենիք», Բոստոն, 1944, հուլիս-օգոստոս, N 4, էջ 64:

<sup>26</sup> Assemblée Nationale.Compte rendu analytique Officiel. 1-ère Séance du vendredi 29 mai 1998, p 18-19.

հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրության համար էական նշանակություն ունեցող հետևյալ հարցադրումները .

ա) Ե՞րբ և ի՞նչ պայմաններում ծագեց Ֆրանսիայի օգնությանը արևմտահայությանը, առաջին հերթին՝ Կիլիկիայի հայությանը փրկելու խնդիրը,

բ) Ելակետային ի՞նչ սկզբունքների ու շարժառիթների թելադրանքով էր, որ հայության քաղաքական ղեկավարությունն՝ իր բոլոր երանգներով հանդերձ դիմեց Ֆրանսիային և ակնկալեց նրա ռազմաքաղաքական և դիվանագիտական աջակցությունն՝ արևմտահայության ֆիզիկական ոչնչացումը կանխելու և ապա նրան փրկության ափ հանելու համար,

գ) Որո՞նք էին սկսված հայավեր պատերազմում Ֆրանսիայի համար առաջնահերթ դերակատարություն ու կարևորություն ունեցող ռազմաքաղաքական նպատակներն ու խնդիրները, և ամենակարևորը՝ դրանց հետ ի՞նչ հարաբերակցության մեջ է գտնվել արևմտահայությանը ֆիզիկական բնաջնջումից փրկելու խնդիրը,

դ) Ի՞նչ դեր ու ազդեցություն ունեցան անգլո-ֆրանսիական և ֆրանս-ռուսական միջդաշնակցային հակասություններն ու մրցակցությունը Ֆրանսիայի կողմից վերապահ, մերժողական և ընդդիմադիր դիրքորոշումներ որդեգրելու գործում բոլոր այն ռազմական պլանների, ծրագրերի և դիվանագիտական առաջարկների նկատմամբ, որոնց իրագործումն իր մեջ պարունակում էր արևմտահայությանը ֆիզիկական բնաջնջումից փրկելու կամ ցեղասպանության ընդգրկումները զգալիորեն սահմանափակելու իրական հնարավորություններ, և վերջապես,

ի) ինչ քայլերի դիմեց Ֆրանսիան, որպեսզի հայ ղեկավար քաղաքական ուժերին և կազմակերպություններին դրդի որդեգրելու հայ ժողովրդի համար ոչ նպաստավոր հետևանքներ ունեցող քաղաքական վարքագիծ ու դիրքորոշում:

Երկրորդ՝ «Ֆրանսիական քարոզչությունը և Մեծ եղեռնը (1915-1918թթ)» գլխում փաստարկված վերլուծության են ենթարկվում ու արժևորվում հետևյալ հարցադրումներն ու խնդիրները. 1) շահադիտական ի՞նչ նպատակադրումներից էլնելով Ֆրանսիան կարևորեց և մեծ եռանդով իրականացրեց հայոց

ցեղասպանության դատապարտման քննադատությունը, 2) ի՞նչ փաստաթղթային հենքի վրա Ֆրանսիան կառուցեց Մեծ եղեռնի փաստն ապացուցող իր քարոզարշավը, որո՞նք էին փաստաթղթերի ժողովման, ընտրության և կարևորման նրա մոտեցումների չափանիշները, 3) ընդհանրության և տարբերության ինչպի՞սի եզրեր ուներ հայոց ցեղասպանության իրական պատկերը ֆրանսիական քարոզչության կողմից ներկայացվող պատկերի հետ, 4) ինչպի՞սի հիմնական հայեցակարգեր մշակեցին ֆրանսիական քարոզչությունը, որոնց օգնությանը և իրականացրին իրենց բազմապլան և բազմաբնույթ նպատակադրումները կապված հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության հետ, 5) Ֆրանսիան քարոզչական ինչպի՞սի համակարգ ստեղծեց հայոց ցեղասպանության դատապարտման արդյունավետ և գործուն քարոզչության համար, 6) ինչպի՞սի սպասելիքներ ու ակնկալիքներ ունեին Ֆրանսիայի կողմից ձեռնարկված հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությանն ակտիվորեն մասնակցած հայ քաղաքական և ազգային կազմակերպություններն ու ուժերը, 7) և վերջապես ի՞նչ դասեր կարելի է քաղել հայոց ցեղասպանության պատմության այս ծալքի ուսումնասիրությունից:

Երրորդ՝ «Ֆրանկո-գերմանական գաղափարական-քարոզչական պայքարը չեզոք երկրներում և Մեծ եղեռնը» գլխում հանգամանորեն քննվել և իրենց պարզաբանումն են գտել հետևյալ խնդիրները. 1) ինչպի՞սի ռազմաքաղաքական և գաղափարաբարոյական նպատակադրումներ էր հետապնդում Ֆրանսիան չեզոք երկրներում՝ հատկապես ԱՄՆ-ում և Շվեյցարիայում հայոց ցեղասպանության դատապարտման լայնամասշտաբ քարոզչությամբ, 2) քարոզչական ու դիվանագիտական ինչպի՞սի գործունեություն ծավալեց Ֆրանսիան հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության միջոցով չեզոք երկրների հասարակական կարծիքի և պետական դիրքորոշումների վրա ազդելու, Գերմանիային մեղադրելու և միջազգային մեկուսացման մեջ դնելու ուղղությամբ, 3) քաղաքական ու ոչ քաղաքական ինչպի՞սի ուժերի հետ դաշնակցեց և համագործակցեց Ֆրանսիան հայոց ցեղասպանության դատա-

պարտման քարոզչությունը ծավալելու և նրա օգնությամբ իր խնդիրները լուծելու համար, 4) ի՞նչ մասնակցություն ունեցան հայ քաղաքական ուժերն ու կազմակերպությունները չեզոք երկրներում Ֆրանսիայի ձեռնարկած հայոց Մեծ եղեռնի քարոզարշավին, 5) ինչպի՞սի ջանքեր և քարոզչական հարձակողական մեթոդներ ու միջոցներ գործադրեց ֆրանսիական քարոզչական ինդուստրիան գերմանա-թուրք կեղծարար հակաքարոզչությունը չեզոքացնելու և նրա սնանկությունը ապացուցելու համար, 6) և վերջապես ի՞նչ դեր ունեցավ Ֆրանսիայի կողմից հայոց ցեղասպանության հետևողական և արդյունավետ քարոզչությունը բարոյական ու գաղափարական պատերազմի դաշտում Գերմանիային պարտության մատնելու և հայ ժողովրդի մի զգալի հատվածին քաղաքական պատրանքների գերին դարձնելու գործում:

## Գլուխ I. Ֆրանսիան և Մեծ Եղեռնը (1914-1916թթ.)

### §1. Ֆրանսիայի պայքարը Կիլիկիայում ռազմաճակատ քաջելու դեմ և արևմտահայության գոյության խնդիրը

Արևմտահայության ֆիզիկական գոյության և անվտանգության հարցերի նկատմամբ Ֆրանսիայի ռազմաքաղաքական մոտեցումները դրսևորվեցին արդեն իսկ մինչ եղեռնյան փուլում (1914թ. նոյեմբեր – 1915թ. ապրիլ), երբ մի շարք հայ, գլխավորապես հեղափոխական կազմակերպություններ ու կուսակցություններ ուղակիորեն կամ տարբեր կարգի միջնորդների օգնությամբ դիմեցին ֆրանսիական իշխանություններին՝ Կիլիկիայի հայության անվտանգության խնդիրները Ֆրանսիայի մասնակցությամբ կամ աջակցությամբ լուծելու առաջարկ-խնդրանքներով:

Մինչ այդ ծրագիր-դիմումներից յուրաքանչյուրին անդրադառնալը, անհրաժեշտ է պարզել, թե հայ քաղաքական գործիչները ի՞նչ հաշվարկներից, քաղաքական ու ռազմական կողմնորոշումներից ելնելով շարունակաբար դիմում էին Ֆրանսիային՝ ակնկալելով օգնություն և աջակցություն:

Հայ քաղաքական ընտրանին, տեղի տալով իրեն համակած ոգևորությանը, մինչեղեռնյան ժամանակահատվածում քաղաքական իր ուղենիշը որոշելիս ելնում էր այն հաշվարկից և համոզմունքից, որ սկսված պատերազմում օսմանյան կայսրության պարտությունը լինելու է *կտրուկ* և *կայծակնային*: Բնական է, որ նման հաշվարկի սահմաններում արևմտահայության ֆիզիկական գոյության խնդիրը չէր կարող և չարժեվորվեց որպես առաջին աշխարհամարտում հայ ժողովրդի քաղաքական վարքագծի էական և առանցքային գերխնդիր: Բացառելով հարցի նման զարգացումը և իր քաղաքական ուղեգծի հիմքում դնելով Անտանտի *արագ, շուտափույթ հաղթանակի* և Օսմանյան կայսրության *նույնքան արագ ու անխուսափելի* պարտության կանխավարկածը, հայ քաղաքական ղեկավարությունն առնվազն 1914թ. վերջերից սկսած, գրեթե ա-

ռանց բացառության, ավելի քան վստահ էր, որ Թուրքիան ցանկության դեպքում անգամ չէր կարող իրագործել արևմտահայության ֆիզիկական ոչնչացումը, դրա համար չունենալով պարզապես ո՛չ ժամանակ, ո՛չ էլ հնարավորություն:

Այսպիսով, անհնար գտնելով հայության ֆիզիկական ոչնչացումը, հայ քաղաքական ղեկավարությունն անտրամաբանական համարեց արևմտահայության անվտանգության հարցը դարձնել իր քաղաքական գործունեության և վարքագծի առանցքը: Ավելին. նա չանսաց ինչպես հայ, այնպես էլ օտար, այն փոքրաթիվ ուղղամիտ և սթափ գործիչների ահազանգին, որոնք, հանձին անգլիացի մեծ հայասեր լորդ Բրայսի, խորհուրդ էին տալիս «հեռու մնալ ամեն տեսակի շարժումներից, հատկապես Կիլիկիոյ մեջ...», հասկանալ ու ընդունել, որ ողջ պատերազմի ընթացքում գլխավոր խնդիր պետք է համարվի հայության ֆիզիկական գոյությունը, չջարդվելը, որպեսզի, երբ լավ օրեր գան... շատվոր ըլլաք, որ օգտվիք և տիրապետիք»<sup>27</sup>, հանձին Արամ Անտոնյանի, որը գուժով պահանջում էր գործողության մեխ դարձնել «ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՌԱՋ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ»<sup>28</sup> կարգախոսը:

Հայ քաղաքական ղեկավարությունն Անտանտի երկրների ենթադրյալ արագ հաղթանակի պայմաններում իր *առաջնահերթ* խնդիրը համարեց, «սկզբունքի փրկությունը»,<sup>29</sup> այսինքն՝ «Հայությունից ավելի և հայությունից առաջ՝ Հայաստանը» կարգախոսը: Մինչ Մեծ եղեռնն ընկած շրջանի արևելահայության և արտասահմանի հայության քաղաքական կյանքում գերիշխանություն նվաճած վերոհիշյալ խնդիր-սկզբունքը հավասարապես հարազատ և ընդունելի դարձավ ինչպես հայ լիբերալ, այնպես էլ բոլոր հեղափոխական գործիչների և կազմակերպությունների քաղաքական մտածելակերպի և վարքագծի համար, ստեղծելով այն հենքը, որի վրա և կառուցվեց հայ ժողովրդի համար այդ շրջանում կենսական նշանակություն ունեցող գրեթե բոլոր հարցերում իր դրսևորումը

<sup>27</sup> Արշակ Չոպանյան, Նամակահի, Եր., 1980, էջ 121:

<sup>28</sup> ԳԱԹ, ԱԶՖ, քիվ 487-Արամ Անտոնյանը՝ Արշակ Չոպանյանին:

<sup>29</sup> ԳԱԹ, ԱԶՖ, ք 1, ց 1, քիվ 703:

գտած նրանց համագործակցությունը:

Արդեն 1914թ. վերջին նրանք ամբողջովին ապավինելով Անտանտի տերությունների «վեհանճնությանը» և «ասպետականությանը», սկսեցին «խոսել» և «գործել» կոչ անելով հայ ժողովրդին կանգ չառնել զոհաբերությունների ու զոհողությունների առաջ՝ ապացուցելու համար Անտանտին, որ հայ ժողովուրդն անմնացորդ նվիրումով կանգնել է նրա հռչակած սկզբունքների և հետապնդած գործի պաշտպանության դիրքերում:

Անտանտի արագ հաղթանակի և Թուրքիայի նույնքան արագ պարտության հաշվարկից և Հայաստանի մոտալուտ ազատագրության և Հայկական հարցի լուծման վստահությունից ելնելով, հայ քաղաքական բոլոր կազմակերպությունները նետվեցին կազմակերպելու և ամեն կերպ քաջալերելու հայության ռազմաքաղաքական մասնակցությունը պատերազմին՝ նպատակ ունենալով նախ՝ ցույց տալ հայ ժողովրդի նվիրվածությունն Անտանտին, երկրորդ՝ իրենց իսկ նպաստը բերել սեփական ժողովրդի ազատագրության գործին:

Դժվար չէ նկատել, որ նման մոտեցումների հիմքում ընկած էին, նախ՝ հայության համեստ հնարավորությունների և Հայաստանի ազատագրության գործում նրա նույնքան համեստ ներդրման չափազանցված գնահատականներն ու արժեվորումները, և երկրորդ, այն ցավալի իրողությանը հասու չլինելը, որ հայ ժողովուրդն իր ակտիվությամբ կամ կրավորակա-նությամբ ի վիճակի չէր ներգործելու միջազգային դիվանագիտության վրա կամ այն հայության շահերին ծառայեցնելու:

Անշուշտ, հայ ժողովրդի քաղաքական ղեկավարության կողմից ֆրանսիական կառավարությանն ուղղված դիմումներում տիրապետող հարցադրումների շեշտադրությունից հայության ֆիզիկական անվտանգության խնդիրը չէր վերանում կամ կորցնում իր առաջնությունը: Ուստի, որքան էլ մինչեղեռնյան շրջանում արված այդ դիմում-առաջարկներն արտաքուստ կարևորվում էին «Հայությունից առաջ և հայությունից ավելի Հայաստան» սկզբունքից բխող խնդիրները, դրանք, այնուամենայնիվ, առաջին հերթին, նկատի ունենալով կյանքի և դառն իրականության չանտեսվող հրամայականները, իրենց խորքում

միտված էին հրավիրելու, խնդրելու Ֆրանսիային՝ իր օգնությունն ու աջակցությունը բերել «Հայաստանից առաջ, Հայաստանից ավելի՝ հայությունը» գերխնդրի պահանջներից ելնող ամբողջ, հատկապես Կիլիկիայի հայությանը սպառնացող ֆիզիկական բնաջնջման աղետը կանխելու և նրան փրկելու գործին:

Այսպիսով, հայ քաղաքական կուսակցությունների ու ուժերի դիրքորոշումն Անտանտի երկրների նկատմամբ ընդհանրապես, Ֆրանսիայի նկատմամբ մասնավորապես, իրականում կանխորոշվում էր հետևյալ գործոններով.

ա) Գերմանական բլոկի կազմում Թուրքիայի պատերազմի մեջ ներգրավվելը Օսմանյան կայսրության կազմալուծումը դարձնում էր *անխուսափելի*. Ուստի հարկ էր խորհել ինչպես Արևմտյան Հայաստանի քաղաքական ճակատագրի, այնպես էլ արևմտահայության ֆիզիկական գոյությունն ապահովող ռազմաքաղաքական երաշխիքների մասին: Ընդ որում, սկսած 1915թ. ապրիլից, անվիճելի քաղաքական առաջնահերթ խնդիր էր դառնում արևմտահայության գոյապահպանությունը:

բ) Այն ժամանակ համաշխարհային քաղաքականության թելերը գտնվում էին Անտանտի, այդ թվում նաև Ֆրանսիայի ձեռքում: Այլ ուժ չկար, և հայ քաղաքական կուսակցությունները հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող վերոհիշյալ գերխնդրի լուծման իրենց հույսերը կարող էին կապել սոսկ Անտանտի երկրների հետ և պետք է դիմեին նրանց օգնությանն ու ողորմածությանը:

գ) Հայ քաղաքական ղեկավարության վարքագիծը որոշվում էր ազգային-ազատագրական պայքարի տրամաբանությամբ և օրինաչափություններով:

դ) Անցյալի աղետալի փորձը՝ 90-ական թվականների համիդյան ջարդերը և 1909թ. Ադանայի կոտորածը, պահաջում էր սբափ լինել, այլապես ուշ կլիներ: Ինքնապաշտպանական մարտերը դառնում էին պարտադրված պատմական անհրաժեշտություն: Ուստի, թե՛ այդ մարտերը հաջող կազմակերպելու և թե՛ հատկապես արևմտահայության ցեղասպանությունը կանխելու համար պետք էր գործուն և ազդու նեցուկ՝ Անտան-

տի ռազմական ներխուժման ձևով:

Ժամանակագրական առումով Ֆրանսիայի ռազմական ու քաղաքական աջակցությունն հայցող առաջին դիմումը Ֆրանսիայի պետական այրերի ուշադրությանն ու քննարկմանը ներկայացվեց արդեն 1914 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Վերակազմյալ հնչակյան կուսակցության անու-

նից: Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը դեռևս երիտ-թուրքական հեղափոխությունից առաջ Կիլիկիայում գտնվող իր անդամների և «Եվրոպացի հայասեր սպայի մը ձեռքով լուրջ ուսումնասիրություն կատարեցին Երկրի մեջ», և մշակեցին Կիլիկիայի ազատագրության ծրագիրը: Արդեն այն ժամանակ այդ կուսակցությունը, չկարողանալով այդ ծրագրի գործադրության համար «ստեղծել նյութական կարևոր զորություն», փորձեց Արշակ Չոպանյանի օգնությամբ պարզել, թե «պատեհ թոպեի մը ... Ֆրանսա տրամադիր պիտի ըլլա՞ր օգնելու և պիտի ուզե՞ր միջամտել՝ հոն կազմելու համար հայկական ինքնավար շրջան մը, ապագա հայ փոքրիկ պետութեան մը նախագիծ՝ ֆրանսիական հովանավորութեան տակ»: <sup>30</sup>

Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության ամենինց հեղինակավոր դեմքերից մեկը՝ Էռնեստ Լավիսը, այդ ծրագիրը ներկայացրեց «հայ ժողովրդի բարեկամ» և «իր երկրի հնագույն ավանդույթների հավատարիմ զավակ», Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Դելքասեին: Վերջինիս իր մերժողական պատասխանի դառնությունը փորձեց քաղցրացնել «ապագա խրախուսիչ կարելությունների մասին տարտամ համակրական արտահայտություններով»: <sup>31</sup>

Օսմանյան սահմանադրության հռչակումը, հայոց մեծամասնության խանդավառ վստահությունը և համակրությունն այդ «վերանորոգչական» շարժման նկատմամբ, և հատկապես Եվրոպայի միահամուռ հիացական ոգևորությունը Թուրքիան «արդիականացնող» երիտթուրքերի նկատմամբ,

<sup>30</sup> Ա. Չոպանյան: «Կիլիկեան երազը և Ալեքսան Արզույան», տես՝ «Պայքար», 23-ը հուլիսի, 1935թ.:

<sup>31</sup> Նույն տեղում:

ստիպեցին Վերակազմյալ հնչակյան կուսակցությանն առժամաբար օրակարգից հանել Կիլիկիան «ազատագրելու» իրենց ծրագիրը :

Առաջին աշխարհամարտի սանձազերծումը վերակազմյալ հնչակյաններին, հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմակերպություններին, հնարավորություն ընձեռեց մոռացության արխիվից դուրս բերել իրենց ծրագիրը և այն իրագործելու համար սկսել անհրաժեշտ ուղիների և միջոցների որոնման աշխատանքներ: Այդ նպատակներով 1914թ. նոյեմբերին Եվրոպա՝ Լոնդոն և Փարիզ գործուղվեց Ալեքսան (Վահե) Արզույանը, որը դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին «Ժանոթացել ու բարեկամացել էր Ֆրանսիայի անվանի ու հեղինակավոր քաղաքական և հասարակական շատ գործիչների, այդ թվում Պիեռ Բեսառի, Վիկտոր Բերարի և Էռնեստ Լավիսի հետ»:<sup>32</sup>

Գալով Լոնդոն, կուսակցության հատուկ հանձնարարականը կատարելու առաքելությամբ, Վահե Արզույանը հայտնի հայասեր և ազդեցիկ պետական գործիչ Դենի Քոչենի միջոցով ֆրանսիական կառավարությանը հայտնեց, թե Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը փափագում է սկսել Կիլիկիայի ազատագրության գործը, «եթե Ֆրանսիան խոստանար իր լուրջ օգնությունը»:<sup>33</sup> Պարզելով, որ այդ ծրագիրը «կենսական նշանակություն ունի հայության համար և անառարկելի օգտակարություն Մեծ Դաշնակիցների համար»<sup>34</sup>, նա առաջարկում էր Ֆրանսիայի աջակցությամբ ստեղծել հայ կամավորական զորամասեր, ընդ որում նշելով ամերիկահայ քաղաքական կազմակերպությունների պատրաստակամությունն իրենց վրա վերցնելու բազմաթիվ հայ կամավորականների հավաքագրման ծախսերի մի մասը հոգալու հանձնառությունը: Կիլիկիայի ազատագրության ծրագրի հաջորդ փուլը նախատեսում էր հայ կամավորական զորամասերի կենտրոնացումը Կիպրոսում, ուր զինվելով ու վարժվելով ֆրանսիացիների օգնությամբ

և ղեկավարությամբ, և 1000-ից ոչ պակաս թվաքանակով միավորվելով ֆրանսիական զինվորների հետ, նրանք կստեղծեն «միանգամայն բավարար ուժ Կիլիկիա ներխուժելու համար: Այստեղ այդ ազատարար ուժն անմիջապես կաճի՝ հասնելով մինչև 10.000 մարդու, որի օգնությամբ և միջոցով մենք կարծում ենք, որ կկարողանանք երաշխավորել Կիլիկիոյ ազատագրությունը»:<sup>35</sup>

Վերոհիշյալ ծրագրի մասին Վահե Արզույանը գրեց նաև հայասեր Վիկտոր Բերարին՝ նրան ևս խնդրելով համապատասխան դիմում անել իր կառավարությանը: Անհրաժեշտ է նշել որ Վերակազմյալ հնչակյանների ծրագիրը ռազմական փորձագիտության իմաստով բավականին մշակված և հստակեցված ծրագիր էր, որի խոսուն ապացույցը եղավ այն իրողությունը, որ երբ 1916թ. աշնանը Ֆրանսիան որդեգրեց հայության ռազմական ուժը Կիլիկիայում օգտագործելու քաղաքականությունը, ապա ֆրանսիական բարձրագույն ռազմական հրամանատարությունը բառացիորեն իրականացրեց այդ ծրագրով առաջարկվող քայլերի և միջոցառումների մեծագույն մասը: Ուստի, ֆրանսիական կառավարության բացասական պատասխանը, որին հետագայում արժանացավ այդ ծրագիրը, կարող էր թելարդված լինել ոչ թե նրանում տեղ գտած ռազմագիտական առաջարկների թերի կամ պակաս զրազետ լինելու հանագամանքով, այլ այն ժամանակաշրջանում այդ ծրագիրն իրագործելու Ֆրանսիայի չկամությամբ և մերժողական դիրքորոշմամբ:

Եվ իրոք, երբ Դենի Քոչենը և Վիկտոր Բերարը անհրաժեշտ դիմումներ հղելով այդ ժամանակ նորից Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարի պաշտոնը ստանձնած Դելքասեին, փորձեցին հասնել այն բանին, որ ֆրանսիական կառավարությունն այդ դիմումներին դրական արձագանք տա: Դելքասեն, մի կողմ թողնելով մարդասիրության, առավել ևս հայասիրության զգացմունքները, և ղեկավարվելով միայն ու միայն Ֆրանսիայի առաջնահերթ ծավալապաշտ շահերով, «այդ երկու իրոք հայասեր ֆրանսիացիներին, որոնք նաև իր անձնա-

<sup>32</sup> «Պայքար», 16-ը հուլիսի, 1935թ.:

<sup>33</sup> «Պայքար», 23-ը հուլիսի, 1935թ.:

<sup>34</sup> ԳԱԹ, ԱԶՖ, ք 1, ց. 1, թիվ 702:

<sup>35</sup> ԳԱԹ, ԱԶՖ, ք 1, ց. 1, թիվ 702:

կան բարեկամներն էին, շատ հստակորեն և որոշապես հայտնեց, որ «Ֆրանսա, պատերազմի այս, սկզբնական ամենածանր շրջանին, ստիպված ըլլալով իր բոլոր ուժերը կենտրոնացնել Գերմանիոյ դեմ, օգնություն չի կարող խոստանալ հայկական այդպիսի մի հրավերի, որովհետև եթե խոստանար և ֆրանսիական զորքերու մասնակցութեամբ Կիլիկիոյ մեջ գործողութիւն մը սկսեր, ֆրանսական դրոշմն այնտեղ անգամ մը երևալէ հետո պարտավորված պիտի ըլլար հետզհետե՛ ստավարցնել իր դրկելիք զորքերի թիվը, որը նա անկարող էր կատարել այս ռուպեի պայմանների մեջ»:<sup>36</sup>

1935 թվականին, փորձելով գնահատել Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարի այդ պատասխանը, Արշակ Չոպանյանը իր «Կիլիկիեան երազը և Ալեքսան Արզույան» հոդվածում մոռանալով, որը հարցը վերաբերում էր Ֆրանսիայի ռազմական օգնութեամբ Կիլիկիայի 400 հազարանոց հայությանը ֆիզիկական հնարավոր բնաջնջման սպառնալիքից փրկելու խնդրանքը մերժելուն, Ֆրանսիայի մերժողական կեցվածքն արդարացնող հետևյալ արժեւորումն էր տալիս. «Դեկրասի պատասխանը լուրջ, պարկեշտ քաղաքական գործչի յայտարարություն էր. այն չէր ուզեր, որ *փոքր և տկար ժողովուրդը* մը նետվեր ապստամբության մը մեջ՝ հույսը Ֆրանսայի զինվորական օգնության վրա դնելով, երբ գիտեր թե այդպիսի պահին, երբ Ֆրանսան կենաց և մահու պայքար կը մղեր, անոր համար *անկարելիութիւն էր* որևէ օգնության գալու Կիլիկիոյ ապստամբութեան»:<sup>37</sup>

Կիլիկիայի հայության ճակատագրի նկատմամբ Ֆրանսիայի շահամոլ վերաբերմունքը, որը քաղաքական պարկեշտության կատարյալ բացառումն էր, իր ողջ մերկութեամբ դրսևորվեց այն ժամանակ, երբ, ստանալով Ֆրանսիայի մերժումը, Վերակազմյալ հնչակյանները փորձեցին այդ ուղղությամբ դիմումներ անել անգլիական կառավարությանը՝ օգտագործելով մեծ հայասեր լորդ Բրայսի քաղաքական ազդեցությունն ու կապերը: Ֆրանսիական իշխանությունները, տեղե-

կանալով այդ մասին և ամենևին չմտահոգվելով «փոքր և տկար» հայ ժողովրդին սպառնացող աղետալի ճակատագրով, իրենց վաղեմի մրցակից Անգլիայի մասնակցությամբ Կիլիկիայի հայության ազատագրությունը լուրջ սպառնալիք համարելով իրենց շահերին, շտապեցին «մատ թափ տալ» *փոքր ու տկար* ժողովրդի քաղաքական ղեկավարության վրա, նրան զգուշացնելով, թե՛ «ֆրանսիացիք գոհ չպիտի մնային, եթե հայերը Կիլիկիոյ մեջ ապստամբական ձեռնարկը մը ընեին՝ *մորիշ տերության մը օգնությամբ*՝ առանց իրենց մասնակցութեան»:<sup>38</sup>

Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության ազդեցիկ պաշտոնյաներից մեկի՝ «Ասիա» դեպարտամենտի տնօրեն Ժան Գուի շուրթերով արտահայտած և հետագայում Ֆրանսիայի կողմից որդեգրած այս անգիջում կեցվածքը, երբ ինքը, Ֆրանսիան՝ անհրաժեշտ ռազմաքաղաքական հզորություն չունենալով Սիրիայում և Կիլիկիայում իր շահերը պաշտպանելու համար, ամեն անգամ վճռականորեն ընդդիմացավ նաև իր դաշնակիցների բոլոր այն փորձերին, որոնք կարող էին լրջորեն փոխել իրերի ընթացքը վերոհիշյալ երկրամասերում, շատ թանկ արժեցավ և ծանր հետևաքններ ունեցավ Կիլիկիայի հայության ֆիզիկական գոյության և նրա հետագա քաղաքական ճակատագրի վրա:

Հայության տարբեր քաղաքական կազմակերպությունների կողմից Կիլիկիայի հայության համար օգնություն հայցող երկու հաջորդ դիմում-հրավերների ընթացքը ճիշտ ըմբռնելու համար, որոնք Ֆրանսիային ներկայացվեցին Ռուսաստանի ակտիվ միջնորդությամբ, անհրաժեշտ է նկատի առնել այն իրողությունը, որ հայ ժողովրդի բոլոր քիչ թե շատ ազդեցիկ քաղաքական ուժերի մեջ, ընդհուպ մինչև 1916թ. կեսերը, երբ Ռուսաստանը կտրուկ փոխեց իր վերբերմունքը հայության ճակատագրի և Հայկական հարցի նկատմամբ, անբաժանելիորեն տիրապետում էր այն համոզմունքը, որ «Հայկական հարցում գերակշիռ դեր ստանձնած Ռուսաստանի»<sup>39</sup> և հայ ժողովրդի

<sup>36</sup> «Պայքար», 23-ը հուլիսի, 1935թ.:

<sup>37</sup> «Պայքար», 24-ը հուլիսի, 1935թ.:

<sup>38</sup> Ա. Չոպանյան: Նամականի, Երևան, էջ 120-121:

<sup>39</sup> Ա. Չոպանյան: «Վճռական թուպե», «Մշակ», 1915թ: 25-ը փետրվարի:



«հարաբերությունները լավ են ինչպես երբեք», որ «հայը ռուսին ամենեն հավատարիմ, օգտակար և արդյունաբեր տարրն է», և եթե անգամ «Էրզրումից մինչև Սիս ռուսը գրավե և պարզապես կցե, նորեն հայու համար շատ լավ է», քանի որ նորեն հայկական կյանքը, հայ լեզուն, culture-ը պիտի ծաղկեն և տիրապետեն»:<sup>40</sup>

Չկասկածելով, «որ հայ ժողովուրդը «annexion»-են տարբեր և լավագույն բան մը պիտի ստանա»,<sup>41</sup> հայ քաղաքական ղեկավարությունը որդեգրեց «ամեն բանի մեջ նախ ռուսին դիմելու», «ռուսերին չնեղացնելու»<sup>42</sup> ուղեգիծը: Այս քաղաքական վարքագծի առավել ամբողջական շարադրաանքը կարելի է գտնել Արշակ Չոպանյանի 1914թ. դեկտեմբերի 24-ին Վահե Արզուանին գրած նամակ-հորդորում, որտեղ, սխալ համարելով առանց Ռուսաստանի գիտության և հավանության Ֆրանսիային օգնության հայցով դիմելու՝ Վերակազմյալ հնչակների քայլը, հայության միակ ճիշտ “marche à suivre” /ուղի/ հռչակում էր հետևյալը. «1. Ամերիկայի հայերը դիմեն ռուս դեսպանին, Կիլիկիոյ ծրագիրը պարզեն և խնդրեն, որ Ռուսիա օգնե և մղե Ֆրանսան օգնել նույնպես. 2. Նույն դիմումը դուք պետք է կատարեք Լոնտոնի ռուս դեսպանին, մենք՝ Փարիզի հայերս, Կովկասի հայք՝ փոխարքային և Փեթրոգրադի հայք՝ Սազոնովին, - և ռուսները կտեսնեն, որ հայերն ամեն տեղ նույն ձևով կմտածեն և իրենց կդիմեն նախ»:

Ռուսիոյ մոտ դիմում ընելէ, հավանություն ստանալէ հետո դիմել նաև... Ֆրանսայի աջակցությունը ևս խնդրելու համար, վարվելով franchement (անկեղծորեն), ըսելով թե մենք Ռուսին դիմած ենք արդեն: C'est la meilleure politique (Սա լավագույն քաղաքականությունն է)»:<sup>43</sup>

Արշակ Չոպանյանի կողմից ձևակերպված և հայ քաղաքական ղեկավար շրջանակներում երկար ժամանակ մենաշնորհի հաստատած՝ «միայն Ռուսաստանի միջոցով և նրա

աջակցությամբ» քաղաքական գործելաձևը իր դրսևորումը գտավ, երբ անսպլով հայկական տարբեր քաղաքական կազմակերպությունների՝ Կիլիկիայի հայությանը ռազմական ու դիվանագիտական օգնություն հասցնելու խնդրանքներին, Ռուսաստանի ռազմական ու դիվանագիտական իշխանությունները, «պահելով հայկական հարցում իրենց գերակշիռ դերակատարության վարկը», ակտիվորեն դիմեցին ֆրանսիական իշխանություններին՝ նրանց հրավիրելով հայությանը ցույց տալ պահանջված օգնությունը:

1915թ-ի փետրվարի 7-ին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը Փարիզի ռուսական դեսպանությանն ուղղված իր գաղտնի հեռագրում հաղորդելով, որ Կովկասյան բանակի շտաբ ներկայացած Ձեյթունի հայոց պատվիրակներն անհանգստացած Կիլիկիայի հայության գլխին օրեցօր կուտակվող կոտորածի սպառնալիքից, իրենց ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով խնդրում են գենք ու զինամթերք, և կարևորելով խնդրի ռազմավարական նշանակությունը Դաշնակիցների համար, անհրաժեշտ էր համարում «անհապաղ պահանջված քանակությամբ հրացաններ և փամփուշտ հասցնել Ալեքսանդրետի ծովածոցում սպասող հայերին: Նկատի առնելով նաև այն հանգամանքը, որ Ձեյթունի հայերի գործողություններն օգտակար կլինեն ֆրանսիացիներին... համար, ելնելով նաև խնդրի անհետաձգելիությունից և այն փաստից, որ մենք հնարավորություն չունենք անմիջապես հայերին տրամադրել պահանջվող հրացանները, ես անհրաժեշտ եմ համարում կապվել ֆրանսիական կառավարության հետ և հայտնել նրան, որ Ռուսաստանը ցանկալի է համարում, որպեսզի վերոհիշյալ նպատակների համար ֆրանսիական ռազմանավերով Ալեքսանդրետ հասցվեն հրացաններ և փամփուշտ»:<sup>44</sup>

Գրեթե միաժամանակ Ֆրանսիայից ռազմական օգնություն ստանալու սպասելիքներով առլեցուն առաջարկ-դիմումով Ռուսաստանին դիմեց Հ.Յ. Դաշնակցությունը, որի մասին Սոֆիայում Ռուսաստանի ներկայացուցիչ Սավինսկին 1915թ.

<sup>40</sup> Ա. Չոպանյան: Նամականի, Երևան, 1980թ., էջ 120-121:

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Նույն տեղում:

փետրվարի 21-ին Պետրոգրադ ուղարկած գաղտնի հեռագրում հետևյալ մանրամասներն էր հաղորդում. «Ինձ այցելեց Հայկական գլխավոր կոմիտեի (Հ.Յ.Դ – Ե.Գ.) ներկայացուցիչ Վարդանյանը (Վարանդյանը – Ե.Գ.) և գլխավոր կոմիտեի անունից խնդրեց Կիլիկիայի հայությանը հնարավորություն ընձեռել մասնակցելու Թուրքիայի դեմ սկսվող պատերազմին: Կոմիտեն առաջարկում է Ամերիկայում և Փոքր Ասիայում բնակվող՝ բուրքերի դեմ պայքարի մեծ փորձ ունեցող և տեղական պայմաններին քաջածանոթ հայերի ծառայությունները: Այդ նպատակով հայերը խնդրում են Ամերիկայում բնակվող կամավորներին ապահովել փոխադրամիջոցներով և զենքով: Ըստ Վարդանյանի առաջարկի, շուրջ 15 հազարի հասնող հայ կամավորները միանգամայն ի վիճակի կլինեն ինքնուրույն ափիանում կատարել Փոքր Ասիայում, ուր նրանց անպայմանորեն կմիանան տեղաբնակ հայերը, որոնց նույնպես հարկ կլինի զինել:

Վարդանյանը նույն առաջարկներով դիմեց նաև ֆրանսիական և անգլիական դեսպաններին, որոնք, հետաքրքրությունից զուրկ չհամարելով դրանք, հաղորդեցին այդ մասին իրենց կառավարություններին: Վարդանյանը մեր բոլորի վրա հանգիստ մարդու և համոզված հայրենասերի տպավորություն բողեց, որը մեծ ցանկություն ունի օգնելու Տերություններին՝ բուրքական լծից հայ ժողովրդի ազատագրման գործում»:<sup>45</sup>

Սոֆիայում Ֆրանսիայի լիազոր-մինիստր դը Պանաֆին, շեշտելով, որ Մ.Վարանդյանի հետ իր հանդիպման կազմակերպիչն ու նախաձեռնողը եղել է Ռուսաստանի դեսպան Սավինսկին, 1915թ մարտի 3-ին Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Դելքասենին հղած հեռագրում հաղորդում էր. «Ռուսաստանի դեսպան Սավինսկու խնդրանքով՝ ես այսօր ընդունեցի Հայկական կոմիտեների պատվիրակ Մ. Վարանդյանին, որը եկել էր ինձ առաջարկելու սփռույթում գտնվող հայության օգնությունն այն դեպքում, եթե Անտանտը մտադրություն ունենա Փոքր Ասիայում ռազմական գործողություններ սկսել: Նա մատնանշեց, որ Կիլիկիայում... գոյություն ունի մեծաթիվ

հայ բնակչություն, և եթե Ֆրանսիայի ու Անգլիայի կառավարությունները որոշեն օկուպացնել այդ շրջանը և ափիանում կատարել Ադանայի կամ Ալեքսանդրետի ծովախորշում, ապա ինքն երջանիկ կլինեք, որ իր հայրենակիցներն իրավունք ստանային մասնակցելու ազատագրության այդ գործին:

Ըստ Վարանդյանի, Ամերիկայում, Բալկաններում և Եվրոպական երկրներում ապրող կիլիկյան ծագում ունեցող շուրջ 20.000 հայեր կզինվորագրվեն այդ գործին, որոնց կարելի է հավաքել Կիպրոսում և այնտեղ կազմակերպել նրանց ռազմական ուսուցումը, որի հոգսը իրենց վրա պետք է վերցնեն Ֆրանսիան և Անգլիան»:<sup>46</sup>

Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարի պատասխանը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, որը 1915թ. փետրվարի 14-ին Թիֆլիս հաղորդեց Փարիզում Ռուսաստանի դեսպան Իզվոլսկին, բացասական էր, և Ֆրանսիայի մերժումը փաստարկվում էր հետևյալ կերպ. «Դժբախտաբար, ֆրանսիական կառավարությունը *բացարձակապես* զուրկ է Չեյունի հայերին որևէ քանակությամբ հրացաններ տրամադրելու հնարավորությունից, քանի որ ֆրանսիան՝ ինքը դրանց *խիստ* կարիքն ունի և չի կարող հույս ունենալ, որ կընդլայնի դրանց արտադրությունը»: Եվ բոլորովին անտեսելով Վորոնցով-Դաշկովի այն հավաստիացումները, որ «Կիլիկիայի ծովափնյա շրջաններում ապրող հայերը, նույնիսկ առանց որևէ դեսանտի օգնության, կարող են ընդունել զենքի մեծ քանակություններ»,<sup>47</sup> Դելքասեն շարունակում էր պնդել, որ «բոլոր դեպքերում շատ *վտանգավոր է* հրացանները ուղարկել Ալեքսանդրետ, որտեղից հազիվ թե հնարավոր լինի այն հասցնել հայերին»:<sup>48</sup>

Մերժելով նաև Հ. Յ. Դաշնակցության Արևմտյան Բյուրոյի առաջարկը և այն ուղարկելով Ֆրանսիայի ռազմական գործոց նախարարին՝ փորձագիտական քննության, 1915թ.

<sup>46</sup> Les Grandes Puissances, l' Empire Ottoman et les Arméniens dans les archives françaises / 1914-1918/, Paris, 1983, doc. N.16, p. 12-13.

<sup>47</sup> Архив Внешней Политики России, ф. Политархив, д.3488, л. 8-9.

<sup>48</sup> Там же, л. 3.

<sup>45</sup> Архив Внешней Политики России, ф., Политархив, д.3488, л. 2.

ապրիլի 13-ին Սոֆիայում Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցիչ ղը Պանաֆիոյին հղած հեռագրում Դելքասեն այսպես էր հիմնավորում հայության անունից արված հերթական խնդրանքի մերժումը. «Ես հայկական կոմիտեների առաջարկը քննեցի մեծ ուշադրությամբ: Ամենից առաջ, ակնհայտ է, որ բոլոր այն դեպքերում, երբ Դաշնակիցները ռազմական էքսպեդիցիաներ ձեռնարկեն Փոքր Ասիայի ավերին, հայկական կամավորական զորամասերը չեն կարող օգտագործվել որպես առանձին և ինքնուրույն գործողությունների ընդունակ ուժ: Բացի այդ, նրանց կենտրոնացումը և ապա վարժեցումը Փոքր Ասիային մոտ գտնվող տեղավայրում անմիջապես իր վրա կրենոի Թուրքիայի ուշադրությունը և առաջ կբերի Թուրքիայում գտնվող հայերի ջարդեր: Վերջապես, Կիպրոսում հայ կամավորների կենտրոնացման դեպքում ամենավորքը անգգուշությունն իսկ թուրքերին հնարավորություն կտա կռահել մեր ապագա ռազմական գործողությունների թատերաբեմը:

Ուստի, ներկա պայմաններում գերադասելի է, որպեսզի մեր Արևելյան էքսպեդիցիային մասնակցել ցանկացող հայերն անհատապես դիմեն գեներալ Ամադին, և եթե նրանց թիվը նշանակալի լինի ու պայմանները թույլ տան, ապագայում միգուցե հնարավոր լինի նրանց հավաքել առանձին զորամիավորման մեջ»:<sup>49</sup>

Հանուն Կիլիկիայի հայության ֆիզիկական անվտանգության Ֆրանսիայի ռազմաքաղաքական օգնությունը հայցող խնդրանք-առաջարկների շարքում ժամանակագրական առումով առաջիններից մեկը Պողոս Նուբար փաշայի և նրա կողմից Եգիպտոսում ստեղծված «Հայոց ազգային շահերի պաշտպանության միության» մշակած ծրագիրն էր: Այդ ծրագրում, յուրատեսակ ձևով իրենց զուգորդումը և համակեցությունն էին գտել իչնպես «Հայաստանից առաջ և Հայաստանից ավելի հայությունը», այնպես էլ «Հայությունից առաջ և հայությունից ավելի՝ Հայաստանը» կարգախոս-առաջնահերթությունները: Պողոս Նուբարը և իր համախոհները այդ ծրագիրը մշակեցին, իրենց աչքի առաջ ունենալով, նախ՝ պատմական փոր-

ձառության դասերը, որոնք զգուշացնում էին, որ «բոլոր նախորդ պատերազմներում, երբ Հայաստանը դարձել էր ռազմական գործողությունների թատերաբեմ Թուրքիայի և քրիստոնյա որևէ պետության համար, ապա մշտապես առաջին զոհերը եղել են հայերը», և երկրորդ, այն անգանցառելի փաստը, որ «ռուսական բանակների արշավը չէր կարող փրկելու աստիճան արար ունենալ Կիլիկոյ հայոց կացության համար»:<sup>50</sup>

Արդեն 1914թ. նոյեմբերի սկզբներին Պողոս Նուբարը իր պատրաստի ծրագրով դիմեց Եգիպտոսի անգլիական զինվորական ու քաղաքական իշխանություններին, առաջարկելով, որ «գորք հանվի Կիլիկիոյ ծովեզերքը՝ Մերսինի և Իսկանդերունի նավահանգիստները, ինչպես և Ատանայի դաշտը», խոստանալով «գրավման բանակին տրամադրութեան տակ դնել պետք եղած թվով և երկրին ծանոթ ռահվիրաններ, թարգմաններ և պրոպականդիստներ, որոնք ահա, այսպես իրենց աջակցության բաժինը պիտի բերեին Դաշնակցոց, պայմանաւ, որ սոքա պետք եղած զենքն ու ռազմամթերքը հայթայթեին ժողովրդին»:

Ընդգծելով իր ծրագրի նպատակադրումների երկակիությունը, Պողոս Նուբարը 1915թ. հուլիս ամսին կաթողիկոս Գևորգ V-ին ներկայացրած իր հաշվետվության մեջ գրում էր. «Այս ծրագրին առավելությունը կրկին է: Անհկա դաշնակից պետութեանց գորքերու ներկայութեան շնորհիվ, մեկ կողմէն տեղվոյն հայության կյանքը, պատիվը և գույքը կապահովեն, և թուրքերը կչեզոքացներ, ի դերև կաներ հայ տարրի բնաջնջման մասին թուրքերու հետապնդած ծրագիրը, իսկ մյուս կողմէ հայկական ապստամբական շարժումով ավելի կշիռ կբերեր Կիլիկիոյ մասին մեր ունեցած ազգային բաղձանքներուն»:<sup>51</sup>

Այս ծրագիրը «Անգլիոյ մեջ էլ լավ ընդունելություն գտավ, ... մինչև անգամ Եգիպտոսի անգլիական զինվորական իշխանությունը հավաստեցին, թե ծրագիրը ի մոտոյ պիտի գործադրվի», սակայն 1915թ. հունվարին «Տարտանել գորք

<sup>49</sup> Les Grandes Puissances ..... Opt. cit., doc. N.16, p. 13-14.

<sup>50</sup> ՀՀ ԿՊՊԱ, 57, g 5 q, 19, p. 44:

<sup>51</sup> ՀՀ ԿՊՊԱ., ֆ. 57, g 5 q, 19, p. 44-45:

հանելու որոշման հետ կապված,- գրում էր Պողոս Նուբարը, - մեր ծրագիրը հետաձգվեց»:<sup>52</sup>

Եվ որքան ճիշտ էր Պողոս Նուբարը, երբ իր առաջարկած ծրագրի անհաջողությունը բացատրում էր անգլիական կառավարության կողմից Չերչիլ-Լլոյդ Ջորջ զույգի ռազմական պլաններին առաջնություն տալով, ապա նույնքան սխալվում էր, երբ հավատացնում էր Հայոց Հայրապետին, թե «Ֆրանսիական կառավարությունը հավասարապես ծանոթ լինելով այս ծրագրին՝ որևէ ընդդիմություն չէր ցուցաբերել նրա նկատմամբ»:<sup>53</sup>

Այստեղ հարկ է արձանագրել, որ մեր պատմագրությունը մինչև հիմա, քիչ թե շատ ուշադրություն դարձնելով հայերին պատուհասած աղետի վրա Քիթչեներ-Չերչիլ հայտնի ռազմական ծրագրերի ազդեցության հարցերի ուսումնասիրությանը, ցավոք, գրեթե ամբողջությամբ անտեսել է և ըստ հարկի ոչ մի փորձ չի արել վեր հանելու մեր ժողովրդի համար այդքան բախտորոշ վճռի վրա Ֆրանսիայի ունեցած ազդեցությունը:

Օսմանյան կայսրությունն անդամալուծելու և նրան պատերազմից դուրս բերելու նպատակով Ալեքսանդրետի շրջանում Անգլիայի և Ֆրանսիայի կողմից համատեղ ռազմական գործողությունների ձեռնարկման հարցը, որի անհրաժեշտության և անխուսափելիության վրա չկասկածելով՝ իրենց դիմում-խնդրանքներն էին կազմում Ֆրանսիայի ռազմաքաղաքական օգնությունն ակնկալող հայ քաղաքական ղեկավար բոլոր շրջանակները, քննարկումների և վիճաբանությունների, բացահայտ և ադնրկուլիսային պայքարի առարկա դարձավ արդեն 1915թ. սկզբին:

Արդարև, հայության համար կենաց ու մահու նշանակություն ունեցող այդ խնդիրի լուծումը, որը «մեր մեծագույն ողբերգության դուռը բացավ», համոզիչ ապացուցը դարձավ այն իրողության, թե ինչպես պատերազմի տարիներին շատ հաճախ ողջ հայ ժողովրդի և առաջին հերթին նրա արևմտահայ հատվածի ճակատագիրը որոշվում էր «*նրա հետ կապ*

*չունեցող* հեռավոր որոշումներով ու գործարքներով»:<sup>54</sup>

1915թ. հունվարին քննարկման սեղանին դրված երկու ծրագրերից առաջինի հեղինակներն էին Անգլիայի ռազմածովային ուժերի նախարար Ուինստոն Չերչիլը և ոչ անհայտ Լլոյդ Ջորջը, որոնք առաջարկում էին «ռազմանավերով ճեղքել նեղուցները և նույն ատեն ցամաքահանում ընել Կալիփոլի, ապա սուրալ դեպի Պոլիս ու գրաւել այն, - գլխէն իսկ հաշմելու նպատակով Թուրքիան և հաղորդակցութեան ծովային դիրին ճամբայ հաստատելու համար Ռուսիոյ հետ, յետոյ անգլ և ֆրանսական նոր ճակատ մը բանալու համար Պալքաններու մեջ՝ ընդդէմ Ավստրո-Հունգարական կայսրութեան»: Երկրորդ ծրագրի հեղինակն ու պաշտպանն Անգլիայի ռազմական գործոց նախարար Հորացիո Հերբերտ Քիթչեներն էր, որը, անհնար համարելով «նեղուցներէն զարնելու ծրագիրը, կառաջարկէր արեւի դիրավ իրագործելի գործողութիւն մը,- ցամաքահանում ընել Իսկէնտերունի ծոցէն, Դրունք Կիլիկիայէն խուժել Անտիոքի դաշտը, ապա քալել դեպի հյուսիս - արևելք և Տիարպեքիի կամ Վանի վիլայեթներուն մեջ միանալ ռուսական բանակներուն, որոնք կըյառաջանային դեպի Վասպուրական: Այդ ձևով,- կ'պնդէր Պատերազմական նախարարը, - երկաթեայ պատով մը երկուքի բաժնած կըլլանք Անմալ փաշայի հարաւի «Երլտըրըմ օրտուսու»-ն, ապա միացյալ ուժերով կ'գրաւենք Անատոլուն և ձեռք կ'նետէնք Պոլսոյ»:

Երկար վիճաբանություններից հետո անգլիական կառավարությունը մեկ-երկու ձայների տարբերությամբ «որդեգրեց Չերչիլ-Լոյտ Ջորջի առաջարկը և ընթացավ դեպի ադետ»<sup>55</sup>, թուրքերին տրամադրելով նախադեպը չունեցող հնարավորություն՝ ինքնավստահորեն սկսելու արևմտահայության բնաջնջման դիվային գործը:

Հայ ժողովրդի մեծագույն ողբերգության դուռը բացող այդ որոշումը կայացվեց ոչ այնքան և ոչ ամենևին այն պատճառով, որ այդպես կամեցավ «պատերազմական դիպուածը,

<sup>52</sup> ՀՀ ԿՊՊԱ., ֆ. 57, ց 5 գ, 19, ք. 44-45:

<sup>53</sup> Նույն տեղում:

<sup>54</sup> Գեորգամ Ահարոնյան, Մեծ երազի ճամփուն վրա, Լոս-Անջելոս, 1986, էջ 61:

<sup>55</sup> Գեորգամ Ահարոնյան: Նշվ.աշխ. էջ 62:

բախտը»:<sup>56</sup> ինչպես հետագայում գտնում էին հայոց ցեղասպանության խնդրին քաջածանոթ Գերսամ Ահարոնյանը և նրա նման մտածող շատ շատերը, այլ պատմական այն իրողության բերումով, որ այդ որոշումը կյանքի կոչող *քաղաքական և ռազմական բնույթի գործոնների և ազդակների մեջ կարևոր դերերից մեկը կատարեց Ֆրանսիայի հետևողական և անզիջում դիրքորոշումը*, նրա բացասական կեցվածքը Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ սկսելու դիտավորությունների և առաջարկությունների հանդեպ:

Նույնքան անընդունելի են պատմական ճշմարտության հետ ոչ մի աղերս չունեցող՝ մեղքը հիվանդ գլխից առողջի վրա բարդելուն միտված մերկապարանոց այն պնդումները, թե՛ «Ռուսիոյ ճնշման տակ էր, որ Դաշնակիցները հրաժարվեցին Ալեքսանդրետի և Մերսինի շրջաններում ցամաքահանման ծրագրերից և որդեգրեցին Դարդանելի թատերաբեմում ռազմական գործողություններ սկսելու որոշումը»:<sup>57</sup>

Մինչդեռ, պատմագիտության կողմից հավուր պատշաճի չօգտագործված կամ մոռացության տրված ու անտեսված փաստաթղթերում և վկայություններում թաքնված պատմական իրողություններն անվիճելիորեն ապացուցում են, որ առաջին հերթին Ֆրանսիան էր, որը ոչ միայն իրենից կախված ամեն ինչ արեց, որպեսզի մերժվի արևմտահայության գոյության համար կենսական նշանակություն ունեցող Ալեքսանդրետի ռազմական գործողությունն, այլև հասավ այն բանին, որ անգլիական կառավարությունից կորզեց ապագայում Կիլիկիայում կամ Սիրիայում առանց Ֆրանսիայի մասնակցության և համաձայնության ոչ մի ռազմական գործողություն չձեռնարկելու հանձնառությունը: Ըստ 1915թ. հունվարի 27-ի Ֆրանսիայի ռազմածովային ուժերի նախարար Օգանեորի և նրա անգլիացի գործընկեր Ուինստոն Չերչիլի միջև փոխանակված նամակների, որոնք, անուշտ, հավասարազոր էին պայմանագրի, Ֆրանսիայի և Ազնլիայի միջև կայացվեց համաձայնություն

հետևյալ հարցերի շուրջ. «1. Եթե երբևէ Սիրիայում կամ Կիլիկիայում ռազմական գործողության խնդիր ծագի, ապա անգլոֆրանսիական ռազմածովային ուժերի հրամանատարությունը պետք է ստանձնի միայն ֆրանսիացի ծովակալը 2. Ալեքսանդրետի շրանում ցամաքահանման պարագայում երկու կառավարություններն իրար հետ պետք է *համաձայնեցնեն իրենց քայլերը* (ընդգծ. իմն է – Ե.Գ.) և միջոցները՝ առանց վնասելու ֆրանսիական հրամանատարության հեղինակությանը»:<sup>58</sup>

Դժվար չէր կոտակել, որ նման բովանդակություն ունեցող համաձայնության հասած Ֆրանսիան, մերժելով և արգելելով 1915թ. սկզբներին Ալեքսանդրետի շրջանում ռազմական օպերացիա սկսելու առաջարկը, հետագայում էլ շարունակելու էր ընդդիմալ այդ շրջանում ռազմական գործողություններ սկսելու բոլոր փորձերին և առաջարկներին, եթե ինքը դրանց մեջ տեսներ իր հետապնդած շահերի համար սպառնալիք և վտանգ, եթե դրանք անցկացվեին առանց իր շահերի պաշտպանության համար անհրաժեշտ երաշխիքների և ի հաշիվ տարածաշրջանում Ֆրանսիայի ունեցած դարավոր ազդեցության ու հեղինակության:

Եվ իրոք, երբ պատմական իրադարձությունների բերումով, սկսած 1915թ. երկրորդ կեսից ընդհուպ 1916թ. աշունը, արևմտահայությանը ցեղասպանությունից փրկելու իր գործառնությունը կորցրած, սակայն դեռևս արևմտահայության մնացորդներին վերջնական ոչնչացումից ազատելու և հայությանը պատած դժբախտության չափերը նվազեցնելու իր կարողունակությունը հաստատ պահպանող Ալեքսանդրետի օպերացիան բազմաթիվ առիթներով նորից իրագործվելու քիչ թե շատ հնարավորություններ ստացավ, Ֆրանսիան ամեն անգամ հետևողական և անզիջում պայքար մղեց բոլոր այն հրավերների և առաջարկությունների դեմ, որոնք գալիս էին ինչպես հայ ժողովրդի գոյության և փրկության հարցերով մտահոգ հայ տարբեր քաղաքական շրջանակներից, այնպես էլ իրենց ռազմաքաղաքական շահերը հետապնդող Անգլիայի և Ռուսաստանի:

<sup>56</sup>Գերսամ Ահարոնյան: Նշվ. աշխ. էջ 62:

<sup>57</sup> Ռ. Պուանկարե: Իմ Օրագիրը, տես՝ «Հորիզոն», Մելանիկ, 19 հուլիսի, 1931թ.:

<sup>58</sup> Ռ. Պուանկարե: Իմ Օրագիրը, տես՝ «Հորիզոն», Մելանիկ, 19 հուլիսի, 1931թ.:

նի կողմից, քանի որ բոլոր այդ առաջարկների մեջ նա չգտավ և չտեսավ իրեն շահագրգռող և տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդող ոչ մի հեռանկար: Ֆրանսիայի որդեգրած քաղաքական և ռազմական այդ գործելակերպի ողջ «խոհանոցը» բացահայտվեց 1915թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին՝ երկրի բարձրագույն ղեկավարության՝ նախագահ Պունակարեի և կառավարության ազդեցիկ անդամների ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունների ժամանակ, որոնց արդյունքում վերջնական տեսքի բերվեցին պատերազմում Ֆրանսիայի հետապնդած ռազմական և քաղաքական առաջնահերթ նպատակները՝ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Արևելքում:

1915թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ֆրանսիայի բարձրագույն զինվորական ղեկավարության մեջ սուր տարածայնություններ ծագեցին այն հարցի շուրջ, թե Ֆրանսիան որ ուղղությամբ պետք է իր ռազմական ջանքերը կենտրոնացնե՞ր Պոլսի անհաջող օպերացիայից հետո՝ ուշադրության կենտրոնում դարձյալ ունենալով Ալեքսանդրեոսի շրջանում ցամաքահանման անհրաժեշտության և նպատակահարմարության խնդիրը, որի նկատմամբ նորից անթաքույց հետաքրքրություն էր սկսել դրսևորվել ինչպես դրա վաղեմի ջատագով լորդ Քիթչեները, այնպես էլ Եգիպտոսում անգլիական զորքերի ղեկավարությունը՝ ի դեմս գորավար Մաքավելի: 1915թ. օգոստոսի վերջին՝ Ալեքսանդրեոսի շրջանում նոր ռազմաճակատ բացելու անհրաժեշտությունը փաստող ռազմագիտական հիմնավորումներով Ֆրանսիայի կառավարությանը դիմեց նաև ֆրանսիական բանակի Գլխավոր Սպայակույտի պետ՝ գորավար Սարան: Արևելքում ֆրանսիայի կողմից ռազմական գործողությունների նոր ճակատ բացելու այդ ծրագրին կտրակա-նայպես հակադրվեց ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատար գորավար Ժոֆրը, որը Ալեքսանդրեոսի շրջանում նոր ճակատի բացման ծրագրի իր մերժումներին ավելի հիմնավորվածություն տալու միտումով «գորավար Սարայի առաջարկները փորձագիտական քննության ուղարկեց Ազգային Պաշտպանության ուսումնասիրությունների Կենտրոն»:<sup>59</sup> Չորավար Գրացիանիի կողմից ղեկավարվող այդ Կենտրոնն իր եզրա-

կացություններում «գորավար Սարայի առաջարկած ձեռնարկի մեջ մեծ, անհաղթահարելի դժվարություններ գտավ»<sup>59</sup>:

Սեպտեմբերի 2-ին գորավար Ժոֆրը, Ֆրանսիայի կառավարության նախագահ Վիվիանիի և ռազմական գործոց նախարար Միլերանի ուղեկցությամբ այցելելով նախագահ Պուանկարեին, հայտարարեց, որ «ինքն ասիական եզերքի վրա ցամաքահանման նպատակներով հոկտեմբերից շուտ որևէ դիվիզիա առանձնացնելու պատասխանատվությունը չի կարող ստանձնել, իսկ այլ դեպքում նախամեծար պիտի սեպեր իր հրաժարականը տալ»: 1915թ. սեպտեմբերի 9-ին նա երկար նամակով դիմեց կառավարությանը՝ արդեն սպառնալից նախազգուշացմամբ, որ «ասիական եզերքի վրա ցամաքահանման արշավանքն իր կազմակերպման այժմյան ձևով *անհաջողության մատնվելու լուրջ վտանգներ ունի և կարող է մեզ պարտադրել նոր ուժերի հաջորդական առաքումներ*, մի բան, որ նույնիսկ կարող է վտանգել *մեր ազգային տարածքի ապահովությունը*: Մարդկային մեր աղբյուրները շատ սահմանափակ են և այդ աղբյուրները մեր բանակի այս տարվա վիճակը կարող են պահպանել մինչև 1916թ. սկիզբը, որից հետո անհրաժեշտ կլինի կամ մեր ուժերը պակասեցնել, կամ ռազմաճակատ ուղարկել 17-րդ դասի նորագիյրներին»:<sup>60</sup>

Երկար քննարկումներից հետո ֆրանսիական կառավարությունը 1915թ. նոյեմբերի 13-ին խորհրդակցություն հրավիրեց Ալեքսանդրեոսի խնդրի վերաբերյալ, որը «*միաձայնությամբ որոշում ընդունեց, որ եթե Անգլիային թույլ տրվի գլուխ հանել Քիթչեների ծրագրած արշավանքը*, ապա կարող են ծագել ամենածանրկաշիռ անպատեհություններ», ուստի և Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Արիստիդ Բրիանին հանձնարարվեց «*Լոնդոնին հաղորդել մեր առարկությունները՝ զինվորական գետնի վրա*»:<sup>61</sup>

Արդեն 1915թ. նոյեմբերի 15-ին Լոնդոնում Ֆրանսիայի

<sup>59</sup> Ռ. Պուանկարե: Իմ Օրագիրը, տես՝ «Հորիզոն», Սելանիկ, 10-ը ապրիլի 1931թ.:

<sup>60</sup> «Հորիզոն» Սելանիկ, 19-ը հունիսի, 1931թ.:

<sup>61</sup> նույն տեղում:

դեսպան Փոլ Կամբոնը Անգլիայի արտաքին գործոց նախարար Էդ. Գրեյին տեղեկացրեց, «որ ֆրանսիական կառավարությունը գորավար ժոֆրի հետ խորհրդակցելուց հետո առայժմ դեմ է դեպի *Ալեքսանդրետ արշավանքի ծարգրին*»: Վերջինս շտապեց հանգստացնել իր բորբոքված ու մտահոգ դաշնակցին՝ հաստատելով, որ «Քիթչեների գաղափարներն անձնական բնույթ ունեն, և անգլիական կառավարությունն արդեն հեռագրել է նրան, որ չի բաժանում նրա տեսակետներն Ալեքսանդրետի մեջ ցամաքահանման մասին»:<sup>62</sup>

Սակայն Դարդանել այցելելուց և այնտեղ գորավար Ֆր. Բրյուլարի հետ տեսնվելուց հետո, Քիթչեները անհրաժեշտ համարեց լքել Դարդանելը, և շարունակեց պնդել Ալեքսանդրետում ռազմական գործողություն սկսելու վրա, որն ըստ նրա, նախ՝ պետք է վերացնել Դաշնակիցների նահանջի թողած հոռի բարոյական ազդեցությունը, և ապա հատուկ նշանակություն պետք է ունենար Եգիպտոսի անվտանգությունն ապահովելու համար:

Անգամ ֆրանսիական կառավարության՝ «գինվորական գետնի դրա» արված առարկություններին ծանոթանալուց հետո էլ Քիթչեները շարունակեց պնդել, թե Եգիպտոսի պաշտպանությունը ելնում է բոլոր դաշնակիցների կենսական շահերից, իսկ ձմռանը շատ դժվար է Սուեզի ջրանցքի երկար գծի վրա ապահովել այդ պաշտպանությունը, որի վրա, ըստ անգլիական հետախուզության տվյալների, թուրքերն ու գերմանացիներն ապահովաբար հարձակում էին նախապատրաստում:

Ըստ երևույթին, չբավարարվելով Էդ. Գրեյի հավաստիացումներով, և անհանգստացած Քիթչեների՝ Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ սկսելու հարցում ցուցաբերած հաստատականությունից, Բրիանն իր պարտքը համարեց անգլիական կառավարությանը հիշեցնել 1915թ. հունվարի 27-ին Օգանեոքի և Չերչիլի միջև փոխանակված նամակների՝ մեզ քաջածանոթ բովանդակությունը, որով Անգլիան պարտավորվում էր առանց Ֆրանսիայի հետ համաձայնեցնելու չդիմել Ալեքսանդրետի շրջանում ցամաքահանման գործո-

ղությունների»:<sup>63</sup>

Ալեքսանդրետի արշավանքի ճակատագրի վրա, ամենայն հավանականությամբ, վճռագրու եղավ 1915թ. նոյեմբերի 20-ին Փարիզում Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեի և Հորացիո Քիթչեների միջև տեղի ունեցած հանդիպումը, որի մասին Ֆրանսիայի նախագահը իր «Օրագրում» հետևյալն է հաղորդում. «Երկուշաբթի՝ կեսօրից առաջ, նա եկավ ինձ տեսնելու: Քիթչեները իր կարծիքը չի փոխել: Նրա տեսակետով՝ ներկայիս *էական կենսական խնդիրը Եգիպտոսի պաշտպանությունն է*, իսկ այն կարելի է պաշտպանել միայն... Ալեքսանդրետի ծոցում... ցամաքահանում կատարելով: Նա գտնում էր, որ թուրքական 200.000-անոց բանակը և գերմանական մեկ դիվիզիա ծրագրում են առաջիկա հունվարին հարձակվել Եգիպտոսի վրա, ուր այժմ գտնվում են ընդամենը 20.000-ի չափ ցածր մարտունակության ունեցող հնդիկ զինվորներ: Գեյլբոլդից բերվող գորամասերը հոգնած են և չունեն ռազմական բարձր որակներ: Անգլիայում, իհարկե, կան պատրաստի և թարմ դիվիզիաներ, սակայն հնարավոր չէ դրանք պահանջված ժամին տեղափոխել Ալեքսանդրետ: Ուրեմն, ըստ Քիթչեների, անհրաժեշտ է պետք եղած գորքերը Ալեքսանդրետ հասցնել Սելանիկից»:<sup>64</sup>

Սակայն, ոչ միայն Եգիպտոսի պաշտպանության, այլև *Կիլիկիայի բնաջնջվող հայության համար էական, կենսական և հիրավի փրկարար նշանակություն ունեցող Ալեքսանդրետի ծովեզերքին ափհանման Քիթչեների ծրագրի հիմնավորումները մերժվեցին Ֆրանսիայի կողմից: Ի դեմս իր նախագահի, Ֆրանսիան, էական, կենսական նշանակություն վերապահելով այլ քաղաքական խնդիրներին, ներկայացրեց իր առարկություններն արժևորող հետևյալ փաստարկումները. «Իսկ եթե Սելանիկում հարձակման ենթարկվե՞նք,- հարցրի ես:*

- Անկարելի է, - պատասխանեց Քիթչեները: Գերմանացիները զարնանից շուտ այստեղ չեն կարող հասնել, մինչդեռ զարնանն իսկ կարող են հարձակվել Եգիպտոսի վրա:

<sup>63</sup> «Հորիզոն» Սելանիկ, 19-ը հունիսի, 1931թ.:

<sup>64</sup> Նույն տեղում:

- Եթե, այնուամենայնիվ, թուրքերն ու գերմանացիները նետվեն Սելանիկի վրա, չե՞ք վախենում այն ազդեցությունից, որ անգլո-ֆրանսիական պարտությունը կարող է գործել Հունաստանի և Ռումինիայի վրա:

- Ես չգիտեմ, - պատասխանեց Քիթչեները, - որոհեա՞նք դա քաղաքականություն է, սակայն ռազմական առումով Սելանիկում մնալ չենք կարող, եթե ցանկանում ենք Եգիպտոսը պահել, իսկ եթե Եգիպտոսը չպահենք... ապա պատերազմը կավարտվի մեր պարտությամբ»:

Հօգուտ Ալեքսանդրետի ծովեզերքում ցամաքահաման արշավանքի վերջին փաստարկը բերելով, Անգլիայի ռազմական գործոց նախարարը Ֆրանսիայի նախագահին տեղեկացրեց, որ «անգլիական նավատորմի մի սպա վերջերս եղել է տեղում, ուր ստուգելուց ու տեղազննելուց հետո պարզել է, որ այնտեղ պաշտպանական ոչ մի համակարգ գոյություն չունի»<sup>65</sup>:

Հետաքրքրությունից գուրկ չէ այն փաստը, որ Քիթչեների կողմից հօգուտ Ալեքսանդրետի արշավանքի բերված այդ փաստարկը դուրս չէր մնացել նաև գերմանական ֆելդմարշալ Հինդենբուրգի տեսադաշտից, որը իր զարմանքն արտահայտելով այն կապակցությամբ, թե ինչու Անգլիան ու Ֆրանսիան չօգտվեցին այդ թույլ, *անպաշտպան օղակից և շարքից չհանեցին Գերմանիայի դաշնակից Թուրքիային*, գրում էր. «Այսպես վարվելու դեպքում նրանք կկարողանային կտրել Թուրքիայի տրանստավրոսյան երակը, որի վրայով թուրքական ուժերը, հանդերձանքն ու սպառազինությունները ուղարկվում էին Սիրիա, Միջագետք և մասամբ Կովկասյան բանակներին»:<sup>66</sup>

Եվ իզուր էր Թուրքիայի ռազմական նախարար Էնվերն ապավինում Ալլահին, որպեսզի *«թշնամին չբացահայտեր մեր թուլությունն այդ կրիտիկական կետում»*,<sup>67</sup> քանի որ Ֆրանսիայի նախագահ Պուանկարենն միանգամայն *տեղյակ լինելով*

*այդ ամենին*, մնաց անդրդվելի և իր երկրի համար *ա-ռաջնահերթ, էական ու կենսական* խնդիր սեպելով Բալկանյան ռազմաճակատում ընթացող իրադարձությունները, չնոռացավ նորից պնդել, «որ անգլիական կառավարությունը Սելանիկ ուղարկելու համար մեզ խոստացել է տրմադրել 90.000 մարդ և մենք անոնց կսպասենք»:<sup>68</sup>

1915թ. նոյեմբերի 30-ին Ֆրանսիայի ռազմական գործոց նոր նախարար Փենվլեն նախագահ Պուանկարենն ներկայացրեց ֆրանսիական ռազմական ուժերի Գլխավոր Սպայակույտի և Գլխավոր հրամանատար՝ գորավար Ժոֆրի կողմից պատրաստած մի զեկուցագիր, որտեղ ամփոփվեցին և հստակեցվեցին առաջին աշխարհամարտում Ֆրանսիայի հետապնդած ռազմավարական խնդիրները, նախորոշվեցին նրա համար առանջնահերթ նշանակություն ունեցող ռազմական նպատակադրումները: Մատնանշելով, որ Անտանտի երկրները զենքի տակ ունեն 5 մլն 460 հազար զինվոր և սպա, իսկ գերմանական բլոկի երկրները՝ 6 մլն 110 հազար, որ «մեր պահեստային ուժերն էլ շատ ավելի քիչ են թշնամու ուժերից», Ֆրանսիայի նախագահի կողմից հաստատված և Ֆրանսիայի համար ռազմական քաղաքականության պարտադիր ուղեցույց դարձած այդ զեկուցագիրը որպես համար առաջին ռազմական խնդիր հռչակում էր «ֆրանսիական բանակը *տնտեսելու և խնայելու դիրքորոշումը*»<sup>69</sup>: Չեկուցագրում տեղ գտած երկրորդ ռազմավարական բնույթի առաջնահերթությունը, որը գորավար Ժոֆրը Ֆրանսիայի անունից առաջարկեց 1915թ. դեկտեմբերի 5-ին Շանթիեում կայացած Դաշնակից երկրների գլխավոր հրամանատարների համաժողովի հաստատմանը, այն հավաստումն էր, թե աշխարհամարտում հաղթանակը կարելի է ձեռք բերել *միայն գլխավոր՝ Ֆրանսիայի և Ռուստանի ռազմաճակատներում*, իսկ... Փոքր Ասիան և Միջերկրական Արևելքը *երկրորդական ռազմադաշտ են*, որտեղ մենք չենք կարող հավասարվել մեր հակառակորդներին, քանի որ նրանք նախ՝ այնտեղ են կենտրոնացրել իրենց գլխավոր բանակները

<sup>65</sup> Ռ. Պուանկարեն, Իմ Օրագիրը, «Հորիզոն», Սելանիկ, 19-ը հուլիսի, 1931թ.:

<sup>66</sup> Տես՝ Ջ. Ս. Կիրակոսյան: Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2-րդ, Երևան 1983թ., էջ 68:

<sup>67</sup> Նույն տեղում:

<sup>68</sup> «Հորիզոն», Սելանիկ, 19-ը հուլիսի, 1931թ.:

<sup>69</sup> «Հորիզոն», Սելանիկ, 27-ը հուլիսի, 1931թ.:



և ապա, գտնվում են իրենց հողի վրա»:

Ֆրանսիական բարձրագույն հրամանատարությունն *Արևելքում մեծ ուժերով պատերազմ մղելուց իր հրաժարվելը բացատրում էր նաև այն հանգամանքով*, որ «Ֆրանսիան ո՛չ անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ, և ո՛չ էլ փոխադրական անհրաժեշտ միջոցներ ունի ցամաքային ու ծովային մայրուղիներից հեռու ընկած և դժվար հաղթահարելի ռազմաբեմերում հաջող պատերազմ մղելու համար»:<sup>70</sup>

Բացառելով Եգիպտոսի վրա որևէ հարձակման սպառնալիքը, Ժոֆրը «անկարելի էր համարում Ալեքսանդրետի արշավանքը», և գտնում, որ Ֆրանսիան և իր Դաշնակիցները դեռ երկար ժամանակ պետք է ստիպված լինեն հաշտվելու այն իրողության հետ, որ «մեր թշնամիներն Արևելքում հասնեն հաջողությունների, բարձրացնեն իրենց բարոյական հեղինակությունը և ազդեցությունը չեզոք երկրների վրա: Հասկանալի է, որ նրանց այդ նպաստավոր կացությունից զրկելու միակ միջոցը նրանց վրա հարձակվելն ու պարտության մատնելն է, սակայն այս լուծումն *Անտանտի ուժերի համար անմիջապես կիրառելի չէ*»: Ուստի Արևելքում Ֆրանսիայի համար «միակ ճշմարիտ և հնարավոր ռազմավարությունը *մաշեցնող պատերազմ մղելն է*»:<sup>71</sup>

Եթե 1915թ. երկրորդ կեսին Ֆրանսիայի բարձրաստիճան ղեկավարության կողմից առաջին աշխարհամարտում Ֆրանսիայի քաղաքական ու ռազմական անելիքներն ու խնդիրները ճշտելու նպատակով հրավիրված խորհրդաժողովների ու նրանցում ծավալված քննարկումների հետ առնչվող նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում, հանուն պատմական ճշմատության, պարզել, թե Ֆրանսիան ռազմաքաղաքական բնույթի ինչպիսի առսաջնահերթ շահերից էլնելով որդեգրեց իր բանակը «խնայելու», «մաշեցնող պատերազմ» մղելու, Արևելքում «առժամաքար իր թշնամիների գերակշռությունը ընդունելու» և ըստ այդմ էլ Ալեքսանդրետի շրջանում արշավանքի ձեռնարկումն «անկարելի» համարելու դիր-

քորոշումները, ապա Եգիպտոսում գտնվող ֆրանսիական դիվանագիտական, զինվորական և այլ ծառայությունների պատասխանատու պաշտոնյաների՝ այդ օրերի գործունեությունն արտացոլող հարուստ նյութերը, որոնք մինչև հիմա չօգտագործված վիճակում գետեղված են եղել Ֆրանսիայի արտաքին, ներքին, ռազմական ու ռազմածովային գործոց նախարարությունների արխիվներում, թույլ են տալիս բացատրել հիմնահարցի չուսումնասիրված և անտեսված նոր ծայքերն ու նրբերանգները, պատասխանել վաղուց իրենց պատմագիտական լուծմանն սպասող շատ հարցադրումների: Դրանց շարքում առնանձնացման և կարևորման արժանի են հետևյալ խնդիրները՝ 1) ինչու՞ Ֆրանսիային լրջորեն վախեցնում էր Ալեքսանդրետի շրջանում Անգլիայի կողմից ինքնուրույն՝ առանց Ֆրանսիայի մասնակցության արշավանք ձեռնարկելու ամեն մի հնարավորություն, առաջարկ և հեռանկար. 2) ինչու՞ և ինչպիսի՞ հիմնավորումներով էր Ֆրանսիան մշտապես մերժում հայերին և Սիրիայի մյուս տեղաբնակներին զինելու և նրանց իսկ ուժերով թուրքերին պարտության մատնելու բոլոր առաջարկները. 3) ինչու՞ Ֆրանսիային, որին քաջածանոթ էին հայությանը բաժին ընկած բնաջնջման սարսափների բոլոր մանրամասները, և որոնք նա այդպես անհոգորեն օգտագործում էր իր քարոզչական պայքարում, չէին անհանգստացնում Կիլիկիայի հայազրկման սպառնալիքն ու հեռանկարը, և ինչու՞ Կիլիկիայի հայազրկումը Ֆրանսիայի կողմից չէր դիտվում իբրև լուրջ վտանգ իր ռազմավարական շահերի համար. 4) որո՞նք էին դեռևս Ֆրանսիային օգնության խնդրանքներով և համագործակցության առաջարկներով դիմող հայ քաղաքական շրջանակների սխալներն ու մոլորությունները:

Բանն այն է, որ արդեն 1915թ. սեպտեմբերին Եգիպտոսում գտնվող անգլիական զինվորական իշխանությունները, որոնք ի դեմս գորավար Մաքսվելի, ի սկզբանե կիսում էին Քիթչեների տեսակետները, «Եգիպտոսի անվտանգությունն երաշխավորելու լավագույն միջոցը համարելով Ալեքսանդրետի շրջանում ցամաքահանման գործողությունը», սկսեցին Intelligence Service-ի (քրիտանական հետախուզության – Ե.Գ.) լավագույն մասնագետների աշխատակցությամբ մշակել

<sup>70</sup> «Հորիզոն», Մելանիկ, 25-ը հուլիսի, 1931թ.:

<sup>71</sup> «Հորիզոն», Մելանիկ, 27-ը հուլիսի, 1931թ.:

Ալեքսանդրեանի շրջանում հարձակողական գործողությունների պլանը, որի «իրագործումն, անկասկած, պետք է դառնար բրիտանական Գլխավոր Սպայակույտի քննարկման առարկան»:<sup>72</sup>

Ավելին, գորավար Մաքսվելն, անշուշտ, նկատի առնելով Պորտ-Սաիդի ճամբարում հայտնված Մուսա լեռան հերոսական հայության ռազմական ներուժը և նրանց անսահման ձգտումը՝ շարունակելու իրենց կռիվը հայությանը բնաջնջող և իրենց հայրենիքը հայազրկող դարավոր թշնամու հետ, ընդունեց Մուսա լեռան ճանաչված առաջնորդ Տիմլաքյանին և նրան առաջարկեց, նախ, ստեղծել 1000 հոգուց բաղկացած հայկական լեգեոն և ապա՝ «մասնակցել Ալեքսանդրեանի շրջանում անգլիացիների կողմից ձեռնարկվելիք արշավանքին», որը նպատակ ուներ հանկարծակի ավիհանմամբ և արագ հարձակումով՝ գրավել «Թուփրակ Կալեի և Օրոնտ գետի դելտայի միջև ընկած տարածքը, ավերել և շարքից հանել Հալեպը Ադանայի հետ կապող Բախչեի թունելը, քանդել այդ շրջանում կառուցվող էլեկտրակայանները»:<sup>73</sup>

Միայն և թյուր մեկնաբանությունների տեղիք չտալու համար հարկ է պարզաբանել, որ թե՛ 1915 թվականին և թե՛ 1916 թվականին Անգլիայի ազդեցիկ քաղաքական շրջանակների ու գործիչների, հատկապես Եգիպտոսի անգլիական իշխանությունների շահագրգռվածությունն Ալեքսանդրեանի արշավանքով, երբեք պայմանավորված կամ թելադրված չի եղել արևմտահայության գլխին կախված ցեղասպանությունը կանխելու և կամ տեղահանված ու տարագրված հայությանը ոչնչացումից փրկելու մարդասիրական մտահոգությամբ: Անվիճելի իրողությունն այն էր, որ բրիտանացիներին այդ քայլին մղում էին առաջին հերթին Մերձավոր և Միջին Արևելքի նավթաբեր շրջաններին տիրելու, դրանք Ֆրանսիային չզիջելու, դեպի Հնդկաստան տանող ռազմավարական մատույցներն անվտանգ դարձնելու ձգտումները: Սակայն նույնքան անառարկելի է նաև այն իրողությունը, որ Մեծ Բրիտանիայի գաղու-

քային ու ծավալապաշտական նպատակներն իրականացնելու կոչված Ալեքսանդրեանի արշավանքն, անկախ Անգլիայի ենթակայական ձգտումներից, իր մեջ պարունակում էր ինչպես արևմտահայությանը ցեղասպանությունից շատ բանով փրկելու կարողականությունն, այնպես էլ արևմտահայության ինքնապաշտպանական պայքարի իրական նեցուկը դառնալու հնարավորությունը: Միանգամայն բնական ու հասկանալի էր հայ քաղաքական դեկավարության անժխտելի և օրինական ձգտումներն օգտագործելու Անգլիայի վերոհիշյալ ծրագրերն ու ձգտումները՝ համուն արևմտահայության ինքնապաշտպանության ու գոյատևման: Ահա թե ինչու այդ հողի վրա ռազմաքաղաքական համաձայնությունը շահավետ ու ձեռնտու էր, թե՛ հայկական և թե՛ անգլիական կողմերի համար: Սակայն դժբախտությունն այն էր, որ այդ համաձայնությունը հակասում էր տարածաշրջանում Ֆրանսիայի հետապնդած ծավալապաշտական ձգտումներին:

Անհանգստացած անգլիացիների՝ արդեն գործնական քայլերի տեսք ընդունող գործողություններից և այն փաստից, որ «հայերի առաջնորդն՝ ելնելով իր հայրենակիցների՝ թուրքերի դեմ որքան կարելի է շուտ կռվելու ցանկությունից, ուրախությամբ ընդունել է գորավար Մաքսվելի առաջարկը»<sup>74</sup>, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Դելքասեն 1915թ սեպտեմբերի 20-ին Կահիրեում Ֆրանսիայի լիազոր-նախարար Դեֆրանսից պահանջեց շտապ պարզել, թե մինչև ո՞ր է հասել և ի՞նչ ընթացքի մեջ է Ալեքսանդրեանի վրա հարձակման անգլիական պլանը, որին մասնակցելու առաջարկով գորավար Մաքսվելը դիմել է Մուսա լեռան հայ ապստամբների առաջնորդին»<sup>75</sup>: Կատարելով իր վերադասի պահանջը՝ Դեֆրանսը արդեն 1915թ. սեպտեմբերի 21-ին հանդիպեց Տիմլաքյանի հետ և պարզեց, որ «հայերը թեև շատ են ցանկանում կռվել ֆրանսիացիների կողքին», սակայն եթե անգլիացիները խնդրեն հայերի աջակցությունը և մասնակցությունն Ալեքսանդրեանի գործողությանը, նրանց տրամադրելով զենք, զինամթերք, հանդերձանք

<sup>72</sup> Les Grandes Puissances....., Opt. cit., doc.N 93, p. 80.

<sup>73</sup> Ibid doc.N 88, p. 78.

<sup>74</sup> Les Grandes Puissances....., Opt. cit., doc. N 90, p. 78.

<sup>75</sup> Ibid, doc. N 90, p. 79.

և հրամանատարական-սպայական կազմ, ապա հայերը չեն կարող մերժել անգլիացիներին»: Դեֆրանսը դրանից հետո հայերին խորհուրդ տվեց զինվել համբերությամբ և սպասել Ալեքսանդրեոսի շրջանում ափհանում սկսելու որոշմանը», միևնույն ժամանակ հայերի գլխի տակ փափուկ բարձ դնելով, նա հանգստացրեց Տիմլաքյանին, որ «ֆրանսիական և անգլիական կառավարությունները հայերի հարցում համագործակցում են»:<sup>76</sup>

Ամենայն հավանականությամբ տեղեկացված չլինելով ճիշտ այդ օրերին Ալեքսանդրեոսի շրջանում ռազմական գործողության դիմելու հարցում ֆրանսիական կառավարության արդեն ձևավորված դիրքորոշումներին և չզիտենալով, որ Ֆրանսիայի համար խնդիրը ոչ թե Ալեքսանդրեոսի օպերացիայում իր ղեկավարության և գերակշռող դերի ապահովումն է, և ոչ էլ այդ գործում Ֆրանսիայի կողմում հայ կամավորների մասնակցության երաշխավորումը և այդ կապակցությամբ հայերի համար անգլիացիների հետ մրցակցային պայքար մղելը, Դեֆրանսը 1915թ. սեպտեմբերի 22-ին Դելքասենին ուղղված իր հեռագրում բավականին հաջող հիմնավորում էր Ալեքսանդրեոսի օպերացիայում Ֆրանսիայի կողմում հայ կամավորների մասնակցությունից սպասվող օգուտները. «Մուսալեռցի հայերը հրաշալի պարտիզաններ են, և նրանք ֆրանսիացի սպաների ղեկավարությամբ կարող են հանդուգն հարձակումներ կատարել և ոտքի հանել տարածաշրջանի ողջ հայ բնակչությանը: Սպասելով Ձեր հրահանգներին՝ ես անհրաժեշտ եմ համարում չբացահայտել հայ կամավորների օգտագործման հարցում անգլիական իշխանությունների հետ ունեցած մեր մրցակցությունը, և եթե Ձեր կողմից հայ կամավորների օգտագործումն անհրաժեշտ նկատվի, ապա ես հարկ եմ համարում նրանց հետ այդ հարցով համաձայնություն կնքել»:<sup>77</sup>

Եգիպտոսում Ֆրանսիայի ռազմական և դիվանագիտական ներկայացուցիչները երկար չսպասեցին Փարիզի հրահանգներին. 1915թ. սեպտեմբերի 22-ին ռազմական գործոց

նախարար Ալեքսանդր Միլերանը Եգիպտոսում Ֆրանսիայի ռազմական կցորդ Սեն-Էնթենին տեղեկացնելով, որ «գորավար Մաքսվելն առանց Դարդանելի դաշնակից զորքերի գլխավոր հրամանատարության համաձայնության, որը գտնվում է Ֆրանսիայի ձեռքին, չի կարող սկսել Ալեքսանդրեոսի օպերացիան», զգուշացնում էր, որ Ֆրանսիան «անընդունելի է համարում հայ կամավորների ներգրավումն այդ գործողությանը»:<sup>78</sup>

Ալեքսանդրեոսի շրջանում ռազմական արշավանք կազմակերպելու և հայ կամավորների մասնակցության հարցերի նկատմամբ Ֆրանսիայի դիրքորոշումները շատ ավելի որոշակի և հանգամանորեն արտահայտեց արտաքին գործերի նախարար Դելքասեն, որը 1915թ. սեպտեմբերի 26-ին Դեֆրանսին ուղղված հրահանգիչ հեռագրում հետևյալ կերպ էր բացատրում և մեկնաբանում Ֆրանսիայի որդեգրած մերժողական կեցվածքը. «Մեր կարծիքն այն է, որ չի կարելի քաջալերել հայ բնակչության ապստամբությունը Թուրքիայում այնքան ժամանակ, մինչև որ մենք կկարողանանք արդյունավետորեն օգնել ապստամբներին: Ներկա պայմաններում առկա ռազմաճակատներից դուրս ո՛չ Անգլիան, և ո՛չ էլ մենք չենք կարող ռազմական գործողություններ ձեռնարկել: Ուրեմն, պետք է խուսափել հայերի այնպիսի օգտագործումից, որը կարող է հանգեցնել միայն անարդյունավետ պարտիզանական հարձակումների»,<sup>79</sup> և որ այս պայմաններում ապստամբության փորձը կարող է բերել միայն համընդհանուր ջարդերի, որի համար պատասխանատու կլինեն Դաշնակիցները»:<sup>80</sup>

Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարի այս հրահանգներում «արևմտահայության ընդհանուր ջարդերը կանխելու» մտավախությամբ իբր թելադրված քաղաքական ուղեգծի հիմնավորումների հպանցիկ վերլուծությունն անգամ բավական է հասկանալու համար, որ դրանք ի սկզբանե շինծու և մտացածին էին, իրենց հիմքով՝ *հակահայկական*, քանի որ, նախ, Ֆրանսիան ու նրա քաղաքական բարձրաստիճան ղե-

<sup>76</sup> Les Grandes Puissances....., Opt. cit., doc. N 94, p. 81.  
<sup>77</sup> Ibid, doc. N 97, p. 83.

<sup>78</sup> Les Grandes Puissances....., Opt. cit., doc. N 97, p. 83.

<sup>79</sup> Ibid, doc. N 108, p. 101.

<sup>80</sup> Ibid, doc N 112, p. 104-105.

կավարությունը վաղուց արդեն իրազեկ էին Թուրքիայում արևմտահայության ինչպես զանգվածային ջարդերին, այնպես էլ դրանց չափերին, և դա լայնորեն օգտագործում էին Գերմանիայի դեմ սովոր քարոզչական պատերազմում, ուստի և հայերի ընդհանուր ջարդեր չառաջացնելու խնդիրն արհեստաձին էր, քանի որ դրանք վաղուց արդեն սկսվել և ծավալվում էին:

Երկրորդ, Ֆրանսիան, թույլ չտալով և արգելելով արշավանքն Ալեքսանդրետի շրջանում, իրականում հայությանը չէր ազատում արդեն սկսված զուլումից, այլ ճիշտ հակառակը, ամեն օր սրի քաշվող արևմտահայ զանգվածներին և Միջագետք տարագրված խլեակներին գրկում էր այդ օրերին փրկության միակ և իրական հնարավորությունից: Երրորդ, որդեգրելով նման քաղաքականություն, Ֆրանսիան իրեն ոչ թե ազատեց հայոց ցեղասպանությունը կանխել չկամենալու և այն նվազագույն չափերի հասցնելու «պատասխանատվությունից», այլ հայության ֆիզիկական ոչնչացման գործում իր պատասխանատվության չափերը մեծացրեց ճիշտ այնքանով, որքանով ինքը չուզեց մասնակցել կամ օգնել Ալեքսանդրետի արշավանքին, և ապա ճիշտ նույնքանով, որքանով ջանքեր գործադրեց խանգարելու և իր «վետոն» դնելու, որպեսզի նման արշավանք իրականացնելու հնարավորությունից զրկվեն անգլիացիներն ու նրանց հետ ռազմական համագործակցության պատրաստ հայ կամավորական զորաջոկատները: Չորրորդ, այդ պատասխանատվությունը մեծացավ ճիշտ այնքանով, որքանով Ալեքսանդրետի՝ հաջողության հասնելու մեծ հավանականություններ ունեցող արշավանքը ստիպելու էր ցեղասպան Թուրքիային դադարեցնել սկսված ջարդերը, ինչը, անշուշտ, հնարավոր կդարձներ ցեղասպանությունից մազապուրծ եղած և տարագիր հայության փրկությունը: Նույնքան անհիմն են չքմեղանալու նապատակով Դեքասեի կողմից բերվող այն պատճառաբանությունները, որ իբր Ֆրանսիայի նման Անգլիան ևս ի վիճակի չէր վերը հիշատակված շրջանում սկսել Ալեքսանդրետի արշավանքը՝ անհրաժեշտ զորք չունենալու պատճառով: Իրականում հարցն այստեղ ոչ այնքան և ոչ միայն զորք առաքելու հնարավորության կամ դրա բացակայության մեջ էր, որքան

այն իրողության մեջ, որ Ֆրանսիան՝ 1915թ. սեպտեմբերի 17-ի դրությամբ, կրելով մարդկային մեծ կորուստներ (458.57 զինվոր և 12.777 սպա՝ սպանված, 5898 սպա և 349.632 զինվոր՝ անհայտ կորած, 22.283 սպա և 256.312 զինվոր՝ թիկունք տեղափոխված)<sup>81</sup> և ի վիճակի չլինելով անհրաժեշտ զորաբաժին տրամադրել Փոքր Ասիայում իր շահերը պաշտպտնելու նպատակով Ալեքսանդրետի արշավանքին մասնակցելու և կամ նրանում գերակշիռ դեր ձեռք բերելու համար, ամեն ինչ արեց, որ թույլ չտա Անգլիային ինքնուրույն սկսելու այդ գործողությունը, որի համար վերջինս, ի տարբերություն արյունաքան ֆրանսիական բանակի, ուներ ռազմական անհրաժեշտ ներուժ և պատրաստվում էր այդ նպատակի համար օգտագործել նաև հայության ուժերը: Ուստի, ռազմական արշավանքի հետաձգումը կատարվեց ո՛չ այնքան ռազմական դրադապատճառներով, որքան քաղաքական, քանի որ Ֆրանսիան ոչ մի կերպ չէր կարող հանդուրժել, որ Անգլիան ռազմական հաջողության հասնելու մեծ հավանականություն ունեցող գործողություններ ձեռնարկի Կիլիկիայում և Սիրիայում, որոնք հղի էին այդ շրջաններում Անգլիայի քաղաքական գերիշխանության հաստատման սպառնալիքով, իսկ Ֆրանսիայի պարագայում՝ դրանք կորցնելու վտանգով: Իր համար վտանգավոր այդ զարգացումների առաջն առնելու համար, և բնավ ոչ «արևմտահայությանն ընդհանուր ջարդերից» զերծ պահելու մտավախությունից էր, որ Ֆրանսիան պարզապես կարողացավ «ստիպել» Անգլիային միառժամանակ ետ կանգնել մտահաղացված արշավանքից:

Այս ամենից ակնհայտորեն բխում է, որ 1915-1916թթ. Ալեքսանդրետի շրջանում արշավանքի օգնությամբ արևմտահայության ֆիզիկական գոյության և ապա փրկության խնդիրը, առավել ևս առանց իր մասնակցության այդ խնդիրի լուծման տարբերակը երբեք չհայտնվեց Ֆրանսիայի հետապնդած ո՛չ ռազմական և ո՛չ էլ քաղաքական գերակայությունների շարքում: Այդ խնդիրն, ավաղ, առաջնային ու կենսական էր միայն հայության համար, իսկ «բարեկամ» ու «դաշնակից» Ֆրանսի-

<sup>81</sup> Ռ. Պուանկարե, Իմ Օրագիրը, «Հորիզոն», Մելանիկ, 22-ը ապրիլի, 1931թ:

այի համար երկրորդական և անկարևոր: Այստեղ, սակայն հարկ է խուսափել նաև հարցի պարզունակ պատկերացումներից: Այս ամենն, անշուշտ, չէր նշանակում, որ Ֆրանսիան շահագրգիռ էր արևմտահայության կոտորածով, այնպես, ինչպես Թուրքիան կամ նրա մեղսակից Գերմանիան, բայց դա մնանապես չէր նշանակում, որ հանուն արևմտահայության անվտանգության և փրկության Ֆրանսիան պատրաստ էր զոհաբերել իր համար կարևոր համարվող խնդիրները և իմպերիալիստական շահերը: Ֆրանսիան ցանկանում էր և անպայմանորեն կողջուներ Կիլիկիայի հայության փրկության համար ձեռնարկվելիք միայն այնպիսի ռազմաքաղաքական և դիվանագիտական ձեռնարկ, որը վտանգի տակ չէր դնի Սիրիայում և Կիլիկիայում նրա տիրապետությունը հաստատելու հավակնությունները: Ցավոք, հայ ժողովրդի համար ճակատագրական այդ պահին Ֆրանսիան չուներ իր այդ խանդուտ հավակնությունը պաշտպանելու ուժն ու կարողությունը: Սակայն պարզ էր նաև ու որոշակի, որ այդ երկիրն ու նրա քաղաքական ղեկավարությունը ոչ մի դեպքում չէին ողջունելու Կիլիկիայի հայության փրկության յուրաքանչյուր ձեռնարկ ու ծրագիր, եթե դրանք կարող էին բերել Սիրիայում և Կիլիկիայում մեկ այլ՝ թեկուզ և դաշնակից տերության ռազմաքաղաքական դիրքերի և գերիշխանության հաստատմանը՝ ի վնաս և ի հաշիվ Ֆրանսիայի ծավալապաշտ շահերի ու ձգտումների: Այստեղից էլ Ֆրանսիայի իմպերիալիստական շահերի տեսակետից թեև հասկանալի, բայց հայ ժողովրդի համար ըստ էության աղետալի հետևանքներ թողած նրա հակազդեցությունը Անգլիայի ձեռնարկներին, որը իր հաղթական զորական ուժի շնորհիվ կարող էր չհեռանալ այն տարածքներից, որոնք նա վաղուց համարում էր «Եգիպտոսի բանալին»: Ակնհայտ էր, որ իրադարձությունների զարգացման նման տարբերակի դեպքում Ֆրանսիան այդ տարածաշրջանում կորցնելու էր իր գերիշխանության հաստատման ամեն մի հեռանկար: Ահա թե ինչու իր իմպերիալիստական շահերն ամեն ինչից վեր դասող Ֆրանսիան չէր կարող համաձայնվել Ալեքսանդրետի արշավանքի օգնությամբ բնաջնջման սպառնալիքի տակ գտնվող հայության այլընտրանքային փրկությանը: Եթե փորձենք բանաձևել,

ապա իրադարձությունների զարգացման այդ ուղին Ֆրանսիայի համար ուներ հետևյալ տեսքը՝ «*Անգլիայի օգնությամբ փրկված հայություն՝ առանց Ֆրանսիայի ղեկավար մասնակցության*», մի բան, որ հավասարագոր էր նրա շահերի կորստյանը՝ ինչպես ողջ Սիրիայում, այնպես էլ Կիլիկիայում: Մյուս կողմից, և դրանում էր Կիլիկիայի դեռևս կենդանի մնացած հայության ողբերգության էական կողմը՝ *հայազուրկ Կիլիկիան՝ առանց Անգլիայի տիրապետության*, միանգամայն ընդունելի տարբերակ էր Ֆրանսիայի համար: *Այսինքն՝ հայազուրկ Կիլիկիա ունենալու հեռանկարը Ֆրանսիայի համար շատ ավելի գերադասելի լուծում էր, քան Կիլիկիան՝ փրկված հայությամբ, սակայն ցանկացած մեկ այլ պետության գերիշխանությամբ*: Ֆրանսիայի նման վերաբերմունքն առավել բացատրելի է դառնում, երբ նկատի ենք առնում այն հանգամանքը, որ Ֆրանսիան սկսած 19-րդ դարի 80-ական թվականներից, անփոփոխ համառությամբ պնդում էր, որ Կիլիկիան *հայկական* չէ, իսկ նրա հայ բնակչությունը փոքրամասնություն է կազմում: Ֆրանսիան, փաստորեն, չէր նույնացնում «*հայ*» և «*Հայաստան*», «*Կիլիկիա*» և «*կիլիկիահայություն*» հասկացությունները, որոնք հայության համար բացարձակ արժեք էին *ներկայացնում*: Վերը թվարկած դեպքերում նույնպես, շարունակելով նախորդ շրջանի իր գաղափարական որդեգրումները, Ֆրանսիան իր համար էական նշանակություն ձեռք բերած հայկական հողերի հարցը դիտարկելիս երբեք չէր ելնում *այդ հողերի վրա հայ ժողովրդի ապրելու և այնտեղ գոյատևելու անհրաժեշտության ընդունումից և կարևորումից*: Ընդհակառակը, հայությանը որակելով որպես փոքրամասնություն, իսկ հայկական հողերը՝ առաջին հերթին Կիլիկիան, որպես հայությունից անկախ գոյություն ունեցող արժեք, նա Կիլիկիայի նկատմամբ իր մոտեցումները երբեք կախվածության մեջ չդրեց այդ հողերի վրա հայերի ապրել-չապրելու խնդրից: Ժամանակի հայ քաղաքական ղեկավար շրջանակներն իրենց մտածումների և ձեռնարկների հիմքում դնելով «*չկա՝ Կիլիկիայի հայություն, չկա՝ և չի՝ կարող լինել Կիլիկիա*» կանխադրույթը, միամտաբար կարծում էին, որ Կիլիկիայով կենսականորեն շահագրգիռ Ֆրանսիան ամեն ինչ կանի փրկելու նաև տեղի հա-

յությանը: Մինչդեռ, Ֆրանսիայի ռազմաքաղաքական առաջնահերթությունները որոշող ղեկավար այրերն ամենևին չէին բաժանում հայության ղեկավար քաղաքական շրջանակների կարևորումները: Իրենց շահերի դիրքերից ենլնելով, նրանք սառնասրտորեն մտածում էին, որ հայ փոքրամասնության «ցավալի» կորուստն այդ տարածաշրջանին տիրելու պարագայում չի խանգարի իրենց հետագայում մեծամասնություն կազմող մյուս ժողովուրդների հետ «երկիրը քաղաքակրթել» և այնտեղ հաստատել Ֆրանսիայի տնտեսական, քաղաքական ու մշակութային գերիշխանությունը:

Առհասարակ հայեցակարգային արժեք ունի այն հանգամանքի միանշանակ ընդգծումը, որ հայության բոլոր երանգի քաղաքական կազմակերպություններն, ազդեցիկ գործիչներն ու դեմքերը լծվելով Ֆրանսիայի կառքին, նրա հետ կապելով ինչպես հայ ժողովրդի լինել-չլինելուն առնչվող շատ հարցերի լուծման, այնպես էլ արևմտահայությանը ֆիզիկական բնաջնջումից փրկելու իրենց հույսերը, հստակ չէին պատկերացնում, որ Ֆրանսիայի պես մի երկրի համար հայ ժողովուրդն ամենից առաջ և ընդամենը ռազմական շատ որոշակի ներուժ էր ներկայացնում, և ըստ այդմ էլ նույնքան քաղաքական ու բարոյական կշիռ ունեցող ամբողջություն, որին նա թեև չէր անտեսում իր ռազմաքաղաքական հաշվարկներում և ձեռնարկներում, բայց և դրանից ամենևին չէր բխում, որ այդ ուժը Ֆրանսիայի համար այնքան կարևոր ու անզանցառելի էր, որ նա հանուն այդ ուժի պատրաստ էր անտեսել իր ծավալապաշտ շահերը և կամ փորձել այն ներդաշնակության մեջ դնել դրանց հետ: Իրականում առաջին աշխարհամարտի տարիներին հայության ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրներում Ֆրանսիան երբեք այն աստիճան չկարևորեց հայերի հավաքական ուժն ու արժեքը, որպեսզի իր քաղաքական որդեգրումների ժամանակ գերապատվություն տար դրանց և կամ փորձեր ներդաշնակել դրանք իր համար կարևոր խնդիրների հետ: Ընդհակառակը. 1914թ. վերջերից ընդհուպ մինչև 1916թ. վերջը, երբ պատմությունն ամեն անգամ Ֆրանսիային հնաավորություն էր ընձեռում ճշգրտելու իր վերաբերմունքը հայության գոյության հիմնահարցերի նկատմամբ, նա,

անվարան, այդ հարցերի լուծումը գոհաբերում էր իր համար ավելի կարևոր հարցերի լուծմանը:

Հայ ժողովրդի համար այդ բախտորոշ ժամանակաշրջանում պատմությունն այդպես էլ չստեղծեց հայ ժողովրդի և Ֆրանսիայի կենսական շահերի զուգորդման այնպիսի հնարավորություն, ինչպիսին ունեցան սերբերը, որոնց ֆիզիկական բնաջնջումից փրկելու համար Ֆրանսիան չվարանեց 100-հազարանոց բանակ ուղարկել Սերբիա՝ դրանում տեսնելով նաև իր շահերի գերակայությունը: Ցավալի է, բայց փաստ, որ երբեք հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցերը Ֆրանսիայի կողմից այնպես չկարևորվեցին, որպեսզի թե՛ իր և թե՛ իր դաշնակիցների միջոցով նա փութար կանխել հայ ժողովրդի բնաջնջումը և կամ փրկել նրան Միջագետքի անպատների մահվան ճամբարներից: Եվ ամեն անգամ, երբ Ֆրանսիան հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող ընտրություն էր կատարում, այդ երկրի պետական գործիչները, հանուն իրենց ծավալապաշտ շահերի առաջնահերթության, հանգիստ խղճով անտեսում էին մեր *համեստ ու սահմանափակ ուժի հակազդեցությունը* մի կողմ դնելով «խղճի, մարդկային քաղաքակրթության», «իրավունքի, արդարության» մասին սկզբունքները, որոնք այնպես շոյալորեն նրանք օգտագործում էին Գերմանիայի և Թուրքիայի դեմ մղվող քարոզչական արշավում:

Մի կողմից, տեղյակ չլինելով, իսկ մյուս կողմից էլ թերևս դրությունից դուրս գալու այլ ճանապարհ չտեսնելու պատճառով, հայ ազգային ու քաղաքական գործիչները շարունակում էին միամտաբար կարծել, որ «ասպետական» ու «վեհանձն» Ֆրանսիայի համար Կիլիկիոյ հայության փրկությունն առաջնահերթ կարևորություն է ներկայացնում: Ելնելով այդ խախուտ թեզից՝ նրանք դիմում էին այդ երկրի արտաքին գործոց նախարարությանը և խնդրում, որ Ֆրանսիան առանձին, կամ իր Դաշնակիցների հետ «ռազմական արշավանք ձեռնարկի դեպի Կիլիկիա, որը, նախ կօգնի Եգիպտոսում ապաստանած հայերին վերադառնալու իրենց տները, և ապա Ֆրանսիային և իր Դաշնակիցներին հնարավորություն կտա փրկելու Միջա-

գետք տարագրված հայերին»:<sup>82</sup> Մինչդեռ պարզորոշ ուրվագծվում էր, որ Կիլիկիայում Անգլիայի ազդեցության հնարավոր ուժեղացման չեզոքացմամբ մտահոգ, սեփական ուժերով Ալեքսանդրետի օպերացիան ձեռնարկելու հնարավորությունից զուրկ Ֆրանսիան, ո՛չ միայն չէր կարող հավանություն տալ կամ չեզոք մնալ իր Դաշնակիցների (իմա՝ Անգլիա.-Ե.Գ.) ուժերով՝ տեղահանված ու փախստական հայերին փրկելու նպատակով կազմակերպվելիք արշավանքին, այլև շատ կտրուկ աշխատելու էր կասեցնել իրադարձությունների նման զարգացումը:

Ալեքսանդրետի՝ շրջանում ռազմական արշավանքին ընդդիմանալու Ֆրանսիայի իրական դրդապատճառներն ըմբռնել չկարողանալու հերթական ապացույցն այն նամակն էր, որով Փարիզի «Հայկական Կոմիտեի» անունից 1915թ. սեպտեմբերի 29-ին Արշակ Չոպանյանը դիմեց արտաքին գործոց նախարարության «Ասիա-Օկեանիա» դեպարտամենտի փոխտնօրեն Ժան Գուլին՝ դարձյալ ելակետ ունենալով այն սխալ կանխադրույթը, որ Ալեքսանդրետի շրջանում հայերի ու անգլիացիների ուժերով արշավանքի դեմ Ֆրանսիայի ընդդիմությունն իբր թե թելադրված էր «անհաջողության մատնվելու» և «հայկական ընդհանուր ջարդեր չառաջացնելու» մտավախությամբ: Արշակ Չոպանյանն, ընդունելով Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարի տեսակետն այն մասին որ «այս պահին, առանձին, ինքնուրույն հայկական շարժում սկսելն անզգույշ քայլ կլինի», այնուհետև Ֆրանսիային «անհաջողության» մատնվելու մտավախությունից ազատելու և Ալեքսանդրետի շրջանում արշավանքի նկատմամբ նրա կեցվածքը փոխելու մտադրությամբ «ցանկալի էր համարում, որ Դաշնակիցները՝ հայերի ստեղծվելիք լեգեոնների հետ մեկտեղ անհապաղ դիմեն ռազմական գործողությունների: Ես գիտեմ, որ այս պահին Կիլիկիայում թուրքերը շատ չնչին ուժեր ունեն, և զաղտնաբար ու լավ նախապատրաստված ներխուժումը, իրենց երկիրը լավ ճանաչող հայկական ջոկատների և լեռներում ամրացած հայ պարտիզանների աջակցությամբ, *անպայմանորեն կա-*

*վարտվի հաջողությամբ(ընդգծ.իմն է Ե.Գ.)* և ողջ Կիլիկիայի արագ զավթումով»:<sup>83</sup> Անշուշտ, հիմնավոր էին Ա. Չոպանյանի և հայ մյուս գործիչների ապացույցներն Ալեքսանդրետի արշավանքի հաջող ավարտ ունենալու և Կիլիկիայի արագ գրավման վերբերյալ, սակայն խնդիրն այն էր, որ եթե հայ ժողովրդի ու նրա քաղաքական ղեկավարության համար անվերապահորեն ընդունելի էր Կիլիկիայի արագ գրավումն *երաշխավորող ցանկացած հաջող արշավանք*, ցանկացած Դաշնակից երկրի գլխավորությամբ, որին նա պատրաստ էր բերելու իր ողջ աջակցությունն ու օգնությունը, ապա Ֆրանսիան ամենևին էլ պատրաստ չէր և երբեք չէր համաձայնի այն բանին, որ իր չեզոքությունը կամ դրական վերաբերմունքը խոստանա հաջող ավարտի մեծ հավանականություն ունեցող ամեն մի արշավանքի, առավել ևս Կիլիկիան ազատագրող և նրա հայությանը փրկության ափ դուրս բերող մի այնպիսի արշավանքի, որը ոչ միայն չէր ամրապնդելու իր հավակնությունները Սիրիայի և Կիլիկիայի նկատմամբ, այլև ֆրանսիական զորքերի բացակայության պայմաններում կարող էր բերել անգլիացիների դիրքերի և տիրապետության ամրապնդմանն այդ տարածաշրջանում:

Ուստի և իր մեջ նման «հետևանքներ» պարունակող, թեկուզ և հայության համար փրկարար նշանակությամբ, ցանկացած «հաջող» ավարտ երաշխավորող արշավանքի ձեռնարկումը չէր կարող արժանանալ Ֆրանսիայի դրական, բարեհաճ վերաբերմունքին և ստանալ նրա օրհնությունը, ինչին այդպես ձգտում էին և հավատում հայության որոշակի քաղաքական ղեկավար շրջանակներն, իսկ նրանց հետ՝ նաև թերևս հայ ժողովրդի մեծագույն մասը:

1915թ. սեպտեմբերի 29-ին «Հայկական Ընդհանուր Բարեգործական Միության» և դեռևս 1914թ. նոյեմբերին Պողոս Նուբարի կողմից Կահիրեում ստեղծված «Հայոց ազգային շահերի պաշտպանության Միության» քարտուղար Վահան Մալեզյանը այցելեց Դեֆրանսին և նրան փոխանցեց նախ, «զենք կրելու ընդունակ իր հայրենակիցների ցանկությունը՝ Կիլիկիա

<sup>82</sup> Les Grandes Puissances .....,Opt. cit.,doc. N 16, p. 13-16.

<sup>83</sup> Les Grandes Puissances.....,Opt. cit., doc. N 111, p. 103.

մեկնելու և այնտեղ թուրքերի դեմ կռվելու մասին», և ապա՝ այդ կապակցությամբ այդ կազմակերպությունների կողմից դեռևս 1915թ. հուլիսի 20-ին և 24-ին գորավար Մաքսվելին հասցեագրված երկու հուշագրերը, որոնցից Դեֆրանսը եզրակացրեց, որ «մեր գրահակիրների կողմից մուսալեռցիների փրկումից դեռ շատ առաջ անգլիական ռազմական իշխանությունները քննարկել են Ալեքսանդրետի շրջանում հայկական ապստամբական շարժմանը քաջալերելու և աջակցելու նպատակահարմարության և անհրաժեշտության հարցը»<sup>84</sup>: «Հայոց ազգային շահերի պաշտպանության Միության» մշակած այդ երկու հուշագրերում առաջ էր քաշվում միայն հայ կամավորների ուժերով Կիլիկիան ազատագրելու համարձակ ծրագիրը, ըստ որի ավիհանում կատարած հայ կամավորական ջոկատներին տեղում պետք է միանային շուրջ 50.000 հայ կամավորներ, իսկ Կիլիկիայի հայությունը դառնալու էր թուրքերի դեմ մղվելիք զանգվածային պարտիզանական պատերազմի հենարանը»<sup>85</sup>:

Եվ եթե Կահիրեում Ֆրանսիայի լիազոր նախարար Դեֆրանսը հայերի առաջարկը մերժելու համար դրսևորելով զարմանալի «հնարամտություն», խորհուրդ տվեց ետ կանգնել «ընդհանուր ջարդերի բերող» ծրագրից, և հաշվի առնել, որ «500 մարտունակ հայերի ուժերով ցամաքահանումն առանց կանոնավոր զորքերի աջակցության, երբ դաշնակիցներն ի վիճակի չեն այստեղ ռազմական գործողությունների դիմել, նշանակում է նրանց դատապարտել անխուսափելի մահվան և ոչնչացման»<sup>86</sup>, ապա «Հայոց ազգային շահերի պաշտպանության Միության» առաջարկած ծրագրի նկատմամբ բոլորովին այլ տեսակետ ու կարծիք ունեցող Միջերկրական ծովում Ֆրանսիայի ռազմածովային ուժերի 3-րդ էսկադրայի հրամանատար, Մուսա լեռան հայության փրկության մեջ մեծագույն վաստակ ու ծառայություն մատուցած փոխծովակալ Դարիոն:

1915թ. հոկտեմբերի 1-ին Ֆրանսիայի ռազմածովային ուժերի նախարար Օգանտորին ուղարկված իր զեկուցագրերից

<sup>84</sup> Les Grandes Puissances....., Opt. cit., doc. N 112, p. 104-106.

<sup>85</sup> Ibid, doc. N 112, p. 104-108.

<sup>86</sup> Ibid, doc. N 114, p. 109-110.

մեկում քննարկելով Սիրիայի հարցն ընդհանրապես, և մոտ ժամանակներում իրագործվելիք անհրաժեշտ քայլերը, մասնավորապես, Դարիոն միանշանակ գտնում էր, որ «Սիրիայում ռազմական էքսպեդիցիա սկսելու համար *երբեք պահը այդքան հարմար չի եղել, ինչպես այժմ*: Այդ արշավանքը կարելի է իրագործել արդեն 1915թ. նոյեմբեր ամսին, քանի որ այժմ Տավրոսից և Ամանոսից հարավ գտնվող թուրքական զորքերը մեկուսացված և կտրված են երկրի մյուս մասերից, թուրքական զորքերի մեծ մասը ուղարկվել է դեպի Դարդանեղ և Կ. Պոլիս, տեղում մնացած զորքերի մթերային պաշարները շատ աղքատ են, իսկ թուրքական իշխանությունների բռնագրավումներից, հետապնդումներից և բռնի զորահավաքներից դժգոհ սիրիացի ու հայ բնակչությունը պատրաստ է ապստամբելու և իրեն օգնության եկող զորքերին ընդունելու որպես ազատարարների»: Նա Ալեքսանդրետի շրջանում արշավանք ձեռնարկելու համար առաջարկում էր որպես հիմք ընդունել «Հայոց ազգային շահերի պաշտպանության Միության» կողմից գորավար Մաքսվելին ներկայացրած պլանը, որը նախատեսում էր. «ա) զորքերի ավիհանում Ալեքսանդրետի շրջանում. բ) հանկարծակի հարվածներով գրավել Տավրոսի լեռնանցքները. գ) Սիրիայի լրիվ մեկուսացումը կայսրության մյուս շրջաններից. դ) ազատարար զորքերի և ապստամբների շարժումը դեպի հարավ»: Նկատի առնելով այն հանգամանքը, որ «Ֆրանսիայի համար ներկա պայմաններում անհնար է գլխավոր ռազմաճակատներից թեկուզև համեստ ուժերի առանձնացումը՝ Սիրիայում ռազմական էքսպեդիցիա ձեռնարկելու համար», Դարիոն առաջարկում էր «անհապաղ սկսել հայ և սիրիացի բնակչության զինումը՝ նրանց ապստամբության նախապատրաստելու նպատակով», և պահանջում «3-րդ էսկադրայի տրամադրության տակ դնել 20.000 հրացան՝ ծովափնյա բնակչությանը բաժանելու, և 800 հրացան՝ տրամադրելու Ալեքսանդրետի ավերին դեսանտի պատրաստվող հայ կամավորներին»<sup>87</sup>:

Այս ամենի մասին տեղեկացնելով արտգործնախարար Դելարսեին և շեշտելով, որ Դարիոն «անշուշտ, միշտ է», և, «որ

<sup>87</sup> Les Grandes Puissances....., Opt it., doc. N 114, p. 111-112.



ինքը չի կասկածում, որ անհրաժեշտ քանակությամբ զենք բաժանելով տեղացի բնակչությանը, մեզ համար դժվար չի լինի Կիլիկիայում դեռևս մնացած հայերին և ապա սիրիացիներին ոտքի հանել», որ «նկատի առնելով թուրքական զորքերի փորձառությունը, ապստամբների թվի արագ աճի իրական հեռանկարը, նույնիսկ շատ հնարավոր է, որ ապստամբ բնակչությունը կարողանա վռնդել թուրքերին և դառնալ Սիրիայի տերը»,<sup>88</sup> Եգիպտոսում Ֆրանսիայի լիազոր-նախարար Դեֆրանսը այլուհանդերձ, իր նախարարին միանգամայն անկեղծորեն զեկուցում էր, որ ինքն իրադարձությունների նման զարգացումը Ֆրանսիայի համար վտանգավոր է համարում: Ամբողջությամբ մեջ բերվելու արժանի այդ զեկուցագիրը պատկանում է այն հազվագյուտ ծրագրային փաստաթղթերի շարքին, որտեղ Ֆրանսիայի բարձրաստիճան դիվանագետներից մեկն անկեղծորեն շարադրում է և բացահայտում 1915-1916թթ. Սիրիայում և Կիլիկիայում, հետևաբար, այդքանով հայոց ֆիզիկական բնաջնջման հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող հարցերում Ֆրանսիայի որդեգրած առաջնահերթությունների խոհանոցի մեծ մասը. «Ես գտնում եմ, որ առանց ֆրանսիական կանոնավոր զորքերի բավարար մասնակցության ոչ մի պարագայում չի կարելի նպաստել Սիրիայի բնակչության ապստամբական շարժմանը: Դա մեզ համար վտանգավոր կլինի և այն դեպքում, երբ շարժումը ձախողվի, քանի որ ... նրանց օգնել չկարողո՞ւնալը ծանր հարված կհասցնի մեր հեղինակությանը: Ես Ֆրանսիայի համար վտանգավոր եմ համարում նաև այն շատ հնարավոր ելքը, երբ հաղթանակի տեղական բնակչության ապստամբությունը և թուրք իշխանությունները վռնդվեն Սիրիայից: Եթե մենք մեր զորքերով չմասնակցենք երկրի ազատագրմանը և չկարողանանք տեղական բնակչությանը ցույց տալ, որ մենք ենք նրանց ազատարարները, չկարողանանք նրանց պաշտպանել թուրքերի հնարավոր հարձակումներից. մենք այս ամենի հետևանքով չենք կարողանա քարձրագնել մեր հեղինակությունը և չենք կարողանա մեր ձեռքը վերցնել երկրի կազմակերպման (իմա՝ ղեկավարման)–Ե.

<sup>88</sup> Les Grandes Puissances....., Opt it., doc. N 114, p. 111-112.

Գ.) գործը, որտեղ կարող են ծագել բազմաթիվ անկարգություններ և անիշխանություն, որոնք ոչ մի տեղական իշխանություն չի վիճակի չի լինի ճնշել:

Ահա թե ինչու իմ կարծիքով միակ ճիշտ լուծումն ինտերվենցիան է՝ Սիրիայի գրավումը մեր զորքերի կողմից, որը հատկապես հիմա հարաբերականորեն հեշտ կլինի՝ Թուրքիայի ներկա կացության և տեղական բնակչության աջակցության պատճառներով: Բայց եթե եվրոպական նոր ռազմաճակատներում մեր զորքերի կենտրոնացման պատճառով հնարավոր չէ ֆրանսիական զորքերի առաքումը Սիրիա, ապա տեղական բնակչության ընդհանուր ապստամբությունը գրգռելու բոլոր փորձերը՝ առանց մեր աջակցության և ղեկավարության, վտանգավոր կլինի որքան մեր, նույնքան էլ տեղական բնակչության համար»:<sup>89</sup>

Ահա, նկատի առնելով Ֆրանսիայի համար իրադարձությունների զարգացման այդ «վտանգավոր» հետևանքները, Ֆրանսիան մերժեց ինչպես իր միջերկարական ռազմածովային 3-րդ էսկադրայի հրամանատար փոխծովակալ Դարիոյի, այնպես էլ Եգիպտոսի «Հայոց ազգային շահերի պաշտպանության Միության» կողմից արված՝ ռազմագիտական առումով անխոցելի առաջարկները, որոնք միանգամայն հնարավոր էին համարում Սիրիայից ու Կիլիկիայից «թուրքերի վռնդումը» տեղական բնակչության և հայ կամավորների ուժերով՝ «առանց Ֆրանսիայի աջակցության և ղեկավարության»:

Շատ շուտով, 1915թ. նոյեմբերի 15-ին, Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Փոլ Կամբոնը անթաքույց ուրախությամբ շտապում էր հաղորդել Ֆրանսիայի արտաքին գործոց նոր նախարար Բրիանին, որ վերացված է Ֆրանսիայի համար այդքան «վտանգավոր» հետևանքներով հղի, բայց հայ ժողովրդի ֆիզիկական գոյության առումով փրկարար Ալեքսանդրետի օպերացիայի կանխման և արգելման ճանապարհին ընկած զլխավոր խոչընդոտը. «Լորդ Զիջենների առաջարկները դարձան քրիտանական կառավարության և ռազմական իշխանությունների քննարկման առարկա և չարժանացան ո՛չ Գլխավոր

<sup>89</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 114, p. 111-112.

շտաքի, ո՛չ War Officie-ի (պատերազմի նախարարության-  
Ե.Գ.), ո՛չ էլ ծովակալության հավանությանը»: Բացատրելով  
Ալեքսանդրետի շրջանում արշավանքից Անգլիայի հրաժար-  
ման պատճառները, Փոլ Կամբոնը նշում էր. «Անգլիան, պատե-  
րազմ մղելով Բալկաններում, Դարդանելում, Եգիպտոսում,  
Հնդկաստանում, և անհանգստացած Պարսկաստանում գեր-  
մանական ազդեցության աճից, այլևս ի վիճակի չէ տարացրել  
իր ուժերը, առավել ևս շարժման մեջ դնել նոր գորաբաժիններ,  
որոնք նա չգիտի, թե որտեղից վերցնի»:<sup>90</sup>

Ալեքսանդրետի շրջանում արշավանքից Անգլիայի  
հրաժարման մեջ վերոհիշյալ գործոնների դերը չանտեսելով՝  
մենք, այնուհանդերձ, գտնում ենք, որ վերոհիշյալ պատճառ-  
ները չեն, որ այդ գործում գլխավոր դեր են խաղացել, և ավելին,  
դրանք միայն երկրորդական ազդեցություն են ունեցել Անգլիա-  
յի դիրքորոշման փոփոխության վրա: Գլխավորը, որի մասին  
«պատահաբար» մոռացել էր նշել Լոնդոնում Ֆրանսիայի փոր-  
ձառու դեսպանն, այն էր, ինչի մասին իրավամբ ցավով ու  
դժգոհությամբ, սակայն անկեղծորեն շեշտում էր Եգիպտոսում  
անգլիական զորքերի հրամանատար, լորդ Զիթչենտերի հա-  
մախոհ գորավար Մաքսվելը. «Այո, Ալեքսանդրետի շրջանում  
ռազմական գործողություններ սկսելն անհրաժեշտություն է:  
Սակայն ֆրանսիացիներն այդ շրջանում կովելու համար  
անհրաժեշտ բանակությամբ զորքեր չունեն, *իսկ մենք չենք  
համարձակվում զնալ այնտեղ*, որպեսզի դժգոհություն  
չպատճառենք ֆրանսիացիներին, որոնք շատ լավ հիշում են  
Նապոլեոնի խոսքերն այն մասին, թե՛ «Սիրիան Եգիպտոսի  
բանալին է»:<sup>91</sup>

Խնդրի այս կողմը չի վրիպել նաև ֆրանսիացի հեղի-  
նակավոր պատմաբան Մարկ Ֆեռոյի տեսադաշտից, որը իր  
«Le Grande guerre 1914-1918» մեծարժեք մենագրության մեջ  
գրում է. «Բրիտանացիները և ֆրանսիացիները Գալիպոլիի ա-  
դետից հետո փորձում էին փրկել իրենց դեմքը, և բրիտանացի-  
ները առաջ քաշեցին Ալեքսանդրետի կողմից Կիլիկիայում

հարձակում ձեռնարկելու պլանը: Բրիտանացիների համար  
այդ պլանի իրականացումը հեշտ էր քանի, որ նրանք գտնվում  
էին Եգիպտոսում և Կիպրոսում: Սակայն ֆրանսիացիները ընդ-  
դիմացան և անգլիացիները ետ կանգնեցին իրենց պլանից»:<sup>92</sup>

1916թ. մարտ-ապրիլ ամիսներին Թուրքիայի ասիական  
տիրույթները բաժանելու նպատակով Պետրոգրադում տեղի ու-  
նեցած գաղտնի բանակցությունների ժամանակ Անգլիան և  
Ֆրանսիան, ի դեմս իրենց լիազոր-պատվիրակներ Մարկ  
Մայքսի և Ժորժ Պիկոյի, միացյալ ջանքերով հասան այն բա-  
նին, որ Ռուսաստանը ստիպված եղավ ընդունել Թուրքիայի  
բաժանման նրանց առաջարկած տարբերակները: Բանակցու-  
թյունների արդյունքում ստորագրված գաղտնի համաձայնու-  
թյունները՝ նախատեսում էին, որ Ֆրանսիան Թուրքիայի բա-  
ժանման դեպքում պետք է ստանար ոչ միայն Սիրիան և  
Կիլիկիան, այլև Արևմտյան Հայաստանի մի զգալի մասը, որն  
իր մեջ ներառում էր, այսպես կոչված «Հռոմեական Հայաստա-  
նը» կամ պատմական Փոքր Հայքի տարածքները:

Իր դաշնակիցների ճնշման առաջ տեղի տված Ռուսաս-  
տանն, առանձնապես ռուսական բանակի բարձրագույն հրա-  
մանատարությունը, հույս ուներ Ֆրանսիային արված տարած-  
քային զգալի զիջումների դիմաց ստանալ ռազմական փոխ-  
հատացում «իր երախտապարտ» դաշնակիցներից: Ավելի  
կոնկրետ, Կովկասյան ռազմաճակատում ռուսական զոքերի  
վիճակը թեթևացնելու նպատակով Ռուսաստանը պահանջում  
էր ակտիվ ռազմական գործողություններ սկսել Թուրքիայի  
փոքրասիական տարածքներում: Սիս այսպես դարձյալ կյան-  
քի կոչվեց բազում անգամներ Ֆրանսիայի կողմից մերժված Ա-  
լեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ձեռ-  
նարկելու հարցը, որը թեև շատ ավելի նվազ չափով, քան 1915  
թվականին, սակայն դեռևս պահպանում էր Միջագետքի անա-  
պատներում դանդաղ մահով մեռնող հայությանը փրկելու իր  
կարողունակությունը և կարևորությունը:

Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Մեծ իշ-  
խան Նիկոլայ Նիկոլաևիչի ռազմակայնում 4-5 օր անցկացրած

<sup>90</sup> Les Grandes Puissances..... Opt. cit., doc. N 143, p. 142-143.

<sup>91</sup> Ibid, doc. N 114, p. 110-112.

<sup>92</sup> M. Ferro, La Grande guerre, 1914-1918, Paris 1969, pp. 243-244.

և տեղում ռուսական զորքերի անմխիթար վիճակին ծանոթանալուց հետո Լոնդոն վերադարձած Մարկ Սայքսը եկել էր այն հաստատ համոզմանը, որ անհրաժեշտ է դրականորեն լուծել Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի այն պահանջները, որոնք «նա վերջերս ռուսական բանակի գլխավոր սպայակույտի պետ զորավար Ալեքսեևի միջոցով ուղղել էր ֆրանսիական բանակի Գլխավոր Սպայակույտին»: Ըստ այդ պահանջների՝ Կովկասյան ռազմաճակատի ռուսական զորքերի վրա թուրքական մեծաթիվ զորքերի հնարավոր հարձակումը կանխելու, և նրանց ուժերի մեծ մասին այլ ուղղությամբ շեղելու նպատակով դաշնակիցները պետք է Ալեքսանդրեանի շրջանում ստեղծեին նոր ռազմաճակատ և սկսեին լայնամասշտաբ հարձակողական գործողություններ: Մարկ Սայքսը վստահ էր, որ 1916թ. մայիս-հունիս ամիսներին թուրքերն ի վիճակի կլինեին Էրզինջան-Դիարբեքիր գծի երկարությամբ կենտրոնացնել 350-450 հազարանոց մի բանակ, որի «օգնությամբ նրանք անպայման կհարձակվեին միայն թույլ դիմադրություն ցույց տալու ընդունակ ռուսական թվապես զգալիորեն տկարացած բանակների վրա»: Մ. Սայքսը չէր թաքցնում նաև իր մտավախությունը թուրքերի հաջող հարձակման հետևանքների վերաբերյալ, որի արդյունքում նրանք ոչ միայն արևմտյան Հայաստանից դուրս կմղեին ռուսական զորքերին, այլև «շատ հնարավոր է, որ գրավեին Թիֆլիսը և հաղթահարեին Կովկասի սահմանները»:<sup>93</sup>

Այս ամենը նկատի առնելով և ամբողջությամբ կիսելով ռուսական բանակի Գլխավոր Սպայակույտի տեսակետները, Մարկ Սայքսը «թուրքերի միանգամայն հնարավոր հարձակումը կանխելու միակ միջոցը համարում էր նրանց դեմ նոր ռազմաճակատի բացումը, որը կստիպեր Կովկասի վրա հարձակվելու համար նախատեսված զորքերի մի զգալի մասը տեղափոխել այս նոր ուղղությամբ»:<sup>94</sup>

Դրա հետ միասին Մարկ Սայքսը, որը դեռ 1915թ. ամռանն ակտիվորեն պաշտպանում էր Կիլիկիայում ռազմական գործողություններ սկսելու տեսակետը, գտնում էր, որ Ա-

լեքսանդրեանի շրջանում անմիջապես ռազմական գործողություններ սկսելը գործնականորեն անհնար է, քանի որ, նախ՝ «դաշնակիցներն իրենց տրամադրության տակ չունեն անհրաժեշտ քանակությամբ ծովային փոխադրամիջոցներ», և հետո «ամռան ամիսներին ցամաքահանվող զորքերը կարող են տարբեր համաճարակային հիվանդությունների գոհ դառնալ՝ նկատի ունենանով ռազմական գործողությունների շրջանի կլիմայական պայմանները»: Այդ օբյեկտիվ բնույթի դժվարությունների հաշվառումից ելնելով Մ. Սայքսը «Ալեքսանդրեանի շրջանում ռազմական գործողություններ սկսելու հնարավոր լավագույն ժամկետը համարում էր 1916թ. հոկտեմբեր ամիսը»: Իսկ մինչ այդ, Ալեքսանդրեանի ավիանաման գործողության ուշացումը փոխհատուցելու նպատակով Մ. Սայքսը առաջարկում էր «Սուեզի ջրանցքի երկարությամբ տեղաբաշխված զորքերի մի մասն օգտագործել Պաղեստինի ուղղությամբ հարձակում սկսելու համար, որը և կստիպի թուրքերին այդ վտանգի դեմն առնելու համար նոր ուժեր տեղափոխել այստեղ՝ ի հաշիվ Անատոլիայում ստեղծվող զորաբանակի»:<sup>[A1]</sup>»:<sup>[A2]</sup>

Անգլիայում արևելքի հարցերի հեղինակավոր գիտակի համարում ունեցող Մ. Սայքսի կողմից Ալեքսանդրեանի շրջանում նոր ռազմաճակատ բացելու ռուսական առաջարկի հետևողական պաշտպանությունը Ֆրանսիայի ղեկավար շրջաններին լրջորեն անհանգստացրեց և ստիպեց նորից գործադրել այն մերժելու համար նախկինում օգտագործված բոլոր փաստարկները և ճնշումները, որպեսզի ապացուցեն այդ ծրագրի ինչպես «անհնարին լինելն», այնպես էլ «աննպատակահարմարությունը»: Առաջինը «մարտի» նետվեց Անգլիայում Ֆրանսիայի դեսպանատան ռազմական կցորդ գեղապետ Լափանուզը, որն իր իսկ խոստովանությամբ իր «ողջ գիտելիքները» գործադրեց, որպեսզի «ցույց տա Մ. Սայքսի ծրագրի անիրականությունը: Ես Մ. Սայքսին մատնանշեցի, - գրում էր նա,- որ նրա ծրագրի իրագործման համար կպահանջվի անգլիական զորքերի մեծաքանակ կուտակում Կիպրոսում, որոնք, սակայն, այսօր անհրաժեշտ են պատերազմի գլխավոր ռազմաբեմե-

<sup>93</sup> Les Grandes Puissances....Opt. cit.,doc. N 207, p. 193.

<sup>94</sup> Ibid.

<sup>95</sup> Les Grandes Puissances ..... Opt. cit., doc. N 207, p. 194.

րում:

Ես նրան հիշեցրի նաև ֆրանսիական կառավարության և ֆրանսիական բանակի գլխավոր Սպայակույտի տեսակետներն այն մասին, որ նրանք անընդունելի են համարում դաշնակիցների կողմից նոր ռազմաճակատների բացումը, որոնք կստիպեն նրանց տարացրել իրենց ուժերը և թույլ չեն տա իրագործել ուժերի կենտրոնացումն արևմտյան ճակատներում, որտեղ որ միայն կարող է կռվել հաղթանակը: Ես նրան նաև ծանոթացրի War Officie-ի տվյալների հետ, համաձայն որոնց թուրքերը մինչև 1916թ. ամառը Հայաստանում ի վիճակի կլինեն կենտրոնացնելու հարձակողական ոչ լուրջ ներուժ ունեցող, ընդամենը՝ 200-250 հազարանոց մի բանակ, և ավելացրի, որ իմ կարծիքով պաշտպանական բնական մեծ հնարավորություններ ունեցող երկրում ռուսները դժվար թե չկարողանան պարտության մատնել, և կամ զգալիորեն թուլացնել թուրքական բանակի առաջխաղացումը»:<sup>96</sup>

Մ. Սայքսը, չընդունելով այդ փաստարկների հիմնավորվածությունը, փորձեց Ալեքսանդրետի շրջանում նոր ռազմաճակատ բացելու և ակտիվ ռազմական գործողություններ ծավալելու իր տեսակետների անհարժեշտությունն ապացուցել հենց ֆրանսիացիների կողմից իր դեմ այդքան հաճախ օգտագործվող «*միայն Արևմտյան ճակատներում է կռվում հաղթանակը*» փաստարկ-հաղթաթղթով: «Ռուսական բանակի նահանջը և Կովկասի գրավման վտանգը կործանարար ազդեցություն կունենա Ռուսաստանի ավելի ու ավելի վատթարացող ներքին կացության վրա և եթե ռուսները Կովկասում սկսեն նահանջել, դուք չեք կարող արգելել, որ Ռուսաստանի կառավարությունն Արևմտյան ռազմաճակատում գտնվող իր ուժերի զգալի մասը դուրս բերի և ուղարկի այդ ուղղությամբ՝ դրանով իսկ թուլացնելով Արևմտյան ռազմաճակատի հարձակողական ներուժը»:<sup>97</sup>

Կովկասյան ռազմաճակատի փլուզման աղետաբեր հետևանքների այս, իրոք որ, իրատես կանխատեսությամբ

մատնանշված սպառնալիքն անգամ չազդեց Ֆրանսիայի ո՛չ քաղաքական, և ո՛չ էլ ռազմական դեկավարության դիրքորոշումների վրա, որոնք ոչ միայն կտրուկ մերժեցին գնդապետ Մ. Սայքսի ու Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի Ալեքսանդրետի շրջանում նոր ռազմաճակատ բացելու հրամայական թելադրանքներն ապացուցող բոլոր փաստարկներն, այլև մեծ բավականությամբ ընդունեցին տեղեկություններն այն մասին, «որ War Officie-ը չի կհսում ինչպես Մեծ իշխան Նիկոլայի մտավախություններն, այնպես էլ Մ. Սայքսի՝ Պաղեստինի վրա հարձակվելու վերաբերյալ տեսակետները»:<sup>98</sup>

Ավելին՝ ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատար Ժոֆրը 1916թ. ապրիլի 25-ի թվակիր իր զեկուցագրով շտապում էր հանգստացնել և ուրախացնել վարչապետ Բրիանին՝ նրան վստահեցնելով, որ Պաղեստինի գրավումն անգլիացիների կողմից, որը Ֆրանսիան համարում էր իր ամենակարևոր տարածքային հավակնություններից մեկը, նույնպես, ինչպես և Ալեքսանդրետի շրջանում նոր ռազմաճակատ բացելն անհնարին են, քանի որ «որպեսզի արդեն 1916թ. հունիսին անգլիական բանակները Հայաստանում գտնվող ռուսական բանակների վիճակը դյուրացնելու համար կարողանան Սիւնայի անապատներից շարժվել դեպի Պաղեստին, ապա դրա համար անհրաժեշտ կլինեն մեծ քանակությամբ տրանսպորտային միջոցներ, որոնք, սակայն, այդ բանակները չունեն իրենց ձեռքի տակ, և հենց այդ պատճառով էր, որ անգլիացիները դեռ 1916թ. մարտին չկարողացան իրականացնել Ալ-Արիշի գրավումը: Պարզ է, որ Պաղեստինի գրավման համար անգլիացիներին հարկ կլինի մինչև 1916թ. հունիսն անապատների միջով կառուցել 140 կմ երկարությամբ երկաթուղի: Սակայն այդ խնդրի անհնարինությունը ցույց է տալիս, որ Մ. Սայքսի կողմից Պաղեստինի ուղղությամբ հարձակում սկսելու առաջարկները նույնպես և նույն չափով անիրագործելի են»:<sup>99</sup>

Մարկ Սայքսը Ալեքսանդրետի շրջանում նոր ռազմաճակատ բացելու և լայնամասշտաբ հարձակողական ռազմա-

<sup>96</sup> Les Grandes Puissances ..... Opt. cit., doc. N 207, p. 194.

<sup>97</sup> Ibid, doc. N 207, p. 194.

<sup>98</sup> Les Grandes Puissances ..... Opt. cit., doc. N 218, p. 200.

<sup>99</sup> Ibid.

կան գործողություններ ծավալելու իր պլաններում շատ որոշակի տեղ և դերակատարություն էր վերապահում «հայկական կամավորական ջոկատներին», որոնք, դաշնակից զորքերի հետ համագործակցելով, իրենց համարձակ գործողություններով մեծ վնաս պետք է հասցնեին թուրքերի կոմունիկացիաներին, և շարքից հանեին նրա թիկունքի ծառայությունները: Բնական է, որ Կիլիկիայի ազատագրմանը հետամուտ և Միջագետքի հայ տարագիրներին փրկելու, ինչպես նաև արևելահայության համար իրոք որ կենսական նշանակություն ունեցող Կովկասյան ռազմաճակատի կայունացմանը միտված Ալեքսանդրետի արշավանքին մասնակցելու առաջարկը մեծ գոհունակությամբ պետք է ընդունվեր ողջ հայ ժողովրդի կողմից, որը մեծ պատրաստակամությամբ իր ռազմական աջակցությունը կրեներ այդ գործին, և ոչ մի կերպ չէր հրաժարվի այդ նպատակով կամավորական ջոկատներ ստեղծելու առաջարկներից:

Սակայն գեներալ Ժոֆրը փորձեց Մ. Սայքսի նախագծի այս հնարավորությունը ևս ժխտել՝ բոլորովին գլխիվայր ներկայացնելով իրականությունը: Նա «հայկական կամավորական ջոկատներն ակտիվորեն օգտագործելու առաջարկի անհնարինությունն» ապացուցեց այն «փաստով», որ իբր թե՛ Հայոց Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, թե՛ Եգիպտոսի հայության քաղաքական-հոգևոր ղեկավարությունը, և թե՛ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը կտրականապես «ընդդիմացել են հայկական կամավորական ջոկատների կազմավորման և դրանք Կիլիկիայում օգտագործելու առաջարկներին»: Ուստի «ինչ վերաբերում է Կիլիկիայում հայկական կամավորական ջոկատների միջոցով 1916թ. ապրիլ ամսից սկսած թշնամու երկաթուղիները շարքից հանելու ծրագրին, ապա այն օրակարգից հանվել է Պատրիարքի պնդումների վրա՝ թուրքական նոր ռեպրեսիաներից խուսափելու համար: Ուրեմն ռազմական տեսակետից Սայքսի առաջարկները այս առումով ևս անիրագործելի են»:<sup>100</sup>

<sup>100</sup> Les Grandes Puissances....Opt. cit., doc. N 218, p. 200.

Ֆրանսիայի սպարապետի փաստարկներն այս հարցում մեղմ ասած անպարարություն են ներկայացնում, իսկ կոպիտ ասած պարզապես կեղծիք են: Իրոք, և՛ Պողոս Նուբարը, և՛ Եգիպտահայ գաղութի ղեկավարությունն անսալով Կ. Պոլսի Չավեն Պատրիարքի՝ դեռևս երկրում կենդանի մնացած հայությանը չվտանգելու համար զգույշ և խոհեմ լինելու հորդորներին և հրավերներին, կտրականապես հրաժարվեցին իրենց համաձայնությունը տալ այն առաջարկներին, որոնք նպատակ ունեին հայ կամավորներին օգտագործել որպես դիվերսանտների՝ առանց Կիլիկիայում դաշնակից զորքերի կողմից որևէ ռազմական գործողություն սկսելու հեռանկարի:

Իրերի նման դրվածքի պայմաններում, երբ Կիլիկիայում գործնականում արդեն հայ բնակչություն չէր մնացել, երբ դաշնակիցները հայ ժողովրդին չէին երաշխավորում Կիլիկիայում ձեռնարկել երկիրն ազատագրելու և Միջագետքի անապատներում տառապող հայությանը փրկելու կոչված ռազմական արշավանք, ավելի քան ակնհայտ էր, որ թշնամու թիկունք նետվող հայ դիվերսանտների գործողությունները բացի անխոհեմ վրեժխնդրությանը հագուրդ տալուց, հայ ժողովրդին ոչ մի շոշափելի արդյունք խոստանալ չէին կարող: Ընդհակառակը, դեռևս Թուրքիայում պատանդի վիճակում գտնվող հայության մնացորդները կարող էին զոհ գնալ թուրքական նոր բռնությունների, որոնց համար նմանատիպ գործողություններն արդարացման հրաշալի հնարավորություններ կընձեռնեին:

Ահա թե ինչու նման հետևանքներ խոստացող առաջարկությունները ոչ մի կերպ չէին կարող դրականորեն ընդունվել կամավորական ջոկատների կազմակերպման գործով զբաղվող և պատասխանատու հայ քաղաքական կազմակերպությունների և գործիչների կողմից: Չորավար Ժոֆրի կողմից մատնանշված մերժումը ճիշտ այդ հայության համար վտանգավոր ու անընդունելի առաջարկություններին էր վերաբերում, բաց ոչ ամենևին Մ. Սայքսի կողմից արվող հրավերին, որը հայության համար ոչ միայն ընդունելի էր, այլև շատ նպաստավոր, քանի որ Ալեքսանդրետի շրջանում նոր ռազմաճակատ բացելու և հարձակողական լուրջ գործողություններ սկսելու ծրագրին ակտիվ մասնակցություն ցուցաբերելը խոստանում

էր հայությանը նախ՝ Կիլիկիայի ազատագրություն, երկրորդ՝ Միջագետքի անապատներում տառապող հայության փրկության, և երրորդ՝ արևելահայության համար հիրավի կենսական նշանակություն ունեցող Կովկասյան ռազմաճակատին լուրջ օգնություն ցուցաբերելու և այն կայունացնելու շատ փափագելի հեռանկարներ: Ուստի, Մ. Սայքսի ծրագիրը, հակառակ Ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար գորավար Ժոֆրի մերկապարանոց և կեղծ պնդումների, միանգամայն իրագործելի էր՝ առնվազն հայության կողմից նրան տրվելիք ակտիվ և եռանդուն մասնակցության տեսանկյունով:

Սակայն այս ամենը ոչ մի ազդեցություն չունեցավ Ալեքսանդրետի շրջանում 1916թ. ամռանը և կամ աշնանը նոր ռազմաճակատ բացելու և Փոքր Ասիայում հարձակողական գործողություններ ձեռնարկելու՝ Ռուսաստանի կողմից առաջ քաշված և անգլիական պետական բարձրաստիճան պաշտոնյա Մարկ Սայքսի կողմից պաշտպանված ծրագրերին դրական լուծում տալու գործում, քանի որ Ֆրանսիան, հավատարիմ մնալով իր ռազմաքաղաքական առաջնահերթություններին, ոչ միայն դրական ընդունելության չարժանացրեց դրանք, այլև ընդհակառակը, կաշվից դուրս եկավ ապացուցելու այդ ծրագրի անիրագործելիությունն ու աննպատակահարմարությունը, գտնելով, որ Արևելքում Ֆրանսիան «իր ռազմական գործողությունները պետք է սահմանափակի միմիայն ծովում իր էսկադրաների գործունեությամբ»:<sup>101</sup> Իսկ հայությունը այդ բոլորի արդյունքում հերթական անգամ զրկվեց Կիլիկիայի ազատագրման, Միջագետքի անապատներում մեռնող հայության բեկորները փրկելու, և վերջապես արևելահայության համար ճակատագրական գործառնություններով բնորոշվող Ալեքսանդրետի շրջանում նոր ռազմաճակատ բացելու և Թուրքիայի դեմ հարձակողական լայն գործողություններ սկսելու ծրագրի գործադրումից:

Այսպիսով, բազմաբնույթ, և առաջին հերթին Ֆրանսիայի արտաքին և ռազմական գործերի նախարարությունների գործունեությունը վեր հանող փաստաթղթերի ուսումնասիրու-

<sup>101</sup> Les Grandes Puissances....Opt. cit., doc. N 218, p. 200.

թյունն ու վերլուծությունը պարզում են այն անժխտելի իրողությունը, որ Կիլիկիայում՝ Ալեքսանդրետի շրջանում լայնամասշտաբ և ինքնուրույն ռազմական գործողություններ մղելու և իր ծավալապաշտական խնդիրներն իր իսկ բանակների ուժերով լուծելու անընդունակ Ֆրանսիան ոչ միայն պարբերաբար և հետևողականորեն մերժեց արևմտահայությանն օգնելու բոլոր խնդրանքներն ու պատմության ընձեռնված հնարավորություններն, այլև, իր վրա վերցնելով հայոց ցեղասպանության մեջ մեղսակցության ու պատասխանատվության իր բաժին բեռը, այնքան ուժ, զորություն և կարողություն ունեցավ, որպեսզի հանուն իր ծավալապաշտ առաջնահերթ շահերի, շարունակ *խանգարի, արգելի և ձախողի* ինչպես իր դաշնակիցների՝ Անգլիայի և Ռուսաստանի, այնպես էլ հայ ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների կողմից արված ռազմական ու դիվանագիտական բնույթի այն բոլոր հրավերներն ու առաջարկները, որոնց իրականացումը կարող էր, նախ, շատ բանով կանխել հայոց ցեղասպանության գործադրումը, և ապա էականորեն նվազեցնել արևմտահայության ողբերգության չափերն ու ընդգրկումները:

Այս ամենի լույսի ներքո դժվար է համաձայնվել այն հաստատագրումների հետ, անգամ, եթե դրանք արվել են մեր կողմից հարգված և լուրջ պատմագիտական վաստակ ունեցող հեղինակի կողմից, ըստ որ «Թուրքայի դաշնակից Գերմանիայի համաձայնության պայմաններում, *Անտանտը, եթե ցանկանար, ի վիճակի չէր լինելու թուրքերին խանգարել իրականացնելու արևմտահայության զենոցիդը*»:<sup>102</sup>

Ավելացնենք նաև, որ նման, ըստ էության Ֆրանսիային արդարացնելու կոչված և նրան հայոց ցեղասպանության գործում ունեցած շատ որոշակի պատասխանատվությունից ազատող պնդումներով, դեռ 1916թ. հոկտեմբեր ամսին, հանդես եկավ ոչ այլ ոք, քան Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահ և արտաքին գործոց նախարար Արիստիդ Բրիանը, որը ավելի քաջածանոթ լինելով Ֆրանսիայի իրական դերակատարությանը հայոց ցեղասպանության մեջ, ձգտում էր բոլո-

<sup>102</sup> Խորշոռյան Լեոնորուշ, Հայկական Հարցը, Եր., 1995թ., էջ 39:

րին, և առաջին հերթին չեզոք երկրներին, հավաստիացնել ու համոզել, որ «Ֆրանսիան հնարավորություն չի ունեցել արգելելու թուրքական իշխանությունների բարբարոսությունը»<sup>103</sup>:

Ֆրանսիան այս կերպ կարողացավ լուծել իր շահերի համար խիստ «վտանգավոր» հետևանքներ պարունակող Ալեքսանդրետի արշավանքի խնդիրն՝ իր դաշնակցներին ետ պահելով այդ ձեռնարկն իրականացնելու մտադրությունից: Նրա համար հոգ չէր, որ այդ փառավոր «հաղթանակով» նա հայ ժողովրդին, հատկապես Կիլիկիայի հայությանը, վերջնականապես զրկում էր իր գոյությունը փրկելու միակ իրական հնարավորությունից, և ընդհակառակը, Թուրքիային տալիս էր Միջագետք աքսորված հայության ոչնչացման դիվահար գործն անարգել շարունակելու և ավարտելու իրական հնարավորություն:

## §2. Ֆրանսիական դիվանագիտությունը և արևմտահայության ցեղասպանությունը

1915թ. վերջերին, երբ հայ քաղաքական կյանքի ղեկավար կազմակերպությունների և գործիչների, առաջին հերթին Հայ Յեղափոխական Դաշնակցության համար պարզ դարձավ, որ դաշնակիցներն անկարող են *արագ և կարճ ժամկետում գետնել* Օսմանյան կայսրությանը, որ երկարատև «դիրքային պատերազմը» հնարավորություն է ընձեռում երիտթուրքերին առանց շտապելու մեթոդիկ ձևով ավարտին հասցնել արևմտահայության ոչնչացման և Հայաստանի հայազրկման դիվային ծրագիրը, իսկ Անտանտի տերությունները, Մեծ եղեռնը կանխելու համար քաղաքական լծակներ չունենալու հետ մեկտեղ, ո՛չ մի ցանկություն ու շահագրգռություն չունեն ակտիվ ռազմական գործողությունների դիմել Թուրքիայի փոքրասիական շրջաններում, հատկապես, Կիլիկիայում, որոնց հաջող ընթացքը կարող էր հայության մնացորդացին փրկել անխուսա-

փելի բնաջնջումից, որոշեցին «ամեն միջոցներով նախ, պահպանել թուրքահայի գոյությունը, փրկել նրա կյանքը, և նրանից հետո որոնել Թուրքաց Հայաստանի ապագայ քաղաքական դրության հարցը»<sup>104</sup> այսինքն՝ որոշեցին հանուն հայ ժողովրդի ֆիզիկական գոյության մի կողմ դնել մինչ այդ իրենց համար առաջնահերթային՝ «Հայաստանի ազատագրության» խնդիրը, և որոնել հայությանը եղեռնից փրկելու նոր, ոչ սովորական միջոցներ:

Գիտակցելով, որ այդ նպատակին հասնելու միակ միջոցը հայության մի զգալի հատվածին բնաջնջած և կենդանի մնացած տարագրյալ մյուս մասին անխուսափելի կործանում խոստացող պատերազմի դադարեցումն է, Հ. Յ. Դաշնակցությունն՝ ի դեմս Կովկասի, Կ. Պոլսի իր մի շարք պատասխանատու գործիչների, փորձեց արևմտահայության փրկության շահերին ծառայեցնել, մի կողմից, Թուրքիայի հետ իր համար ձեռնառու պայմաններով հաշտություն կնքելու Ռուսաստանի ռազմական և քաղաքական շահագրգռվածությունը, և մյուս կողմից՝ Թուրքիայի ամենագոր եռապետներից մեկի՝ Սիրիայում թուրքական զորքերի հրամանատար Ջեմալ փաշայի՝ Օսմանյան կայսրությունը վերջնական փլուզումից փրկելու նպատակով Անտանտի երկրների հետ համաձայնության գալու ձգտումները: Հ. Յ. Դաշնակցությունը նման հաշտությունը դիտելով արևմտահայությանն՝ օր օրի սաստկացող սպանդից փրկելու միակ և իրական միջոցն, այն զլուխ բերելու համար ակտիվ գործունեություն ծավալեց՝ իր վրա վերցնելով կողմերին բանակցությունների սեղանի շուրջը բերելու և հաշտության հասցնելու միջնորդի դժվարին գործը: Ահա այս ճանապարհով, առաջին աշխարհամարտի տարիների գաղտնի դիվանագիտության գրքում իր էջը գրեց մեր պատմագիտության մեջ քիչ անդրադարձների արժանացած «Ջեմալ փաշայի նախագիծը», որը Ֆրանսիայի կառավարության քննարկմանը ներկայացվեց 1915թ. դեկտեմբերի 26-ին՝ Փարիզում Ռուսաստանի դեսպան Իզվոլսկու կողմից. «ըստ Կ. Պոլսի հայկական շրջանակներից եկող տվյալների՝ Ջեմալ փաշան պատարստ է բացահայտորեն

<sup>103</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc.N 281, p 261.

<sup>104</sup> «Մշակ», 28-ը հունվարի, 1915թ.:

ապստամբելու Կ. Պոլսի կառավարության և գերմանացիների դեմ, եթե Անտանտի տերություններն ընդունեն նրա հետ հաշտության կնքելու հետևյալ պայմանները:

1. Տերություններն երաշխավորում են Ասիական Թուրքիայի անկախությունը և տարածքային ամբողջականությունը, որը բաղկացած պետք է լինի սուլթանի հովանու տակ գտնվող հետևյալ ավտոնոմ նահանգներից՝ Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Արաբիա, Հայաստան՝ Կիլիկիայի հետ միասին և Բուրդիստան:

2. Ջեմալ փաշան հռչակվում է սուլթան, որի իշխանությունը ժառանգաբար փոխանցվելու է հորից ավագ որդուն:

3. Ջեմալ փաշան հռչակում է Կ. Պոլսի կառավարության և սուլթանի տապալումը և պատերազմ հայտարարում Գերմանիային:

4. Կ. Պոլսի դեմ արշավանք ձեռնարկելու համար Անտանտի տերությունները պարտավորվում են Ջեմալ փաշային տրամադրել հրետանի և զինամթերք:

5. Պատերազմի ավարտից հետո Անտանտը Ջեմալ փաշային պետք է տրամադրի ֆինանսական օգնություն:

6. Ջեմալ փաշան պատրաստ է հրաժարվել Կ. Պոլսից և նեղուցներից:

7. Ջեմալ փաշան պարտավորվում է *անմիջապես ձեռք առնել անհրաժեշտ բոլոր քայլերը՝ հայ բնակչությանը փրկելու և մինչև պատերազմի ավարտը նրանց նյութապես ապահովելու համար*<sup>105</sup>:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Ս. Դ. Սագոնովը, Ֆրանսիային փոխանցելով հաշտության պայմանագրի այս նախագիծը, ըստ երևույթին, ակնկալում էր նրա դրական պատասխանն ստանալ, նկատի առնելով այն հանգամանքը, որ Ֆրանսիայի համար Արևելքում Թուրքիայի հետ պատերազմ մղելը, նրա մարդկային սահմանափակ պաշարների և բանակի կրած ծանր կորուստների պատճառով, դարձել է գրեթե անհնար, և որ Ֆրանսիան, փաստորեն, չունենալով Թուրքիայի փոքրասիական շրջանների ապագա կարգավիճակի վրա

ազդելու հնարավորություն, կրավարարվի իրեն առաջրակվող համեստ, բայց շոշափելի ձեռքբերումներով և կհամաձայնվի Ռուսաստանի հետ միասին վերոհիշյալ պայմաններով Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքել: Հ. Յ. Դաշնակցությունն իր վրա վերցնելով միջնորդի դերակատարությունը, բացի նշված նկատառումներից, Ֆրանսիայի դրական պատասխանն ակնկալելիս, անշուշտ, հավատում էր և հույս ուներ, որ նրա դրական դիրքորոշման վրա եթե ոչ զլխավոր, ապա գոնե ոչ աննշան ազդեցություն կունենա այն փաստը, որ իր համաձայնությամբ Ֆրանսիան նպաստելու է արևմտահայության ոչնչացումը դադարեցնելու և Միջագետքի անապատներում հայտնված հայ տարագիրների փրկության գործին:

Սակայն հավատարիմ մնալով իր սահմանափակ ռազմական ու քաղաքական հնարավորություններին ամենևին չհամապատասխանող ծավալապաշտական հավակնություններին, Ֆրանսիան ոչ միայն չհամաձայնվեց Ջեմալ փաշայի հետ բանակցություններ սկսելու առաջարկին, այլև ամենաակտիվ ձևով ընդդիմացավ դրան և ձախողեց հայոց փրկության համար բացառիկ նշանակություն ունեցող հաշտության պայմանագիրը կայացնելու բոլոր փորձերը: Այսպես, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Արիստիդ Բրիանն, ի պատասխան դաշնակից տերություններին «նվիրված հայ պատվիրակների միջնորդությամբ» Ջեմալ փաշայի հետ գաղտնի բանակցությունների մեջ մտնելու ռուսական կայսերական կառավարության հրավերին, 1915թ. դեկտեմբերին 28-ին Անգլիայում, Իտալիայում և Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպաններին՝ Փոլ Կամբոնին, Կամիլ Բարբերին և Մորիս Պալեոլոգին ուղղված հեռագրում, նկատի ունենալով, որ Ջեմալ փաշայի հետ կնքվելիք հաշտության պայմաններում անտեսված էին Ֆրանսիայի տարածքային հավակնությունները Սիրիայի և Կիլիկիայի նկատմամբ, նշում էր, նախ՝ որ «Սագոնովի *առաջարկությունը հանկարծակի է բերել Ֆրանսիայի կառավարությանը*, որը չի կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է այդ առաջարկը համաձայնեցնել այն պարտավորությունների հետ, որ ռուսական կառավարությունն ստանձնել է Սիրիայի և Կիլիկիայի վերաբերյալ Ֆրանսիայի հետապնդած ձգտումների

<sup>105</sup> Les Grandes Puissances...Opt. cit., doc. N 157, p. 156.



հետ կապված», և ապա «անհնար էր համարում ընդունել թուրքական կայսրության այն սահմանները, որոնք պետք է իրենց մեջ ներառեին Արաբիան և Միջագետքը»:<sup>106</sup>

Այս ամենի հետ մեկտեղ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարն իր դեսպաններից պահանջում էր ճշտել, թե «Ջեմալ փաշայի անունից հայերի կողմից բերված առաջարկները որքանով են համապատասխանում իրականությանը, և թե ինչ պայմաններում են դրանք արվել»:<sup>107</sup>

Միաժամանակ ձգտելով Ռուսաստանին մատնանշել, որ Ֆրանսիան բազում առիթներ է ունեցել թուրքերի հետ անջատ հաշտություն կնքելու՝ ի վնաս ռուսական շահերի, բայց չի գնացել այդ քայլին, որպեսզի չտոնահարի իր դաշնակցի շահերը, Բրիտանը Իզվոլսկուն հաղորդեց. «Մենք վերջին 6 ամիսների ընթացքում թուրք պատասխանատու անձանց կողմից ստացել ենք հաշտության բանակցություններ սկսելու շատ առաջարկներ՝ պայմանով, որ երաշխավորվի Թուրքիայի վեհապետությունը Կ. Պոլսի նկատմամբ, սակայն Ֆրանսիայի կառավարությունն ամեն անգամ մերժել է այդ առաջարկները»:<sup>108</sup>

Կատարելով Quai d'Orsay-ի ղեկավարի հանձնարարականը, 1915թ. դեկտեմբերի 30-ին Պալեոլոզը Պետրոգրադից նրան տեղեկացնում էր. «Ջեմալ փաշայի առաջարկությունները ռուսական կառավարությանն են փոխանցվել Հայաստանում Ռուսաստանի գաղտնի գործակալներից մեկի՝ բժիշկ Ջավրիկի կողմից, որը ներկայումս գտնվում է Բուխարեստում»:<sup>109</sup>

Հանդիպելով իր դաշնակիցների, առաջին հերթին Ֆրանսիայի համառ դիմադրությանը, Սազոնովը չնահանջեց, այլ փորձեց փրկել Ջեմալի հետ բանակցություններ սկսելու գործը, հավաստիացնելով Ֆրանսիային. «որ Ռուսաստանը մերժում է իր հետ պատերազմի ծանրության հիմնական բեռը տանող դաշնակցի՝ Ֆրանսիայի իրավունքներն ոտնահարող

բոլոր կարգի գաղափարները»: Նա խնդրեց Ֆրանսիայից «առաջադրել այն պայմանները, որոնք Ֆրանսիան անհրաժեշտ է գտնում Ջեմալ փաշայի հետ բանակցությունների ժամանակ քննարկել», և գնալով ավելի հեռու, նույնիսկ համաձայնվեց «բանակցությունների դեկը տալ Ֆրանսիայի և Անգլիայի ձեռքը, որոնք ավելի, քան Ռուսաստանը, շահագրգիռ են արաբական աշխարհի ապագա ռեժիմի հարցով», և ապա բանակցությունները սկսելու համար առաջարկեց օգտվել «բժշիկ Ջավրիկի միջնորդությունից, որն սկզբում գտնվում էր Մուշում, իսկ այժմ տեղափոխվել է Բուխարեստ»:<sup>110</sup>

Ֆրանսիան այս անգամ էլ իր դիրքորոշումները ճշտելիս մազաչափ անգամ նկատի չառնելով գոնե արմատահայության մնացորդացը փրկելու անհրաժեշտությունը, դարձյալ առաջին պլանի վրա դրեց իր ծավալապաշտական նպատակներն ու շահերը, հրաժարվեց անսալ Ռուսաստանի՝ հայ միջնորդների օգնությամբ հայակու պատերազմը դադարեցնելու նպատակով Ջեմալ փաշայի հետ բանակցություններ սկսելու հորդորները, և գաղտնի բանակցություններ սկսեց Լոնդոնում Անգլիայի հետ Թուրքիայի ասիական տարածքները բաժանելու վերաբերյալ: Ձեռք բերելով Անգլիայի համաձայնությունը՝ Փոքր Ասիայում իր տարածքային ձգտումները բավարարելու վերաբերյալ՝ մեծավ մասամբ ի հաշիվ Ռուսաստանի այդ տարածաշրջանում ունեցած տարածքային հավակնությունների, Ֆրանսիան գտավ, որ «Ջեմալ փաշայի հետ ասիական Թուրքիայի ամբողջականությունն երաշխավորելու վերաբերյալ բանակցություններն անհամատեղելի են այն բանակցությունների հետ, որոնք Ֆրանսիան այժմ վարում է բրիտանական կառավարության հետ»,<sup>111</sup> և հարցը վերջնականապես փակված համարելով՝ արտաքին գործոց նախարարության «Զաղաքական գործերի դեպարտամենտի» տնօրեն Դ. Մարժերին, նախ, բժ. Ջավրիկին հայտնեց, որ «Ֆրանսիան ոչ մի գործ չի ցանկանում ունենալ Ջեմալ փաշային Կ. Պոլսի կառավարության դեմ հանելու նպատակով այն բանակցությունների հետ, որոնք

<sup>106</sup> Les Grandes Puissances.....Opt. cit, doc. N 158, p. 157.

<sup>107</sup> Ibid, doc. N 158, p. 158.

<sup>108</sup> Ibid, doc. N 159, p. 158.

<sup>109</sup> Ibid, doc. N 158, p. 158.

<sup>110</sup> Les Grandes Puissances..... Opt. cit, doc. N 161, p. 161.

<sup>111</sup> Ibid, doc. N 167, p. 158.

նախատեսվում էին սկսել Բուխարեստում և Ալեքսանդրիայում՝ Ջեմալ փաշայի կողմից լիազորված հայ էմիսարների մասնակցությամբ»,<sup>112</sup> իսկ 1916թ. մարտի 22-ին բժ. Չավրիևին տեղեկացրեց, որ «նրա հետ ֆրանսիական կառավարությունն այլևս անելիք չունի, և որ նա ազատ է»:<sup>113</sup>

### §3. Ֆրանսիայի քաղաքական նպատակները և Մեծ եղեռնը

Առաջին աշխարհամարտի տարիներին Ֆրանսիան ոչ միայն ոչինչ չարեց ակտիվ ռազմական միջամտությամբ արևմտահայությանը ցեղասպանությունից փրկելու ուղղությամբ, որն իրականացնելու համար պատմությունը նրան բազում հնարավորություններ ընձեռեց, այլև օգտագործելով հայ ժողովրդի քաղաքական ղեկավարության վրա ունեցած իր անժխտելի ազդեցությունը, շատ հաճախ նրան մղեց ու «շահագրգռեց» ընդունելու հայ ժողովրդից միայն նորանոր զոհաբերություններ պահանջող և նրա ցեղասպան թշնամուն արևմտահայության բնաջնջումն արդարացնող պատրվակներ տրամադրող քաղաքական որոշումներ և գործնական քայլեր:

Այս իմաստով կարևորվում է այն դերակատարությունը, որ Ֆրանսիան ունեցել է հայկական կամավորական ջոկատների կազմավորման գործում: Ֆրանսիայի կառավարող շրջանները, որոնց համար միանգամայն հասկանալի և ընդունելի էին իր դաշնակից Ռուսաստանի՝ հայ ժողովրդի ռազմաքաղաքական և մարդկային ներուժը Թուրքիայի դեմ մղվող պատերազմում լայնորեն օգտագործելու շահագրգռությունն ու ձգտումները, պատերազմն սկսելուն պես փութացին գործի դնել հայ քաղաքական ղեկավարության վրա իրենց ազդեցության բոլոր լծակները, որպեսզի որքան հնարավոր է արագ և հաջող լուծվի իրենց համար ռազմաքաղաքական որոշակի կարևորություն ունեցող այդ խնդիրը: Պատերազմի առաջին իսկ օրերին Ֆրանսիայի վարչապետ Դումերգն այդ խնդրին ի տես, իր մոտ

հրավիրվեց հայ քաղաքական ղեկավար շրջանակների մոտ ընդհանրապես, Հ. Յ. Դաշնակցության մոտ՝ մասնավորապես, հարգանք և հեղինակություն վայելող Վիկտոր Բերարին, և փորձեց նրա օգնությամբ պարզել «թե ինչպիսին է լինելու Դաշնակցության դիրքորոշումն այս պատերազմում»: Վ. Բերարը նրան պատասխանեց, որ «հայերը բազմիցս առիթ են ունեցել հուսախաբվելու մեծ տերությունների, մասնավորապես Ֆրանսիայի՝ իրենց նկատմամբ վարած քաղաքականությունից: Ահա թե ինչու նրանք հազիվ թե այս պատերազմում ակտիվ լինելու ցանկություն ցուցաբերեն»:<sup>114</sup> Այն ժամանակ Ֆրանսիայի կառավարության նախագահը Բերարին առաջարկեց «անմիջապես կապվել Ժնևի դաշնակցական կոմիտեի (Արևմտյան Բյուրո - Ե. Գ.) հետ և Ֆրանսիայի անունից առաջարկել Հ. Յ. Դաշնակցությանը միանալ Դաշնակիցներին՝ ելնելով այն փաստի գիտակցությունից, որ Դաշնակիցների հաղթանակը միակ երաշխիքն է պատերազմից հետո ազգային փոքրամասնություններին անկախություն տրամադրելու համար»:<sup>115</sup>

Եվ իրոք, Վ. Բերարն անհապաղ կապվեց «Դրոշակի» խմբագիր Միքայել Վարանդյանի հետ, և ծայր առած բանակցությունների ժամանակ Ֆրանսիայի կառավարության անունից առաջարկեց Հ. Յ. Դաշնակցությանը միանալ Դաշնակիցներին և նրանց բերել իր աջակցությունը՝ «հատկապես Ռուսաստանի՝ հայ կամավորական շարժումը կազմակերպելու և ծավալելու մտադրություններին: Փոխարենը Ֆրանսիան խոստանում էր «իր աջակցությունը բերել Թուրքիայի տարածքում ավտոնոմ Հայաստան ստեղծելու գործին»:<sup>116</sup>

Այդ օրերին Անտանտի տերությունների արագ և մոտալուտ հաղթանակի կախարդանքի ազդեցության տակ գտնվող Հ. Յ. Դաշնակցության Արևմտյան Բյուրոն, ոգևորվելով ավտոնոմ Հայաստան ստեղծելու մասին «ասպետական» Ֆրանսիայի առաջարկից, ձգտելով նրան «հուսախաբ չանել ու չնեղացնել», այլ Դաշնակիցների գործին հայ ժողովրդի բոլոր

<sup>112</sup> Les Grandes Puissances....Opt. cit, doc. N 167, p. 161.

<sup>113</sup> Ibid, doc. N 167, p. 161.

<sup>114</sup> Эд. Оганесян, Век Борьбы, Мюнхен-Москва 1991г. т. 1, с. 194.

<sup>115</sup> Там же.

<sup>116</sup> Эд. Оганесян, ук. соч. с. 194.

րանվեր մասնակցության նոր ապացույցներ տալ, շտապեց Ֆրանսիայի վարչապետին փոխանցել իր համաձայնությունը, և հայտնել Կովկասում ռուսական բանակի կազմում հայկական կամավորական ջոկատների ստեղծմանն ակտիվորեն լծվելու իր որոշման մասին:

Իր այդ որոշումն Արևելյան Բյուրոյին փոխանցելու համար Արևմտյան Բյուրոն իր ներկայացուցիչ Մալխասին գործուղեց Թիֆլիս, ուր և շուտով Արշակ Ջամալյանի բնակարանում կայացավ Արևելյան Բյուրոյի հայտնի ժողովը, որին բացի Բյուրոյի անդամներից մասնակցում էին բժ. Չավրիևը, Իշխանը, Պետական Դումարի հայ պատգամավոր Պապաջանովը: Ժողովը «հիացմունքով ընդունեց Արևմտյան Բյուրոյի որոշումը հայկական կամավորական ջոկատների ստեղծման մասին» և մերժեց ընդունել միայնակ մնացած Ավետիք Շահխաթունյանի առարկությունները, որն իր կրքոտ ճառում փորձում էր ապացուցել, որ չի կարելի հավատալ Ֆրանսիայի և այլոց «դատարկ խոստումներին, որոնք կարող են վաղը հրաժարվել դրանցից» և զգուշացնում, որ «կամավորական շարժումը կարող է ծանր հետևանքներ ունենալ հայ ժողովրդի համար»:<sup>117</sup>

Եվ եթե շատ շուտով ինքնամոռաց ոգևորությունից ձերբազատված և արևմտահայության բնաջնջման սարսափներից սթափված հայ քաղաքական միտքը ցավով ընդունելով այն փաստը, որ «Թուրքիայեն դուրս գտնված հայերի՝ դաշնակիցներուն հանդեպ ցույց տրված համակրությունն ու անձնվիրությունը, մասնավորապես ռուս բանակին կամավորներ տալու որոշումը, թուրքը կատաղեցնելով պատրվակ կամ դրոհչ եղավ անոր՝ գործելու այս հսկայ ոճիրը», հանուն պատմական ճշմարտության հարկ էր համարում շեշտել, որ «արադար չէ, միայն Հայկական Բյուրոյին օձիքը բռնել և ըսել, թե անոր գործելակերպն է պատճառն այս աղետին», քանի որ «դրա համար նույնչափ կարելի է մեղադրել ինչպես ողջ արտասահմանյան զաղութների հայերը, որոնք համաձայն եղան այդ ուղղության, Ամենայն Հայոց Հայրապետը, որը օրհնեց մեր կամավորները և Ազգային պատվիրակության նախագահը, որը բոլոր լրագիր-

ների մեջ հրապարակված իր կոչին մեջ գովեց զանոնք և անոնց նպաստելու համար գումարներ դրկեց», առավել ևս «արդար չէ այդ մեղադրանքը, քանի որ կովկասյան բանակին մեջ հայ ու մանավանդ թուրքահայ կամավորների գտնվելը չէ միայն, որ կրնար գրգռած ըլլալ թուրքը, այլ «ինքնավարություն կուզենք» աղաղակը, զոր ամենս այլ արձակեցինք»<sup>118</sup>: Նույն այդ պատմական ճշմարտությունը հրամայաբար պահանջում է ընդունել, որ նմանապես արդար ու ճիշտ չէ լռել ու չասել այդ ամենի մեջ Ֆրանսիայի ոչ զառանցելի մեղսակցության ու պատասխանատվության մասին, որը աղետի դեպքում *հայ ժողովրդին որևէ գործնական, և առաջին հերթին ռազմական օգնություն ցուցաբերելու ցանկություն ու մտադրություն չունենալով*, Ռուսաստանի հետ մեկտեղ, հայ քաղաքական ղեկավարությանը հրապուրելով Արևմտյան Հայաստանի ավտոնոմիայի մասին սնամեջ խստումներով, կարողացավ ուղղակիորեն ազդել հայկական կամավորական ջոկատներ ստեղծելու մասին որոշման վրա և «իրավամբ» դարձավ «թուրքերուն իրենց ոճիրն արդարացնելու համար հարմար պատրվակներ հայթայթող» այդ չարաբաստիկ որոշման կնքահայրերից մեկը:

Մեծ եղեռնի նկատմամբ Ֆրանսիայի ոսրդեզրած դիրքորոշումները բացահայտող իրադարձությունների շարքում իր որոշակի կարևորությամբ առանձնանում է նաև Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների կողմից օսմանյան կառավարությանն ուղղված համատեղ «Հայտարարությունը», որը 1915թ. մայիսի 24-ին ի լուր աշխարհի տարածեց «Հավաս» գործակալությունը. «Ապրիլի կեսերից սկսած Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունն Օսմանյան իշխանությունների թուլություններով սկսել է հայերի ջարդերը: Նման ջարդեր տեղի են ունեցել Էրզրումի, Բիթլիսի, Սասունի, Մուշի, Չեյթունի մեջ և ողջ Կիլիկիայում: Վանի շրջանում շուրջ 100 գյուղերի հայ բնակչությունը սպանված է, իսկ Կ. Պոլսում Օսմանյան կառավարությունը մոլեգնում է խաղաղ հայ բնակչության դեմ:

Նկատի ունենալով Թուրքիայի կողմից գործած այս նոր

<sup>117</sup> Эд. Оганесян, ук. соч. с.198.

<sup>118</sup> «Մշակ», 26-ը նոյեմբերի, 1915թ.:

ոճիրները, Դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտարարում են Բ. Դռանը, որ Օսմանյան կառավարության բոլոր անդամները, ինչպես նաև կառավարության բոլոր տեղական պաշտոնյաները, որոնք մասնակից են եղել այդ ոճրագործություններին՝ անձամբ պատասխանատու պիտի նկատվեն այդ ջարդերի համար»:<sup>119</sup>

Արտաքուստ հայանպաստ բովանդակություն ունեցող և ոճրագործ թուրքին սաստել փորձող այս փաստաթուղթը երկար ժամանակ որոշակի միտումով անտեսվել է, պատմագիտության, հատկապես խորհրդահայ պատմագիտության կողմից, որը ելնելով իմպերիալիստական խոշոր տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի մասին միայն վարկաբեկողն ասելու գաղափարական նպատակադրումից, ձգտել է հեռու մնալ հայոց ցեղասպանությունը հրակարապավ դատապարտող այդ հայտարարության հիշատակումից իսկ, որը կարող էր հավատաքննչության կողմից հեշտորեն որակվել որպես իմպերիալիստական տերությունների գործունեությունը գովաբանող քարոզչություն: Թերևս դրանով, և ոչ այդ փաստաթղթի մասին անտեղյակ լինելու պատճառով է բացատրվում այն իրողությունը, որ հայոց ցեղասպանության մասին խորհրդահայ հարուստ պատմագիտության մեջ այդ հայտարարությունը ցայսօր պատշաճին քննության չի արժանացել՝ անգամ տեղ չգտնելով ցեղասպանության մասին հրապարակված փաստաթղթերի ժողովածուներում:<sup>120</sup> Իսկ եթե, այնուամենայնիվ, այն դարձել է գիտական հետաքրքրության առարկա, ապա գլխավորապես դա արվել է, նախ, սփյուռքահայ պատմագիտության կողմից, և ապա՝ բացառապես հայոց ցեղասպանությունը ժխտող թուրք պատմագիտության պնդումների սնանկությունը մերկացնելու և Անտանտի երկրների պարտավորությունները հիշեցնելու նպատակամղումով:

Այս առումով բացառություն է կազմում անվանի պատ-

մաբան, Մեծ եղեռնի պատմության ուսումնասիրության գործում մեծ ավանդ ներդրած Ջ. Ա. Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրությունը, որտեղ հեղինակը տալիս է այդ «Հայտարարությունն» արժևորող իր գնահատականը: Մեջ բերելով Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Փոլ Կամբոնի 1915թ. մայիսի 16-ի հեռագիրը՝ ուղղված Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Դելքասեին, որտեղ ասվում էր, որ «Անգլիայի արտաքին գործերի նախարար Հարոլդ Նիկոլսոնը դեմ էր հայերին կոտորելու թուրքական քաղաքականությունը դատապարտող հայտարարություն անելուն», Ջ. Կիրակոսյանը գալիս է այն եզրահանգմանը, որ «վերը նշված փաստը ցույց է տալիս իմպերիալիստական Անգլիայի տնօրենների ոչ հայանպաստ (ընգծ. իմն է – Ե. Գ.) դիրքորոշումը»<sup>121</sup>:

Հանուն պատմական ճշմարտության պետք է ասել, որ, ցավոք, մեծանուն պատմագետի այդ գնահատականը համահունչ չէ պատմական իրականության հետ, քանի որ, ինչպես վկայում են փաստերը, թե՛ Անգլիայի և թե՛ Ֆրանսիայի կառավարող շրջանակների սկզբնական դիմադրությունը Ռուսաստանի կողմից առաջարկված համատեղ «Հայտարարությանը» ոչ մի կերպ չի վկայում այն մասին, որ նրանք «ոչ հայանպաստ դիրքորոշում» ունեին: Ավելին, նրանք «ոչ հայանպաստ դիրքորոշումը» դրսևորվեց միայն այն ժամանակ, երբ նրանք, գիտակցելով, որ այդ «անատամ թղթի կտորը» ոչնչով չի կարող օգնել բնաջնջվող արևմտահայությանը, որ նա չի կարող սաստել թուրք ջարդարարներին, որ նա էլ ավելի կվատթարացնի հայության վիճակն, այդուհանդերձ «համաձայնվեցին թուրքական քաղաքականությունը դատապարտող հայտարարություն անելու առաջարկին», քանզի այդ էին պահանջում թե՛ Ֆրանսիայի, թե՛ Անգլիայի և թե՛ Ռուսաստանի ռազմաքաղաքական ու քարոզչական շահերը:

Այդ հայտարարության ծննդաբանության մասին վկա-

<sup>119</sup> Архив Внешней Политики России, ф. Политархив д. 3507, л.19.

<sup>120</sup> Տես «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Մ. Գ. Ներսիսյանի խմբ. Եր. 1991թ.: «Անտանտը և Հայաստանը», Ա. Հովհաննիսյանի առաջաբանով, Եր., 1926թ.:

<sup>121</sup> Կիրակոսյան Ջ.Ա., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2, Երևան, 1983թ., էջ 68-69:

յող փաստաթղթերն աներկբայորեն ապացուցում են, որ այն կերտող Ռուսաստանի, Անգլիայի<sup>122</sup> և Ֆրանսիայի կառավարություններն առաջնորդվել են ո՛չ թե արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը դատապարտելու, ոճրագործ Օսմանյան կառավարության ձեռքը բռնելու և արևմտահայության դժբախտությունը կանխելու կամ սեղմելու, այլ *միմիայն և բացառապես* հայ ժողովրդին պատուհասած այդ դժբախտությունն իրենց քարոզչական նպատակներին ծառայացնելու, համաշխարհային հանրության կարծիքի առաջ «հրավումքի» և «արդարության» միակ ջատագովների և պաշտպանների իրենց համբավը պահելու և ամրապնդելու, և վերջապես, Ռուսաստանի՝ հայ ժողովրդի ռազմական ներուժն անխնա օգտագործելու շահագրգռությանը տուրք տալու և նրան «չնեղացնելու» նկատառումներից:

Այս գործի նախաձեռնողն ու ջանադիր հետապնդողը եղավ Ռուսաստանը, որն արդեն 1915թ. ապրիլի 26-ին Փարիզում իր դեսպան Իզվոլսկուց պահանջեց տեղեկացնել Ֆրանսիայի կառավարությանը, որ ինքը, նկատի առնելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի դիմումը՝ Իտալիայի թագավորին և ԱՄՆ-ի նախագահին, որով նա խնդրում էր նրանց միջամտությունը հօգուտ Ասիական Թուրքիայում ոչնչացվող հայության, անհրաժեշտ է համարում, որ «Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կառավարությունները հանդես գան Բ. Դռանը ուղղված համատեղ հայտարարությամբ, որտեղ անձնապես պատասխանատու պիտի դիտվեն ինչպես թուրքական կառավարության բոլոր անդամներն, այնպես էլ այդ ակտերին մասնակցած քաղաքացիական և զինվորական բոլոր պաշտոնյաները: Այդ հայտարարության մեջ կարելի է նշել նաև այն պատժամիջոցների մասին, որ Եվրոպան ընդունել էր դեռևս 1860 թվականին՝ կապված Սիրիայի ջարդերի հետ»:<sup>123</sup>

1915թ. մայիսի 6-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն ուղղակի դիմեց Ֆրանսիայի նախագահ Ռայմոն

Պուանկարեին հետևյալ խնդրանքով. «Այս ծանր պահին, հանուն մարդկության և քրիստոնեության, ապավինելով ձեր քարձր մարդասիրությանը, դիմում եմ Ձեզ աղերսագին խնդրանքով, որպեսզի Դուք, օգտագործելով չեզոք երկրներում ունեցած Ձեր դիվանագիտական ազդեցությունը, չեզոք երկրների օգնությամբ վերջ դնեք թուրքական մոլեռանդության ու կատաղության զոհ դարձած իմ ժողովրդի հալածանքներին»:<sup>124</sup>

Ծանր ու ողբերգական այդ օրերին, երբ Փարիզ ժամանած Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, այցելելով Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Դելբասեին, ցավով նշում էր, որ «Ֆրանսիան որևէ գործնական միջոց չունի մեզի օգնության հասնելու», որ նա կարող է «միայն ցավ հայտնել պատահածի մասին»,<sup>125</sup> սփյուռքահայության որոշակի շրջանակներ, հատկապես ամերիկահայ գաղութի «ողջամիտ շատ հայեր» մի ավելորդ անգամ ապացուցելով «խեղդվողը ձեռքը ծովի փրփուրին է զցում» հանրահայտ ասացվածքի իսկությունը, «փնտրում» և «գտնում էին» արևմտահայությանը բնաջնջումից փրկելու «գործնական» լուծումներ: Նրանք հանդիմանում էին, որ «Թուրքիոյ մեջ ջարդերուն առաջքը կարելի է առնել *միակ կտրուկ միջոցով մը*. ան ալ սա է. Կ. Պոլսի և գավառներուն մեջ թուրք պաշտոնեաները՝ նախարար, վալի և այլն, ուղղակի պատասխանատու բռնել, հիշեցնելով հատուցման ժամը: Դաշնակիցներու կողմէ կտրուկ հայտարարություն մը միակ միջոցն է թուրք կառավարութեան և թուրք ժողովրդին վրա ազդելու, և ջարդի ու կոտորածի արգելք դնելու համար»:<sup>126</sup>

Նման «հրկիչ» գործելակերպի ծրագրային հիմնավորման փայլուն օրինակ էր իրենից ներկայացնում Բաբգեն Կյուլիսեյանի առաջարկած քայլերի շարքը, որով նա 1915թ. մայիսի 12-ին դիմեց Արշակ Չոպանյանին. «անհրաժեշտ է, որպեսզի, ինչպես Փարիզ նոր հասած Պողոս Նուբարը, այնպես էլ Դուք ...այս պետքը զգացնել տաք նախ ֆրանսիական կառա-

<sup>122</sup> Այդ մասին տես Ազգայի Նասիայանի «Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923» Պեյրոս, 1994թ.:

<sup>123</sup> Les Grandes Puissances..... Opt cit., doc. N 18, p. 14.

<sup>124</sup> Les Grandes Puissances..... Opt cit., doc. N 24, p. 20.

<sup>125</sup> ՀՀ Կողմ., ֆ.57, ց 5, գ 19, թ 44:

<sup>126</sup> ԳԱԹ, ԱԶՖ, ց. 5, թիվ 3277:

վարութեանը, և ատով ալ Անգլիոյ և Ռուսիոյ, որպէսզի ընեն այս անձնական պատասխանատվութեան հայտարարութիւնը: Ֆրանսա այս գործում արդէն փորձառու է ...

Եթէ դուք ալ կզնահատեք այս միջոցին գործնական նկարագիրը, աշխատեցեք, որովհետև հիմա հայկական դատին ամենն տևական ծառայությունն այս է. *առաջը առնել տալ մասնակի և ընդհանուր ջարդերու՝ յայտարարել տալով, թե անձնապես պիտի դատապարտվին ոճրագործները*:<sup>127</sup>

Դժվար չէ նկատել, որ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Ս.Դ. Սազոնովի կողմից Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների քննարկմանը ներկայացրած համատեղ հայտարարության տարբերակը գրեթէ բառացիորեն կրկնում էր սփյուռքահայ որոշակի քաղաքական շրջանակների համար այնքան փափագելի «թուրք նախարարներին ու պաշտոնյաներին անձնապես պատասխանատու դիտելու» պահանջը, որը նրանք համարում էին արևմտահայության ջարդերի դեմն առնելու միակ կտրուկ և գործնական միջոցը: Սակայն թե՛ Անգլիայի և թե՛ Ֆրանսիայի արտաքին հարաբերությունները տնօրինող այրերը, երևի թե կարծելով, որ Ռուսաստանն իրոք հույս ունի և մտադիր է այդ հայտարարության մեջ պարունակող սպառնալիքով ազդել Թուրքիայի ցեղասպան կառավարության վրա և կանխել հայության ֆիզիկական բնաջնջումը, շտապեցին իրենց տարակուսանքն ու վերապահություններն արտահայտել այդ «անատամ» սպառնալիքի գործնական կարողունակությունների վերաբերյալ: Նրանք ոչ առանց հիմքի, Փարիզի և Լոնդոնի ռուս դեսպաններին հայտնեցին, որ «իրենք չեն հավատում, թե նման հայտարարությունը կարող է արգելակիչ կամ որևէ իրական ազդակ լինել թուրքերի համար»<sup>128</sup>, և էլ ավելի բացահայտելով ձեռով փրկարար դերակատարության կոչված այդ հայտարարության շատ վտանգավոր ծալքերն ու սպառնալիքները, նրանք ընդգծեցին, որ այդ հայտարարությունը, փոխանակ մեղմացնող ազդեցություն ունենալու, կարող է, ընդհակառակը, թուրքական իշխանություններին գրգռել հայե-

րի դեմ և նրանց մղել ավելի ևս վրեժխնդիր լինելու: Ահա այդ ժամանակ է, որ թե՛ Ֆրանսիայում Ռուսաստանի դեսպան Իզվոլսկին և թե՛ Անգլիայում՝ Բեկենդորֆը աճապարեցին «հանգստացնելու» իրենց «մտահոգ» դաշնակիցներին, և նրանց առաջ բաց անելով այդ հայտարարության հետ Ռուսաստանի կապած իրական նպատակադրումները, նախ, շեշտեցին, որ Անգլիային ու Ֆրանսիային կոչ անելով միանալ համատեղ հայտարարությանը, Ռուսաստանը շատ լավ գիտակցում է, որ անատամ և անուժ այդ թղթի կտորը չի կարող որևէ գործնական և արգելակիչ միջոց լինել արևմտահայության բնաջնջումը կանխելու գործում, որ ինքն ամենևին էլ նման ձգտում և նպատակադրում չունի, և իրեն այդ քայլին են դրդում ոչ թե հայափրկիչ մղումներն, այլ Ռուսաստանի միանգամայն իրական և շատ մեծ նշանակություն ունեցող «հատուկ շահերը, հատկապես ռազմական շահերը, որոնք պահանջում են բարձր պահել հայության բարոյական կորովը»,<sup>129</sup> որի 150.000 զավակները կռվում էին ռուսական բանակներում, իսկ հազարավոր կամավորներ անձնագոհաբար մարտչում էին Կովկասյան ռազմաճակատում:

Իսկ երբ թուրք ոճրագործներին դատարապտող հայտարարության իսկական դրդապատճառներին տեղակացված Ռուսաստանի Դաշնակիցներն առաջարկեցին նրան նման հայտարարությամբ միայնակ հանդես գալու տարբերակը, ամեն ինչ հաշվի առած Ռուսաստանը իր Դաշնակիցներին մատնացույց արեց, որ այդ հայտարարությունը ոչ միայն իրեն կօգնի այսուհետ ևս օգտվելու հայ ժողովրդի ռազմաքաղաքական կարողականություններից, այլև հնարավորություն կտա թե՛ Ֆրանսիային, թե՛ Անգլիային, նախ՝ հայության հոգատար պաշտպանի իրավունքով՝ հայ ժողովրդի մեծագույն դժբախտությունն ազատորեն օգտագործել իր քարոզչական-գաղափարական պայքարում,<sup>130</sup> և ապա, հիանալի առիթ կտա «մաքուր խղճով», «արևելքի և արևմուտքի բարբարոսների» մեծագույն ոճիրը հրապարակորեն դատապարտողի վաստակով

<sup>127</sup> ԳԱԹ, ԱԶՖ, ց. 5, թիվ 3277:

<sup>128</sup> Архив Внешней Политики России, ф. Политархив д.3507 л.17.

<sup>129</sup> Архив Внешней Политики России, ф. Политархив д. 3507, л.17.

<sup>130</sup> Там же.

ներկայանալ համաշխարհային հանրային կարծիքի դատին: Ընդ որում, այդ ամենի դիմաց ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ իր Դաշնակիցները ոչինչ չէին վճարելու, քանի որ վճարողը և կորցնողը այդ ամենի հետևանքով լինելու էր անգամ ոչ թե ոճրագործ Թուրքիան, այլ օգնության և փրկության կարոտ, բնաջնջվող արևմտահայությունը և թուրքական լծից ազատագրվելու իրենց հույսերը Դաշնակիցների հետ զուր տեղը կապող, և մշտապես Դաշնակիցների զոհասեղանին նոր զոհողությունների հրավիրվող բովանդակ հայությունը:

Այսպիսով, Ռուսաստանը Ֆրանսիային և Անգլիային առաջարկում էր հայության անունով, բայց խորքում փաստորեն հայության հաշվին, կնքել նոր գործարք, որի համար պահանջվում էր հանդես գալ որքան էլ որ պարադոքսալ հնչի, արևմտահայության ջարդերը դատապարտող և թուրք ջարդարարներին պատասխանատու համարող համատեղ հայտարարությամբ, որից շահելու էին գրեթե բոլորը, իսկ կորցնելու էր միայն ու միայն հայ ժողովուրդը իր երկու՝ ջարդվող և ջարդապուրծ հատվածներով: Եվ իրոք, սկզբում «վարանող» և «մտահոգ» Ֆրանսիան և Անգլիան՝ շատ շուտ ըմբռնելով, թե ինչ օգուտներ կարող են իրենք և իրենց դաշնակից Ռուսաստանը քաղել ոչնչի չպարտավորեցնող այդ համատեղ հայտարարությունից, տվեցին իրենց համաձայնությունը:

Փոխադարձ շահերի հաշվարկով կնքված այդ գործարքի արդյունքում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից կյանքի կոչվեց Բ. Դռանը ուղղված նրանց համատեղ «Հայտարարությունը», որը ձևով հայանպաստ, իսկ բովանդակությամբ և կյանքում ունեցած իր հետևանքներով հակահայ և հայավնաս փաստաթղթի մի արտառոց օրինակ էր:

Սկզբնական շրջանում օգնություն և փրկություն հայցող հայությունն միամտաբար հավատալով Դաշնակիցների կողմից Բ. Դռանը ուղղված հայտարարության մեջ տեղ գտած սպառնալիքների հրաշագործ ազդեցությանը, շտապեց իր շնորհակալության և երախտագիտության խորին զգացմունքներն արտահայտել Դաշնակից երկրների ղեկավարությանը: Սակայն շատ շուտով իր սպասումների և հույսերի մեջ արդեն որերորդ անգամ խաբված հայ ժողովուրդն իր իսկ կաշվի վրա

զգաց, որ իրականում հայ ժողովրդի համար միայն բարոյական սփոփանք պարունակող, սակայն «վեհանձն» ու «մեծահոգի» Դաշնակիցների բարոյաբարոզական և գործնական հայաքամիչ ձգտումներին հագուրդ տվող այդ փաստաթուղթն իր անգոր «սպառնալիքով երիտթուրքերի վրա գերոյական ազդեցություն է թողել, որոնք Դաշնակից երկրների նոտայի հանձնումից երկու օր անց Կ. Պոլսում կախեցին 20 հայերի»:<sup>131</sup>

Իսկ Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը 1915թ. հուլիսի 27-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ին գրած տեղեկագրում բացահայտեց այն կործանարար ու հայավեր ազդեցությունը, որ «հայափրկիչ» այդ հայտարարությունն ունեցավ բնաջնջման հորձանուտում թավազլոր արևմտահայության ճակատագրի վրա. «Կ. Պոլսոյ ֆրանսիական դեսպանատան առաջին թարգման պ. Լըտու, որ մինչև հուլիս 2-ը Պոլիս մնացած էր դեսպանատան դիվանական քրքերը պահպանելու համար, կը պատմէ, թե մայիս ամսոյ մեջ Դաշնակիցներու կողմէ հավաքաբար Բ. Դռանը մատուցած այն նոթան, որ թուրք նախարարներն անհատապես պատասխանատու կըռներ, եթե հայկական հարստահարությունները շարունակվեին, *ուրիշ արդյունք չէ ունեցած* (ընդգծ. իմնէ- Ե.Գ.) *բայց եթե առավել ևս խստացրել նախարարները*, և այդ նոթայէն հետո ձերբակալությունները շատացել են, օրինակ, պ. պ. Չոհրապին և Վարդգեսին ձերբակալությունները: Նույն այդ նոթայից հետո Հայաստանին մեջ հարստահարություններն ավելի են շատացել և ըստ պ. Լըտուի Պետութեանց հիշյալ հավաքաբար արված հայտարարությունը *կրակին վրա ձեթ թափելու մնան գործ մը եղած է*»:<sup>132</sup>

1915թ. թվականի վերջերին ցեղասպանության հետևանքով փախստական դարձած ու Միջագետքի մահափյոտ անապատները տարագրված արևմտահայությանը նյութական աջակցություն և նպաստ տրամադրելու խնդիրը, որը խորապես հուզում էր մարդասիրության և քաղաքակրթության արժեքներով առաջնորդվող համաշխարհային հանրությանը,

<sup>131</sup> Les Grandes Puissances....Opt it., doc. N 57, p. 47.

<sup>132</sup> ՀՀ ԿՊՊԱ. ֆ. 57, ց. 5, գ. 19,թ. 44:

դարձավ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի քաղաքական հետաքրքրությունների և քննարկման առարկան: Առաջինը հայ ժողովրդի դժբախտությունից շահաբաժիններ քաղելու առաջարկով իր դաշնակիցներին դիմեց Ռուսաստանը, որի արտաքին գործոց նախարար Սազոնովը, 1916թ. հունվարի 31-ին Փարիզի և Լոնդոնի ռուսական դեսպաններին ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Ես կարծում եմ, որ *ելնելով Դաշնակիցների ընդհանուր քաղաքական շահերից, շատ կարևոր է* որպեսզի նրանք հանդես գան Բ. Դեան կողմից Հալեպ-Մոսուլ երկաթուղու և Բաղդատի ուղղությամբ արքայազն Բուրբուսի նյութական օգնություն ցուցաբերելու նախաձեռնությամբ»: Այդ նպատակով Սազոնովը լիազորում էր Իզվոլսկուն և կոմս Բեկենդորֆին պարզել «թե համաձայն են արդյոք ֆրանսիական և բրիտանական կառավարությունները Ռուսաստանի հետ հավասար բաժնեմասերով՝ 1 մլն. ֆրանկի չափով գումար տրամադրել հայերին օգնելու համար»: Ռուսաստանի արտաքին գործոց նախարարն «առաջարկում էր այդ գումարը տրամադրել Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին, որպեսզի նա այդ գումարները դնի Կ. Պոլսի Չավեն պատրիարքի և Սիսի Սահակ կաթողիկոսի տրամադրության տակ: Իսկ եթե այդ առաջարկը ընդունելի չէ, ապա այդ գումարները կարելի է բաժանել հայերին ուղղակի ամերիկյան գործակալների միջոցով»: Վերջում Սազոնովը զգուշացնում էր, որ «*այդ գումարի ծագումն անպայմանորեն գաղտնի պետք է մնա*, որպեսզի հայերին չենթարկենք նոր փորձությունների և հետապնդումների»: <sup>133</sup> Պետք է ասել, որ այս վերջին պայմանը հետագայում կանխորոշեց Ֆրանսիայի և Անգլիայի կողմից արևմտահայությանը նյութական նպաստ հատկացնելու առաջարկի բախտը, քանի որ դրան հետևելու դեպքում նրանք պարզապես զրկվելու էին խնդիրն իրենց քաղաքական ձգտումներին արդյունավետորեն ծառայեցնելու հնարավորությունից:

Պետք է նշել նաև, որ քիչ ավելի շուտ համահունչ բովանդակություն ունեցող խնդրանքով, սակայն տրամագծորեն հակադիր մղումներից ու նպատակադրումներից ելնելով,

<sup>133</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 168, p.162.

Ֆրանսիայի վարչապետ Արիստիդ Բրիանին դիմել էր Մենայի պատգամավոր Մարսել Կաշենը. «Ո՛չ ոք անտարբեր չպետք է մնա ոչնչացման եզրին գտնվող հայ ժողովրդի մարտիրոսության նկատմամբ: Մեր երկրի ազնվական ու պատվարժան ավանդույթներն, ավելի քան ուրիշին, ստիպում են Ֆրանսիային բողոքի իր ձայնը բարձրացնել այդ զգվելի հանցագործությունների դեմ:

Բայց Դուք, պարոն նախարար, ինչպես և մենք, հասկանում ենք, որ միայն բողոքը, որքան էլ այն բարձրաձայն հնչի, բավական չէ: Մահից ու ոչնչացումից փրկվելու համար տասնյակ հազարավոր հայեր... հեռացել են իրենց ավերված ու բռնաբարված երկրից: Նրանց մի մասն ապաստանել է Ռուսաստանում, մյուսները փրկվել են մեր նավատորմի օգնությամբ, իսկ մի զգալի մասը չի կարողացել թողնել Թուրքիան և դարձել է սովի, սարսափելի բռնությունների ու տանջանքների զոհը:

Մենք *պահանջում ենք ֆրանսիական հանրապետությունից նյութական օգնություն և արդյունավետ աջակցություն ցույց տալ այդ դժբախտ զոհերին:*

Հայ ժողովուրդը ոչ միայն հավատում է, որ Ֆրանսիան կօգնի իրեն դարավոր ստրկության շղթաները փշրելու և օտարի լծից վերջնականապես ազատագրվելու գործում, այլև հույս ունի ստանալու նրա աջակցությունն այս դժբախտ վիճակն ամոքելու համար»: <sup>134</sup>

Իհարկե, Ֆրանսիայի քաղաքական վարքագիծը որոշող վարչապետ և արտաքին գործոց նախարար Արիստիդ Բրիանին և նրա կառավարության համար ոչ մի կարևորություն չունեին սոցիալիստ Մարսել Կաշենի կողմից մատնանշված բարոյական ու մարդասիրական արժեքները, քանի որ նրանց առաջին հերթին հետաքրքրում էր այն հարցը, թե արևմտահայությանը նյութական նպաստ ցուցաբերելու նպատակով ծախսվելիք յուրաքանչյուր ֆրանկը և ողջ գումարը Ֆրանսիային կոնկրետ ի՞նչ շոշափելի քաղաքական շահաբաժիններ կբերեն, որոնց մասին իր առաջարկության մեջ «մոռացել էր» հիշատա-

<sup>134</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 153, p.149.



կել Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը: Ուստի, Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկուն տված իր պատասխանում Արիստիդ Բրիանը, նշելով, որ «Ֆրանսիական կառավարությունը սկզբունքորեն համաձայն է իր վրա վերցնել հայերին նպաստավորելու համար նխատեսվող 1 միլիոն ֆրանկ միանվագ գումարի 1/3-ը հոգալու բեռը», միևնույն ժամանակ շտապեց հաղորդելու, որ Ֆրանսիայի վերջնական որոշումը «կախված կլինի երկու կարևոր պայմաններից»։ դրանցից առաջինը կապված էր այն փաստի հետ, որ Ֆրանսիան անընդունելի էր համարում «նպաստի ծագումը գաղտնի պահելու պահանջի անվերապահ կատարումը, և ըստ երևույթին կարծելով, որ իր Դաշնակիցների քաղաքական շահը կայանալու է միայն Ռուսաստանում, Ֆրանսիայում և Անգլիայում ապրող հայության վրա իրենց ազդեցության հետագա ամրապնդման մեջ, անհրաժեշտ էր համարում «մի փոքր խախտել այդ արգելքը» և «այդ երկրների հայ բնակչությանը մտերմաբար տեղեկացնել, թե ում կողմից է հատկացվում այդ դրամական նպաստը»։<sup>135</sup> Երկրորդ պայմանը, որի հետ Ֆրանսիան կապեց իր վերջնական վճիռը, այն էր, որ նա այդ հարցում գլխավոր դերակատարությունը և իրավարարի առաջնությունը վերապահում էր Անգլիային, անշուշտ, հավատացած և վստահ լինելով, որ վերջինս, քաղաքական շահաբաժիններ ստանալու նպատակով ծախսվող յուրաքանչյուր ֆունտի արժեքը ճշտորեն որոշելու դարավոր փորձառությանը իր հավասարը չունի և իր վճռում հազիվ թե սխալվի: Ահա թե ինչու 1916թ. փետրվարի 8-ին Բրիանը Սազոնովին տեղեկացրեց, որ «Ֆրանսիական կառավարությունն իր համաձայնությունը կարող է տալ միայն այն բանից հետո, երբ դրա հետ համաձայնվի նաև անգլիական կառավարությունը», չնոռանալով նաև նշել, որ «նպաստի բաշխումը նախընտրելի է վստահել Թուրքիայում Ամերիկայի դեսպանությանը»։<sup>136</sup>

Շուտով, իսկապես, շահամոլության և շահապաշտու-

<sup>135</sup> Архив Внешней Политики России, ф. Политархив д.3493, л.15.

<sup>136</sup> Les Grandes Puissances.....Opt. cit.,doc. N 173, p.165.

թյան անգերազանցելի վարպետ Մեծ Բրիտանիան «փայլուն» ձևով արդարացրեց իր «միամիտ» դաշնակցի՝ Ֆրանսիայի սպասելիքները և անգլիական հիմնավորությամբ ապացուցեց, որ արևմտահայության համար ծախսվելիք գումարները ոչ մի կերպ չեն օգնում լուծելու ո՛չ Անգլիայի և ո՛չ էլ իր դաշնակից Ֆրանսիայի առջև կանգնած հրատապ քաղաքական խնդիրները:

Անգլիայի պետական այրերը հենց սկզբից պարզեցին, որ Ռուսաստանում, Ֆրանսիայում և Անգլիայում բնակվող հայության վրա իրենց քաղաքական ազդեցությունը պահելու և ամրապնդելու համար չարժե արևմտահայությանը ֆինանսական օգնություն տրամադրել, քանի որ թե՛ Թուրքիայում և թե՛ նրանից դուրս գտնվող հայությունը Թուրքիայի և նրա դաշնակից Գերմանիայի որդերգած ցեղասպան կեցվածքի պատճառով պարզապես զրկված լինելով ընտրություն կատարելու հնարավորությունից, հայտնվել էր փակուղում, և կամա թե ակամա դատապարտված էր քաղաքական իր բոլոր հույսերը կապել միմյանց Անտանտի երկրների հետ: Ուստի, Անգլիան արևմտահայությանը տրամադրվելիք նյութական նպաստի դիմաց քաղաքական շոշափելի շահաբաժիններ ստանալու հեռանկարները փնտրեց այլ հարթության վրա գտնվող հարցերի մեջ: Այս իմաստով կարևորվեց, թե որքանով անգլիական դիվանագիտության նրբազգաց ձեռքերի մեջ արևմտահայությանը ցուցաբերվելիք նյութական օգնությունը կարող է դառնալ ազդու միջոց «կենտրոնի պետությունների հանդեպ չեզոք երկրների և առաջին հերթին ամերիկյան համակրանքները նվազեցնելու համար»: Եվ շատ շուտով Անգլիայի արտաքին գործերի նախարարությունն իր համար արեց հետևյալ բացահայտիչ եզրակացությունը. «նման նվիրատվության ամբողջ նպատակը պիտի լիներ Միացյալ Նահանգների մեջ և այլուր նրա գործելիք ազդեցությունը», ուստի և՛ նա արժեք չի կարող ունենալ, քանի որ «այդ նվիրատվությունը գաղտնի պիտի պահվի»։<sup>137</sup>

Այդ տրամաբանության զարգացումը եղավ Անգլիայի

<sup>137</sup> Ազապի Նասիպեան: Նշվ. աշխ., էջ 83:

բարձաստիճան պաշտոնյաներից մեկի հետևյալ հայտարարությունը, «Ես պիտի չուզեի Թուրքիոյ մեջ գտնվող հայերուն ի նպաստ որևէ նվիրատվություն ընել առանց հրապարակավ յայտարարելու, թե մենք ենք, որ կընենք զայն»:<sup>138</sup>

Ի վերջո թե՛ Մեծ Բրիտանիան և թե՛ այդ հարցում իր դիրքորոշումն ամբողջովին նրանից կանխման մեջ դրած Ֆրանսիան գտան, որ արևմտահայությանը նյութական օգնության տրամադրումը իրենց «ազգային շահերի» համար այն նշանակությունը չունի, որպեսզի արդարացնի պետական բյուջեից արվող նվիրատվությունը և իրենց «օձիքը» այդ ոչ շահավետ խնդրից ազատեցին 1916թ. մարտի 8-ին Ռուսաստանին ուղղված հետևյալ հայտարարությամբ. «Ցավոք անգլիական կառավարությունը ի վիճակի չէ թուրքահայերին ֆինանսական օգնություն ցուցաբերել, քանի որ անգլիական գանձատունը ծանրաբեռնված է իչնպես Անգլիայի, այնպես էլ դաշնակից երկրների հպատակներին օգնություն ցուցաբերելու բազմաթիվ խնդրանքներով: Թուրքահայերին նյութական օգնություն ցուցաբերելու ամենանպատակահարմար միջոցը բարեգործական կազմակերպություններին և բարերարներին դիմելն է»:<sup>139</sup>

Պատկերն ամբողջացնելու իմաստով ավելորդ չէ փաստել, որ անգամ արևմտահայությանը նյութական նպաստ տրամադրելու նախաձեռնության հեղինակ Ռուսաստանը նույնպես, ծանրութեթև անելով այդ ձեռնարկից սպասվելիք քաղաքական շահաբաժինները, գտավ որ «թշնամական երկրի հպատակներին 500.000 ռուբլի արժույթի չափով օգնություն տրամադրելը չի բխում պետական անհրաժեշտությունից»,<sup>140</sup> քանի որ «նշված գումարի չափով նպաստի տրամադրումը չի կարող բավարարել թուրքահայ հպատակների կարիքները և մեկ անգամ արդեն ձեռնարկված քայլի շարունակությունը պետք է լինի նորանոր գումարների բացթողումը: Հետևաբար, պետական գանձատունը ստիպված պետք է լինի իր վրա վերցնել *թուրքահայ ողջ ժողովրդի պետական աջակցության*

*բեռը ողջ պատերազմի ընթացքում*»: Ուստի, ռուսական կառավարության բարձաստիճան պաշտոնյաների խորհրդակցությունն եկավ այն եզրակացության, որ «հազիվ թե արդար և հնարավոր կարելի է համարել, որպեսզի ռուսական կառավարությունն իր վրա վերցնի նաև Ռուսաստանի հետ պատերազմող պետության այս կամ այն կատեգորիային պատակնող հպատակներին օգնելու պարտականությունն, առավել ևս, որ նա արդեն օգնում է սերբերին և չեռնոգորցիներին»:<sup>141</sup>

Այսպիսով, իրավունքի, արդարության, հումանիզմի և քաղաքակրթության սկզբունքներին հավատարմության և նվիրվածության բյուրավոր երդումներով և հավաստիացումներով համաշխարհային հանրությանը ներկայացող Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը ելնելով իրենց «ազգային ու պետական» շահերից, հանգիստ խղճով հրաժարվեցին նյութական աջակցություն տրամադրել բնաջնջման ու սովի ճիրաններում գտնվող արևմտահայությանը, որը թեև կապացուցեր նրանց հավատարմությունը վերոհիշյալ բարձր ու վեհ սկզբունքներին, սակայն ոչ մի շոշափելի, և այդ ծախսերն արդարացնող քաղաքական շահաբաժիններ չէր տրամադրի նրանց: Ահա թե ինչու հայ ժողովրդի ողբերգությունից ու դժբախտությունից միմիայն շահ ակնկալող տերությունները չէին ուզում լսել և չլսեցին մեծ հայասեր լորդ Բրայսի և նրա մնան հազարավոր պարկեշտ ու ազնիվ մարդկանց կոչը «ընդամենը 20.000 կամ 30.000 ֆունտ ստեռլինգ աննշան գումարով... քիչ մը ուրախութիւն պատճառել ժողովուրդի մը, որ այս պատերազմի ընթացքին տառապեցաւ որևէ ժողովուրդէ ավելի, որովհետև ան կորսնցուց ամէն բան»:<sup>142</sup>

<sup>138</sup> Ազապի Նասիպեան: Նշվ. աշխ., էջ 84:

<sup>139</sup> Архив Внешней Политики России, ф. Политархив, д.3493 л.15.

<sup>140</sup> Там же, л.9.

<sup>141</sup> Архив Внешней Политики России, ф. Политархив, д.3493, л. 9.

<sup>142</sup> Ազապի Նասիպեան: Նշվ. աշխ.-ը, էջ.84:

## Գլուխ II. Ֆրանսիական քարոզչությունը և Մեծ Եղեռնը

### §1. Ֆրանսիական քարոզչությունը և հայոց ցեղասպանության դատապարտման փաստաթղթային ժողովածուի ստեղծումը

Արևմտահայության ջարդերը դատապարտող և թուրք ջարդարարներին պատասխանատու այսպանող համատեղ «Հայտարարության» տակ իր ստորագրությունը դնելու հարցում սկզբնական շրջանում «վարանող» և «մտահոգ» Ֆրանսիան, հասկանալով, որ հայոց ցեղասպանության դատապարտման լայնամասշտաբ քարոզչությամբ ինքը միմյան շահելու է, ոչ միայն վճռականորեն գնաց այդ քայլին, այլև իր շահերը գիտակցող պետությանը բնորոշ վճռականությամբ և հետևողականությամբ, ընդհուպ մինչև աշխարհամարտի վերջին օրերը, որդեգրեց իրեն ոչնչի չպարտավորեցնող և ոչ մի կորուստ չպատճառող հայոց ցեղասպանության դատապարտման լայնամասշտաբ քարոզչությունը, որը նրան բերելու էր մեծագույն հաղթանակներ այդ տարիներին ծավալված անզիջում գաղափարական պատերազմի ռազմաքեմերում:

Ֆրանսիայի պաշտոնական քարոզչության կողմից հայոց ցեղասպանության դատապարտման որդեգրումն ավետող այդ առաջին փաստաթղթի ստեղծման ժամանակ արդեն Ֆրանսիայի պետական քարոզչության ողջ համակարգը տնօրինող արտաքին գործոց նախարարության ղեկավարությունն իր համար հստակեցրեց, որ Ֆրանսիան հայոց ցեղասպանության քարոզչության գործում *առաջնահերթային կարևորություն է տալու ոչ թե հայ ժողովրդի շահերից բխող* և պատմական իրականությանը համապատասխանող *ողջ ճշմարտությունը* քարոզելու ու վերհանելու մոտեցումներին, այլ *միայն Ֆրանսիայի հետապնդած շահերին ու նպատակադրումներին չհակասող, ավելին, դրանց իրականացմանը* ծառայելու ու նպաստելու կոչված քարոզչությանը:

Իսկ բոլոր այն դեպքերում, երբ Ֆրանսիայի պաշտոնական քարոզչությունը բախվելու էր Ֆրանսիայի շահերին չհամապատասխանող, սակայն ակնառու և անժխտելի պատմական ճշմարտություն հանդիսացող իրողությունների հետ, ֆրանսիական քարոզչության ղեկավար այրերը իրենց համար անխախտելի դիրքորոշում և օրենք դարձրին հայոց ցեղասպանության ողջ համապատկերն արտացոլող պատմական ճշմարտության այդ կողմերի մասին լռելու, և կամ դրանք Ֆրանսիայի հետապնդած շահերին ստորադասելու ռազմավարությունը:

Հենց վերոբերյալ հրամայականներից ելնելով էր, որ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Դեյքասեն մի կողմ դնելով արևմտահայության բնաջնջման գործում կրոնական գործոնների խաղացած դերն ի լուր աշխարհի հայտնելու անհրաժեշտությունը, որի մասին խոսվում էր ինչպես Համատեղ Հայտարարության ռուսական նախնական տարբերակում, այնպես էլ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ V-ի Ֆրանսիայի նախագահին ուղղված ուղերձ-դիմում,<sup>143</sup> և նկատի առնելով ֆրանսիական գաղութային կայսրության մուսուլման բնակչության «ոյուրազգայնությունը» չվիրավորելու հրամայականը, համաձայնվեց ռուսական կառավարության կողմից ներկայացված Համատեղ «Հայտարարության» տարբերակի տակ Ֆրանսիայի ստորագրությունը դնել միայն այն բանից հետո, երբ նրա տեքստից հանվեցին «ընդդեմ *քրիստոնեության... գործած ոճիրների*»<sup>144</sup> բառերը, որոնք Դեյքասեի կարծիքով, Ֆրանսիայի մուսուլման հպատակների մոտ կարող էին այն տպավորությունը ստեղծել թե «Ֆրանսիան միայն քրիստոնյաների շահերն է պաշտպանում թուրքիայում»:<sup>145</sup>

Եվ իրոք, հետագայում ամեն անգամ, երբ Ֆրանսիան հայտնվում էր, մի կողմից, հայոց ցեղասպանության հետ առնչվող տարբեր հարցերի մասին *ողջ*, սակայն Ֆրանսիայի շահերից չելնող և կամ նրա շահերին հակասող *ճշմարտությունը քարոզելու*, իսկ մյուս կողմից, այդ մասին լռելու կամ դրանք

<sup>143</sup> Les Grandes Puissances,.....Opt cit.,. doc. N.24, p. 20.

<sup>145</sup> Ibid doc. N.34, p. 26.

<sup>145</sup> А.В.П.Р. , Полигравив, д. 3507, л.17.

իրեն ձեռնտու տարբերակով մեկնաբանելու ընտրության անհրաժեշտության առաջ, ապա Ֆրանսիան, մշտապես, և անվարան, գերապատվությունը տալիս էր երկրորդ մոտեցմանը: Դեկապտի որդեգրած այս դիրքորոշումն անփոփոխ մնաց, և անշեղ ջանադրությամբ կիրառվեց նրա բոլոր հաջորդների՝ Վիվանիի, Բրիանի, Բարտուի, Ռիբոյի և Պիշոնի կողմից:

Պետք է ասել, որ Ֆրանսիայի բարձրագույն քաղաքական ղեկավարությունը խիստ տազնապած և անհանգստացած էր այն սպառնալի վիճակից, որ պատերազմի առաջին փուլում՝ ընդհուպ մինչև 1915թ. օգոստոս ամիսը, «ամենուր շարունակվում էր գերմանական կատաղի քարոզչությունը, որն ամեն ինչ անում էր չեզոք երկրներին Գերմանիայի դրոշի տակ ներգրավելու համար», որ գերմանական քարոզչական կառույցների ջանքերով «Փարիզի արվարձաններում տարածվում էին թուցիկներ և գրքույկներ, որոնք լի էին Ֆրանսիայի կառավարության, ռազմական ղեկավարության և պրեզիդենտի հասցեին ուղղված հարձակումներով»: Ահա թե ինչու նա որոշեց ամեն կերպ պայքարել «Ֆրանսիայի ազգային օրգանիզմը թունավորող գերմանական քարոզչության դեմ»<sup>146</sup>: Փորձառու դիվանագետ, Բեռլինում Ֆրանսիայի նախկին դեսպան Ժյուլ Կամբոնի խորհրդով և նախաձեռնությամբ ֆրանսիական կառավարությունը նախագահ Ռայմոն Պուանկարեի ստորագրությանը ներկայացրեց մի դեկրետ, որով «Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարությանը հատուկ բյուջե էր տրամադրվում քարոզչական նպատակների համար»<sup>147</sup>:

Այս ամենի ֆոնի վրա պարզ է դառնում, թե ինչու որոշ վարանումներից և վերապահումներից ձերբազատված պաշտոնական Ֆրանսիան, որդեգրելով հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության միջոցով իր հետապնդած գաղափարա-քարոզչական և ռազմաքաղաքական նպատակադրումներին հասնելու ռազմավարությունը, որոշեց այլևս «դավաճանական լռություն չպահպանել դարերի մարտիրոսի՝ Հա-

յաստանի, որին նաև «Ասիայի Բելգիա» են անվանում, դժբախտության, նրա հերոսական դիմադրության և ազատության սրբազան դատին նրա մատուցած գերազանց ծառայությունների մասին»<sup>148</sup> և քարոզչական պայքարի մեջ փորձառություն ունեցող տերությանը հատուկ ու բնորոշ արհեստավարժությամբ ձեռնամուխ եղավ բազմագործառնության լի քարոզչական համալիր ստեղծելու գործին:

Արհեստավարժ քարոզչություն մղելու կոչված ֆրանսիական համապատասխան կառույցների ղեկավարությունը քաջ գիտակցելով, որ հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությանը պետք է մոտենա որպես *արվեստի*, ձգտեց թե Ֆրանսիայում և թե չեզոք երկրներում հայոց ցեղասպանության ճշմարտությունը դարձնել որքան հնարավոր է ա) *համոզիչ*, բ) *դյուրըմբռնելի*, և գ) որքան հնարավոր է *ակնառու ու խորը տպավորվող*:

Նրա համար պարզ էր, որ բազմամիլիոն լսարանի վրա հայոց ցեղասպանության քարոզչության միջոցով լավագույնս ազդելը նշանակում էր այդ մարդկանց դրդել, մղել այն բանին, որ նրանք *իրենց ուշադրությունը, իրենց էներգիան, իրենց կամքն ու վճռականությունն* ուղղեն դեպի այն խնդիրների լուծումը, որոնք իր առաջ դրել էր Ֆրանսիայի ռազմա-քաղաքական ղեկավարությունն՝ իր թշնամիներին գաղափարա-քարոզչական պատերազմում պարտության մատնելու համար:

Ֆրանսիական պետական քարոզչությունը տնօրինող պաշտոնյաներն ու իրազեկ կազմակերպություններն այդ կարևորագույն խնդրի լուծման ճանապարհին որպես առաջին ծանրակշիռ ու անհրաժեշտ քայլ սեպտեմբերին հայոց ցեղասպանության վերաբերյալ համոզվել, կարելվույն չափ ճշգրիտ ու առարկայական, խոսուն, ազդու, հավատ ներշնչող *փաստաթղթերի ժողովածուի՝ դոսյեի ստեղծումը*, որը նրանց, նախ, հնարավորության կընձեռներ հայկական սարսափների վերաբերյալ «Եվրոպայի չեզոք երկրներ հասնող չոր ու ցամաք, աննշան լուրերի փոխարեն», ստեղծելու «սարսափների ամ-

<sup>146</sup> Раймонд Пуанкаре, Воспоминания. 1914-1918, На службе Франции, М. 1936, ст. 49, 307-308.

<sup>147</sup> Там же, ст. 51.

<sup>148</sup> “The Asiatic Review”, London, 10 June, 1915թ.:

բողջական պատկերը՝ լիապատում փաստերու»,<sup>149</sup> և ապա «զանազան աղբյուրներից հասած փաստացի վկայությունների հաջորդական ամեն մի շերտի օգնությամբ շարունակ իրազեկ դարձնելու չեզոք երկրների և սեփական երկրի հասարակական կարծիքը Հայաստանի անցուղարձին», և ամենակարևորը, հաստատելու իր թշնամիների, հատկապես Գերմանիայի գործած «ոճրի ողջ սարսափելիությունն ու անողոք ճշմարտությունը»:<sup>150</sup>

Նման դոսյեի ստեղծման աշխատանքներին Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարությունը, և հատկապես այդ նախարարության կազմում գործող և ողջ գաղափարա-քարոզչական աշխատանքները կազմակերպող, համակարգող ու տնօրինող «Քաղաքական գործերի դեպարտամենտը»՝ բազմափորձ և ճկուն քաղաքագետ Դ. Մարժերիի գլխավորությամբ, ձեռնարկեցին մեզ արդեն ծանոթ համատեղ «Հայտարարության» հրապարակումից անմիջապես հետո:

Հայոց ցեղասպանության դաժան իրողությունն ապացուցող, նրա հետ առնչություն ունեցող տարբեր հարցերի վերաբերյալ փաստաթղթերի, վկայությունների հզոր, և Ֆրանսիայի քարոզչական նպատակադրումներն իրագործելու կարող ու ունակ ժողովածու՝ «*դոսյե*» ստեղծելու համար պաշտոնական Ֆրանսիան գորաշարժի ենթարկեց իր տրամադրության տակ եղած բոլոր և ամեն կարգի հնարավորությունները:

Ամենից առաջ գործի դրվեցին չեզոք և դաշնակից երկրներում գտնվող ֆրանսիական դեսպանատների և հյուպատոսարանների ողջ աշխատակազմը, ռազմական կցորդները, և իհարկե, ֆրանսիական հետախուզությունը, որոնց ջանքերով էլ, ընդհուպ մինչև աշխարհամարտի վերջին օրերը, Ֆրանսիան ստեղծեց Մեծ եղեռնի վերաբերյալ իր փաստաթղթային ժողովածուի առյուծի բաժինը:

Ֆրանսիական պետական քարոզչության համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը ստեղծելու գործում կարևոր դեր և ծառայություն ունեցան նաև բրիտանական կա-

ռավարության համապատասխան կառույցները, Ֆրանսիայի, և առանձնապես չեզոք երկրների քրիստոնեական միսիոներական կազմակերպությունները, գերմանական միսիոներական կազմակերպությունների հրապարակումները, ֆրանսիական քարոզչության հետ սերտ համագործակցության մեջ գտնվող հայ քաղաքական և ազգային կազմակերպությունները, սուլթանական Թուրքիային թշնամի մուսուլման, հատկապես արաբական քաղաքական գործիչներն ու կազմակերպությունները, որոնցից յուրաքանչյուրը յուր հնարավորությունների ու ուժերի ներածին չափով կամա թե ակամա ֆրանսիական քարոզչությունը տրամադրեց արևմտահայության բնաջնջումն ապացուցող և Ֆրանսիայի թշնամիների հանցագործությունը մերկացնող բազմաբնույթ և վավերագրական հավաստիությամբ բնութագրվող հարյուրավոր փաստաթղթեր, փաստեր ու վկայություններ, որոնք փոքրիկ առունների նման, հոսելով ֆրանսիական պետական քարոզչության կողմից հայոց ցեղասպանության վերաբերյալ ստեղծվող փաստաթղթային ժողովածուի գետը, այն իսկապես որ դարձրին հզոր ու ազդու՝ ամենադժվար քարոզչական ու գաղափարա-քաղաքական խնդիրները հաջողությամբ լուծելու ընդունակ մի գեմք՝ Գերմանիային գաղափարա-քարոզչական պատերազմում պարտության մատնելու ներուժ ունեցող հաղթամիջոց:

Թե Ֆրանսիան որքան էր կարևորում և արժեվորում Մեծ եղեռնի վերաբերյալ փաստաթղթերի դոսյեի ստեղծումը, հստակորեն երևում է այն հանգամանքից, որ այդ *աշխատանքներն անձամբ գլխավորում էին և դրանցով բառացիորեն ամեն օր զբաղվում էին* Ֆրանսիայի արտաքին գործոց բոլոր նախարարները, որոնք զրեթե բոլորն էլ միաժամանակ զբաղեցնում էին Ֆրանսիայի վարչապետի պաշտոնը:

Ֆրանսիայի արտաքին , ներքին և ռազմական գործոց արխիվներում գտնվող հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերն, առանց բացառության, ուղարկվում էին անձամբ Ա. Գ. նախարարներին, որոնք, նախ, պարտադիր կարգով ծանոթանում էին դրանց հետ, կարևորում և արժևորում նրանց մեջ պարունակող տեղեկությունները, և ապա, վճռում նրանց հետագա ճակատագիրը: Մովորաբար Ֆրանսի-

<sup>149</sup> «Утро России», 6-ое ноября, 1915 г.

<sup>150</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1915թ.:

այի Ա. Գ. նախարարներն այդ փաստաթղթերից հանում էին այն ամենը, ինչը որ, նախ, չէր համապատասխանում Ֆրանսիայի հետապնդած նպատակադրումներին, ինչը որ կարող էր նվազ համոզիչ և ազդու դարձնել ֆրանսիական քարոզչությանը: Այնուհետև, նրանք հանձնարարում էին ֆրանսիական պետական քարոզչությունը տնօրինող կառույցներին՝ «Քաղաքական գործերի ղեկարտամենտին», «Ասիա-Օկեանիա» ենթաղեկարտամենտին՝ որի տնօրենն էր ֆրանսիական քաղաքական գործիչների մեջ հայկական խնդրի լավագույն գիտակի համբավ ունեցող *Ժան Գուն*, գտնել դրանց օգտագործման լավագույն ձևը, տեղը՝ Ֆրանսիայում թե չեզոք երկրներից որևէ մեկում, որոշել ի՞նչ չափով հրատարակել դրանք, տրամադրել հայոց ղեղասպանության քարոզչությանը զբաղվող գիտական-կրթական ու քաղաքական կազմակերպություններին ու անվանի գործիչներին, Ֆրանսիայի պետական այրերի քարոզչական ելույթները նախապատրաստող կառույցներին, և վերջապես, քարոզչական նպատակներով գիտահանրամատչելի գրականություն ստեղծելու կոչված հեղինակներին ու կենտրոններին:

Այսպես, երբ 1915թ. օգոստոսին Կ. Պոլսում Ֆրանսիայի ղեկավարության արխիվների պահպաններ Ռոբեր Դուգարդիեն և Բոդուին արտաքին գործոց նախարար Դեքասեին ուղարկեցին Ֆրանսիայի նախկին հյուպատոս Դ'Գիզի «փաստարկված տեղեկագիրն արևմտահայության վիճակի մասին», և հույս հայտնեցին, որ «այն անպայմանորեն կհետաքրքրի երկրի քաղաքական ղեկավարությանը», Ֆրանսիայի պետական քարոզչության քաղաքական ղեկավարությունն իրագործող ղեմքերից մեկը՝ Ժան Գուն, կարևորելով այդ փաստաթուղթը, անհրաժեշտ համարեց նրա հրատարակումը, սակայն նկատի առնելով, որ քարոզչությունը կարող է ազդեցիկ լինել և սպասված արդյունքը տալ միայն օբյեկտիվության և անկողմնակալության բոլոր պահանջները հարգելու դեպքում, նա նախ, հարկ համարեց «փաստաթղթի մեջից հանել այն ամենն, ինչը թույլ կտար կռահելու, որ նրա հեղինակը պրն. Գիզն էր», և ապա հանձնարարեց Ա. Գ. նախարարության մամուլի հետ տարվող աշխատանքների ղեկավար Փոնսոյին «Գիզի զեկուցագիրը նախ հրատարակել ամերիկյան մամուլում, և ապա

այնտեղից արտատպել մեղ մամուլում՝ որպես Ասիայից վերադարձած չեզոք ճանապարհորդի վկայություն»<sup>151</sup>:

Արդեն 1915 թվականի հունիս-հուլիս ամիսներին Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարությունում ստեղծվել էր հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի մի ստվար ժողովածու, որի մասին է վկայում Արշակ Չոպանյանի կողմից «Ասիա-Օկեանիա» ենթաղեկարտամենտի տնօրեն Ժան Գուին գրած 1915թ. օգոստոսի 16-ի թվակիր նամակը. «Հենց նոր տեղ հասած նամակներից և հայկական որոշ թերթերում ես մանրամասներ գտա Թուրքիայում գտնվող հայության վիճակի մասին:

Շտապում եմ Ձեզ ուղարկել հատվածներ այդ նամակներից և հոդվածներից, և խնդրում դրանցով *լրացնել հայ ժողովրդի մարտիրոսության մասին պատմող այն դրոյեան, որ գտնվում է արտաքին գործոց նախարարությունում*»<sup>152</sup> Ապա Չոպանյանը քարզմանաբար Ժան Գուին էր փոխանցում հատվածներ Կ. Պոլսից Մոֆիա եկած մի ականատեսի՝ 1915թ. հուլիսի 12-ի թվակիր նամակից, ուր պատմվում էր Կ. Պոլսոյ հայ մտավորականության ձերբակալման և ոչնչացման մասին:

Ֆրանսիային ամենից առաջ հետաքրքրում էր այդ փաստաթղթի այն հատվածը, որտեղ հեղինակը վկայում էր, որ «Թուրքիայում կառավարությունը գտնվում է գերմանացիների ձեռքը, որոնք շատ են զայրացած հայերի վրա»:

Այնուհետև, Չոպանյանը բերում էր հատվածներ Կ. Պոլսից Պողոս Նուբարին ուղարկած՝ հայերի տարագրման մասին պատմող նամակից, հույս հայտնելով, որ Պողոս Նուբարն այդ նամակն ամբողջությամբ կփոխանցի արտաքին գործոց նախարարությանը:

Երրորդ փաստաթուղթը, որից հատվածներ էր քաղել Ա. Չոպանյանը, դա 1915թ. հուլիս 31-ին Նյու-Յորքի «Կոչնակ» թերթում զետեղված ամերիկացի միսիոներներից ստացված տեղեկություններ էին Չեյթունի և Մարաշի հայության տեղահանության մասին, որի վերջում Չոպանյանը անում էր Ֆրան-

<sup>151</sup> Les Grandes Puissances..... Opt cit., doc.N.58, p. 48.

<sup>152</sup> Ibid, doc. N. 62, p. 57-58.

սիայի քարոզչական նպատակներին միանգամայն գոհացնող այն եզրակացությունը, որ «միայն Գերմանիան կարող էր թուրքերին ներշնչել տեղահանության այդ ողջ սիստեմը, իսկ թուրքերն էլ միակն են, որ կարող են այն իրագործել նման դաժանությամբ»:

Չորրորդ և հինգերորդ փաստաթղթերը, որոնցից հատվածներ էր քաղել Ա. Չոպանյանը, գետնդրված էին եղել «Մշակի» 1915 թ. հուլիսի 6-ի համարում, և Սոֆիայում լույս տեսնող «Հայաստան» թերթում, որոնցում մանրամասնորեն ներկայացված էին Բիթլիսի, Խիզանի, Սպարկերտի, Մամրկանի, Օզնի և Դիարբեքիի հայության գողգոթան:

1915թ. օգոստոսի 20-ին Սալոնիկում Ֆրանսիայի հյուպատոս Սեօնը արտաքին գործոց նախարար Դերքասեին տեղեկացնում էր, որ «ինքը տարբեր հավաստի աղբյուրներից տեղեկություններ է ստացել, որ հայերը հալածանքների են ենթարկվում ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ գավառներում», որ «կայարությունում կոտորված հայերի թիվը հասնում է 200.000-ի, և եթե այս վիճակը երկարատևի, ապա, այդ ժողովուրդը ամբողջովին կընաջնջվի»:<sup>153</sup>

1915թ. օգոստոսի 20-ին անգլիական հետախուզական ծառայությունները Ֆրանսիայի ռազմական գործոց նախարարությանը փոխանցեցին Շապին Գարահիսարի հայության հետրոսամարտի, և ապա թուրքական բանակի կողմից կանանց ու երեխաների կենդանի ողջակիզման մասին պատմող տեղեկությունները,<sup>154</sup> և հաղորդեցին, որ հայերի վիճակը երբեք այսքան ծանր չի եղել, քանի որ, նրանց տեղահանում են ողջ Անատոլիայից և մեթոդիկորեն իրագործում ողջ հայ ցեղի բնաջնջումը»:<sup>155</sup>

Այս համագործակցությունը Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության և Մեծ Բրիտանիայի հետախուզության միջև շարունակվեց 1915-1916թթ., որի արդյունքում Ֆրանսիայի պետական քարոզչությունը տնօրինող կենտրոնը

հայոց ցեղասպանության մասին պատմող և վկայող իր դոսյեն հարստացրեց բազմաթիվ նոր և ճշտված տեղեկություններով, որոնց մեջ առանձնանում են 1916 թվականի սեպտեմբերի 30-ին, նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 1-ին Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ գնդապետ Լափանուզի միջոցով փոխանցված փաստաթղթերը, որոնք իրենց մեջ պարունակում էին արաբ երկու սպաների, Սիրիայի Արլիտ բնակավայրի արաբ բնակչի վկայությունները հայերի զանգվածային տեղահանության ու կոտորածների, Միջագետքի մահվան ճամբարների մասին:<sup>156</sup>

Սակայն իրենց լայն ընդգրկումներով և տեղեկությունների հավաստիությամբ աչքի ընկնող փաստաթղթերը Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության տրամադրության տակ հայտնվեցին *հայ քաղաքական և ազգային ուժերի օգնությամբ*՝ ամենից առաջ Բուլղարիայի և Եգիպտոսի հայկական թեմերի առաջնորդների և Հայոց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի ջանքերով: Կ. Պոլսի պատրիարքության կողմից պատրաստած փաստաթղթերի մասին, ինչպես տեսանք, հիշատակում և նրանից հատվածներ էր բերում Արշակ Չոպանյանը՝ Ժան Գուին գրած մեզ արդեն ծանոթ նամակում, իսկ Պողոս Նուբարը 1915թ. օգոստոսի 22-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ V- ին այդ փաստաթղթի կապակցությամբ գրում էր. «Ուրախ եմ տեղեկացնել Ձեր Վեհափառությանը, որ Պուլկարիոյ միջոցով Պոլսոյ Պատրիարքից ստացած մեկ նամակը Գաղիոյ (Ֆրանսիայի – Ե.Գ ) ... զանազան անձանց հաղորդեցի և բազմաթիվ կարևոր թերթեր անկէ կարևոր համառոտագրություններ հրատարակեցին»:<sup>157</sup>

Հայոց ցեղասպանություն մասին ֆրանսիական քարոզչության փաստաթղթային դոսյեի *հիմնական և առանցքային այդ փաստաթուղթը* մինչ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարությանը հասնելը բավականին երկար ճանապարհ էր անցել: Այդ փաստաթուղթը կազմողները, որոնք գտնվում էին Կ. Պոլսում, նկատի առնելով, որ այն Եվրոպա հասցնելը և

<sup>153</sup> Les Grandes Puissances..... Opt. cit., doc. N. 62, p. 58.

<sup>154</sup> Ibid, doc. N. 62, p. 63.

<sup>155</sup> Ibid,doc. N. 130, 137, 155.

<sup>156</sup> Les Grandes Puissances..... Opt. cit., doc. N 273, p. 298.

<sup>158</sup> ՀՀ ԿՊՊԱ., ֆ 57, ցուցակ 5, գործ 19, թիւր 88:

հանրային կարծիքի ուշադրությանը հանձնելը բավականին դժվարին և բարդ գործ է, որոշեցին այն Անտանտի երկրներ հասցնել երկու տարբեր ճանապարհներով՝ մեկը Բուլղարիայի, իսկ մյուսը Եգիպտոսի միջոցով: Ինչպես արդեն տեսանք առաջին նամակը, որ ուղղված էր Բուլղարիայի թեմի առաջնորդ Ղևոնդ Դուրյանին, բարեհաջող հասել էր Պողոս Նուբարին, որն էլ իր հերթին այն տրամադրել էր Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարությանը<sup>158</sup>:

Նույն բովանդակությունն ունեցող երկրորդ նամակը, որը անվանապես նույնպես ուղղված էր Ղևոնդ Դուրյանին, ուղարկվել էր Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ Գուշակյանին, և թվագրված էր 1915 թվականի հուլիսի 13/30-ին: Թորգոմ Գուշակյանն, ստանալով այդ նամակը, երկու անգամ, 1915 թվականի հուլիսի 22-ին, և 1915 թվականի օգոստոսի 28-ին՝ դիմեց Կահիրեում Ֆրանսիայի լիազոր-նախարար Դեֆրանսին, խնդրելով «հավաստի աղբյուրներից ստացված այդ նամակի մասին հայտնել հանրապետության կառավարությանը»<sup>159</sup>: 1915թ. սեպտեմբերի 30-ին Դեֆրանսը արտաքին գործոց նախարար Դելքասենն ուղարկեց այդ նամակը, որը և Պողոս Նուբարի փոխանցած երկու նամակների հետ մեկտեղ դարձան այն հենքը, որի հիման վրա ֆրանսիական քարոզչության ղեկավար կազմակերպությունները ստեղծեցին այն բազային փաստաթուղթը, որը և ընկավ հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական պետական քարոզչության բոլոր ձեռնարկումների ու քայլերի հիմքում:

Բացի այն, որ հայոց ցեղասպանության փաստաթղթային դոսյեյի առանցքը կազմող այդ փաստաթղթերն օգտագործվեցին Ֆրանսիայի կողմից իր երկրի ներսում անհրաժեշտ քարոզչություն ծավալելու նպատակով, շատ շուտով դրանք դուրս բերվեցին «միջազգային ասպարեզ»՝ չեզոք երկրների հանրային կարծիքի վրա ազդելու, Թուրքիային ու նրա դաշնակից Գերմանիային վարկաբեկելու խնդիրները լուծելու համար: Այսպես, արդեն 1915 թվականի սեպտեմբերի 22-ին Ա. Գ. նա-

խարար Դելքասեն, ԱՄՆ-ում քարոզչական նպատակներով օգտագործելու համար, Վաշինգտոնի իր դեսպան Ժուսերանին ուղարկեց հայոց ցեղասպանության վերաբերյալ «ունեցած բոլոր նյութերը և հատկապես Դեֆրանսի զեկույցները հայերի մասին»<sup>160</sup>: Իսկ Դելքասենին 1915թ. հոկտեմբերին փոխարինած նոր նախարար Վիվիանին 1915թ. հոկտեմբերի 22-ին նույն Ժուսերանին ուղարկեց Կ. Պոլսից Ղևոնդ Դուրյանին ուղարկված նամակ-փաստաթղթերի փունջը, և նրանից պահանջեց «օգտագործել դրանք հանուն գործի, ձեռնպահ մնալով, փաստաթղթերի ստեղծողների և հասցեատերերի անունները հրապարակելուց»<sup>161</sup>:

Արդեն 1915 թվականի դեկտեմբերին ֆրանսիական պետական քարոզչությունը տնօրինող կառույցներն իրենց ձեռքի տակ ունենալով հայոց ֆիզիկական ոչնչացումը փաստող և ապացուցող բազմաթիվ, բազմաբնույթ և ազդու փաստաթղթային պաշար, որոնց մեծ մասը Ֆրանսիան տարբեր ճանապարհներով քարոզչական շրջանառության մեջ էր դրել, կարողացան դրա հիման վրա ստեղծել, նախ Մեծ եղեռնի «լիապատում» պատկերը, և ապա, անմարդկային ոճրի զոհ դարձած հայ ժողովրդի նկատմամբ համակրանքի ու կարեկցանքի տրամադրությունները տիրապետող դարձնել թե՛ բուն Ֆրանսիայում և թե՛ չեզոք երկրներում, լուրջ կերպով սասանել Գերմանիայի միջազգային հեղինակությունն ու վարկը, համապատասխանաբար բարձրացնելով Ֆրանսիայի և նրա դաշնակիցների՝ որպես անհրավության զոհերի անշահախնդիր պաշտպանի համբավն ու համարումը: Այդ աշխատանքները խորացնելու, ֆրանսիական քարոզչության առաջ կանգնած նոր ու դժվարին խնդիրները լուծելու, հատկապես քարոզչական գլխավոր և հիմնական կոնցեպցիաները մշակելու, դրանցով գաղափարական պայքարի նոր՝ ավելի բարձր փուլի մեջ մտնելու՝ հրամայականները Ֆրանսիայի քարոզչության խոհանոցը տնօրինող կազմակերպություններից՝ առաջին հերթին արտաքին գործոց նախարարության «Քաղաքական գործերի

<sup>158</sup> Les Grandes Puissances.... Opt. cit., doc. N. 131, p. 128-132.

<sup>159</sup> Ibid, doc. N. 66, p. 60-63.

<sup>160</sup> Les Grandes Puissances.... Opt. cit., doc. N. 98, p. 83.

<sup>161</sup> Ibid, doc. N131, էջ 128 :



դեպարտամենտի» դեկավարությունից պահանջում էին այդ բազմաբնույթ փաստաթղթային փաթեթից առանձնացնել և կարևորել Ֆրանսիայի գաղափարա-քարոզչական նպատակադրումներին բոլորից շատ բավարարելու և ծառայելու կարողունակ փաստաթղթերը և դրանց դասդասման, խմբավորման և սրբագրման հիման վրա *ստեղծել հայոց եղեռնի մասին պատմող և ֆրանսիական պաշտոնական քարոզչության կոնցեպցիաների համար ամուր հիմք ծառայող մեկ՝ կոտ կառուցվածք ունեցող աշխատանքային ամբողջական փաստաթուղթ*։

Իրոք, 1915 թ. դեկտեմբերին Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար և վարչապետ Արիստիդ Բրիանի սեղանին դրվեց վերոհիշյալ բոլոր հրամայականներին բավարարություն տալու՝ կոչված մի ամբողջական տեքստ ունեցող փաստաթուղթ՝ «*Հայկական կոտորածների մասին*» նոտան, որը ստեղծելիս Ա. Գ. նախարարության «Քաղաքական գործերի դեպարտամենտը» որպես հիմք և ատաղձ էր ունեցել Կ. Պոլսի, մեզ արդեն ծանոթ, նամակ-փաստաթղթերն՝ իրենց հավելվածներով։<sup>162</sup>

Արիստիդ Բրիանի համար կազմված և նրա լիակատար հավանությանն արժանացած այդ հավաքական փաստաթուղթը շատ շուտով դարձավ հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությամբ զբաղվող ֆրանսիական բոլոր կազմակերպությունների և անհատ անձանց գլխավոր, բազային փաստաթղթային հենքը, պաշտոնական և ոչ պաշտոնական մամուլի օրգանների անդրադարձների և մեկնաբանությունների առարկան։ Արտաքին գործոց նախարարության «Քաղաքական գործերի դեպարտամենտի» արհեստավարժ աշխատակիցներն այն կազմել էին ո՛չ միայն ազդու և տպավորություն գործելու ընդունակ քարոզչության համար անհրաժեշտ բոլոր պահանջները հարգելով՝ այն լրամշակելով չեզոք երկրների քաղաքացիներ հանդիսացող ականատեսների վկայություններով, և անգամ գերմանացի հեղինակների արժանա-հավատ հաստատագրումներով, այլև, որ ամենից կարևորն էր, այդ հավաքական փաստաթղթի մեջ, շատ դեպքերում, ավար-

տուն տեսքի էին բերել ֆրանսիական քարոզչության համար ընդունելի, և նրա կողմից լայնորեն քարոզվելու կոչված հայեցակարգային հիմնադրույթներից շատերը։

Արձանագրելով, որ «Թուրքիայից փախած հայերի, հույների, ինչպես նաև չեզոք երկրների քաղաքացիների վկայությունները հաստատում են, որ Էրզրումի Տրապիզոնի, Սվազի, Խարբեթի, Բիթլիսի և Դիարբեքի վիլայեթներում այլևս հայեր չեն մնացել», տալով «արևմտահայության տեղահանության, տղամարդկանց ու երիտասարդության ոչնչացման, կանաց ու երեխաների առք ու վաճառքի, հավատափոխության, հայ մտավորականության բնաջնջման, բռնի և ոչ բռնի մահվան (սով, երկարատև ուս հոգնատանջ ճանապարհներ, համաճարակային հիվանդություններ), թուրքական *ողջ համալիրի ճշգրիտ պատկերը*», փաստաթղթի հեղինակները գալիս էին այն եզրակացության, որ «պատմությունը *երբեք չի տեսել և երբեք չի արձանագրել և նման հեքատմբա՝* զանգվածային սպանություն»<sup>163</sup>։ Իրադարձությունների արխետոգրաֆիկ պատկերն ամբողջացնելուց հետո, փաստաթղթի հեղինակները՝ հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական պաշտոնական և ոչ պաշտոնական քարոզչության ծանր հրետանին դառնալու կոչված այդ փաստաթուղթը եզրափակում էին հայեցակարգային բնույթ ունեցող երկու պնդումներով։ Նախ, ելնելով Ֆրանսիայի գաղափարա-քարոզչական բոլոր ճիգերն ու ջանքերն ամենից առաջ Գերմանիայի դեմ ուղելու, նրան վարկաբեկելու, նրա միջազգային հեղինակությունը սասանելու առաջնահերթությունից, փաստաթղթի հեղինակներն այստեղ ընդհանուր գծերով տվեցին հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի՝ *որպես գլխավոր մեղավորի և պատասխանատուի* կոնցեպցիան՝ այն հիմնավորելու գործը թողնելով գիտական համբավ ունեցող և հրապարակախոսական տաղանդով աչքի ընկնող քարոզիչների վարպետությունը. «*Թուրքիայի ողջ հայ բնակչությունը դատապարտված է մահվան և այդ դատավճիռը ողջ կայսրությունում ի կատար է ածվում բացառապես գերմանական մեթոդով*։

<sup>162</sup> Les Grandes Puissances..... Opt. cit., doc.N.151, p.151-155.

<sup>163</sup> Les Grandes Puissances.... Opt. cit., doc.N.151, p.153-154.

այդքան տանջված հայ ժողովուրդը, և սպասելով օրինական հատուցման պահին, նա հայ ժողովրդին ուղղեց իր հարգանքն ու վշտայի կարեկցանքը:

Դա ճնշվածներին ավանդաբար սփոփող, ազատագրող և նրանց վրեժը լուծող ֆրանսիայի փառքը եղավ: Դարեր շարունակ, Արևելքի ժողովուրդները Ֆրանսիայից են ակնկալել իրենց ազատագրումը: *Ֆրանսիան երբեք չի դավաճանել* իր առաքելությանը: Հիացմունքի արժանի եռանդը, որով մեր հերոսական զինվորները կռվում են գերմանական ագահության կողմից մեզ պարտադրված պատերազմում, մեր համար երաշխիք է, որ Ֆրանսիան այս անգամ ևս՝ քաղաքակրթության համար կռվող իր դաշնակիցների օգնությամբ կկատարի իր այդ առաքելությունը: Հանրամատչելի կառավարությունը չի մոռացել իր պարտականությունները: Նա հոգ է տարել Ֆրանսիայում գտնվող հայերի մասին, ուր նրանք գտել են սրտակից հյուրընկալություն:

Լեվանտի մեր էսկադրաները օգնության շտապեցին սիրիական ափերին՝ հուսահատ պայքարի ելած հայերին, որոնցից 5.000 մարդ տեղափոխվել է Եգիպտոս: Մեր տարածքներում հայտնված բոլոր փախստական հայերը գտել են ամենասրտակից ընդունելություն:

Հայ ժողովուրդն ինքը բարձր է գնահատել Ֆրանսիայի շոայլ աջակցությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչը՝ Ն. Մ. Պողոս Նուբարը Ֆրանսիայի կառավարությանը դիմել է պաշտոնական շնորհակալությամբ:

Վերջնական կարգավորման ժամանակ Ֆրանսիան չի մոռանալու այն հատուցումների մասին, որոնց իրավունքը հայ ժողովուրդը ստացել է իրեն բաժին ընկած սարսափների համար»:<sup>165</sup>

Շուտով այս փաստաթուղթը Ֆրանսիայի վարչապետի կարգադրությամբ հանձնվեց նաև Անատոլ Ֆրանսին, որը պատրաստվում էր իր ամենաակտիվ և եռանդուն մասնակցությունը բերել հայոց ցեղասպանության շուրջը ծավալված քարոզարշավին:

1915-1918թթ. պաշտոնական Ֆրանսիայի աջակցությամբ ու գիտությամբ թե՛ Ֆրանսիայում և թե՛ չեզոք երկրներում լույս տեսած առանց բացառության բոլոր կարգի ու բնույթի հրապարակումների, գրքերի ու գրքույկների մեջ կարելի է գտնել երկար ու բառացի մեջբերումներ այդ հավաքական փաստաթղթից, կամ էլ այդ փաստաթղթի գաղափարական, կոնցեպտուալ ազդեցությանը:

Մեր ուսումնասիրության արդյունք հանդիսացող վերոհիշյալ սկզբունքային կարևորություն ունեցող եզրահանգումը, մեկ անգամ ևս ապացուցում է, որ առաջին աշխարհամարտի տարիներին Ֆրանսիայում և նրա ազդեցության տակ գտնվող ֆրանկոֆոն երկրներում Մեծ եղեռնի շուրջը ծավալված լայնամասշտաբ քարոզարշավը հղացվել, ղեկավարվել, և իրականացվել է Ֆրանսիայի շահերի արթուն պաշտպանի՝ Ա.Գ. Նախարարության կողմից, որի իրազեկ կառույցները, նախ, ծավալեցին եռանդուն փաստահավաք աշխատանքներ և հայոց ցեղասպանության վերաբերյալ ստեղծեցին լուրջ և ազդու փաստաթղթային հավաքածու, և երկրորդ, մշակեցին և նրբորեն, անբռնազրոսիկ ձևով լայնորեն տարածեցին ու արմատավորեցին Ֆրանսիայի տարաբնույթ շահերից ելնող, շատ հաճախ հայ ժողովրդի շահերն ու պատմական ճշմարտության իրողություններն անտեսող՝ «գաղիական տեսակետներով» տողորված կոնցեպտուալ մեկնաբանություններ Մեծ եղեռնի պատճառների, մեղավորների ու պատասխանատուների, այդ գործում Ֆրանսիայի դերի ու վաստակի վերաբերյալ:

Պետք է ասել, որ ֆրանսիական քարոզչության այդ հենքային փաստաթղթի ստեղծումից հետո էլ Ֆրանսիայի քարոզչությունը ղեկավարող ուժերն ու կազմակերպությունները, ինչպես նաև նրանց հսկողության և ազդեցության տակ գտնվող ֆրանսիական մամուլի ազդեցիկ օրգանները ոչ մի բուպե կանգ չառան և ընդհուպ մինչև 1918թվականի վերջերը նպատակասլաց ձևով շարունակեցին հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության համար անհրաժեշտ փաստահավաքի աշխատանքները:

1915թ. դեկտեմբերի 22-ին Կոպենհագենում Ֆրանսիայի դեսպան Բափսը Նախարարների խորհրդի Նախագահ Արիս-

<sup>165</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N. 156, p.155.

տիղ Բրիանին տեղեկացնելով, որ Կ. Պոլսում Դանիայի վիագոր դեսպանը՝ Ուանդերը իր կառավարությանն է փոխանցել մի փաստաթուղթ, որը վերաբերում է «կայսրության խորքերը տարագրված հայ ավանդատուներին», այդ փաստաթուղթը ուղարկեց Ֆրանսիա, անշուշտ, քարոզչական նպատակներով օգտագործելու համար, քանզի այդ փաստաթղթում առաջին հերթին խոսքը գնում էր «անհիմն մեղադրանքների հիման վրա երկրի խորքերը տեղահանված հայերի և նրանց գույքի բռնագրավման մասին»<sup>166</sup>:

1916թ. օգոստոսի 25-ին Բեռնում Ֆրանսիայի դեսպան Բոն Արիստիդ Բրիանին նախ, տեղյակ էր պահում, որ՝ ըստ շվեյցարական «Basler Narchrichten»-ի, Գերմանիայի արտաքին գործոց նախարարությունը Հալեպի մի խումբ գերմանացի ուսուցիչների կողմից ստացել է մի նամակ, որի հեղինակներն իրենց անհանգստությունն էին հայտնում այն կապակցությամբ, որ հայերի նկատմամբ գործադրված աննախադեպ ոճիրները հեղինակագրկում և վարկաբեկում են Գերմանիային Արևելքում, և ապա հարկ էր համարում այդ թերթում տպագրված «գերմանացի ականատեսների նամակը փոխանցել Դեսպարտամենտին»<sup>167</sup>:

Ժենևի «Journal de Ceneve» թերթի 1916թ. օգոստոսի 17-ի համարում զետեղված այդ նամակը, որը հայտնվեց Ֆրանսիայի ղեկավարության ձեռքում, արդեն 1916թ. սեպտեմբերի 12-ին իր տեղը գտավ քարոզչական մեծ հնչեղություն ստացած և ֆրանսիական բոլոր խոշոր թերթերի կողմից հրապարակված ծերակուտական Լուի Մարտենի՝ Արիստիդ Բրիանին ուղղված նամակում՝ դառնալով Գերմանիայի մեղսակցությունն ապացուցող «համադիչ» և ոչ մեկի կողմից «կասկածի» տակ չդրվող վկայությունը:<sup>168</sup>

1917թ. սեպտեմբերի 24-ին ֆրանսիական հետախուզության ջանքերով ձեռք բերվեց, և ֆրանսիական հետախուզության գրաքննության ղեկարտամենտի պետ Վալենտենի կող-

մից արտաքին գործոց նախարար Ռիբոյին հանձնվեց ամերիկոսի Կլարենս Ստետսոնի 1917թ. օգոստոսի 26-ի քվակիր նամակը՝ ուղղված իր մորը՝ տիկին Էդվարդ Ստետսոնին, ուր ականատես միսիոներներ Իրվին ամուսինների պատմածների հիման վրա, նախ ցույց էր տրվում, որ թուրքերի կողմից արդեն սպանվել են 1 մլն.-ից ավելի հայեր, որ «թուրքերը վճռել են բնաջնջել հայ ցեղը, և սիստեմատիկաբար իրականացնում են այդ վճիռը», և ապա, հայության զանգվածային բնաջնջման ողջ զինանոցի ճշմարտացի պատկերը վեր հանելով, ընդգծվում էր նաև Գերմանիայի դերը, ինչն ակնհայտորեն բոլորից շատ էր հետաքրքրում Գերմանիայի մեղսակցության ապացուցմամբ շահագրգիռ ֆրանսիական քարոզչությանը. «Գերմանացի միսիոներներն աշխատում էին մեզ հետ, մինչ Գերմանիայի հետ մեր հարաբերությունների խզումը: Նրանք Գերմանիա էին ուղարկում զեկուցագիր-զեկուցագրի հետևից, ուր նկարագրում էին հայերի դեմ գործվող ոճիրները և պահանջում օգնություն: Այդ զեկուցագրերը տպագրվեցին գերմանական թերթերում, սակայն գրաքննության կողմից այն աստիճանի աղճատված, որ նրանք կորցնում էին իրենց ազդեցությունը:

Ահա թե ինչու, Գերմանիան նույնպես պետք է թուրքերի հետ մեկտեղ դիտվի որպես պատասխանատու հայերի բնաջնջման համար»:<sup>169</sup>

1918թ. հունվարի 11-ին Ֆրանսիան ձեռք բերեց Տրապիզոնում Կապուցիներին առաքելության ղեկավար՝ հայր Լորենցիոյի ընդարձակ զեկուցագիրը, որը նա փոխանցել էր «Ռոքելլո» ռազմանավի հրամանատար Դալդեբարանին, ուր նա որպես ականատես պատմում էր Տրապիզոնի հայության ոչնչացման մանրամասները՝ և խնդրում էր «հայերի կոտորածների նախապատրաստումը և իրագործումը փաստող իր վկայությունները փոխանցել Ֆրանսիայի ծովակալությանը»<sup>170</sup>:

1918թ. փետրվարի 21-ին, Պորտ-Սաիդից, Լեվանտում գտնվող Ֆրանսիայի ռազմածովային ուժերի «Տեղեկատվության ծառայության» ջանքերով Ֆրանսիայի արտաքին գործոց

<sup>166</sup> Les Grandes Puissances....Opt. cit., doc.N.154, p. 149-150.

<sup>167</sup> Ibid, doc. N. 248, p. 227-228.

<sup>169</sup> Ibid, doc. N. 257, p. 233-236.

<sup>169</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 392, p. 386-389.

<sup>170</sup> Ibid, doc. N. 483, p. 466-470.

նախարարությունը ստացավ «Մեկ ու կես տարի տարագրության մեջ գտնվող մի հայի վկայությունը»<sup>171</sup> վերտառությամբ փաստաթուղթը, ուր խոսում և թվական հարուստ տվյալներ պարունակող փաստերի հիման վրա ցույց էր տրվում ողջ արևմտահայության տեղահանության համայնապատկերը:

1918թ. մարտի 17-ին Միջազգետքում Ֆրանսիայի լիազոր-հյուպատոս Ռուև արտաքին գործոց նախարար Ստեփան Պիշոնին Բասրայից ուղարկեց «Էրզրումից՝ Մոսուլ, Բաղդադ և Բասրահ տարագրված հայուհու պատմածները» վերտառությամբ փաստաթուղթը, և հաղորդելով, որ փաստաթղթի հեղինակ օրիորդ Գայանե Աբրահամյանը՝ լինելով Էրզրումի հարգված և հայտնի ընտանիքից, խնդրում էր, որպեսզի իր անունը չհրատարակվի, և գտնում էր, որ նրա «տխուր հիշողությունները կարող են հետաքրքրել նախարարությանը, քանզի փաստաթղթի երկրորդ մասում պատմվում է գերմանացի սպաների վերաբերմունքի մասին դեպի հայերը, որը զրի է առնվել ֆրանսիացի ենթա-սպա Փուադեբարի կողմից»<sup>172</sup>:

Պետք է նշել, որ հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության համար անհրաժեշտ լրահավաք և փաստահավաք հետևողական աշխատանքներով զբաղվող և այն ղեկավարող Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարությունը և նրա արտասահմանյան կառույցները՝ դեսպանություններն ու հյուպատոսությունները, չնայած իրենց թափած ջանքերին, ոչ միշտ էին կարողանում ձեռք բերել այն բոլոր փաստաթղթային վկայությունները, և հատկապես Գերմանիային վերաբերող փաստաթղթերը, որոնց գոյության և առկայության մասին նրանք ունեին հստակ տեղեկություն:

Այս առումով խիստ հատկանշական է Հռոմում Ֆրանսիայի դեսպան Կամիլ Բարերի 1917թ. ապրիլի 1-ի զեկույցը Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Ռիբոյին, ուր նա, ոչ առանց մտախոգության, իր անմիջական պետին զեկուցում էր. «Իմ աշխատակիցներից մեկը հանդիպել է Բաղդատում կաթոլիկ եկեղեցու Բարձրագույն ղեկավարի հետ: Չրույցի ընթաց-

քում կարդինալ Լուի Ժեզուն առիթ է ունեցել մի հետաքրքիր ակնարկ անելու հայերի կոտորածների մասին: Նա ասել է, որ Հռոմում գտնվելու ժամանակ ինքը և իր տեղակալ՝ արքեպիսկոպոս Դրուրը, բազմաթիվ այցելություններ են արել Վատիկանի «Պրոպագանդայի» դեսպարտամենտ, ուր նրանց ցույց են տվել Կարդինալ Դոլսիի՝ Կ. Պոլսում Վատիկանի լիազոր ներկայացուցչի, մանրակրկիտ զեկույցները, որոնք հանգամանալից տեղեկություններ են պարունակում հայերի կոտորածների մասին:

«Պրոպագանդայի դեսպարտամենտը, - ավելացնում էր նա այդ հարցի հետ կապված, - ունի հիմնավոր փաստաթղթային տեղեկատվություն այդ *զանգվածային սպանությունների (hecatombes) մեջ Գերմանիայի պատասխանատվության մասին*:

Այն ժամանակ իմ աշխատակիցը հարցրել է Ն. Մ. Լուի դը Ժեզուին, թե ինչու՞ Վատիկանի «Պրոպագանդայի» դեսպարտամենտը, չի օգտագործում այդ դոկումենտացիան և այն չի դարձնում հանրության սեփականությունը, որին վերջինս պատասխանել է, որ նախ, Վատիկանը այս պահին չի ցանկանում որևէ բան հրապարակել, երկրորդ, այն պատճառով, որ նա այդ տեղեկությունները դեռևս բավարար ճշգրիտ չի համարում, երրորդ, որը ավելի հավանական է, նա ցանկանում է որքան հնարավոր է հեռու մնալ քաղաքականությունից, քանի դեռ ընթանում է պատերազմը»<sup>173</sup>:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի ամսուսանքով էր Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարը կարդացել Իտալիայում իր դեսպանի հաղորդումն այն մասին, որ Ֆրանսիան չի կարող օգտվել Վատիկանի տրամադրության տակ եղած այն հարուստ ու բազմաբնույթ փաստական նյութերից, որոնք նրան հնարավորություն կընձեռնեին նորանոր հարվածներ հասցնել Գերմանիայի վարկին ու հեղինակությանը:

Անշուշտ, այդ ամսուսանքը կապված չէր այն իրողության հետ, որ համաշխարհային հանրային կարծիքն այդ դեպքում զրկվում էր հայոց ցեղասպանության մասին պատմող ու վկայող, անշուշտ, հետաքրքիր ու նոր փաստաթղթերի հետ

<sup>171</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 561, p. 529-532.

<sup>172</sup> Ibid, doc.N.561, p. 540-542.

<sup>173</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 346, p. 347.

ծանոթանալու հնարավորությունից, այլ ամենից առաջ և ամենից շատ այդ աստիճանները ծնունդն էր Ֆրանսիայի այն մտահոգության, որ պատերազմի պայմաններում քաղաքականությունից հեռու մնալ ձգտող Վատիկանի դիրքորոշման պատճառով Ֆրանսիան զրկվում էր Գերմանիային ոճրագործի կերպարով ներկայացնելու այդ ազդու քարոզչական միջոցն օգտագործելու հնարավորությունից:

Մեր կողմից ավելացնենք, որ կարդինալ Լուի Ժեզուի կողմից հիշատակված հայոց ցեղասպանության հետ աղերս ունեցող փաստաթղթերի այդ տրցակը ցայսօր չի հրատարակվել և գտնվում է Վատիկանի արխիվների առավել փոշեպատ գրոցներում:

Պարզ ու ակնհայտ է թե ինչ կարևորություն ունի այդ փաստաթղթերի լույս ընծայումը, որը կարող է լրջորեն լրացնել և հարստացնել հայոց ցեղասպանության՝ փաստաթղթային «Մատյանը»՝ ստեղծելով համապատասխան ապացուցողական-քարոզչական հենք Հայ դատի վերջնական հաղթանակի համար:

Առաջին աշխարհամարտի տարիներին ֆրանսիական պաշտոնական քարոզչությունը հայոց ցեղասպանության քարոզարշավը վարեց ոչ միայն դրա համար անհրաժեշտ հիմնավոր և ազդու գրավոր փաստաթղթերի և վկայությունների հավաքածու ստեղծելով, այլև փորձեց և կոնկրետ քայլեր կատարեց այդ քարոզչությունը դիտակտիկ միջոցների օգնությամբ վարելու ուղղությամբ:

Այսպես, 1918 թվականի փետրվարի 1-ին Միջագետքում Ֆրանսիայի հյուպատոսության գործերի կառավարիչ Ռուև արտաքին գործոց նախարար Ս. Պիշոնին Բասրահից գրում էր. «Միջագետքի հայ տարագիրներին հովանավորող կոմիտեն... ինձ է փոխանցել հայերի կրած սարսափների մասին փաստող 3 լուսանկարներ, որոնք ես ուղարկում եմ Ձեզ, խնդրելով, որ դրանք զետեղեք «Panorama»-ի համարներից մեկում»<sup>174</sup>:

Դեռ 1917 թվականին Ֆրանսիան Բելգիայում, Հյուսիս-

սային Ֆրանսիայում և այլուր գերմանական ու ավստրիական վայրագությունները ցույց տվող մեկ տասնյակ «քարթ-փոսթալներ» (նամականիշ - Ե.Գ.) էր հրապարակ հանել: Նկատի առնելով, որ «այս շարքի մեջ կպակսին Հայաստանի մեջ գործած վայրագութեանց պատկերներ», և, անշուշտ, նկատի առնելով, որ պատկերազարդ քարթ-փոստալը փրոփակամտի հզոր միջոց մըն է», Ֆրանսիայի քարոզչությունը դեկավարող օրգանները ընդունեցին «Փարիզի հայ մտավորականների Միության» առաջարկն այն մասին, որպեսզի «քարբարոսներու վայրագությունները ցուցադրող այդ շարքին մեջ բաժին մը բացվի այս պատերազմի մեջ կատարված վայրագութեանց ամենէն ահավորներուն՝ բրքական վայրագութեանց»<sup>175</sup>:

Ֆրանսիական քարոզչությունը տնօրինող օրգանները, ցավոք, այդպես էլ չկարողացան, ավելի ճիշտ չհասցրին, հայոց ցեղասպանության մասին «պատկերազարդ քարթ-փոսթալ» թողարկել, քանզի «Փարիզ չէր հասել չեզոք երկրների ներկայացուցիչների կողմից արված ոչ մեկ հատ լուսանկար երկրին մեջ կատարված խժոժութեանց մասին»<sup>176</sup>:

Առաջին աշխարհամարտի տարիներին ֆրանսիական պաշտոնական քարոզչությունը լայնորեն օգտագործեց նաև ֆրանկոֆոն Շվեյցարիայում լույս տեսած փաստաթղթային ժողովածուները, որոնցում տեղ էին գտել հայոց ցեղասպանության մասին ինչպես շվեյցարական ու ամերիկյան միսիոներների, այնպես էլ գերմանացի ականատեսների վկայությունները:

1916 թվականի դեկտեմբերի 23-ին Արշակ Չոպանյանը Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Արիստիդ Բրիանին ուղարկեց 1916թ. վերջերին Ժնևում «Հայաստանի օգնության շվեյցարական Կոմիտեի» կողմից հրատարակած «Մի քանի փաստաթղթեր հայերի 1915-1916թթ. ճակատագրի վերաբերյալ» գրքույկը<sup>177</sup>, որը «իր մեջ պարունակում է ականատես

<sup>175</sup> «Վերածնունդ», Փարիզ, 1917թ. N 2, էջ 49-50:

<sup>176</sup> Նույն տնդում:

<sup>177</sup> «Quelques documents sur le sort des Arméniens en 1915-1916» Genève, 1916, fascule III.

<sup>174</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 510, p. 493.

գերմանացիների վկայությունները հայ ժողովրդի նակատմամբ կատարված հրեշավոր ոճիրների մասին:

Այդ վկայությունները ապացուցում են թե ինչպես են «ազատարար» գերմանացիներն ապահովում ամենից ճնշված ու թույլ ժողովրդի իրավունքները:

Դա երկու օրինավոր, և ազնիվ գերմանացիների կողմից ներկայացված մեղադրանքի լուրջ ակտ է Գերմանիայի և թուրքական կառավարությունների դեմ»<sup>178</sup>:

Ինչպես այդ, այնպես էլ դեռ 1915 թվականին շվեյցարական նույն Կոմիտեի հրատարակած նույնանուն ժողովածուի առաջին պրակը, ֆրանսիական քարոզչությանը հետաքրքրում էին ամենից առաջ այն պատճառով, որ, ինչպես գրում էր ֆրանսիական կիսապաշտոնաթերթ «Le Temps»-ը, դրանցում արտացոլված գերմանական ակամատեսների վկայությունները «մի սոսկալի ամբաստանություն էին գերմանական կառավարությանը, որը Թուրքիայի զինվորական աջակցությունն ապահովելու համար, չի վարանել հայ ժողովրդի ամբողջական բնաջնջման հաճոյակատար հանդիսատեսը լինել, իսկ հաճախ էլ մեղսակիցը: Թուրքերի զինվորական աջակցության փոխարեն Գերմանիան «Carte Blanche» էր տալիս Թուրքիային՝ փաստորեն նրա հոշոտմանը հանձնելով անպաշտպան հայերին:

Երիտթուրքերի հետ կնքված այդ զզվելի համաձայնությանը Գերմանիան կնքում էր այս դժբախտ ազգի տապանաքարը»:<sup>179</sup>

«Էրզրումի գերմանական զինվորական միսիայում ծառայած երկու զթության քույրերի հայտարարությունը» փաստաթուղթը զետեղված էր «Հայաստանի օգնության շվեյցարական Կոմիտեի» 1915 թվականին լույս տեսած փաստաթղթերի ժողովածուի 1-ին պրակի մեջ, իսկ այնուհետև ճշգրտված և ամբողջական տեսքով այն տեղ գտավ լորդ Բրայսի հանրահայտ ժողովածուի ֆրանսիական հրատարակության մեջ<sup>180</sup>:

«Կիլիկիայի դեպքերի մասին գերմանացի ականատեսի ուղեգրությունից» փաստաթուղթը՝ հայկական կոտորածների գերմանացի ականատեսի ճամփորդական նոթերը գրվել են Թուրքիայում և ուղարկվել Ժնև՝ «Հայաստանի օգնության շվեյցարական Կոմիտեի» հասցեով, որը և տեղ գտավ մեզ արդեն ծանոթ III պրակի մեջ<sup>181</sup>:

Վերոհիշյալ երկու փաստաթղթերը Ֆրանսիայի կողմից լայնորեն օգտագործվեցին, քանզի դրանց մեջ տեղ էին գտել Գերմանիայի վարկն ու հեղինակությունը սասանող, նրան հանցավոր և ոճրագործության մեղսակից այպանող՝ հենց գերմանացիների կողմից բերվող այնպիսի վկայություններ, որոնք արձանագրում էին. «Մարաշում հայերին հոշոտող ամբոխը նետվում էր դեպի գերմանական հիվանդանոցը՝ գոռալով «Յաշաքն արմանի» (Կեցցե՛ Գերմանիան):

Մուսուլմաններն անվերջ կրկնում էին, թե հենց Գերմանիան է մեղավոր, որ իրենք այդպես են վարվում հայերի հետ»<sup>182</sup>:

Թուրքիայում հայերի կոտորածների մասին պատմող գերմանացի ականատեսներին պատկանող առաջին փաստաթղթերից մեկը՝ Հալեպի գերմանական ռեալական դպրոցի ուսուցիչ Մարտին Նիպագեի «Մի քանի խոսք գերմանական ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչներին» դիմումն առաջին անգամ հրատարակվեց ֆրանսերեն Ժնևում 1916 թվականին, մեզ արդեն ծանոթ ժողովածուի III պարկում, և լայն արձագանք գտավ ֆրանսիական մամուլում, ապա զետեղվեց Բրայսի ժողովածուի ֆրանսիական հրատարակչության մեջ՝ նոր փաստաթղթերի բաժնում<sup>183</sup>:

1917 թվականի վերջերին Փարիզում լույս տեսավ Ֆրանսիայի քարոզչական նպատակադրումներին ծառայելու կարողականություն ունեցող «վերին աստիճանի կարևոր մի

<sup>181</sup> «Quelques documents sur le sort des Arméniens en 1915-1916» Genève, 1916, fascule III, p. 162-168.

<sup>182</sup> Ibid, p. 162.

<sup>183</sup> «Le traitement des Arméniens dans l' Empire ottoman»; 1915-1916, Paris, 1987, p. 507-517.

<sup>178</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc.N.312, p. 306-307.

<sup>179</sup> Le Temps, 24 fevrier, 1916.

<sup>180</sup> «Le traitement des Arméniens dans l' Empire ottoman»; Paris, 1987, p. 249-259.

գիրք», որի հեղինակը Հարի Շտումերը՝ լինելով գերմանացի, և 1915-1916թթ. աշխատելով Կ.Պոլսում որպես գերմանական «Kölnische Zeitung» ազդեցիկ թերթի թղթակից, «տալիս էր, ինչպես նշվում էր գրքի ֆրանսերեն նախաբանում, - թե՛ Գերմանիայի, և թե՛ Թուրքիայի գործելակերպի միանգամայն ճշգրիտ քաղաքական ու բարոյական պատկերը»<sup>184</sup>:

Ֆրանսիայի քարոզչական ինդուստրիայի կողմից շրջանառության մեջ դրված արևմտահայության ցեղասպանության մասին պատմող և փաստող, գերմանացի և ոչ գերմանացի ականատեսների վկայությունների ժողովածուի ստեղծման գործում իր շոշափելի ավանդն ունեցավ նաև ֆրանսիական թե՛ կենտրոնական և թե՛ գավառական մամուլը:

1915թ. հոկտեմբերին «Le Temps»-ը տպագրեց ամերիկացի պրոֆ. Տյուտտոնի հաղորդած մանրամասն տեղեկությունները հայոց ցեղասպանության սոսկալի կոտորածների վերաբերյալ, «որոնք նա ստացել էր Խարբերդի ամերիկյան «Եփրատի Վարժարանի» մի պաշտոնյաից»<sup>185</sup>, իսկ 1916թ. մայիսին Ֆրանսիայի կիսապաշտոնաթերթը տպեց Տրապիզոնում Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուպատոսի վկայությունները Տրապիզոնի հայության ոչնչացման վերաբերյալ՝ «Հայ երեխաները ծով են նետվել շան լակոտների նման, հասուն հայերին դուրս են բերել քաղաքի սահմաններից և խուճբխուճբ գնդակահարել, ջահել աղջիկներին վաճառել են հարեմների համար, իսկ հարուստ հայերի ունեցվածքն անուրդի է հանվել Տրապիզոնի Մայր տաճարում»<sup>186</sup>:

1916թ. փետրվարին «Le Temps»-ը հրատարակեց «գերմանացի ականատեսի վկայությունները Հայաստանում տեղի ունեցած սոսկալի եղելությունների մասին», ընդգծելով, որ դեռ 1915թ. նոյեմբերին գերմանական բողոքական «Allgemeine Missions Zeitschrift» բարձր հեղինակության տեր հանդեսի կողմից առաջին անգամ տպագրված գերմանացի ականատեսի

այդ տեղեկագիրն «իրապես մի սոսկալի ամբաստանություն է գերմանական կառավարության դեմ», որի պատճառով էլ «գերմանական զինվորական գրաքննությունը 1915թ. նոյեմբերի 10-ին արգելեց նրա արտատպումը մամուլի մեջ»<sup>187</sup>:

1916թ. մարտին իր համարներից մեկում «Le Temps»-ը արդեն մանրամասն տեղեկություններ էր հաղորդում «հայերի տարագրության և աքսորի մասին», որոնք նա քաղել էր հիմնականում արաբ ճամփորդների զեկուցումներից, որոնք զետեղված էին եղել Եգիպտոսի «Ալ Աիրամ» թերթի մեջ:<sup>188</sup>

1916թ. Բորդոյում լույս տեսնող «La Petite Gironde»-ը տպագրեց գերմանացի միսիոներ-ականատեսի վկայությունները Երզնկայի շրջանում հայերի զանգվածային ջարդի և Բաբերդի տեղահանված հայության սպանությունների մասին:<sup>189</sup>

Այսպիսով, հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությունը որդեգրելու պահից սկսած ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտի ավարտը, Ֆրանսիան արհեստավարժ և ազդու գաղափարա-քարոզչական պատերազմ մղող տերությանը հատուկ նպատակասլացությամբ աշխատանքներ տարավ հայոց Մեծ եղեռնի իրողությունը հաստատող և նրա համալիր պատկերը վերհանող փաստաթղթերի ժողովածու՝ «դոսյե» ստեղծելու ուղղությամբ:

Շնորհիվ, հիրավի հզոր ու տպավորիչ, հասարակական կարծիքի վրա լրջորեն ազդելու ունակ ու ատակ այդ փաստաթղթային ժողովածուի լայնամասշտաբ և մտածված քարոզչության, Ֆրանսիան կարողացավ Գերմանիայի դեմ ծավալված գաղափարա-քարոզչական պատերազմի առաջին «զգացմունքային» փուլը ավարտել իր անվերապահ հաղթանակով:

Պետք է ասել, որ 1915-1918թթ. ֆրանսիական քարոզչության կողմից ստեղծած և հայոց ցեղասպանության եղելությունն անվերապահորեն ապացուցող փաստաթղթային դոսյեն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը և շատ հաճախ

<sup>184</sup> H Stumer, "Deux ans de guerre à Constantinople", Etudes morale et politique allemandes et des Jeunes Turcs, Paris, 1917.

<sup>185</sup> "Le Temps", 11 octobre, 1915.

<sup>186</sup> "Le Temps", 7 mai, 1916.

<sup>187</sup> "Le Temps", 23 fevrier, 1916.

<sup>188</sup> "Le Temps", 7 mars, 1916.

<sup>189</sup> "La Petite Gironde", Baurdeux, 14 mars, 1916.

դառնում է գիտական ու ոչ գիտական բանավեճերի առարկա: Եվ եթե ֆրանսիական պատմագիտության մեջ հայոց ցեղասպանության հիմնահարցերով զբաղվող ուսումնասիրողների ճնշող մեծամասնությունը Մեծ եղեռնի իրողությունն ապացուցելու և հաստատելու համար լայնորեն օգտվում է 1915-1918թթ. ֆրանսիական քարոզչության կողմից հավաքած և շրջանառության մեջ դրած բազմազան ու բազմաբնույթ փաստաթղթային դոկյուսենտներին ընդհանրապես հնարավորություններից<sup>190</sup>, ապա հետագայում ֆրանսերեն լեզվով լույս տեսած աշխատությունների թուրք հեղինակները<sup>191</sup>. իսկ նրանց հետ մեկտեղ նաև ֆրանսիական պատմագիտության մեջ թուրքական իշխանությունների գաղտնի ու բացահայտ հովանավորությունը վայելող ֆրանսիացի հեղինակներն ամեն կերպ ձգտում են նվազեցնել և կասկածի տակ առնել փաստաթղթերի այդ ժողովածուի դերն ընդհանրապես, և հայոց ցեղասպանության փաստը ապացուցելու նրա կարողականությունը, մասնավորապես:

Այս վերջին կատեգորիային դասվող աշխատությունների շարքում թերևս ամենաբնութագրականը Ժերար դը Մալվիլի գրչին պատկանող և 1988թ. Փարիզում լույս տեսած «La Tragédie Arménienne de 1915» վերտառությամբ գիրքն է, որի նախաբանում Թուրքիայի պատմության խոշոր մասնագետի համբավ ունեցող և իր բացահայտ թրքամետ տեսակետներով հայտնի Ժան Պոլ Ռուս<sup>192</sup> հավատացնում էր, որ «իր պրոֆեսիոնալ շրջապատում ճանաչված փաստաբան դը Մալվիլի գիրքը դա ազատ մարդու փորձ է՝ հստակորեն և քաջությամբ ասելու այն ինչ ինքը մտածում է՝ ճշմարտությունը»<sup>193</sup>: Թե որքանով է Ժորժ դը Մալվիլը ձգտել ճշմարտությունը ասելու, և թե որքա-

նով է հեռացել ճշմարտությունից և կեղծել այն, հստակորեն երևում է նրա այն մոտեցումներից, որոնց օգնությամբ նա փորձել է «վեր հանել» 1915-1918թ. Անգլիայի և Ֆրանսիայի կողմից հայոց ցեղասպանության եղելությունը հաստատագրող փաստաթղթերի «ծագումը» և «էությունը»:

XX դ. 70-80-ական թվականներին Եվրոպայում և Ամերիկայում լայն չափեր ընդունած հայոց ցեղասպանության քարոզչությունը բնորոշելով որպես «քաղաքական մեքենայություն», դը Մալվիլը այն «համարում էր շատ հին» և նրա արմատները փնտրում էր «առաջին աշխարհամարտի տարիներին Դաշնակիցների մղած ծայրահեղ գոեհիկ *քաղաքական* քարոզչության մեջ»: Հասնելով «քաղաքական մեքենայություն» ակունքներին, դը Մալվիլը գրում էր, որ առաջին աշխարհամարտի տարիներին «Դաշնակիցների քաղաքական պրոպագանդան, ընթանալով ծայրահեղ գոեհիկացման ճանապարհով, հրատարակում էր մեծ թվով կիսապաշտոնական ֆրանսիական զրքույկներ, որոնք պատմում էին այն մասին, թե ինչպես էին «բռն»-երը (գերմանացի – Ե.Գ.) խորովում փոքր երեխաներին, նրանց բարձրացնում իրենց սվինների վրա և պատառ–պատառ անում: Եվ հասարակական կարծիքը հավատում էր դրան! Դաշնակիցների պրոպագանդան նույն մոտեցումը կիրառեց նաև «Թուրքահայաստանի» իրադարձությունների նկատմամբ»: Եվ որպեսզի ապացուցի հայոց ցեղասպանության իրողությունը փաստող ֆրանսիական ու անգլիական քարոզչության «ծայրահեղորեն գոեհիկացված» լինելը, դը Մալվիլը, առաջ գնալով, պնդում էր, որ ֆրանսիական ու անգլիական քարոզչության կողմից շրջանառության մեջ դրված փաստաթղթերն ու փաստաթղթային ժողովածուները, որոնք ապացուցում էին եղեռնի եղելությունը, «*բացառապես հայկական արմատներ* ունեն, և կյանքի էին կոչվել ոչ թե պատերազմի մեջ գտնվող Թուրքիայի հայության, այլ, *ամբողջությամբ*, Ֆրանսիայում, Ռուսաստանում կամ Ա.Մ. Նահանգներում ապրող հայկական սփյուռքի կողմից: Այստեղից էլ այդ փաստաթղթերում հավաստիության բացարձակ բացակայությունը և կեղծիքների առատությունը, որոնց հեղինակներն իրենց և թուրքերի հարա-

<sup>190</sup> Ternon Yves et Chaliand Gérard; Le Génocide des Arméniens; Bruxelles; 1984; Tribunal permanent des Peuples; Le Crime de silence; Paris; 1984; Moussa Prince. Un génocide impuni; L' Arménocide, Copiright, 1975; Térnon Y., Les Arméniens. Histoire d'un Génocide, N-Y, 1981.

<sup>191</sup> Gurün Kamuran, Le Dossier Arménien, Paris; 1984; Orél S., et S. Yuka, Les Télégrammes de Taléat Pasha, Paris, 1986; Documents sur les Arméniens ottomans et Documents militaires historiques, T1-3, Ankara 1982-1986.

<sup>192</sup> Roux Jean-Paul, Histoire des Turcs, Paris, 1985.

<sup>193</sup> Georges de Maleville, La Tragédie Arménienne de 1915; Paris, 1988, p.12.



բերությունները կեղծող հայերն էին...»<sup>194</sup>:

Այս ամենից հետո «ճշմարտախոս» դե Մալվիլը, հաղթանակած կեցվածքով, գալիս է այն եզրահացությանը, որ 1915-1918թթ. Դաշնակից երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից հայոց ցեղասպանության իրողությունն ապացուցող փաստաթղթային փատեթը «ոչ այլ ինչ է, եթե ոչ ռազմական քարոզչության կողմից ռազմական նպատակներով օգտագործված քարոզչանյութ»<sup>195</sup>:

Հայոց ողբերգության մասին «ճշմարտությունն» ասելու հավակնությունն ունեցող «ազատ մարդու» ժողովը դե Մալվիլի վերոհիշյալ պնդումների և եզրահանգումների ողջ կեղծությունն ու մերկապարանոց լինելն ակնբախ է դառնում ոչ միայն պատմական իրականության հետ առաջին իսկ համեմատությունից, այլև հասարակ տրամաբանության հետ շփվելիս:

Նախ և առաջ ոչ մի տրամաբանական քննության չի դիմանում դե Մալվիլի պնդումներն այն մասին, որ եթե փաստաթուղթը *հայկական* ծագում ունի, ապա այն *անպայմանորեն* գրկվում է պատմական իրողությունը՝ եղեռնը փաստելու հավաստի ապացույց լինելուց: Երկրորդ, ինչպես ցույց տրվեց ներկա ուսումնասիրության մեջ, ֆրանսիական քարոզչությանը հայկական կողմից տրամադրած ոչ բոլոր փաստաթղթերն էին, որ ունեին «սփյուռքյան» ծագում: Ավելին, ինչպես վկայում են փաստերը, ֆրանսիական քարոզչության կողմից լայնորեն քարոզվող հայկական փաստաթղթերից գլխավորը ամենևին էլ սփյուռքահայ ծագում չունեի, և կազմվել ու Եվրոպա էր ուղարկվել ցեղասպանության անմիջական զոհ դարձած և ամենինչին տեղյակ ու ականատես, ամեն ինչ իր մաշկի վրա զգացած *արևմտահայության* կողմից, որը, հսկայական դժվարություններ հաղթահարելով, կարողացավ այդ փաստաթուղթը՝ «Պոլսո Պատրիարքարանի տեղեկագիր-հուշագիրը», հասցնել Եվրոպա: Այդ փաստաթղթի ստեղծողներին բոլորովին չէր հետաքրքրում Դաշնակից երկրների քաղաքական-ռազմական քարոզչությունը, որի «ծայրահեղ գոեհկացմանը» ծառայելու

համար կարող էին «հնարվել» և «սարքվել» փաստաթղթեր: Ահա թե ինչու անմարդկային ոճի զոհ դարձած արևմտահայության ներկայացուցիչները կազմելով ցեղասպանության իրողությունը փաստող ու ապացուցող այդ *հավաստի* փաստաթուղթը, հետապնդում էին ոչ թե այս կամ այն երկրի քաղաքական քարոզչությանը ծառայելու, այլ միմիայն մի նպատակ՝ անխժտելի պատմական եղելությունը վեր հանելով, հասնել իրեն վերջնական բնաջնջումից փրկելուն կոչված գործնական և ռազմական-դիվանագիտական միջամտության: Երրորդ, մեր ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ միանշանակորեն անհիմն են նաև դը Մալվիլի պնդումներն այն մասին, որ Դաշնակից երկրների քարոզչության փաստաթղթային դոսյեն կազմված է եղել «քացառապես հայկական ծագում ունեցող» փաստաթղթերից: Ֆրանսիական պետական քարոզչության կողմից հայոց ցեղասպանությունը փաստող և հաստատող փաստաթղթային դոսյեի ծագումնաբանության, այն ստեղծող աղբյուրների ուշադիր վերլուծությունն ու ուսումնասիրությունը ակնբախորեն ցույց են տալիս, որ թեև այդ դոսյեի ձևավորման և հարստացման գործում հայկական ծագում ունեցող փաստաթղթերն ունեցել են շատ որոշակի դեր, սակայն, դրանք *միակը չեն եղել, ավելին* անգամ նրանք *մեծամասնություն չեն կազմել բազմաբնույթ ու բազմազան* այդ փաստաթղթային դոսյեի մեջ, որի ձևավորման համար Ֆրանսիայի քարոզչական կառույցները լայնորեն օգտագործեցին և ներգրավեցին ինչպես ամերիկյան, շվեյցարական և այլ միսիոներական կազմակերպությունների և անհատների, այն պես էլ արաբ, գերմանական և անգամ բուրքական ծագում ունեցող շատ ավելի *մեծաթիվ* փաստաթղթեր, և որ ֆրանսիական արհեստավարժ քարոզչությունը, ճիշտ է ոչ հանուն հայ ժողովրդի, այլ հանուն իր ռազմա-քաղաքական նպատակադրումների, կարողացավ հենց այդ լայն ու բազմաբնույթ փաստաթղթային հենքի վրա, տվյալ դեպքում ոչ մի կարիք չունենալով «ծայրահեղ քաղաքական գոեհկացմանը» դիմելու, նախ և առաջ ապացուցել *եղածը, կատարվածը*՝ հայոց եղեռնը՝ Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի մեթոդիկ և սխտեմատիկ բնաջնջումը:

Այստեղ տեղին ենք համարում ընդգծել այն սկզբունքա-

<sup>194</sup> Géordes de Maleville; La Tragédie Arméniens de 1915, Paris; 1988, p. 68-69.

<sup>195</sup> Ibid, p. 69-70.

յին և հայեցակարգային կարևորություն ու արժևորում ունեցող իրողությունը, որ ո՛չ անգլիական և ո՛չ էլ ֆրանսիական ռազմա-քաղաքական քարոզչությունը 1915-1918թթ. իրենց հետապնդած նպատակներին հասնելու համար պարզապես ոչ մի կարիք չունեին հորինելու կամ հնարելու հայոց ցեղասպանության եղելությունն ապացուցող ու փաստող փաստաթղթեր, քանի որ, ի դժբախտություն հայ ժողովրդի, այդ ոճիրը իրոք տեղի էր ունեցել և նա այնքան իրական էր, այնքան սարսափելի ու անմարդկային, որ նրա եղելությունը ապացուցող փաստաթղթերը ոչ միայն հայկական, այլև տասնյակ ու տասնյակ այլ աղբյուրներից հորդում էին և լցնում ֆրանսիական քարոզչական կառույցների պահարանները, դառնալով նրա գաղափարա-քաղաքական պայքարի հզոր զենքերից մեկը:

Ինչ խոսք, այն հանգամանքը, որ հայոց ցեղասպանությունը, ընդհանրապես, և նրա եղելությունն ապացուցող փաստաթղթային հենքը, մասնավորապես, դառնում էին Ֆրանսիայի ռազմա-քաղաքական նպատակադրումներին ծառայելու կոչված հզոր գաղափարա-քարոզչական միջոցներից մեկը, դա ամենևին էլ չէր նշանակում, որ բուն իրադարձությունը՝ եղեռնը անպայմանորեն պետք է հորինվեր: Յավոք, հայոց ցեղասպանությունը հորինելու կարիք ֆրանսիական քաղաքական քարոզչությունն, իսկապես որ, չուներ, այն պարզ պատճարով, որ այդ մեծագույն ոճիրը տեղի էր ունեցել, իսկ ֆրանսիական քարոզչությունը ոչինչ կեղծելու և «ծայրահեղորեն գռեհկացնելու» խնդիր չունենալով, պարզապես կարողացավ կատարված ցեղասպանության եղելությունն ապացուցելու համար հավաքել և կազմել բազմաբնույթ ու բազմազան փաստաթղթերից բաղկացած իր ժողովածուն, որի միջոցով, նախ, հայոց ցեղասպանությունը դարձրեց համաշխարհային հանրություն սեփականությունը, նրա վրդովմունքի, կարեկցանքի, և բողոքի առարկան, և ապա այն ծառայեցրեց իր ռազմա-քաղաքական նպատակադրումների իրականացման խնդիրներին, և թևակոխեց քարոզչության հայեցագարգային փուլը:

## §2. Ֆրանսիայի գաղափարա-քարոզչական նպատակադրումները և հայոց ցեղասպանության հայեցակարգային մեկնաբանությունները

### ա) Մեծ եղեռնի պատասխանատվության հիմնահարցը և «գաղիական» հայեցակարգը

Հիմնավոր և սպառիչ պատասխաններ տալով այն հարցերին թե ի՞նչ է տեղի ունեցել Հայաստանում և ի՞նչպես է իրականացվել արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը, ֆրանսիական պետական քարոզչությունը և նրա շրջանակներում գտնվող բոլոր կառույցներն ու ուժերը հաջողությամբ լուծված «*զգացմունքային*» *էմոցիոնալ* քարոզչության փուլից պետք է անցնեին գաղափարա-քարոզչական պայքարի ավելի բարձր, և ամենակարևորը Ֆրանսիային գործնական ռազմա-քաղաքական շահաբաժիններ խոստացող *կոնցեսսուալ-հայեցակարգային* քարոզչության փուլին: Ռեալիզմալ ընկալման վրա ազդելու ատակ այդ էտապում ֆրանսիական քարոզչությունն արդեն պետք է պատասխաններ այն հարցերին թե ո՞վ է և ինչու՞ է կազմակերպել արևմտահայության բնաջնջումը, թե ո՞վ է այդ ոճրի *գլխավոր պատասխանատուն*, թե ինչու՞ հենց Ֆրանսիան է հայ ժողովրդի «անշահախնդիր» բարեկամն ու պաշտպանը, թե ո՞վ է և իրենից ի՞նչ է ներկայացնում հայ ժողովուրդը:

Պաշտոնական Ֆրանսիան և նրա քարոզչությունը հայոց ցեղասպանության էական ծալքերը բացահայտելու կոչված վերոբերյալ հարցադրումներին պատասխանելիս առաջ քաշեցին, «մշակեցին», կյանքի կոչեցին և լայնորեն քարոզեցին առաջին հերթին, իսկ շատ դեպքերում միայն Ֆրանսիայի գաղափարա-քարոզչական ու ռազմա-քաղաքական նպատակադրումներին ծառայելու գործառնություններ ունեցող կոնցեսսիաներ:

Այս իմաստով կարելի է ասել, որ ցեղասպանության վերջին զոհը դառնում էր պատմական ճշմարտությունը, քանզի Ֆրանսիային, որի պետական քարոզչությունը որդեգրել էր

պատմական ճշմարտությունն ու արդարությունը ունահարող «հայ ժողովուրդը միայն ցեղասպանության դատապարտման քարոզչության համար» և «հայոց ցեղասպանության դատապարտման միայն Ֆրանսիային ձեռնտու և շահաբեր քարոզչություն» բանաձևերը, հայ ժողովուրդը հետաքրքրեց և շահագրգռեց հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության համար, որը նրան հարկավոր դարձավ իր գլխավոր թշնամուն՝ Գերմանիային գաղափարա-քարոզչական պատերազմում պարտության մատնելու, իր այլևայլ ռազմաքաղաքական նպատակադրումներին ծառայեցնելու, և ոչ թե եղեռնը կանխելու, բնաջնջվող արևմտահայությանը շոշափելի ու ռազմագործնական օգնություն ցուցաբերելու, առավել ևս ոչ ցեղասպանության զոհ դարձած ժողովրդի օրինական ազգային ու քաղաքական ձգտումները պաշտպանելու համար:

Առաջին աշխարհամարտի տարիներին ծավալված գաղափարա-քարոզչական պատերազմի ռազմաբեմերում իր գլխավոր թշնամուն՝ Գեմանիային գետնելու համար, Ֆրանսիան կարիք ուներ գաղափարներով շաղախված այնպիսի հզոր կոնցեպցիաների, որոնց օգնությամբ նա, նախ և առաջ, պետք է հասներ Գերմանիային միջազգային հեղինակության վարկաբեկմանը, հատկապես չեզոք երկրներում արմատավորել Գերմանիայի՝ չարիքի գլխավոր պատճառի և գլոբալ հանցագործ-ոճրագործ պետության պատկերացումն ու վարկը, երկրորդ, Գերմանիայի միջազգային վարկի և հեղինակության սասանմանը ուղիղ համեմատական չափով ձգտելու էր բարձրացնելու իր և իր Դաշնակիցների՝ արդար գործի պաշտպանի վարկն ու համբավը, երրորդ, ձգտելու էր տատանվող չեզոք երկրներին ներքաշել Գերմանիայի չեմ մղվող պատերազմի մեջ, չորրորդ՝ Ֆրանսիան ջանալու էր մյուս չեզոք երկրներին ներգրավել ոչ միայն Գերմանիայի բարոյական մեկուսացման, այլև նրա դեմ կիրառվող տնտեսական շրջափակման քաղաքականության մեջ, որը անշուշտ, մեծ հարված կլիներ Գերմանիայի ներուժին և լուրջ օգնություն Անտանտին, հինգերորդ, փոքր և ճնշված ժողովուրդների դահիճ ու նրանց բնաջնջմամբ շահագրգիռ Գերմանիայի կերպարի ստեղծումը Ֆրանսիային հնարավորություն կտար զրկելու Գերմանիային այն փոքր ու

ճնշված ժողովուրդների աջակցուցկունից, որոնք, գտնվելով Անտանտի երկրների տիրապետության տակ, որոշակի հույսեր էիր կապում նրա հետ, և ընդհակառակը, թե՛ այդ ժողովուրդների և թե՛ Գերմանիայից կախում ունեցող ժողովուրդների համակրանքը, իսկ շատ դեպքերում նաև ռազմաքաղաքական աջակցությունը կարող էր թեքվել դեպի «ազատարար», փոքր ու ճնշված ժողովուրդների իրավունքների «պաշտպան», «արդարադատ» և «ասպետ» Ֆրանսիան ու նրա դաշնակիցները:

Ահա թե ինչու որդեգրելով հայոց ցեղասպանության դատապարտումն, Ֆրանսիան և նրա քարոզչության ողջ համալիրը, ելնելով հենց վերոհիշյալ-նպատակադրումներից, պետք է կյանքի կոչեին և լայնորեն քարոզեին Գերմանիային որպես արևմտահայության ֆիզիկական բնաջնջման գլխավոր մեղավոր, գլխավոր կազմակերպիչ, և գլխավոր պատասխանատու այսպանող կոնցեպցիան:

Այդ կոնցեպցիան, որի առանձին տարրերի կարելի էր հանդիպել դեռ 1915թ. աշնանը քարոզվող շատ հրապարակումների և ելույթների մեջ, իր *ավարտուն, ամբողջական և կոտ տեսքով* լույս աշխարհ եկավ 1916թ. փետրվարի 1-ին, երբ ֆրանսիական ամենահեղինակավոր և միջազգային ճանաչում ունեցող հանդեսերից մեկը՝ «Revue des Deux Mondes»-ը տպագրեց պատմաբան, հրապարակախոս, Թուրքիայի պատմությանը նվիրված հետազոտությունների հեղինակ, առաջին աշխարհամարտի տարիներին հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչության ամենահայտնի և եռանդուն դեմքերից մեկի՝ Ռեյնե Պիոնի (1870-1958) «La suppression des Arméniens. Méthode allemande – travail turc»<sup>196</sup> վերտառությամբ ուսումնասիրությունը, որը նույն 1916 թվականին Փարիզում լույս տեսավ առանձին գրքով և հազարավոր օրինակներով տարածվեց Ֆրանսիայում, ինչպես նաև դաշնակից և չեզոք երկրներում<sup>197</sup>, իսկ 1919թ. այդ գիրքը ամ-

<sup>196</sup> Revue des Deux Mondes, Paris, février, 1916, p. 3-68.

<sup>197</sup> Réne Pignon, "La suppression des Arméniens. Méthode allemande-travail turc", Paris, 1916.

բողոքությամբ թարգմանվեց հայերեն և լույս տեսավ Ստամբուլում:<sup>198</sup>

Վերադառնալով Ռ-ընե Պինոնի գրքին, պետք է նշել, որ հեղինակը՝ արևմտահայության ցեղասպանության գործում Գերմանիային զլխավոր հանցագործ այսպանող կոնցեպցիան հիմնավորելու նպատակով, առաջին հերթին ձեռնարկեց պանգերմանիզմի քաղաքական վարդապետության բովանդակության լուսաբանությանը:

Պարզելով, որ պանգերմանիզմը դա «ընտրյալ ցեղի հավատամքն է», համաձայն որի գերմանական ազգը «կոչված է տիրելու ողջ աշխարհին՝ նրան բերելով կուլտուրայի ավելի բարձր մակարդակ», և որ նա պարտավոր է «այդ բարերար ճանապարհին խորտակելու բոլոր այն արգելքները, որոնք կարող են խանգարել նախասահմանված ընտրյալ ցեղին՝ իրագործելու իր պատմական համամարդկային առաքելությունը», Ռ-ընե Պինոնը հատկապես ընդգծում էր այն հանգամանքը, որ պանգերմանիզմի վարդապետությունը «միանգամայն» ընդունելի և թույլատրելի էր համարում, որպեսզի երկրի երեսից անհետանան մի շարք փոքր ժողովուրդներ՝ ճանապարհ հարթելով ավելի բարձր ազգերի համար, քանզի բնությունն ինքն է այնպես սահմանել, որ թույլերն անհետանան, իսկ պատմությունն, ինքն է կատարում ընտրություն և սովորեցնում, որ կարեկցությունը խաբեություն է կամ թուլություն, որ ճանապարհը պատկանում է ուժեղներին:<sup>199</sup>

Տեսական բնույթի այս հիմնավորումներն ու պարզաբանումները կատարելուց հետո, Պինոնը շեշտում էր. նախ, այն փաստը, որ «պանգերմանիզմը իր գործնական դրսևորումը, ամենից առաջ, գտավ Բելգիայում և Ֆրանսիայում՝ գերմանացիների վանդալական և բարբարոս արարքներում», և այդ բանից հետո միայն նա կատարում էր Ֆրանսիայի շահերից բխող և նրան այդքան անհրաժեշտ եզրակացություն-դատավճիռը առ այն, որ «պանգերմանիզմի դժոխային էությունը մի առանձ-

<sup>198</sup> Ռ-ընե Պինոն, «Հայերի քննադատումը», Կ. Պոլիս, 1919թ.

<sup>199</sup> Rene Pignon, Opt cit., p. 5-7.

նահատուկ վայրագությամբ դրսևորվեց հայկական սարսափների մեջ:

*Գերմանիայի վրա է ծանրանում հայկական սարսափների պատասխանատվությունը, քանզի եթե իրագործողը թուրքերն են եղել, ապա վարպետները գերմանացիք են՝ մեթոդը գերմանական է, աշխատանքը թուրքական»:*<sup>200</sup>

Փորձելով պատասխանել այն հարցին թե ինչո՞ւ և ինչպիսի՞նք տնտեսական ու քաղաքական շահերի գորու Գերմանիան «վճռեց ուղղակի բնաջնջել իրեն խանգարող հայ ժողովրդին», Ռ-ընե Պինոնը գրում էր. «Գերմանացիները, թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական առումով, շահագրգիռ էին հայոց տարագրությամբ: Նրանք վաղուց ի վեր ծրագրել էին այդ մեթոդով գերմանական ցեղի համար Թուրքիան դարձնել ընդարձակ գաղթավայր և ծավալման թատերաբեմ: Որքանով որ Բաղդատի երկաթուղու շինարարությունն առաջ էր գնում, նույն չափով հայերին տարագրելու ձգտումը որոշակի էր դառնում:

...Այդ ժամանակ էր, որ դուկտոր Պ. Ռորբախը հրատարակեց «Բաղդատի երկաթուղին» վերտառությամբ գիրքը: Այս գրքում նա առաջարկում էր «հանճարեղ» մեթոդ, որի գործադրումը գերմանացիներին թույլ կտար օգտվելու հայոց կարողություններից, և միևնույն ժամանակ, կանխելու Ռուսաստանի սահմանների վրա ինքնավար Հայաստանի ստեղծման սպառնալիքը: Դուկ. Ռորբախը առաջարկում էր հայերին տարագրել և հաստատել երկաթուղու երկայնքով, ինչը հնարավորություն կտար երկաթուղուն անցնելու մարդաշատ և հարուստ երկրի միջով: Լեփսիուսը և մի քանի այլ գերմանացիներ առաջարկում էին բարեկամական ընթացք բռնել դեպի հայերը, որոնք, օժտված լինելով առևտրական և քաղաքակրթական ընդունակություններով, կարող էին մեծ ուժ տալ գերմանական ազդեցությանը Թուրքիայում:

Սակայն Պոլսում գտնվող գերմանական քաղաքագետները, մասնավորապես դեսպան Վանգենհայմը բացարձակ թշնամական դիրք բռնեցին դեպի հայ տարրն ու Հայ Դատը:

<sup>200</sup> Rene Pignon, Opt. cit., p. 9.

1913-1914թթ. հայկական բարենորոգումների բանակցությունների ժամանակ անհանգստացած՝ որպես ազգային ու քաղաքական ուժեղ, միասնական ամբողջություն հանդես եկող հայության ինքնավարություն ձեռք բերելու գորավոր տենչանքից, Բեռլինը որոշեց ոչնչացնել այդ խոչընդոտը՝ ջնջել տալով հայ ժողովրդին :

1914թ. ամռանը Կ. Պոլսի գերմանական դեսպան ֆոն Վանգենհայմը մի հայի ասեց, «Հայաստանը Գերմանիայի ընդարձակման ճանապարհին ընկած խոչընդոտ է, և այն պետք է մեջտեղից վերացվի»<sup>201</sup>:

Արևմտահայության ցեղասպանության իրագործման ժամանակ Գերմանիայի որդեգրած անտարբեր և մեղսակից դիրքորոշումներին անդրադառնալով, Ռ. Պինոնը մեջ էր բերում մեզ արդեն քաջաժանոք՝ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության կազմված փաստաթղթային ժողովածուի մեջ տեղ գտած վկայություններն ու փաստերը,<sup>202</sup> և գրում. «Գերմանիայի դեսպանը իր կառավարությանը տեղեկացրեց հայերին ոչնչացնելու թուրքական վճռի մասին, որը կամ լռեց, և կամ հավանություն տվեց դրան, այն դեպքում, երբ Բեռլինից ուղարկած արգելքը կամ ազդեցիկ թելադրանքը կարող էին կասեցնել հայկական ջարդերը: Օրինակ, երբ Գերմանիայի դեսպանը հրաման տվեց չդիպչել Խարբերդի գերմանական միսիայում ապաստանած հայերին, նրա հրամանը կատարվեց: Սակայն հանուն քաղաքականության Գերմանիան իրեն հեռու պահեց միջամտություններից, և կարգադրեց Գերմանիայի բոլոր հյուպատոսներին չմիջամտել Թուրքիայի ներքին գործերին: Ավելին, Էրզրումում, Սիրիայում գերմանական հյուպատոսները քաջալերեցին ջարդերը, իսկ Ուրֆայում գերմանական հյուպատոսը ղեկավարեց հայերի ջարդը»:<sup>203</sup>

Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիային *զխավոր հանցագործ և պատասխանատու* աշխատող, պատմական ճշմարտությանը չհամապատասխանող մերկապարանոց ու

<sup>201</sup> René Pignon, Opt. cit., p. 21-23.

<sup>47</sup> René Pignon, Opt. cit., p. 53-55.

<sup>203</sup> René Pignon, Opt. cit., p. 61.

անհիմն վերագրումներ պարունակող վերոհիշյալ կոնցեպցիան, որը պայմանականորեն կարող ենք կոչել «*գաղիական կոնցեպցիա*», դարձավ *ֆրանսիական քարոզչության առանցքային կոնցեպցիան*, իսկ հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության մեջ տեղ գտած ֆրանսիական բոլոր մյուս կոնցեպցիաները կյանքի կոչվեցին և շրջանառության մեջ դրվեցին այդ հայեցակարգի քարոզչական համոզկերությունը և ազդեցությունը ուժեղացնելու, նրան ծառայելու համար:

Առաջին աշխարհամարտի տարիներին ֆրանսիական քարոզչության կողմից լայնորեն օգտագործվող և գաղափարական պատերազմի ռազմաբեմերում Ֆրանսիային փայլուն և տպավորիչ հաղթանակներ բերող ինչպես առանցքային, այնպես էլ արբանյակային կոնցեպցիաների ծագումնաբանության, բովանդակության, փաստարկումների ու հիմնավորումների, հետապնդած ռազմաքաղաքական նպատակադրումների ու գործառնությունների մանրագնահիմն ուսումնասիրությունը մեզ բերել է այն միանշանակ եզրահանգմանը, որ հայոց *ցեղասպանության լուսաբանման հարցում ֆրանսիական քարոզչության ողջ համալիրը* մշտապես և առաջին հերթին ունեցել է *հակագերման բնույթ, ուղղվածություն և բովանդակություն*, իսկ հայոց ցեղասպանության իսկապես որ *զխավոր հանցագործ և պատասխանատու Թուրքիայի դեմ ուղղված քարոզչությունը մշտապես գտնվել է երկրորդ պլանում, եղել է ավելի թույլ և սահմանափակ*:

Իհարկե, հասկանալի էր, որ Գերմանիայի հետ կենաց մահու պատերազմի մեջ մտած Ֆրանսիային ոչ մի կերպ չէին կարող զոհացնել և բավարարել, թեկուզ և պատմական ճշմարտությանն ու արդարությանը համապատասխանող, հայ ժողովրդի ազգային ու քաղաքական շահերը չտոնահարող հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի, *թեկուզ և հսկայական, սակայն միայն մեղսակցությունն ու հանցակցությունը ապացուցող կոնցեպցիաները*:

Եվ եթե Ֆրանսիային ու նրա քարոզչությանն իսկապես հետաքրքրեր հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի ունեցած մեղսակցության ու պատասխանատվության իրական, և

ոչ թե մտածածին չափը պարզելու խնդիրը, ապա նրանք հայոց ցեղասպանության գործում Գերմանիայի մեղսակցությունն ու պատասխանատվությունն ապացուցող փաստերի ու վկայությունների անկողմնակալ վերլուծությունից հետո պետք է պարզապես արձանագրեին պատմական այն ճշմարտությունը, որ հայոց Մեծ եղեռնի գլխավոր մեղսակիցը, *հանցագործը* և պատասխանատուն ոչ թե Գերմանիան էր, այլ ջարդարար Թուրքիան, քանզի, հայոց ողբերգության ճանաչված մասնագետներից մեկի՝ Մուսա Պրենսի խոսքերով ասած, Գերմանիայի «պատասխանատվությունը իրենից ներկայացնում է մի աննշան պատվաստում Թուրքիայի առեղծվածի հանցագործության հսկայական զանգվածի վրա»<sup>204</sup>: Սակայն Ֆրանսիայի հետապնդած ռազմա-քաղաքական շահերը նրանից պահանջում էին որդեգրել և լայնորեն քարոզել հայոց ցեղասպանության մեջ միայն Գերմանիային որպես գլխավոր հանցագործ և պատասխանատու սեպորդ կոնցեպցիաներ, և դա անկախ այն բանից, թե Գերմանիան իրոք եղել էր, թե ոչ այդ ոճրի գլխավոր մեղավորը: Ֆրանսիայի գլխավոր թշնամին Գերմանիան էր, և ոչ թե Թուրքիան: Ուստի, հայոց ցեղասպանությամբ զբաղվող ֆրանսիական քարոզչական ողջ համալիրն իր գլխավոր հարվածն ուղղեց Գերմանիայի դեմ՝ պայքարի գլխավոր զենք դարձնելով Գերմանիային գլխավոր հանցագործ այսպանող հայոց ցեղասպանության «զաղիական» քաջածանոթ կոնցեպցիան:

Ֆրանսիայի պետական ու ոչ պետական քարոզչության որդեգրած, նրա մեխն ու առանցքը կազմող Ֆրանսիայի շահերին լիովին բավարարող, Գերմանիային հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործի և պատասխանատուի դերակատարություն վերագրող «զաղիական» կոնցեպցիան ոչ միայն չէր համապատասխանում պատմական ճշմարտությանն ու արդարությանը, այլև ուղակիորեն հակասում էր հայ ժողովրդի շահերին, և կարող էր այլևայլ քաղաքական զարգացումների դեպքում լուրջ կռվան դառնալ հայոց ցեղասպանության մեջ միակ գլխավոր հանցապարտ Թուրքիայի ձեռքին՝

չքննդանալու, Գերմանիայի զոհի և հլու գործակատարի դերով համաշխարհային հանրության դատին ներկայանալու համար:

Պատերազմի սկզբնական շրջանում, երբ հայ ժողովրդի համար խիստ կարևոր էր, որ իր դեմ գործած ոճրագործությունը և իր հետ պատահած աննախադեպ ողբերգության եղելությունը չմնա լուռ ու ծածուկ, Ֆրանսիայի հետ համագործակցող և ֆրանսիական քարոզչության հետ կապված հայ ազգային ու քաղաքական կազմակերպությունները հանուն հայոց ցեղասպանության իրողությունը և փաստը բացահայտող քարոզչության ծավալման, «ըմբռնումով» էին վերաբերվում և հաշտվում այն փաստի հետ, որ ֆրանսիական քարոզչությունը Գերմանիայի մեղսակցությունն ու պատասխանատվությունը իրապես ապացուցող փաստերից անում էր, պատմական ճշմարտության հետ աղերս չունեցող, եզրակացություն այն մասին թե Գերմանիան է հայոց Մեծ եղեռնի գլխավոր կազմակերպիչն ու մեղավորը: Այսպես, հարցի այդ կողմը նկատի ունենալով, Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը 1916 թ. փետրվարի 4-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ V -ին գրած նամակում, հաղորդում էր հետևյալը. «Ձատ ծրարով Ձեր Վեհափառութեան կը դրկեն «Révue des deux Mondes»-ի օրինակ մը, որուն մեջ իմ խնդրանքիս և տված տեղեկութեանցս վրա N-r Ռ-էնն Բիճօն Հայաստանի աղետներու վրա հողվածը մը գրած է:

Ձեր Վեհափառութիւնը պիտի նշմարէ, որ *հանրությունը* մեր Դատին սիրաշահելու համար, խնդիրը ներկայացված է զաղիական տեսակետներով, շեշտելով Գերմանիոյ դերը և պատասխանատվությունը տաճկահայ կոտորածի մեջ:

Այս հողվածը, անտարակույս, նպաստավոր ազդեցություն մը պիտի գործէ հեղինակին համբավին, և «Révue des deux Mondes» հանդեսի հանրածանոթ ըլլալու պատճառով»<sup>205</sup>:

Նման դիրքորոշման ընտրությունը բացատրող գործոնների մեջ ոչ վերջին տեղն էր գրավում, ոչ միշտ բարձրաձայն հնչող, սակայն հոգու խորքում փայփայած այն հույսն ու ակնկալիքը, որ Ֆրանսիայի քարոզչության կողմից Գերմանի-

<sup>204</sup> Moussa Prince, Un génocide impuni—L' Arménocide, Copyright, 1975, p.12.

<sup>205</sup> ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թերթ 118:

ային եղեռնի գլխավոր հանցագործ ներկայացնող *զանգվածային մեղադրանքները կարող էին «սքափեցնել»* գաղափարաքարոզչական պատերազմում պարտություններ կրող Գերմանիային, և ստիպել նրան՝ հանուն իր միջազգային հեղինակության և վարկի պահպանման, որ նա օգտագործի Թուրքիայի վրա ունեցած իր անժխտելի մեծ ազդեցությունը՝ կասեցնելու համար եղեռնի ծավալումը, և ելնելով ինքնաարդարացման հրամայականներից, գործնական քայլեր ձեռնարկի հայության մնացորդացին ոչնչացումից փրկելու, համաշխարհային հանրային կարծիքի առաջ արդարադատ երկրի պատմունանով հանդես գալու, իր դեմ ուղղված մեղադրանքները ժխտելու համար: Եվ եթե, դեպքերի զարգացումը իրոք ընթանար այդ տրամաբանությամբ, եթե Գերմանիան ավելի կարևորեր և գերադասեր իր միջազգային հեղինակությունը սասանող և վարկաբեկող բարոյական արժեքները, եթե իր դիրքորոշումները որոշող կշեռքի վրա ավելի չկարևորեր Թուրքիայի հետ դաշնակցությունն ու նրա ռազմա-քաղաքական դերակատարությունն, ապա հայությունը ուրախությամբ կընդուներ *«գաղիակակա»* կոնցեպցիայի նման արդյունքները, կօգտվեր դրա պտուղներից, և, անշուշտ, կարդարացվեր «գաղիական» կոնցեպցիայի հետ հայության համակերպվելու և նրա հետ որոշակի հույսեր կապելու դիրքորոշումը:

Այս իմաստով, մեր կարծիքով հատուկ առանձնացման արժանի է այն հաստատագրումը, որ որդեգրելով Գերմանիային հայոց եղեռնի գլխավոր պատասխանատու այսպանող *«գաղիակակա»* կոնցեպցիան, Ֆրանսիան երբեք իր մտքի ծայրով անգամ չէր անցկացնում, և ո՛չ մի ձգտում ու շահագրգռվածություն չուներ, որ իր քարոզչությամբ ձեռք բերի դեպքերի հենց այդպիսի՝ հայ ժողովրդի տառապանքներն իրոք մեղմող և վերքերին շատ բանով բալասան անող զարգացում և արդյունքներ: Հակագերման իր քարոզչությամբ, որի ծանր հրետանին «գաղիական» կոնցեպցիան էր, այդպիսի գործնական արդյունքներ ձեռք բերելու հեռանկարը, նախ, չէր մտնում Ֆրանսիայի նպատակադրումների մեջ, և երկրորդ, այն *պարզապես ձեռնտու չէր իր գլխավոր թշնամի* Գերմանիային անընդհատ վարկաբեկելու, նրան *անուղղելի գլխավոր հանցագործ ներկայացնելու*։

*ձգտող ֆրանսիայի համար:*

Թեև իր քարոզչության մեջ Ֆրանսիան, արտաքուստ, անընդհատ և անդադար շեշտում էր, որ Գերմանիան ոչինչ չի անում ոչնչացվող հայությանը փրկելու համար, և պահանջում էր նրանից դիմել կոնկրետ քայլերի հայության վիճակն ամոքելու համար, իրականում, դեպքերի նման ընթացքը Ֆրանսիայի համար խիստ անցանկալի էր, քանզի եթե, հանկարծ, Գերմանիան, հանուն իր միջազգային վարկի, դիմափոխվեր և կատարեր ֆրանսիական քարոզչության կողմից հայության դրությունը վերափոխելու կոչված կոնկրետ քայլեր կատարելու պահանջները, այդ դեպքում Ֆրանսիան կզրկվեր Գերմանիային մշտապես վարկաբեկելու հզոր և ազդեցիկ քարոզչական ու բարոյական զենքից, իսկ Գերմանիան ձեռք կբերեր գաղափարա-քարոզչական պատերազմ մղելու լուրջ և արժեքավոր հաղթաթուղթ:

Ուստի, կարող ենք ասել, որ ֆրանսիական քարոզչության կողմից Գերմանիային ներկայացվող՝ հայությանը բնաջնջումից փրկելու համար կոնկրետ քայլերի դիմելու պահանջները, մեղմ ասած կեղծ էին և երեսպաշտ, քանզի դրանց իրականացումը կբերեր այն բանին, որ աշխարհը կտեսներ «փրկարար» և «արդարադատ» Գերմանիա, ինչը պարզապես ծանր հետևանքներ կունենար Ֆրանսիայի համար: Պարզ է, որ «փրկիչ» և «արդարադատ» Գերմանիան միանգամայն ցանկալի էր և ընդունելի՝ *գործնական ամեն մի օգնության կարտոս հայության համար, սակայն ոչ մի կերպ ձեռնտու չէր հայությանը գործնական օգնություն հասցնելու մասին ամենից բարձր գոռացող Ֆրանսիային ու նրա քարոզչությանը:*

Ցավոք, պատմությունը զարգացավ Ֆրանսիայի համար ցանկալի՝ իր մեղսակից և հանցապարտ դերակատարությունից հրաժարվելու համարձակություն ու ցանկություն չդրսևորող Գերմանիայի գոյությունը փաստող, և ո՛չ թե հայության համար այնքան ցանկալի ուղղությամբ, երբ իր վարկի և համբավի մասին մտածող Գերմանիան, Ֆրանսիային և նրա Դաշնակիցներին իրեն մեղադրելու ոչ մի հիմքեր չտրամադրելու մտահոգությունից ելնելով, դիմեր բնաջնջվող հայության օգտին գործնական փրկարար քայլերի:

Երբ հայոց ցեղասպանությունը դարձավ համաշխարհային հանրության սեփականությունը, երբ այլևս նրան չէր սպառնում պատմության մեջ անհայտ հանցագործություն մնալու վտանգը, որում ինչ խոսք իր ծանրակշիռ դերն ու ավանդն էր ունեցել նաև ֆրանսիական քարոզչությունը, երբ հայության համար պարզ ու ակնհայտ դարձավ, որ Ֆրանսիայի *հակազերման քարոզչությունը* ոչ մի գործնական, շոշափելի արդյունքներ չի կարող բերել բնաջնջվող արևմտահայությանը, և վերջապես, երբ պարզ դարձավ, որ ֆրանսիական հակազերման քարոզչությունը՝ իր «գաղիական» և նրա արբանյակ կոնցեպցիաներով կարող է լուրջ վնաս հասցնել Հայ դատին, հայ քաղաքական ղեկավարությունը սկսեց հրաժարվել «գաղիական» կոնցեպցիայի հետ հաշտվելու, նրա հետ թեկուզ և թույլ հույսեր կապելու, և *նրանից գործնական օգուտներ քաղելու դիրքորոշումներից*: Նրա տարբեր. ներկայացուցիչները սկսեցին բարձրաձայն խոսել այն մասին, որ հայ ժողովրդի համար չի կարող ընդունելի լինել ֆրանսիական հակազերման «գաղիական» առանցքային կոնցեպցիայով բնորոշվող քարոզչությունը, նախ, այն պատճառով, որ այն չի համապատասխանում պատմական ճշմարտությանը, երկրորդ, որ այն արդարացի չէ, երրորդ՝ այն չի բխում ցեղասպանության զոհ դարձած ժողովրդի դատի շահերից, ավելին, այն կարող էր լուրջ վնաս հասցնել այդ ժողովրդի շահերին:

Թուրինի «Arménia» թերթի խմբագիրը իր շատ ուշագրավ, և իրադարձությունների սթափ գնահատականներով աչքի ընկնող «Հայաստանը հայերուն» հոդվածում, որ նա գրել էր Փարիզում լույս տեսնող «Վերածնունդ» հանդեսի համար, փաստելով, որ *հայոց մարտիրոսությունը երբեք չէր արժանանա Դաշնակից տերությունների ուշադրությանը, և երբեք չէր դառնա նրանց քարոզչության շահագրգիռ առարկան*, եթե «բանակոսի հուժկու նյութ մը, քարոյական հսկայ ույժ մը չըլլար Գերմաններու դեմ» պարզում էր այն հարցը, «թե ինչո՞ւ համաշխարհային ցասումը մեր ցեղին սպանման առթիվ» ֆրանսիական քարոզչությունը՝ իր առանցքային «գաղիական» կոնցեպցիայով ուղղում էր «ավելի շատ Գերմանիոյ՝ քան թե մեր դարավոր դահիճներուն՝ Թուրքերուն դեմ»:

*Ասոնց ոճիրը մեղմացնող նոր պատրվակ մը շինվեցաւ և անոնք. նկատվեցան պարզ գործիքներ Գերմանիոյ ձեռքին մեջ, պնդելով, որ առանց Գերմանիոյ խորհրդին հայ եղերգութիւնը տեղի պիտի չունենար՝ զեք իր այժմյան չափով:*

Կրնա՞յ հղացուիլ ավելի մեծ հայոյանք պատմութեան դեմ»:<sup>206</sup>

Իհարկե, հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչությունը և նրա հիմնական կոնցեպցիաները նաև հակաթուրք էին, սակայն դրանք *մշտապես և խստագույնս դոգավորված էին, և երբեք դուրս չեկան «Թուրքիան միայն Գերմանիայի կամակատարն է» և «զերմանական աշխատանքը կատարող գործիքը»* կարգախոսների սահմաններից:

Ստեղծելով և պաշտպանելով միայն «զերմանական մեթոդի հլու գործակատար Թուրքիայի» պատկերը, Ֆրանսիան ու նրա քարոզչությունը, նախ չէին այրում Թուրքիայի հետ նրան կապող բոլոր կամուրջները, նրան Գերմանիայից պոկելու, նրա հետ սեպարատ հաշտություն կնքելու հույսերը, և երկրորդ, պահպանում էին երիտթուրքերի ընդդիմադիր ուժերն իրենց նպատակների համար օգտագործելու և նրանց հետ անդրկուլիսային գործարքների մեջ մտնելու հեռանկարները:

Շվեյցարիայում Բաքվի «Արև» թերթի թղթակից Մ. Դազարյանը ֆրանսիական մամուլի, և ընդհանրապես քարոզչության հենց այդ, ձևով, դոգավորված հակաթուրք, իսկ բովանդակությամբ, *թուրքերին արդարանալու լուրջ հիմքեր տվող հրապարակումների քաղաքական դրդապատճառները վեր հանող իր հողվածում* շատ դիպուկ նկատում էր. «Ի՞նչ վերաբերվում է «Le Temps» կամ ֆրանսիական այլ թերթերին, չպետք է զարմանալ, որ թուրքերին արդարացնող այդ կարգի տեսակետները տեղ են գտնում նրանց այունակներում, քանի որ մինչև վերջերս էլ միշտ խոսվում էր, – և դա ոչ անհիմն կերպով, – Թուրքիայի և Քառեակ համաձայնության միջև անջատ հաշտության կնքելու մասին»:

<sup>206</sup> «Վերածնունդ» Փարիզ, 15 մարտ-1 ապրիլ NN6-7, էջ 137:



Ինչ խոսք, որ *դրա մասին խոսելու և բանակցելու համար պետք էր, որ Թուրքիան հայ տարրի նկատմամբ գործադրած բնաջնջման քաղաքականությունն ու բարբարոսությունները* – քեկուզ à la turque – *արդարացներ Համաձայնության և Եվրոպական չեզոք երկրների առաջ:*

Ահա ճիշտ այդ տեսակետից շատ հասկանալի է *մնան արդարացնող տեղեկությունների սիրով հրապարակումը ֆրանսիական պաշտոնական թերթերում:*<sup>207</sup>

Սկզբում հայ քաղաքական կուսակցություններին զարմացնում, և ապա զայրացնում էր այն փաստը, որ Ֆրանսիան ոչ միայն չէր դիմակայում, այլ շատ դեպքերում խրախուսում էր Ֆրանսիայում «հյուրընկալության գտած» թուրք ընդդիմադիր կազմակերպությունների, հատկապես զոր. Շերիֆ փաշայի գլխավորած Միության քարոզչությունը, որը «իրեն թշնամի հայտարարելով երիտթուրքական կուսակցությանը, կեղծավոր դիմակի տակ, փորձում էր նվազեցնել թուրքական պատասխանատվությունները հայկական կոտորածների մեջ»<sup>208</sup>:

Հայկական կողմի համար անհանդուրժելի և զայրացուցիչ էր, որ ֆրանսիական զրեթե բոլոր հեղինակավոր թերթերը հաճույքով և մշտապես տպագրում էին թուրք ընդդիմադիր ուժերի՝ Թուրքիային ըստ էության եղեռնի պատասխանատվությունից ազատող հրապարակումները:

Այս առումով խիստ բնութագրական էր 1917թ. մարտին Փարիզի ամենահեղինակավոր թերթերից մեկի՝ «Le Matin» -ի «Երիտասարդ և ծեր թուրքերը» վերտառությամբ տպագրված՝ Շերիֆ փաշայի գրչին պատկանող հոդվածը, ուր նա Թուրքիայի պատասխանատվությունը ամբողջությամբ բարդում էր միայն երիտթուրքերի կուսակցության վրա. «Հաճախ է մամուլում ասվել, որ հայերի լայնածավալ կոտորածների պատասխանատուները պետք է պատժվեն:

Ես խնդրում եմ հաղթողներին, որ չփոթեն քաղաքացիական ազգաբնակչության անմեղ զանգվածը հանցավորների հետ, որովհետև *թուրք զանգվածը* երբեք չի դադարել ֆրանսի-

ասեր և անգլիասեր լինելուց»:

Այնուհետև Շերիֆ փաշան առաջարկում էր «այդ թշնամականներին», որոնք թվով 10-ից ավելի չեն, փոխարինել ծեր թուրքերով, որոնք ներկայացնում են ողջ ազգին, որին կարելի է *հարգել ու ներել*, իսկ երիտթուրքերը օտարներ են և իրենց երակների մեջ նույնիսկ թուրքական արյուն չունեն»<sup>209</sup>:

Հայկական կողմը և նրա քարոզչությունն արտահայտելով իր տարակուսանքն ու զայրույթը ֆրանսիական մամուլում լայնորեն տարածված մնան հրապարակումների դեմ, կոչ էր անում ֆրանսիական մամուլին «չընկնել այդքան կոպիտ սխալմունքի մեջ, չդառնալ թուրքական արևելյան խորամանկության զոհը» քանի որ, նախ, «թուրքական կայսրության պատմության մեջ թուրքերի գլխավոր գործը՝ հայերի բնաջնջումը, այլ բան չէ, եթե ոչ շարունակությունը միևնույն քաղաքականության, որի հղացողները ծեր թուրքերն են, իսկ շարունակողները՝ երիտասարդները», և երկրորդ, որ «միայն Առաջադիմություն և Միություն» կուսակցության լիդերները չեն, այլ *ամբողջ թուրք ազգն է, որ պատասխանատու է բոլոր ժամանակների ամենամեծ Եղեռնի համար* սպանելը, ժանդարմները, երիտասարդ թե տարիքով ազգաբնակչությունը, ամենքն էլ խղճմտորեն և *ինքնակաս* հպատակվեցին ստացված հրամաններին և լենկթեմուրի ու համիդների վայրագությամբ խժոժություններ գործադրեցին :

*Բոլոր թուրքերի ձեռքերը շողողված էին հայի արյունու, և այս հանգամանքը պիտի իմանա ամբողջ աշխարհը, որպեսզի թուրքերի կոկորդիլոսային արցունքները չկարողանան գութ շարժել»*<sup>210</sup>:

Իհարկե, հայկական կողմի այս բոլոր դժգոհությունները՝ «սխալմունքի» մեջ չընկնելու, և «թուրքական խորամանկության զոհ չդառնալու» հրավերներն ու հորդորները չէին կարող և չազդեցին Ֆրանսիայի և նրա քարոզչության կոնցեպտուալ որդեգրումների վրա:

«Գաղիական» կոնցեպցիայի քարոզչությամբ, նրանում

<sup>207</sup> «Արև» Բաքու, 1-ր հոկտեմբերի, 1916թ.:

<sup>208</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 22-ր ապրիլի, 1917թ.:

<sup>209</sup> «Le Matin», Paris, 25 mars, 1917.

<sup>210</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 22-ր ապրիլի, 1917թ.:

տեղ գտած մեղադրանքները մեկ անգամ ևս «հաստատող» հրապարակային ելույթներով սկսեցին իրար ետևից հանդես գալ նաև պաշտոնական Ֆրանսիայի ինչպես գործադիր, այնպես օրենսդիր իշխանության ամենաբարձրաստիճան ալյերը:

Ամենից առաջ, 1916 թ. փետրվարի 13-ին Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործոց նախարար Ալ. Բրիանը «հարկ համարեց պաշտոնապես ներկա գտնվել “Euvre d Orient»-ի նախաձեռնությամբ Մադլեն եկեղեցում տեղի ունեցած կոնֆերանսին, ուր առանց բացառության բոլոր ելույթ ունեցողները «ճնշված ժողովուրդների ասպետական հովանավոր Ֆրանսիայի անունից «անարգանքի սյունին էին զանուց առաջին հերթին Գերմանիային, նրան սեպելով, որպես այդ դժբախտության գլխավոր մեղավոր և պատասխանատու»<sup>211</sup>:

1916թ. ապրիլի 9-ին Սորբոնի դահլիճում «Մեծարանք Հայաստանին», անվան տակ կազմակերպված բազմահազարանոց քարոզչական հավաքին ֆրանսիական կառավարության անունից ելույթ ունեցող լուսավորության նախարար Փենլվեն, Գերմանիայի «քստմենելի գործը» և «Թամերլանի սև հոչակը ծածկող» դերակատարությունը վեր հանելու նպատակով, պատմական էքսկուրսների էր դիմում. «Սրանից հինգ հարյուր տարի առաջ, երբ ասիական արյունախում ինքնակալ Լենկ Թեմուրը հասավ Հայաստանի գոհար, հայրուրիագարանոց վարդազարդ քաղաքին՝ Սեբաստիային, նրա բնակիչները Թեմուրի սիրտը մեղմելու համար նրան ընդառաջ ուղարկեցին սպիտակ հագած և ծաղիկներով բեռնված հազարավոր մանուկների:

Թեմուրը վայրենի հայացքով երկար դիտեց մանուկների այս անմեղ բանակը, որը ...սարսափով գթություն էր խնդրում: Ապա նա հրամայեց իր մոնղոլ ձիավորներին կոտորել նրանց, և ձիերի սնբակների տակ տրորել տվեց վարդերով բեռնավորված մանուկների երանը:

Պատմիչները այս ամենի մասին խոսում էին իբրև հրեշտային մի գործի, որի նմանը երբեք գործադրված չի եղել մարդկության դեմ՝ սկսած ամենաբարբարոս ժամանակներից:

...Մեկ տարուց ի վեր Հայաստանն արյունաներկ դարձնող կոտորածները գերազանցում են այդ ոճիրները՝ թե՛ իրենց չափերով և թե՛ իրենց վայրենությամբ:

*Գերմանիան կարող է հպարտանալ իր գործով, որն իր քստմենելիությամբ մոռացնել տվեց Լենկ Թեմուրի փառքը»:*

Այնուհետև, ամբողջովին հավատարիմ մնալով հայոց ցեղասպանության «գաղիական» կոնցեպցիայի թե՛ ոգուն, և թե՛ տառին, Պենլվեն, այդ ոճրի ողջ մեղքը բարդելով Գերմանիայի վրա, եզրակացնում էր. «Հայերի ամբողջական բնաջնջումն առաջ է տարվում գիտական մեթոդներով, դիվային և վայրագ համառությամբ:

...Փոքր Ասիայում Գերմանիայի քաղաքականության հաշվեկշիռը կազմեցին սպանությունը, տանջանքը՝ դիզելով 1 մլն. զոհ:

*Գերմանիայի ձեռքը և գերմանական կազմակերպչա-ծությունն ակնհայտորեն դրսևորվում են ամբողջ մի ժողովրդի բնաջնջման գործում:*

Սա արդեն պանգերմանիզմի նշանաբանն է. «Գերմանիան ամեն բանից վեր!», վեր արյան առվակներից, վեր արյան հեղեղներից: Թո՛ղ խաղաղ մի ժողովուրդ բնաջնջվի, միայն թե Բաղդադի երկաթուղին շահավետ գործ դառնա:

*Հայ ժողովուրդը գտնվում էր գերման դրամատերերի ճանապարհին, ուստի, նա պետք է որ անհետանար»<sup>212</sup>:*

Նույն հանդեսին նախագահող, Ֆրանսիայի օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի՝ պառլամենտի նախագահ, իսկ հետագայում նաև Ֆրանսիայի նախագահ Փոլ Դեշնանելը՝ իր բացման ճառում խոսելով հայ ժողովրդի կրած տանջանքների մասին «խայտառակության սյունին զամեց Գերմանիային, որն օգնեց թուրք դահիճներին սպանելու խաղաղ հայ ազգաբնակչությանը»<sup>213</sup>, և «շեշտեց Գերմանիայի մեղքը»<sup>214</sup>:

«Գաղիական» կոնցեպցիայի ավելի ընդարձակ «հիմ-

<sup>211</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N.176, p. 171.

<sup>212</sup> “Le Temps”, Paris, 10 avril, 1916.

<sup>213</sup> Le Temps, Paris, 9avril, 1916.

<sup>214</sup> “Le Temps”, 10 avril, 1916.

նավորմամբ» Փոլ Դեշանելը հանդես եկավ 1917թ., երբ Փարիզում լույս տեսավ «Journal» լրագրի ռազմական թղթակից Անրի Բարբիի «Մարսափի աշխարհում: Մարտիրոսացած Հայաստանը» գիրքը, որի առաջաբանում Պ. Դեշանելը պնդում էր. «այն ինչ որ թուրքը գերմանացու դրոմամբ կատարել է Հայաստանում, գերմանացին կատարել է ամենուրեք»<sup>215</sup>:

Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի առաջնային հանցավորությունը սեպոդ «գաղիական» քարոզչական կոնցեպցիան թե՛ երկրի ներսում և թե՛ արտասահմանում լայնորեն տարածելու և նրանից սպասվող ռազմա-քաղաքական արդյունքներն ապահովելու դժվարին, սակայն շատ մեծ կարևորություն ունեցող խնդիրները լուծելու համար Ֆրանսիան ստեղծեց և ապա շարժման մեջ դրեց, իրոք որ, լավ մտածված, համակարգված և գործուն, հսկայական քարոզչական մի համալիր, որի կառուցվածքի, խնդիրների և աշխատանքի մասին, ճիշտ է ոչ սպառնիչ, սակայն շատ ուշագրավ ու հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել այդ համալիրի հանգուցային կառույցներից մեկի՝ Փարիզի Ֆրանսուա փողոցի համար 1 տանը գտնվող «Գլխավոր Կոմիսարիատի» պատասխանատու աշխատակից՝ Փոլ Դեֆոյի 1918 թ. օգոստոսի 20-ի թվակիր նամակից, որ նա ուղղել էր Պողոս Նուբարին՝ «Հայկական տեղեկատվական Բյուրո» հիմնելու կապակցությամբ:

Փոլ Դեֆոյը, նախ փաստելով, որ Ֆրանսիայում, ինչպես Անտանտի բոլոր գլխավոր երկրներում «ստեղծվել են քարոզչության հզոր մարմիններ», տեղեկացնում էր, որ «այդ կազմակերպություններն աջակցվելով կառավարության կողմից և ունենալով բազմաթիվ ճյուղային կառույցներ, իրական ազդեցություն են գործում հասարակական կարծիքի վրա», և ապա պարզաբանում, որ «գաղափարների տարածման և շրջանառության մեջ դնելու գործը տնօրինող այդ կազմակերպություններն իրենց տրամադրության տակ ունեն բազմաթիվ միջոցներ՝ պաշտոնական հաղորդագրություններ-կոմյունիկեներ, մամուլ, ռադիո, կինո, կոնֆերանսներ, առաքելություններ

և այլն»<sup>216</sup>:

Փոլ Դեֆոյի նամակից պարզ է դառնում հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությամբ զբաղվող այդ հսկայական կառույցի աշխատանքների այն մեթոդներն ու ուղղությունները, որոնց օգնությամբ նրանք հաջողությամբ «տարածում և շրջանառության մեջ էին դնում» հայոց ցեղասպանության վերաբերյալ միայն ու միայն այն գաղափարներն ու կոնցեպտուալ արժեվորումներն ու զնահատականները, որոնք նպաստում էին Ֆրանսիայի նպատակադրումների ձեռք բերմանը: Նրանք, ամենից առաջ, «մշակում էին քարոզչության առարկան, կոնպլեկտավորում փաստաթղթերի և աշխատությունների գրադարանը, և դրանք տրամադրում էին ուսումնասիրել *ցանկացողներին*», այնուհետև, «մշակում էին և կազմում հայկական խնդրի գոյությունն անընդհատ հիշեցնող հաղորդագրություններ, որոնք չունենալով իրենց ծագման կնիքը, նախատեսվում էին շահագրգիռ թերթերի համար», երրորդ, «այդ մարմինները առավել արդյունավետ էին դիտում այն քարոզչությունը, որը թափանցում էր այնպիսի օրաթերթեր ու ամսագրեր, որոնք հայտնի չէին և չէին կրում քարոզչական մամուլի կնիքն ու ճանաչումը, ինչպես օրինակ՝ “La lecture pour tous”, “L’ Echo de Paris”, “La Croix”, “La Victoire” և այլն, չորրորդ, «համառորեն հասնում էին այն բանին, որ Հայաստանի մասին հոդվածներով հանդես գան Ֆրանսիայի ճանաչված և ազդեցիկ գրողներն ու լրագրողները, նրանց գրածներին տալով համապատասխան խմբագրում և ճաշակած», հինգերորդ, «կազմակերպում էին տարբեր կոնֆերանսներ, ցուցահանդեսներ համերգներ, մշտապես գերադասելով, որ դրանք կազմակերպվեին ոչ հայկական շրջանակների, այլ Ֆրանսիայի կրթության գործիչների օգնությամբ», և վեցերորդ, «հետևողական աշխատանքներ էին իրականացնում ազդեցիկ մարդկանց մեջ նոր արմնֆիլներ հավաքագրելու ուղղությամբ»<sup>217</sup>:

Հայոց ցեղասպանության քարոզչությամբ զբաղվող Ֆրանսիական քարոզչական բազմերախ ու բազմազուխ, սա-

<sup>215</sup> H. Barby, Au pays de l'épouvente-L' Arménie martyre, Paris, 1917, p. 3-4.

<sup>216</sup> ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1135, թ. 2-3:

<sup>217</sup> ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1135, թ. 3-4:

կայն մեկ կենտրոնից լարվող ու կառավարվող, հսկայական այդ մեքենան, որի ետևից մշտապես երևում էին Ֆրանսիայի պետական շահերի *աշախուղ պաշտպան «հրազեկ» կառույցների ցցված ականջները*, սկսեց գործել իր թափանփի ողջ հզորությամբ՝ օգտագործելով ինչպես արդեն գոյություն ունեցող, այնպես էլ պատերազմի ողջ ընթացքում ստեղծվող նորանոր քարոզչական կենտրոնների, հասարակական ու գիտական կազմակերպությունների, նրանց տպագիր օրգանների ներուժը և հասարակական գիտակցության վրա ազդելու, այն «կողմնորոշելու» ու «ձևավորելու» նրանց կարողունակությունները:

Դեռ պատերազմից առաջ, 1913թ. հուլիս ամսին, ֆրանսիական կառավարության օրհնությամբ, Ռենե դը Շալինյին Փարիզում հիմնադրեց «Ֆրանկո-Օտար Բարեկամության» կազմակերպությունը, որն ընդհանուր ծրագիր ունեցող, ինքնավար ընկերակցությունների մի ֆեդերացիա էր, և նպատակ էր հետապնդում «տարածել ֆրանսիական միտքն ու մշակույթն արտասահմանյան երկրներում, և նրանցն էլ ներմուծել Ֆրանսիա, ստեղծել միմյանց հանդեպ հավաքական ու անքակտելի համակրանք, հաստատել գործնական ու զաղափարական սերտ հարաբերություններ բոլոր Ֆրանկո-Օտար ընկերակցությունների միջև»:<sup>218</sup>

1916թ. հունիս-օգոստոս ամիսներին արդեն «Ֆրանսիա-Ռուսաստան», «Ֆրանսիա-ԱՄՆ» ընկերակցությունները ստեղծած «հանճարեղ ու ազնիվ Ֆրանսիան փութաց իր գուրգուրանքն ու համակրանքը հանդիսավորապես արտահայտել դեպի մարտիրոս հայ ժողովուրդը»<sup>219</sup> 1916թ. հուլիսի 29-նին ստեղծելով նաև «*France-Arménie*» («Ֆրանսիա-Հայաստան») ընկերակցությունը:

Ֆրանսիայի կողմից ակնհայտորեն քարոզչական նպատակներով ստեղծված այդ կազմակերպության մասին ուրախությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ V -ին շտապեց հայտնել Հայոց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը. «*France-Arménie*-ի անդամներուն ներփակ ցու-

ցակէն Ձեր Վեհափառությունը պիտի տեսնէ, որ թե՛ պառլամենտական և թե՛ գիտական միջավայրի *ամենամեծ անձանց աջակցությունը ձեռք է բերված* :

Ի մասնավորի տեսաք Պենլվէ և Դենի Քոշեն ի պաշտոնե նախարարներ, Ծերակույտի և Պառլամենտի արտաքին գործոց Հանձնաժողովի երկու նախագահները՝ Ժորժ Կլեմանսո և Ժորժ Լեյզ, դեռ ուրիշ նախկին նախարարներ, ծերակուտականներ, երեսփոխաններ:

Ակադեմիոյ անդամներ, ինչպես Անաթոլ Ֆրանս և Էթենեն Լամի՝ Ակադեմիոյ մշտական քարտուղարը և այլք»:

Բոլոր միջոցներով, առանձնապես ակտիվ և հեղինակավոր քարոզչությամբ «*Ֆրանսիայի շահերը Արևելքում պաշտպանելու*»<sup>220</sup>, նպատակներով ստեղծված կազմակերպության ղեկավարության և համապատասխան հանձնախմբերի անդամների անունների հետ առաջին իսկ ծանոթությունն ուսումնասիրողին բերում է ոչ մի տարակուսանքի տեղ չթողնող այն իրողության արձանագրությանը, որ ֆրանսիական քարոզչական այդ հիրավի կարևորագույն կազմակերպության մեջ, անշուշտ, ոչ պատահականորեն, այլ միանգամայն օրինաչափորեն, ընդգրկվել էին Ֆրանսիայի քաղաքական ընտրանու, գիտական ու մտավոր շրջանակների առավել ազդեցիկ այն ներկայացուցիչները, որոնք 1916-1918թթ., օգտագործելով իրենց հեղինակությունն, ազդեցությունը և գիտելիքներն, իրենց ներկայացրած պետական և ոչ պետական, գիտական ու հասարակական կազմակերպությունների, նրանց հետ կապված և կամ նրանց իսկ ստեղծած մամուլի ողջ ներուժն ու կարողունակությունները, իրենց վրա վերցրին հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչությունը վարելու, հիրավի, առյուծի բաժինը՝ դառնալով բազմաթիվ հրապարակային միջոցառումների, հանդեսների, կոնֆերանսների կազմակերպիչն ու ակտիվ մասնակիցը, ֆրանսիական քարոզչության հիմնական կոնցեպցիաների առաջին հնչեցնողներն ու պաշտպանները, հայոց եղեռնի վերաբերյալ հայրուրավոր գրավոր հոդվածների ու տասնյակ գրքերի հեղինակները, դրանց հրա-

<sup>218</sup> «Մշակ», 27-րդ դեկտեմբերի, 1916թ.:

<sup>219</sup> Նույն տեղում:

<sup>220</sup> Հ.Պ.Կ.Ա., ֆ.57, ց. 5, գ. 118 ք.8-12:

պարակման և տարածման կազմակերպիչներն, այլ կերպ և մեկ խոսքով ասած նրանք էին, որ իրենց վրա վերցրին հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական *քարոզչության գվարդիայի* դժվարին, մեծ աշխատանք ու արհեստավարժություն պահանջող *առաքելություն-հանձնառությունը*, որը և իրագործեցին մեծ հաջողությամբ՝ իրենց կառավարությանն ապահովելով փայլուն և տպավորիչ, ամենակարևորը, ռազմա-քաղաքական զգալի ու շոշափելի շահաբաժիններ ապահովող հաղթանակներ աշխարհամարտի տարիներին սանձազերծված գաղափարա-քարոզչական պատերազմի անխտիր բոլոր ռազմաճակատներում:

Վերոբերյալ կարևորումից ելնելով միանգամայն անհրաժեշտ ենք գտնում հիշատակել «France-Arménie» ընկերակցության, ինչպես կառուցվածքային բովանդակությունն, այնպես էլ նրա մեջ մտնող անդամների անուններն ու զբաղեցրած հասարակական-քաղաքական դիրքը: Ընկերության պատվավոր նախագահներ դարձան Ֆրանսիայի նախկին վարչապետ, գործող ժերակուտական և Սենատի Արտաքին գործոց հանձնաժողովի նախագահ *ժորժ Կլեմանսոն*, Ֆրանսիայի գործող պետական նախարար *Դենի Զոշենը*, Ֆրանսիայի Ակադեմիայի անդամներ՝ *Անատոլ Ֆրանսը* և *Էթիեն Լամին*, Ֆրանսիայի հանրային կրթության նախարար Փոլ Փենվլեն և Ֆրանսիայի խորհրդարանի արտաքին գործոց հանձնաժողովի նախագահ *ժորժ Լեյզը*: Ընկերակցության նախագահության անդամներ դարձան ժերակուտական *Էթիեն Ֆլանդերը*, ժերակուտական կոմս՝ *ԴՕնեյը*, Ֆրանսիայի նախկին պետական քարտուղար, երեսփոխանական ժողովի ծովային առևտրի հանձնաժողովի նախագահ *Պ. Գրենիեն*, “L’Institut Française”-ի անդամ Ռաֆայել *ժորժ Լեվին*, նույն ինստիտուտի անդամ, ճանաչված բյուզանդագետ *Գուստավ Շլեյքերթեն*, նախկին պատգամավոր, “L’Echo de Paris”-ի քաղաքական մեկնաբան *ժոզեֆ Ռեյնախը*, «ֆրանսիական քոլեջի»-ի պրոֆեսոր Անտ. *Մեյյեն*, հանրային կրթության նախարարության գործերի կառավարիչ Բուրգինյոնը, «Կրեդիտ Լիոնել» բանկի կառավարիչ Էսկոֆիեն, Կոմայենի պալատ-թանգարանի տնօրեն *Գաբրիել Մուրենը*, Ֆրանսիայի գերագույն դատարանի փաստաբան և

հայտնի հրապարակախոս *Անրի Կուլոնը*, և մեզ արդեն ծանոթ *Ռենե դը Շավիհյին*:

«Քաղաքական և տնտեսական հարաբերությունների հանձնախմբի» անդամներ դարձան «արտասահմանում ֆրանսիական շահերի պաշտպանության Միության»՝ նախագահ, ժերակուտական *Կոմս ԴՕնեյը*, «Ծովային փոխադրումների վարչության» պետ *Ե.Կառնոն*, հայտնի հրապարակախոս *Անդրե Շերադամը*, պատգամավոր, արտաքին գործոց հանձնաժողովի փոխնախագահ *Փոլ Էսքուդիեն*, պատգամավոր, արտաքին գործոց հանձնաժողովի փոխնախագահ *Ֆրանկլին Բույյոնը*, «Բանկ Օթթոմանի» վարչական խորհրդի նախագահ բարոն *Հոտտինգերը*, ժերակուտական, արտաքին գործոց հանձնաժողովի անդամ, հայտնի լրագրող ու հրապարակախոս *Լուի Մարթենը*, հայտնի հրապարակախոս *Ռենե Փինոնը*, «Օսմանյան փարոսներ»-ի ադմինիստրատոր *կոմս դը Վուրալը*, «*Վեքսիլներ*» հանդեսի հիմնադիր *Վլաստոն*, ինչպես նաև «Banque Mirabeau»- ի և «GK Paquet»- ի ներկայացուցիչները :

Նույնքան ներկայացուցչական և ազդեցիկ էին նաև ընկերակցության «Վարչական Կոմիտեի» և «Մշակութային հարաբերությունների» հանձնաժողովի կազմը, որոնց մեջ մտնում էին արտակարգ դեսպանի աստիճան ունեցող, իրավունքի պրոֆեսոր *Լուի Ռենոլը*, Ֆրանսիայի հանրային կրթության նախկին նախարար, պատգամավոր *Ալբեր Մարթոն*, «College de France»-ի պրոֆեսոր *Անտ. Մեյյեն*, «Արևելյան լեզուների» դպրոցի հայոց լեզվի պրոֆեսոր *Ֆրեդերիկ Մաքլերը*, «Homme de Lettres»-ի անդամ, հայտնի փիլիսոփա *Փոլ Ադամը*, «Արևելյան լեզուների» դպրոցի ադմինիստրատոր *Փոլ Բուայեն* «L’oeuvre de l’Orient»-ի տնօրեն, եպիսկոպոս *Շարմըտանը*, «Արվեստի Ակադեմիայի» անդամ *Շարլ Դեյլը*, Մոնտրեանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան *Էմիլ Դոմենդը*, Ֆրանսիայի հեղինակավոր օրաթերթ «Revue de Paris»-ի տնօրեն *ժ. Ֆինոն*, հրապարակախոս *Պ.Գոլին*, «Մարդու իրավունքների Լիգայի» փոխնախագահ *Ֆերդինան Հերոլը*, ճանաչված հասարակական գործիչ Մենար - Դորիանը, «College de France»-ի պրոֆեսոր *Ռերեյին*, «Գրականության և Արվեստի Ակադեմիայի» անդամներ *Ե. Մենարը* և *Գուստավ*

*Շլոնդերթեն*, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր *ժ. Սելյը* և Կոնալյենի պալատ-քանգարանի տնօրեն *Գաբրիել Մուրելլ*<sup>221</sup>:

Ֆրանսիական քարոզչական ինդուստրիայի կազմում հայոց ցեղասպանության դատապարտումը իրենց գործունեության հիմնական ուղղությանը դարձրած կազմակերպությունների մեջ հիշատակման արժանի են. ա) Ֆրանսիական քարոզչության, թերևս, ամենահզոր մարմինը՝ «Les efforts de la France et de ses Alliés»-ն, որը ողջ պատերազմի ընթացքում հայոց ցեղասպանության վերաբերյալ պարբերաբար կազմակերպում էր բանախոսություններ, դասախոսություններ ու կոնֆերանսներ, ինչպես Ֆրանսիայի մայրաքաղաքում, այնպես էլ զավառական խոշոր կենտրոններում: Հենց այդ կազմակերպության հրավերով 1918թ. փետրվարի 24 և 25-ին Արշակ Չոպանյանը դասախոսություններ կարդաց Բուլոն ու Բերգ քաղաքներում<sup>222</sup>, իսկ 1918թ. հոկտեմբերի 22-ին ֆրանսիական բանակի զինվորների հավաքույթների՝ Միլի հավաքավայրում և Քուռանսի զինվորական հիվանդանոցում, ուր «քազմաթիվ զինվորներ մեծ հիացմունքով էին լսում հայկական դյուցազներգության և մարտիրոսության պարզունը»:<sup>223</sup> 1918թ. հունվարի 17-ին «Les efforts de la France et de ses Alliés»-ի նախաձեռնությամբ Սորբոնի մեծ ամֆիթատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր հավաք ի պատիվ մարտիրոս ժողովուրդների, ուր հայոց Եղեռնի մասին ֆրանսերեն լեզվով բանախոսեց Ա. Չոպանյանը<sup>224</sup>, թ) «Ligue des Droits de l'Homme» քարոզչական մեծ կարողություններ ունեցող և ազդեցիկ կազմակերպությունը նույնպես դասախոսությունների պարբերական շարք էր կազմակերպում Ֆրանսիայի խոշոր քաղաքներում՝ Պորտոյում, Նանտում, Լիոնում, Լիլում, ուր խոսն քազմության ատաջ հայոց ողբերգության և հայկական հարգի վերաբերյալ «մեծ հաջողությամբ բանախոսում էին «Ligue des Droits de l'Homme»-ի դեր-

նախագահ Ֆերդինանդ Հերուլդ, Ռոժե Բյուլեն, Էմիլ Բինոն և առաջ բերում մեծ ոգևորություն»<sup>225</sup>, գ) Ֆրանսիայի և օտար ազատականների ջանքերով ստեղծված «Office des Nationalités»-ն, որը կոչված էր պաշտպանելու ճնշված ժողովուրդների շահերը, և նրա օրգան «Les Anales des Nationalités»-ն: Նրանք չեխերի, բելգիացիների, սերբերի, բուլղարների, հրեաների, լիբանանցիների խնդիրների հետ միաժամանակ մեծ ուշադրություն էին դարձնում նաև հայ ժողովրդի ողբերգությանը և նրա Դատին: Փոլ Փենլվեի և պրոֆ. Սենեթրոսի գլխավորությամբ նրանք կազմակերպում էին համաժողովներ և դրանց նյութերն ամփոփում հազարավոր օրինակներով լույս տեսնող գրքույկներում, որոնք «տարակվում էին եվրոպական բոլոր քաղաքական ու մտավորական կարևոր անձնավորութանց»<sup>226</sup>, դ) հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությանն ակտիվորեն լծվել էին նաև «Société des gens de lettres» ը հեղինակավոր գիտական ընկերությունը՝ իր նախագահ Ժորժ Լքոնտի գլխավորությամբ<sup>227</sup>, ե) «Պորտոյի աշխարհագրական ընկերությունը», գ) «Փարիզի Ուսուցանող Ընդհանուր Ընկերությունը», է) 1918թ. մայիսին Փարզում ստեղծված «Association des correspondants de guerre de la presse étrangère» ընկերությունը նախագահությամբ Փոլ Դեշանելի և անդամակցությամբ Հր. Ալեանաքի և Լ. Համբարձումյանի, որոնք կազմակերպում էին «մարտիրոս ժողովուրդների դատը պաշտպանող կոնֆերանսներ, որտեղ գովերգվում էր հայ ազգի քաջությունը, քաղաքակրթական անջնջելի ձիրքերը, նրա ցուցաբերած քաղաքական ինստությունն ու համերաշխությունը»<sup>228</sup> և վստահություն էր հայտնվում, որ «վեհաձոգի Ֆրանսիան և իր ազնիվ Դաշնակիցները պիտի չնոռանան հայ ժողովրդի ո՛չ տառապանքները, ո՛չ հավատարմությունը, և հաղթանակի ժամին արդարահաստայց պիտի ըլլան նրան»<sup>229</sup>: Իսկ արարքերական

<sup>221</sup> Ձեռն 22 կողմից, ք. 57, ս. 9, գ. 118, ք. 17 և 18.

<sup>222</sup> «Երասմունք», Փարիզ Բ տարի, 1918թ., 1 ք մարտի, թիվ 5, էջ 120:

<sup>223</sup> «Երասմունք», Փարիզ Բ տարի, 1918թ., 14 ք դեկտեմբերի, թիվ 24, էջ 477:

<sup>224</sup> «Երասմունք», Փարիզ Բ տարի, 1918թ., թիվ 8, 14 փետրվարի, էջ 175:

<sup>225</sup> «Երասմունք», Փարիզ Բ տարի, 1918թ., թիվ 1-2, 1-4 ք հունվարի, էջ 47:

<sup>226</sup> «Երասմունք», 31 ք հունվարի, 1915թ.:

<sup>227</sup> «Երասմունք» Բ տարի, 1918թ., թիվ 5, էջ 110-111:

<sup>228</sup> «Երասմունք», 12 ք ապրիլի, 1915թ.:

<sup>229</sup> «Երասմունք», 1918թ., Բ տարի, 14 հունիս 1-ք հունիս, թիվ 12-13, էջ 286:

մամուլի օրգանների շարքում հայոց եղեռնին և նրա քարոզչությանը մշտապես անդրադարձող հանդեսների թվում հիշատակման արժանի են «Revue Franco-Etrangère» շաբաթաթերթը մեզ արդեն ծանոթ «Ֆրանկո-Օտար Բարեկամութեանց» ֆեդերացիայի պաշտոնական օրգանը,<sup>230</sup> 1917թ. հիմնադրված «Le Journal des Nations» շաբաթերթը, ուր հայոց ողբերգության մասին ուշագրավ հոդվածներով հանդես էր գալիս Ս. Դավիթ Բեկը,<sup>231</sup> Կոմս դը Հոշփիեյի կողմից հրատարակվող «L' Orient illustré» պատկերազարդ թերթը, որը Մերձավոր Արևելքի ժողովուրդների շարքում հատուկ բաժին էր հատկացրել հայ ժողովրդին ու նրա խնդիրներին, իսկ նրա խմբագիր էր նշանակվել Գ. Թամազյանը,<sup>232</sup> «Le Monde latin» շաբաթաթերթը, որի էջերում տպագրվում էին Է. Բինոյի, Կ. Բասմաջյանի և այլոց հոդվածները հայոց մարտիրոսության վերաբերյալ:<sup>233</sup>

Հայոց ցեղասպանության ֆրանսիական քարոզչական հսկայական մեքենայի բաղկացուցիչ տարրերի մեջ իրենց կատարած աշխատանքներով աչքի էին ընկնում ինչպես Ֆրանսիայի Գիտությունների Ակադեմիայի հեղինակավոր շատ անդամներ՝ Փոլ Դեշանելը, Է. Լամին, Ան. Ֆրանսը, այնպես էլ Ֆրանսիայի կաթոլիկ ու բողոքական եկեղեցիները, որոնց առավել ակնառու դեմքերից շատերը՝ Օռլեանի արքեպիսկոպոս՝ կարդինալ Թուշեն, Մոնտոբանի բողոքական աստվածաբանության ֆակուլտետի դեկան Էմիլ Դումերգը և ուրիշներ հայտնի դարձան հայոց ցեղասպանության վերաբերյալ ինչպես լուրջ հոդվածներով ու գրքերով, այնպես էլ իրենց հրապարակային ելույթներով ու բանախոսություններով:<sup>234</sup>

**բ) «Բույր Հայաստանի», «ազատարար Ֆրանսիայի» հայեցակարգերը և նրանց գործառնությունները**

Առաջին հերթին Ֆրանսիայի շահերից բխող գաղափարները տարածելու և շրջանառության մեջ դնելու հրամայականներով կյանքի կոչված հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության այս հսկայական համալիրի անխտիր բոլոր կառույցների և օղակների համատեղ ջանքերով Ֆրանսիան, արդեն, 1916թ. հունվար-մարտ ամիսներին ծրագրեց, նախապատրաստեց և 1916թ. ապրիլի 9-ին անցկացրեց՝ քարոզչական ազդու և հզոր միջոցառմանը ներկայացվող բոլոր պահանջներին միանգամայն բավարարող, իր ամենամեծ հանդեսը՝ Սորբոնի պատմական հավաքը:

«Ֆրանկո-Օտար բարեկամության ընկերության», որի նախագահն էր մեծանուն գրող Անատոլ Ֆրանսը, նախաձեռնությամբ Սորբոնի համալսարանի մեջ՝ ամֆիթատրոնի դահլիճում կազմակերպված՝ «նահատակվող Հայաստանի մեծարման հանդեսին ներկա էր «4000-5.000 -ի մոտ մի բազմություն», որոնց թվում և Ֆրանսիայի նախագահի ներկայացուցիչը, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Սերբիայի դեսպանները, Ֆրանսիայում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի այլ կարևոր անձինք, մեզ արդեն ծանոթ Ֆրանսիայի խորհրդարանի նախագահ Պոլ Դեշանելը, հանրային կրթության նախագահ Պոլ Պենվեն, Հայոց Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, մշակույթի, գիտության ու կրթության անվանի և ճանաչված շատ գործիչներ:

«Русское слово» թերթի փարիզյան թղթակցի վկայությամբ դահլիճում իսկական «օվացիա առաջ բերեց Նեմիրովիչ-Դանչենկոյի ներկայությունը, որի մայրը հայուհի է և Փարիզի հայ գաղութը նրան իր հարազատն է համարում»:<sup>235</sup>

1916թ. ապրիլի 9-ին, կիրակի օրը, ժամը 2-ին, հայկական երգչախումբը՝ հոչակավոր երաժիշտ Վենսան Դ. Ինդիի ղեկավարությամբ «սկսեց երգել «Մարտեյեզը», որից հետո Փոլ

<sup>230</sup> «Վերածնունդ», 1917թ. Ա. տարի N 2, էջ 40-41:

<sup>231</sup> «Վերածնունդ», 1918թ. Բ տարի, թիվ 1-2, 1-14-ը հունվարի, էջ 47:

<sup>232</sup> «Վերածնունդ», 1918թ. Բ տարի, թիվ 1-2, 1-14-ը հունվարի, էջ 48:

<sup>233</sup> «Վերածնունդ», 1917թ. Ա տարի, N 1, էջ 27-28:

<sup>234</sup> «Վերածնունդ», Բ. տարի, 1918թ. թիվ 1-2, 1-14-ը հունվարի, էջ 37:

<sup>235</sup> «Մշակ», 4-ը մայիսի, 1916թ.:

Դեշանելը իր պերճախոս ճառով բաց արեց հանդեսը: «Կոմե-  
դի ֆրանսեզի», Օպերայի, «Պորտ-Սեն-Մարթեն» և «Սառա-  
Բերնար» քատրոնների արտիստներն իրենց բարեսացական  
մասնակցությունն էին բերել հանդեսին:

Ա. Ժորժը արտասանեց Ժան Աիշպեի «Մահերգը», Ռու-  
ժե Գայարը՝ հուզիչ և լեցուն առոգանությամբ կարդաց Սիա-  
մանթոյի «Երգելով կուզիմ մեռնիլ» բանաստեղծության ֆրան-  
սերեն քարգմանությունը, Պ. Մաքսը՝ աշուղ Ջիվանուց մի  
կտոր, դերասանուհիներ Մորենոն և Բերանոն խիստ հաջող  
կերպով կարդացին Դանիել Վարուժանի «Հայրենի լեռներ»  
քերթվածի ֆրանսերեն քարգմանությունը, իսկ Փարիզի բեմա-  
հարթակի վրա մեծ հարգանքի և գնահատականի արժանա-  
ցած դերասանուհի տիկ. Սգոն Վեբերը արտասանեց Արշ. Չո-  
պանյանի «Օրօր մայր Հայաստանին», որն ընդհանուր բարձր  
գնահատության արժանացավ», իսկ ֆրանսիական օպերայի  
հանրահայտ տենոր Սյուվանը «երգեց մեր «Հայաստանը», որը  
ֆրանսերենի էր քարգմանել նախկին նախարար, Ֆրանսիայի  
սենատի արտաքին գործոց հանձնաժողովի քարտուղար Շառլ  
Քուիբան՝ այդ հայրենաբաղձիկ երգին տալով դյուցազնական  
շունչ»<sup>236</sup>:

Նման շուքով և հանդիսավորությամբ անցկացվող ցույ-  
ցից առաջ նրա կազմակերպիչների անունից տարածվել և  
ֆրանսիական մամուլի գլխավոր օրգաններում տպագրվել էր  
այդ ցույցի նպատակների մասին ազդարարող հետևյալ Կոչը.  
«Այն անօրինակ աղետը, որ պայթեց հայ ժողովրդի գլխին, խո-  
րին գայրույթ առաջ բերեց քաղաքակիրթ ազգերի մեջ:

Բազմաթիվ հողավճները, ժողովները, դասախոսություն-  
ներն ու հարցապնդումները թե՛ դաշնակից և թե՛ չեզոք  
երկրներում պարզեցին այն սարսափելի ջարդերն ու տեղահա-  
նությունները, որոնց զոհ գնաց ավելի քան կես միլիոն մարդկա-  
յին կյանք, կանայք՝ երեխաներ ու ծերունիներ:

...Ֆրանսիան միաձայն և միաբան իր ամենաջերմ հա-  
մակրանքն է հայտնում դժբախտության մեջ հայտնված հայ  
ժողովրդին: Սակայն մեզանում քչերն են, որ ճանաչում են այս

ժողովրդին, նրա պատմական դերը և այն կարևոր ավանդը,  
որն նա ունի ընդհանուր քաղաքակրթության մեջ (ընդգծ. իմն է  
-Ե.Գ.):

Անհրաժեշտ է Ֆրանսիայի ժողովրդի և մտավորակա-  
նության կողմից հանդիսավոր հարգանքի տուրք մատուցել  
հայկական մշակույթին:

Այդ նպատակով առաջիկա ապրիլի 9-ին, Սորբոնում,  
Ֆրանսիայի քաղաքական ու գիտական աշխարհի ամենա-  
հայտնի ներկայացուցիչները՝ կազմակերպում են հարգանքի  
մեծ հանդես... որը պետք է նպաստի Ֆրանսիայի կողմից  
Հայաստանի ու հայ ժողովրդի, նրա Դատի և քաղաքակրթու-  
թյան ճանաչմանը<sup>237</sup>»:

Եվ իրոք, Սորբոնի սյունազարդ դահլիճի ամբիոնից ե-  
լույթ ունեցող մեզ արդեն ծանոթ Փոլ Դեշանելը, Փոլ Փենլվեն  
հայոց ցեղասպանության գործում *Գերմանիային գլխավոր  
հանցագործ սեպորդ* «զաղիական» կոնցեպցիային իրենց համե-  
րաշխությունը հայտնելուց և այն «հիմնավորելուց» հետո, մեծ  
ուշադրություն դարձրին հայ ժողովրդին՝ ճանաչել տալու, հա-  
մաշխարհային քաղաքակրթության մեջ նրա բերած ավանդը  
վեր հանելու խնդիրներին, շեշտելով, որ «հայերը լինելով խելա-  
ցի, աշխատասեր, քաղաքակիրթ և ասիական խորագիտու-  
թյունն եվրոպական մտքին միացնող ազգ, դարեր շարունակ  
գորություն ու փառք վայելելով, դարձել են հունա-լատինական  
քաղաքակրթության առաջապահը Արևելքում»<sup>238</sup>:

Անշուշտ, ֆրանսիական քարոզչության կողմից հայ ժո-  
ղովրդի քաղաքակրթական ու մշակութային արժեքների, նրա  
ստեղծագործ ոգու և փառավոր անցյալի մասին փաստող կոն-  
ցեպցիայի որդեգրումը, որը *կարելի է անվանել «քույր ժո-  
ղովրդի» կամ «քույր Հայաստանի»* կոնցեպցիա, ամենևին էլ  
պատահական չէր, և ամենևին էլ թելարդրված չէր ճանաչողա-  
կան խնդիրներ լուծելու հրամայականներով:

Լայնորեն քարոզելով *«քույր ժողովրդի»* կոնցեպցիան,  
ֆրանսիական քարոզչությունը ոչ միայն, և ոչ այնքան, ձգտում

<sup>236</sup> «Վերածնունդ», Փարիզ, N 2, 14-ը օգոստոսի, 1917թ., էջ 50-51:

<sup>237</sup> «Le Temps», 5 mars, 1916.

<sup>238</sup> Ibid.



էր Ֆրանսիայում և չեզոք երկրներում լրացնել հայ ժողովրդի վերաբերյալ գիտելիքների պակասն ու բացը՝ սեր, համակրանք և հարգանք առաջացնելով մինչ այդ միայն ջարդի, կոտորածի, խեղճության ու կարեկցության հոմանիչ դարձած հայ ժողովրդի նկատմամբ, որքան որ այդ ամենը *դարձյալ ու դարձյալ Գերմանիայի դեմ ուղղելու*, նրան նորից ու նորից վարկաբեկելու համար, փորձելով ապացուցել, որ «հայերը *գերմանո-թուրք վրեժխնդրության առարկան են դարձել այն պատճառով, որ խավարակոտն Ասիայի այդ միակ զարգացած և արդիական ազգը, կիսելով մեր զգացմունքներն, մտքերն ու ձգտումները, դարձել են գերմանական ծրագրերի արգելքը*»:<sup>239</sup>

Վերափոխելով հայտնի ասացվածքի խոսքերը, կարող ենք ասել, որ հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչությունն *որդեգրել և լայնորեն տարածում էր «յոթը» կոնցեպցիաներ՝ յոթն էլ Գերմանիայի մասին և յոթն էլ Գերմանիայի դեմ*:

Իհարկե, Սորբոնի քարոզչական հանդեսը կազմակերպող և ֆրանսիական քարոզչական ողջ համալիրը գործի մեջ դնող ուժերի ու պատկան մարմինների կողմից «հայ ժողովրդի քաղաքակրթության ու մշակութային արժեքները բացահայտելուն կոչված «քույր Հայաստանի» կոնցեպցիայի որդեգրումը և նրան քնարկելը կարևորվել էին Ֆրանսիայի գլխավոր թշնամուն մեկ անգամ ևս հարվածելու և նրան չարիքի մարմնացում ներկայացնելու անհրաժեշտությամբ: Ուստի, «քույր Հայաստանի» կոնցեպցիան կոչված էր *ամրապնդելու*, և էլ ավելի համոզվելու ու ազդեցիկ դարձնելու հայոց *ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչության առանցքային «գաղիական» կոնցեպցիան*:

Ֆրանսիական քարոզչության մեթոդները շատ լավ հասկանում և քաջ գիտակցում էին, որ Գերմանիային հայոց եղեռնի գլխավոր ոճրագործ սեպող «գաղիական» կոնցեպցիայի քարոյա-հոգեբանական ազդեցությունը և համոզվելությունը կմեծանա ճիշտ այն չափով և այնքանով, որ չափով և որքանով-որ ֆրանսիական քարոզչության կողմից որդեգրած «քույր

*Հայաստանի»* կոնցեպցիայի միջոցով ցույց տրվի, որ «գլխավոր ոճրագործ» Գերմանիան պլանավորել և ոչնչացնում է ո՛չ թե հետամնաց քաղաքակրթություն ու մշակույթ ունեցող, այլ Ասիայի «միակ քաղաքակիրթ և հնագույն ու փառավոր անցյալ ունեցող» հայ ժողովրդին: Որքանով ֆրանսիական քարոզչությանը հաջողվեւր «քույր Հայաստանի» կոնցեպցիայի միջոցով հասնել այն բանին, որ մարտիրոսացող հայ ժողովուրդն իր մշակութային և քաղաքակրթական արժանիքների շնորհիվ արժանանար թե՛ Ֆրանսիայի, և թե՛ չեզոք երկրների լայն հասարակայնության սիրտն, *համակրանքին և հարգանքին, այդքանով կշեշտվեւր և կընդգծվեւր գլխավոր հանցագործ այսպանվող Գերմանիայի գործած ոճրի ահավորությունն ու բարբարոսությունը*, և ճիշտ այդքանով կտարածվեւր ու կամրապնդվեւր քաղաքակրթության թշնամի և չարագործ Գերմանիայի վարկը:

Վերոհիշյալ խնդրի լուծումը, հարկավ, ֆրանսիական քարոզչության հնոցում թրծված և նրա կողմից որդեգրած «քույր Հայաստան»-ի կոնցեպցիայի *գլխավոր գործառնույթն էր, սակայն ոչ միակը*: Այդ կոնցեպցիայի քարոզչությամբ միաժամանակ Ֆրանսիան հնարավորություն էր ստանում թե՛ իր երկրի, և թե՛ չեզոք երկրների հանրային կարծիքի դատին ներկայանալ «հնագույն քաղաքակրթություն և լիարժեք մշակույթ ունեցող» ժողովրդի պաշտպանի վարկանիշով, և, անշուշտ, լռեցնելու բոլոր այն ուժերին՝ թե՛ երկրի նեսում և թե՛ դրսում, որոնք պնդում էին, որ Ֆրանսիան պատերազմում է ոչ թե արդար, այլ ծավալապաշտական նպատակների ու դատերի համար:

Վերոբերյալ նպատակներին հասնելու համար ֆրանսիական պետական քարոզչությունը տնօրինող այրերը հարկադրված էին հաղթահարել մի շարք արգելքներ և դժվարություններ, որոնք մինչ առաջին աշխարհամարտը ստեղծվել էին հենց ֆրանսիական պետական քարոզչության ձեռքերով ու ջանքերով: Պաշտոնական Ֆրանսիան, ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտը, հավատարիմ մնալով Թուրքիայի հետ իր համար *շահաբեր բարեկամությունը* ամեն գնով պահպանելու *առաջնահերթությունը*, երես էր թեքում հայ ժողովրդից, աղճատում էր նրա իսկական դեմքն ու պատկերը, նրան վերա-

<sup>239</sup> «Le Temps», 5 mai, 1916.

գրում հանիրավի մեղքեր ու չունեցած բացասական հատկություններ, իսկ շատ դեպքերում էլ «պաշտպան կանգնելով դահիճներին՝ թուրքական իշխանությունների դաժանությունների համար մեղավոր և հանցավոր էր համարում հայ ժողովրդին»<sup>240</sup>, երես թերում ջարդերի զոհ դարձած հայ ժողովրդից, «հայերին պատկերելով իբրև մարդկանց, որոնք թուրքերին սնանկացող վաշխառուներ են, և արժանի պատժի»:<sup>241</sup>

Պարզ էր ու ակնհայտ, որ ստեղծված նոր պայմաններում, երբ այլևս գոյություն չունեի Թուրքայի հետ բարեկամությունը հայ ժողովրդի վարկաբեկման հաշվին պահպանելու հրամայականը, և օրվա գլխավոր խնդիր էր դարձել հայ ժողովրդի մեծարման, նրա քաղաքակրթական ու մշակութային արժանիքների քարոզչության միջոցով Գերմանիայի վարկաբեկումն ու բարոյագրկումը, պաշտոնական Ֆրանսիան պետք է հրաժարվեր անցյալում հայ ժողովրդին վարկաբեկող, նրան վաշխառու և այլ բացասական հատկություններով ներկայացնելու իր քարոզչական ժառանգությունից ու ավանդություններից, և որդեգրեր իր առջև դրված նոր խնդիրների լուծման համար շատ անհրաժեշտ՝ հայ ժողովրդին գովերգող և նրա քաղաքակրթական հատկությունները և արժանիքները փաստող «*քույր Հայաստանի*» կոնցեպցիան:

Այդ վերջին խնդիրը համեմատաբար հեշտ էր լուծել, և ֆրանսիական պետական քարոզչությունը շատ արագ հրաժարվեց, այժմ, արդեն իր շահերին հակասող թրքամետ և հայ ժողովրդի իսկական դեմքը աղճատող քարոզչական ժառանգությունից: Ավելի դժվար ու բարդ էր ֆրանսիական պետական քարոզչության կողմից «*քույր Հայաստանի*» կոնցեպցիան որդեգրելու այդ կտրուկ շրջադարձը ընդունելի դարձնելու խնդիրը: Պարզ էր, որ այս նորս խնդիրը չէին կարող իրագործել իրենց արդեն թրքամետ և թրքասեր քարոզչությամբ այս կամ այն չափով մրոտած մարդիկ, որոնց բերանից հայ ժողովրդի հասցեին նոր, և նրա քաղաքակրթական արժանիքները գովաբանող «*քույր Հայաստանի*» կոնցեպցիայի պաշտպանությունն

ամնվազն տարօրինակ ու անբարո կլիներ, և, անշուշտ, չէր ունենա ո՛չ ակնկալվող ազդեցությունը, և ո՛չ էլ սպասվող համոզկերությունը: Ահա թե ինչու ֆրանսիական քարոզչության դերաբաշխ կառույցները ինչպես այդ, այնպես էլ հայոց ցեղասպանության մյուս կոնցեպցիաները քարոզելու առաջնահերթությունը և գլխավոր դերը պետք է վստահեին անցյալում հայ ժողովրդի նկատմամբ *մաքուր խիղճ ու ձեռքեր, հայ ժողովրդի անշահախնդիր ու անկեղծ բարեկամների վարկանիշ ու համբավ ունեցող մարդկանց*: Իսկ նման մարդկանց երկար փնտրելու կարիք չկար, քանի որ դեռ XIX դարերի վերջին ֆրանսիայում ստեղծվել էր, և ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտը հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների նվիրական պաշտպանությամբ, իր կենսագրությունն էր գրել ֆրանսիացի հայասերների *արժանապտիվ, և քարոյական անբիծ կեցվածքով բնութագրվող շարժումը*, որի ներկայացուցիչների կողմից՝ հայ ժողովրդի մշակույթի, փառավոր անցյալի և քաղաքակրթության մեջ նրա ունեցած գնահատելի ներդրումների մասին հաստատող «*քույր Հայաստան*»-ի կոնցեպցիայի քարոզչությունը, որևէ վերապահության ու կասկածի տեղիք չէր *կարող տալ, ընդհակառակը, կշեշտվեր նման մոտեցման ժառանգականությունն ու հաջորդականությունը*, և այն կդառնար համոզկեր ու ազդեցիկ *շատերի, և առաջին հերթին իր անկեղծ բարեկամներին գնահատող և նրանց հավատացող հայ ժողովրդի համար*:

Ահա թե ինչու տասնամյակներ շարունակ իր թրքամետ, իսկ հաճախ նաև թրքասեր քարոզչությամբ ու գործունեությամբ բնութագրվող, ֆրանսիացի հայասերների դեմ հետևողական և անզիջում պայքար մղած ֆրանսիական պետական քարոզչությունը ղեկավարող այրերը, հանուն Ֆրանսիայի *նոր շահերի*, սկսեցին *քաջալերել, հովանավորել, աջակցել ֆրանսիացի հայասերներին*, նրանց հրավիրելով ավելի ակտիվ ու առաջնահերթ մասնակցություն ցուցաբերելու ֆրանսիական քարոզչության *բոլոր*, և հատկապես «*քույր Հայաստանի*», «*ասպետ և ազատարար*» *Ֆրանսիայի* կոնցեպցիաների քարոզչությանը, նպատակ ունենալով օգտագործել նրանց բարի անունն ու վարկը, հավատ ներշնչող ու ազդեցիկ ներուժը, խորը

<sup>240</sup> Жорес Ж. против войны и колониальной политики, М. 1961, с. 114-115.

<sup>241</sup> La "Revue des amitiés franco-étrangères"; N 4, 1916, mai-juin, p. 33.

գիտելիքներն ու իրազեկությունը՝ հանուն առաջին աշխարհամարտի տարիներին Ֆրանսիայի հետապնդած ռազմա-քաղաքական ու բարոյա-քարոզչական նպատակների իրագործման:

Անշուշտ, այդ հրամայականներով էր թելադրված և այն իրողությունը, որ Սորբոնի հանդեսում «*քույր Հայաստանի կոնցեպցիայի մասին հանդես գալու իրավունքը և առաջնահերթ պատիվը* տրվեց Ֆրանսիայի հայասերների ճանաչված պատրիարք և համաշխարհային համարում ունեցող Անատոլ Ֆրանսին, որի ելույթում այդ կոնցեպցիան գտավ իր՝ իրոք որ *ավարտում* ու դասական ձևակերպումը. «Արևելքում մեզ հառված մարող աչքերով մեռնող հայ *ժողովուրդը մեր քույրն է*, և մեռնում է հենց նրա համար, որ մեր քույրն է, որի հանցանքն այն է, որ նա համակված էր մեր զգացմունքներով, սիրում էր այն, ինչ *մենք ենք սիրում*, մտածում էր այնպես, *ինչպես մենք ենք մտածում*, *հավատում էր* նրան, *ինչին մենք ենք հավատում*, և մեր նման գնահատում էր *իմաստությունն, արդարությունը, քերթությունը, և արվեստը*»:

Սա էր նրա անքավելի հանցանքը<sup>242</sup>: Սորբոնի հավաքույթի ժամանակ պաշտոնական Ֆրանսիայի անունից «*քույր Հայաստանի կոնցեպցիան* որդեգրելու մասին բարձրաձայն հայտարարեց Ֆրանսիայի պառլամենտի նախագահ Փոլ Դեշանելը, որը հայ ժողովրդին ներկայացրեց «իբրև խելացի, աշխատասեր, քաղաքակիրթ, ասիական խորագիտությունն եվրոպական մտքին միացնող ազգ: Նա եղել է հունա-լատինական քաղաքակրթության առաջապահը Արևելքում, որը հզորություն ու փառք վայելելուց հետո, ընկավ օսմանյան լծի տակ, ենթարկվելով կոտորածների, թալանի, աքսորի ու կրոնափոխության»<sup>243</sup>:

Իսկ ֆրանսիական կիսապաշտոն «Le Temps»-ը 1916թ. ապրիլի 9-ի համարում զետեղված «*Ֆրանսիան ու Հայաստանը*» հոդվածում, իր համերաշխությունը հայտնելով «*քույր Հայաստան*»-ի կոնցեպցիային, հայ ժողովրդի «հավատարմու-

թյունն ու նվիրավծությունը Դաշնակիցների դատի հանդեպ» բացատրում էր այն հանգամանքով, որ «դարավոր պատմությունն ու ավանդական կապերը միացնում են Ֆրանսիային Հայաստանի հետ, միացնում են Կիլիկիայի հետ, որի թագավորական գահին բազմել էր ծագումով ֆրանսիական Լուսինյան հարստությունը»:

Հակառակ իր դարավոր տառապանքներին, հայ ժողովուրդը անաղարտ է պահել իր անհատականությունը, իր ավանդույթները և հարության հույսերը»<sup>244</sup>:

Ֆրանսիական քարոզչության մեջ, հատկապես ֆրանսիացի հայասերների ջանքերով, լայն տարածում գտած «Հայաստանի վիպական գեղեցկությունների և հայ ազգի քաղաքակիրթ հատկությունների» մասին վկայող «*քույր Հայաստանի կոնցեպցիան* հայ քաղաքական ուժերի և գործիչների վրա «աղվոր տպավորություն կձգեր», քանի որ, նախ, այդ քարոզչությունը հայ ժողովրդին օգնում էր ազատվելու նախորդ տասնամյակներում իր անունը և համաբավը վարկաբեկող հերյուրածո և կեղծ ստերեոտիպներից, որոնք շրջանառության մեջ էին դրվել թուրք և թրքասեր քարոզչության ջանքերով, երկրորդ, որ այն օգնում էր ձեռքբազատվելու հայ ժողովրդի մասին լայնորեն տարածված և արմատացած այն պատկերացումներից, համաձայն որոնց, հայը դարձել էր միայն օտարների գրություն ու կարեկցության աղերսասկուի ու թախանձողի, ողորմության ձևով օգնություն պաղատողի, ջարդի, կոտորածի, խեղճության և հալածանքի հոմանիշ, երրորդ, նրանք հույս ունեին, որ այդ կոնցեպցիան վեր հանելով «հայ ժողովրդի ստեղծագործ ոգին, բարձր կուլտուրան և փառավոր անցյալը», կհասնի այն բանին, որ հայ ժողովուրդը «կարժանանա եվրոպական հասարակական կարծիքի սիրուն, համակրանքին, հիացմունքին ու հարգանքին», և չորրորդ, ամենակարևորը, հայ ժողովրդի քաղաքական ղեկավարությունը և Ֆրանսիայի հետ համագործակցող հայ ազգային կազմակերպություններն ու գործիչները հույս ունեին, որ «*քույր Հայաստանի կոնցեպցիայի* լայն տարածման շնորհիվ «սիրո, համակրանքի ու հարգանքի հոմանիշ

<sup>242</sup> La "Revue des amitiés franco-étrangères"; N 4, 1916, mai-juin, p. 34.

<sup>243</sup> "Le Temps", 9 avril, 1916.

<sup>244</sup> "Le Temps", 9 avril, 1916.

դարձած հայ ժողովուրդը հնարավորություն ու իրավունք կստանա «ստանձնելու իր գոյության և զարգացման համար խիստ անհրաժեշտ, սեփական ազատ ու անկախ, ամբողջական պետությունը պահանջողի դերը»<sup>245</sup>, ակնկալելով, որ այդ գործում հայ ժողովուրդը կստանա «քույր Ֆրանսիայի» ոչ միայն և ոչ այնքան բարոյական, որքան գործուն ու ազդու ռազմա-քաղաքական օգնությունն ու աջակցությունը: Ահա այդ կարևոր գործոնները նկատի առնելով, հայ քաղաքական և ազգային կյանքի ղեկավար գործիչներն ակտիվորեն մասնակցեցին «քույր Հայաստանի» կոնցեպցիայի քարոզչությանը՝ հավաստելով ու հաստատելով, որ Ֆրանսիան, իրոք, ոճրագործության զոհ դարձած հայ ժողովրդի հարազատ, զգայուն և նվիրված ավագ քույրն է:

Իհարկե, «քույր Հայաստանի» կոնցեպցիայի քարոզչության մեջ ամենից առաջ, և առաջին հերթին, նրա հակադեման ուղղվածությունն ու գործառնությունները կարևորող և առաջին պլան մղող ֆրանսիական քարոզչությունը տնօրինող կառույցների համար երբեք չկարևորվեց այդ կոնցեպցիայի միջոցով հայ ժողովրդի քաղաքական ձգտումները հիմնավորելու, և նրանց իրականացմանը նպաստելու խնդիրները: Ուստի և, ֆրանսիական քարոզչության մեջ երբեք «քույր Հայաստանի» կոնցեպցիան չքարոզվեց այն շեշտադրությամբ, որ Ֆրանսիայի «քույր հայ ժողովուրդն» իրավունք ունի և արժանի է *սեփական, անկախ և ամբողջական* պետությունն ունենալուն:

Ահա *նպատակադրումների այս էական տարբերությունն է այն ջրբաժանը*, որը մատնանշում է թե ինչ գործառնություն էր դնում «քույր Հայաստանի» կոնցեպցիայի առաջ պաշտոնական ֆրանսիան, *կարևորելով ու շեշտադրելով նրա հակադեման ուղղվածությունն ու բովանդակությունը*, և հայկական կողմը՝ կարևորելով և շեշտադրելով բազմաբնույթ այդ կոնցեպցիայի այն գործառնությունն ու բովանդակային ուղղվածությունը, որը հայ ժողովրդին իրավունք և հնարավոր

ություն էր ընձեռնում հանդես գալու սեփական, ազատ, անկախ ու ամբողջական պետությունը *պահանջողի* դերում:

Անշուշտ, ամենից առաջ, և գլխավորապես *հակադեման բովանդակություն* դնելով իր գաղափարաքարոզչական պայքարի հիմնական զենքերից մեկը դարձած «քույր Հայաստանի» կոնցեպցիայի մեջ, Ֆրանսիան «Բեռլինի ատելությունն արևմուտքի լավագույն ձգտումների ներկայացուցիչ հայ ժողովրդի նկատմամբ» բացատրում էր այն իրողությամբ, որ «հնագույն քաղաքակրթության տեր այդ ժողովուրդը, նորագույն ժամանակներում զարգանալով Ֆրանսիայի ազդեցությամբ... դարձել էր խոչընդոտ և խանգարում էր Գերմանիային իրագործել իր մտադրությունները Փ. Ասիայում... Ահա թե ինչու Գերմանիան որոշեց պարզապես քայլել հայերի դիակների և նրանց բնակավայրերի ավերակների վրայով»:<sup>246</sup>

Իր հզոր քարոզչական ինդուստրիայի բոլոր միջոցներով ի լուր աշխարհի բազմիցս տարածելով իր հավակնություններն այն մասին, որ «Ֆրանսիան իրեն է վերապահում *հայերին ուրիշներից ավելի շատ սիրելու մենաշնորհը*», և պնդելով, որ «մեր լեզուն, մեր գաղափարներն ու մեր շահերը շարունակ տարածող *հայերը կարող են դիտվել որպես Ասիայի իսկական ֆրանսիացիները*»,<sup>247</sup> պաշտոնական Ֆրանսիան և նրա քարոզչությունը խիստ կարևորում էին այն հանգամանքը, որպեսզի Ֆրանսիայի այդ հավակնություններն ու պնդումները հաստատվեին և հավաստվեին «իր քույր» ժողովրդի քաղաքական ու ազգային ղեկավարության՝ պաշտոնական հանգամանք ունեցող ազդեցիկ անձանց կողմից, առանց որոնց ֆրանսիական քարոզչությունն, անշուշտ, կկորցներ թե՛ իր համոզվածությունը, և թե՛ բարոյական ազդեցության կարողունակությունը:

Առաջին հերթին կարևորելով «քույր Հայաստանի» կոնցեպցիայի հայանպաստ գործառնություններն ու կարողականությունները, հայ ժողովրդի, ինչպես վարկն ու համբավը բարձրացնող, այնպես էլ նրա ազգային ու քաղաքական ձգտումներ

<sup>246</sup> «La Revue de Paris», 12 août, 1916.

<sup>247</sup> Ibid.

<sup>245</sup> «Մշակ» Թիֆլիս, 7-ը հուլիսի, 1916թ.:

րին նպաստելու նրա ներուժը, հայկական կողմը շտապեց մասնակցել այդ կոնցեպցիայի քարոզչությանը:

Եվ իրոք, «քույր Հայաստանի» կանցեպցիայի՝ հայ ժողովրդի վարկն ու համբավը բարձրացնող գործառնությունները նկատի ունենալով, Հայոց Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը 1916թ. օգոստոսի 3-ին Փարիզի «Journal» օրաթերթում հայկական կողմի անունից, բավարարություն տալով ֆրանսիական քարոզչության ցանկություններին և հավակնություններին, հաստատեց ու հավաստեց, որ «Արևելքի ժողովուրդների մեջ հայերն են, որ իրենց ըմբռնումներով ու ճաշակով, մշտապես, ձգտել են դեպի Ֆրանսիան»:

Ֆրանսիայից ենք մենք միշտ խնդրել և ստացել մեր քաղաքակրթական դաստիարակությունը և բարիքները, ջանացել դրանք ըմբռնել, և դրանցով ապրել:

... Հայերը, որոնց անվանում են Արևելքի ֆրանսիացիներ, մշտապես, ապրել են Ֆրանսիայի մշակույթով: Խաչակիրների ժամանակից ի վեր, հայերը իրենց արյունը խառնել են Ֆրանսիայի զավակների արյան հետ, նրանց հետ մեկտեղ կռվելով միևնույն հավատի և միևնույն տեսլականի համար:

Հայերն են, որ ֆրանսիական ծագումով թագավորներ են ունեցել, որոնցից վերջինը հանգչում է Սեն-Դենիի ֆրանսիական արքայական դամբարանում: Այսօր, ավելի քան երբեք, հայերը հիացմունքով ու ջերմեռանդությամբ են տոգորված դեպի մեծ ու գեղեցիկ, ազատության, իրավունքի և արդարության նվիրական ախյան Ֆրանսիան»:<sup>248</sup>

1916թ. օգոստոսի 28-ին ֆրանսիական բոլոր խոշոր և ազդեցիկ թերթերը, «Հայերի հարգանքը Ֆրանսիային» խորագրով իրենց հոդվածներով արձագանքեցին «Փարիզի հայ մտավորականների Միության» կողմից կազմակերպված գեղարվեստական-գրական ցերեկույթին, որտեղ այդ միության նախագահ Արշ. Չոպանյանը, իր ճառով, «պարզեց այն բազմաթիվ և զանազան պատճառները, որոնց զորու հայերը երախտագիտության զգացում են տածում դեպի ֆրանսիական ազգն ու նրա քաղաքակրթությունը:

«Այս սերը և հարգանքը, - նշում էր Արշ. Չոպանյանը, - ու հիմնվում է այն գիտակցության վրա, թե հայ ժողովուրդն ինչքան է պարտական Ֆրանսիային, ֆրանսիական մտքի ազդեցությանը ժամանակակից հայ գրականության և ազգային կյանքի վրա:

... Այսօր հայ միտքն իր սիրտ և երախտագիտության ողջույնն է հղում իր բարերարին՝ օգոստոսափառ և շքեղ թագուհուն՝ ֆրանսիական մտքին, խնդրում ընդունել այս խոնարհ տուրքն այն բոլոր հերոսներին, որոնք կռվում են, որպեսզի աշխարհում հաղթանակեն արդարությունն ու Գեղեցկությունը»:<sup>249</sup>

Հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական կոնցեպտուալ քարոզչության բուրգը իր բարձրակետը պետք է ավարտեր «ազատարար Ֆրանսիայի» մասին կոնցեպցիայով, որը *ցեղասպան, չար ուժերի մարմնավորում հանդիսացող, փոքր ու ճնշված, քաղաքակիրթ ժողովուրդների թշնամի և դահիճ Գերմանիայի կողքին* պետք է ցույց տար, որ ազատության ու արդարության *համար դարավոր պայքարի* ավանդույթներ ունեցող «ասպետական» Ֆրանսիան միլիոնավոր *մարդկանց համաշխարհային սպանդանոց նետած պատերազմի մեջ է մտել և պատերազմում է հանուն «արդարության իրավունքի և ազատության» հաղթանակի.*

Եղեռնի գոհ դարձած հայ ժողովրդի ողբերգության քառյակյակ հսկա ներուժը ֆրանսիական պետական քարոզչության կողմից *գործնական արժեվորում և նպատակադրում էին* ստանում «ազատարար» Ֆրանսիայի կոնցեպցիայի լայնատարած քարոզչությամբ, որի օգնությամբ հայ ժողովուրդի արդար Դատը դառնում էր պաշտոնական Ֆրանսիայի անօրինակ շահամոլության և կայսերապաշտ ձգտումների սպասարկուն:

Պատմական ճշմարտության հետ ոչ մի աղերս չունեցող «ազատարար» Ֆրանսիայի մասին կոնցեպցիայի օգնությամբ, Ֆրանսիան, ամենից առաջ, նպատակ էր Անտանտի կառուցված պահել հայ ժողովրդին, օգտագործելով նրա, թեկուզ և

<sup>248</sup> «Journal de Paris», 3 août, 1916.

<sup>249</sup> «Journal de Paris», 28 août, 1916.

լրջորեն նվազած ռազմա-քաղաքական և բարոյական կարողունակությունները, բարձր պահել նրա մարտական կորովը, որը սկզբում շատ անհրաժեշտ էր իր բանակի շարքերում 200 հազարից ավելի հայ զինվորներ ունեցող ցարական Ռուսաստանի, իսկ 1916թ. հոկտեմբերից հետո, նաև հենց իր Ֆրանսիայի համար, որը ձգտում էր առաջին հերթին հայերով համալրել իր կողմից ստեղծվող ֆրանսիական «Արևելյան Լեգեոնը»: Այդ կոնցեպցիայի միջոցով կեղեքված, թույլ ու օգնության կարոտ ժողովուրդների «անշահախնդիր ու ասպետ պաշտպան» Ֆրանսիայի վարկի ստեղծումը Ֆրանսիայի կառավարողներին անհրաժեշտ էր, նաև, այն պատճառով, որ նման պատկերացումների տարածումն ու արմատավորումը կարող էին շատ որոշակիորեն օգնել նրան, որպեսզի, նախ, նա օգտվի այդ պատկերացումներին հավատացած՝ իրենից կախման մեջ, կամ իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների նյութական-մարդկային ներուժից, որոնք ազատության իրենց հույսը վստահելով Ֆրանսիային, իրենց ավել կամ պակաս ավանդը կբերեին Ֆրանսիայի պատերազմական ճիգերին, ընդամին, դադարեցնելով «ազատարար» Ֆրանսիայի դեմ պայքարը, որի շարունակությունն, անշուշտ, ռազմական-նյութական ու մարդկային ճիգերի գերլարումով պատերազմ մղող Ֆրանսիայի համար, իրոք որ, աղետալի հետևանքներ կարող էր ունենալ, երկրորդ, որ թշնամի բլոկի տերությունների կազմի մեջս մտնող, և նրանց ճնշման ու կեղեքման տակ գտնվող, ազատության կարոտ ժողովուրդները, հավատալով, որ «Ֆրանսիան *արդար դատերի արդար դատապաշտանն է*», կարող էին ակտիվորեն չլուրջ իրենց «ազատության թշնամի» պետության կողմում, և ապա ակնկալելով, որ կարող են Ֆրանսիայի ու իր դաշնակիցների օգնությամբ ձեռք բերել իրենց ազատությունը և անկախությունը, նրանք կարող էին սկսել պասիվ, և ապա զինված պայքարը գերմանական բլոկի երկրների դեմ, դրանով իսկ անգնահատելի ծառայություն մատուցելով Ֆրանսիային ու իր դաշնակիցներին:

Եվ իսկապես, հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությունը որդեգրելու պահից սկսած, Ֆրանսիայի պաշտոնական պետական քարոզչությունը տնօրինող և նրա

կոնցեպտուալ խոհանոցը ղեկավարող կառույցներն ու կազմակերպությունները ոչ մի առիթ ու հնարավորություն բաց չթողեցին «*ազատարար*», «*փրկիչ*» *Ֆրանսիայի* մասին «պատմող» կոնցեպցիան տարածելու և հասարակական գիտակցության մեջ լայնորեն արմատավորելու համար:

Հավելենք նաև, որ պատմությունն իսկ բարեհաճ գտնվեց Ֆրանսիայի պետական քարոզչությունը մշակող այրերի ու կառույցների համար՝ նրանց սկուտեղի վրա մատուցելով նման քարոզչության համար միանգամայն իրական «հնարավորություն»՝ ի դեմս Ֆրանսիայի ծովայինների կողմից 5.000 մուսալեռցիների փրկության փաստի:

Մեկ կողմ դնելով, և մոռանալով ու լռելով այն մասին, որ միայն իր ծավալապաշտ և եսամոլ շահերի համար կռվող Ֆրանսիան, նախ, ոչ մի իրական և գործուն ռազմա-քաղաքական քայլ չարեց արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը կանխելու, սկսած ցեղասպանության ծավալման դեմն առնելու համար, մոռանալով ու լռության մատնելով այն իրողությունները, որ մուսալեռցիներն իրենց փրկությամբ պարտական էին ոչ թե Ֆրանսիայի կառավարության մտածված ու գիտակցված որոշմանն ու գործունեությանը, որը այդ պահին իր ռազմածովային էսկադրային կարգադրում էր «շարժվել դեպի Հոռոտս և փրկել իր հիվանդ ծովակալներից մեկին», որի համար շատ ավելի կարևոր էր այդ մեկ անձի կյանքը և ոչ թե իրենց բարձրաբերձ լեռնագագաթին քրիստոնեական խաչը պարզած և օգնություն հայցող մուսալեռցիների փրկությունը, մոռանալով և լռելով այն մասին, որ մուսալեռցիների փրկությունն իրականություն դարձավ ամենից առաջ Ֆրանսիայի Միջերկրածովյան 3-րդ էսկադրայի հրամանատար դեր-ծովակալ Դարիոյի «ինքնագլուխ» գործունեության շնորհիվ, որը իր վրա վերցնելով անձնական մեծ պատասխանատվություն, իր սպաներին և ծովայիններին կարգադրեց օգնել և ընդունել օրհասական վիճակի մեջ հայտնված հերոս մուսալեռցիներին, հակառակ պաշտոնական Ֆրանսիայի դրսևորած անմարդկային անտարբերության, մոռանալով ու անտեսելով այն իրողությունը, որ Ֆրանսիայի պետական ղեկավարությունը ոչինչ չարեց փրկված մուսալեռցիներին ֆրանսիական զաղութներից որևէ

մեկում ապաստան տալու և նրանց աշխատանքով ապահովելու համար, մոռանալով ու անտեսելով, որ նրանք «ավելորդ» բեռ նկատելով մուսալեռցիներին, և ձգտելով որքան հնարավոր է շուտ ազատվել նրանցից, առաջարկեցին Ռուսաստանին ընդունել մուսալեռցիներին,<sup>250</sup> մոռանալով այն մասին, որ Ֆրանսիան ամենակտիվ ձևով խանգարեց, արգելեց և չեզոքացրեց իր դաշնակիցների՝ Ռուսաստանի և Անգլիայի բոլոր դիվանագիտական ու ռազմական այն առաջարկները և պլանները, որոնց իրագործումը կարող էր էապես ազդել բնաջնջման ճիւղաններում հայտնված արևմտահայության վիճակի վրա, և զգալիորեն նվազեցնել հայոց կորուստները և ամոքել ստացած վերքերը, Ֆրանսիայի պետական քարոզչությունը, իր արբանյակ կառույցների ու ուժերի օգնությամբ, առանց խղճի խայթի, սկսեց Մուսա-լեռան հերոսների փրկության փաստը լայնորեն քարոզել և այն ներկայացնել, որպես Ֆրանսիայի ազատարար ելությունն ապացուցող վկայություն:

«Ազատարար» Ֆրանսիայի կոնցեպցիային ծառայող այդ փաստի քարոզչությունը իր առաջին դրսևորումը գտավ 1915թ. սեպտեմբերի 22-ին, երբ արտաքին գործոց նախարար Դեյքասեն պահանջեց «Քաղաքական գործերի դեպարտամենտի» տնօրեն դ՝ Մարժերիից՝ ԱՄՆ-ում ֆրանսիայի դեսպան Ժուսերանին ուղարկել, հատկապես, «Եզիպտոսում Ֆրանսիայի լիազոր-նախարար Դեֆրանսի զեկուցագրերը Մուսա-լեռան հայերի մասին»<sup>251</sup>:

Միանգամայն բնական էր և բացատրելի, որ «ընկճված ժողովուրդների ազատարար» Ֆրանսիայի վարկը հաստատագրող այդ կոնցեպցիան, անպայմանորեն, պետք է հնչեր ֆրանսիական պետական քարոզչության կոնցեպցիաների շքահանդեսի հրապարակ և ամբիոն դարձած Սորբոնի հավաքում: Այս անգամ արդեն, այդ մասին պետք է բացահայտ հայտարարեր, և այդ կոնցեպցիային տեր կանգներ Ֆրանսիայի պետական բարձրաստիճան այրերից որևէ մեկը, որը պետք է Ֆրանսիա-

<sup>250</sup> St'u, "Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 112-114, p.104-110..

St'u նաև Ե.Ա.Գասպարյան «Ֆրանսիան և Մեծ եղեռնը», Եր.1997.էջ58-62 :

<sup>251</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 114, p. 112.

յին ներկայացնել որպես ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի ազատության համար պատերազմող և նրա արդար Դատը պաշտպանող պետություն:

Այսպես, ֆրանսիական պաշտոնական քարոզչության բոլոր հիմնական կոնցեպցիաները իր ճառում ընդգրկած Ֆրանսիայի պառլամենտի նախագահ Փոլ Դեշանելը իր խոսքը ավարտեց «ազատարար Ֆրանսիայի» առաքելությունը շեշտող հետևյալ պաթեթիկ հավաստիացումներով. «Այսօր Ֆրանսիայի ճառագայթն է, որը պետք է գնա և սփռվի Հայաստանին իր տխրության մեջ:

Մեր դպրության և գիտության հնագույն տաճարից՝ Սորբոնի բարձրունքից..., Ֆրանսիան, շրջապատված իր բոլոր զավակներով, սիրո ճիշով է արձագանքում քո հեծեծանքներին ... ո՛վ փառավոր Հայաստան...»

Եվ երբ Ստրասբուրգի և Մեցի կաթողիկե եկեղեցիների վրա դու տեսնես մեր Դրոշները, նոր արշալույս պիտի լուսավորի քո լեռների սիզանքը: Դո՛ւ, վերջապես պիտի մի կողմ նետես քո լուծը, և պիտի քայլես Արդարության ճանապարհով.<sup>252</sup>

Մեզ արդեն ծանոթ ֆրանսիական քարոզչական ինդուստրիան գործի մեջ դրվեց: Դեռ 1915թ. սեպտեմբերի վերջերին «Le Figaro»-ն իր առաջնորդողը նվիրելով Մուսա-լեռան հայության փրկությանը, պարզում էր «ազատարար» և «արդարադատ» Ֆրանսիայի դեմքը. «Սա մի փոքրիկ դրվագն է այս վիթխարի պատերազմի, ուր 5.000 մարդկային կյանքերը քիչ արժեք կունենային, եթե յուրաքանչյուր մարդկային կյանք սուրբ չլիներ բոլոր նրանց համար (*Ֆրանսիայի համար* – Ե.Գ.) ում խիղճը չի մթազնել գերմանա-թուրք մոլեգնության հարվածներով:

Գեղեցիկ դրվագ, ուր ֆրանսիան... հանդես է գալիս՝ հավատարիմ մնալով իր *դարավոր առաքելությանը, իր ազատարար միսիային*».<sup>253</sup>

Աշխարհի «բոլոր անկյուններում հասարակական ուշա-

<sup>252</sup> «Արձագանք Փարիզի», Ա տարի, N 2 ,25-ը ապրիլի, էջ 3-5: Տես նաև "Le Temps", 9 avril, 1916.

<sup>253</sup> "Le Figaro", Paris, 30 septembre, 1915.

դրությունն իր վրա զամող այլազան դեպքերի փոթորկալից հորձանքի մեջ պետք եղած ուշադրության չարժանացած» Ջեբել-Մուսայի մեջ տեղի ունեցած իրադարձությունները կարևորելու անհրաժեշտությունը շտապեց շեշտել նաև ֆրանսիական կիսապաշտոնական «Le Temps»-ը իր «Ազատարար Ֆրանսիան» խմբագրականում. դատափետելով «Թուրքիայի արյունարբու ձեռքերի մեջ զենքեր դնող գերմանական նենգությունը», նա գրում էր. «Ջեբել-մուսայիները հասել էին դիմադրության ճիգի վերջին սահմանագծին, երբ նրանց դետերից մեկը ծովի լայնածավալ տարարծության մեջ նշմարեց մի ռազմանավ, որի վրա արևի ճառագայթներից փայլվում էր Ֆրանսիայի եռագույն դրոշը: Դա չարաբախտ տարագիրների փրկությունն էր:

*...Իրավունքի պահապան, թույլերի խնամակալ, ընկճված ժողովուրդների ազատարար Ֆրանսիայի փառապանծ հաշվեկշռի մեջ արձանագրվելու արժանի մի գործ էր դա, քանի որ, հակառակ գերմանացիների անբարո պնդումների, մրրկալից երկնքի տակ կա մի արդարություն, ուր անօգնական մարդկության անհանգիստ աչքերը սկսել են կամացկամաց նշմարել ազատության առաջընթաց քայլերը»:<sup>254</sup>*

Ինչպես մնացած բոլոր դեպքերում ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի «ազատության» համար պայքարող Ֆրանսիայի մասին իր խոսքը պետք է ասեր նաև Անատոլ Ֆրանսը, որին անյուսեռն պետք է հարյուրերորդեին և հազարերորդեին ֆրանսիացի հայասերները, որոնք անկեղծորեն հավատում էին, և ուզում էին, որ Ֆրանսիան, իրոք, պայքարի և պատերազմի նահատակ և ոճրագործության զոհ դարձած հայ ժողովրդի ազատության և արդար փոխահատուցման համար:<sup>255</sup>

Հեղինակավոր, ազդեցիկ և հավատ ներշնչող հայասերի համաբավ ունեցող ֆրանսիացի աշխարհառչակ գրողը Սորբոնի հանդեսի ավարտը ազդարարող իր ճառում հավաստելով

<sup>254</sup> «Le Temps», 4 octobre, 1915.

<sup>255</sup> Տե՛ս Ե. Ա. Գասպարյան «Հայասիրական շարժումը Ֆրանսիայում առաջին աշխարհամարտի տարիներին», Եր. 1999թ., էջ 62-65:

և հավատացնելով, որ «արդարության և ազատության համար կռվող» Ֆրանսիայի բանակները՝ հաղթանակից հետո, Դաշնակիցների հետ «իրենց ամենամվիրական պարտականություններից մեկը պետք է համարեն ... մարտիրոս հայ ժողովրդի ապահովությունն ու անկախության երաշխիքը դառնալը», ասում էր. «Նրանք պետք է ասեն Հայաստանին. «Ոտքի ել՛ք բույրս: Այլևս մի տառապիր: Դու, այլևս ազատ ես ապրելու քո հոգու և կրոնի համեմատ»:<sup>256</sup>

Բացի գաղափարա-քարոզչական շահաբաժիններ ստանալուց, Ֆրանսիան, լայնորեն տիրաժավորելով «ազատարար» Ֆրանսիայի կոնցեպցիան՝ միանգամայն գործնական և հատկապես ռազմական ակնկալիքներ ունենալով հայ ժողովրդի, հատկապես Ռուսաստանից դուրս գտնվող, հոծ հայ բնակչությունն ունեցող գաղթօջախներից, նախ, զոհունակությամբ էր ընդունում հայ ժողովրդի անունից իրեն ուղղված և նրա՝ ազատարարիվարկը հաստատագրող շնորհակալությունները, ինչպես օրինակ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի ուղերձը վարչապետ և Ա. Գ. Նախարար Ար. Բրիանին, ուր նա «Կովկասի հայության անունից խորին շնորհակալություն էր հայտնում Ֆրանսիայի փառապանծ ծովայիններին և ժողովրդին՝ Ջեբել Մուսայի մեր հայրենակիցների փրկության համար»<sup>257</sup>, Ֆրանսիայի և Բելգիայի եկեղեցական թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Վոանշապուհ Քիբարյանի ուղերձը Ֆրանսիայի ծովային նախարար Վիկտոր Օգանյորին, ուր նա Փարիզի հայկական գաղութի անունից, «շնորհակալություն էր հայտնում հազարավոր հայերի փրկության համար», և հույս հայտնում «որ հայ ժողովուրդը չի կորցնի Ֆրանսիայի օգնությամբ իր ազատությունը վերագտնելու հույսը, որպեսզի հայ-ֆրանսիական բարեկամությունը նոր՝ ոսկե էջերով գրվի»<sup>258</sup>: Ֆրանսիական քարոզչությունն կարող էր իր դրական հաշվեկշռում գրանցել այն փաստը, որ հայկական հասարակական կարծիքի մեջ ամրապնդվել են այն հավատն ու վստահություն-

<sup>256</sup> «Le Temps», 9 avril, 1916.

<sup>257</sup> «Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 141, p. 142.

<sup>258</sup> Ibid, doc. N. 118, p. 119.



նը, որ «հայերը, ինչպես այդ մասին գրում էր Մարսելում «Հորիզոն» թերթի թղթակից Թ. Եղիշեն, – *իրավունք ունեն սպասելու*, որ պատերազմից հետո Հայաստանի արյունոտ դատն իր ամենից երդվյալ փաստաբանները պիտի գտնի Դաշնակիցների մեջ, *մանավանդ Ֆրանսիայի մեջ*։

*Ֆրանսիան չի շեղվում իր ասպետականությունից*, և մի-թե այդ ասպետության շնորհիվ չէր, որ 5.000 հերոս մուսալեռցիներ, 50 օր կռվելուց հետո, ֆրանսիական մարտանավերի մեջ հյուրընկալվեցին այնքան ջերմորեն, և ազատվեցան։

*Արդար դատը մը արդար փաստաբաններով արյան ու մոխիրի միջև պիտի հառնէ*»<sup>259</sup>։

Ֆրանսիան ու նրա քարոզչությունը վարող հայտնի ու անհայտ կառույցները կարող էին հանգիստ իրենց հաշվեկշռում գրանցել, նաև, որ շատ բանով իրենց քարոզած կոնցեպցիաների, նրանց համոզվելության և ազդեցության շնորհիվ, առանց քիչ թե շատ շոշափելի և ակնառու, հայ ժողովրդի վիճակը իրապես բարելավող ռազմա-քաղաքական քայլերի և գործողությունների, հասան այն բանին, որ հայ ժողովրդի քաղաքական ղեկավարության ճնշող մեծամասնությունը և ժողովրդի մի զգալի մասը սկսեցին Ֆրանսիային դիտել և ընդունել, որպես «իրավունքի, քաղաքակրթության և ազատության ազնիվ ու ասպետիզմի ախոյան»<sup>260</sup>։ Նրանք կարող էին նաև գոհունակությամբ իրենց ձեռքերը շփելով արձանագրել այն փաստը, որ արյունածոր հայ ժողովրդի «հազարավոր զավակներ, որպես կամավորներ երևացին համաձայնության երկրների բանակների շարքերում, որովհետև հավատում էին, որ Անտանտը նրանց ազատագրություն է բերելու»<sup>261</sup>։

Պատերազմի վերջին տարիներին, հատկապես 1917թ. ռուսական փետրվարյան հեղափոխությունից հետո, արևմտահայության ցեղասպանության դատապալանման քարոզչությունը ֆրանսիական կառավարության կողմից հաջողությամբ օգտագործվեց իր կողմից կայսերապաշտական նպատակներով

մղվող պատերազմին գաղափարապաշտական գունավորում տալու, ֆրանսիական հասարակության, և առաջին հերթին բանակի բարոյական ուժը և նրա հաղթելու կամքը ամրապնդելու նպատակներով։

Բանն այն է, որ մի կողմից, պատերազմի մեջ մտած Ա. Մ. Նահանգներն ի դեմս իրենց «խաղաղասեր» նախագահ Վիլսոնի, ջատագովում էին բանակցված համաձայնություն կնքելու, և մինչ պատերազմյան տարածքային “status quo”-ին վերադառանալու անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից, ռուսական հեղափոխության բովից ծնված «առանց անեքսիաների և առանց կոնտրիբուցիայի» սկզբունքը դարձել էր լայն տարածում ստացած և պատերազմից հոգնած խավերի համար խիստ գայթակղիչ կարգախոսներից մեկը, որի կիրարկումը մահացու սպառնալիք էր Ֆրանսիայի ծավալապաշտական ձգտումների համար։

Թուրքական կայսրությունն Անտանտի երկրների միջև բաժանելու ձգտումների մասին Ֆրանսիայի հասցեին ավելի ու ավելի հնչող կասկածների ու մեղադրանքների պայմաններում, Ֆրանսիայի հասարակական քաղաքական կյանքի խաղաղասեր և տարածքային կցումների հակառակորդ փոքրամասնությունը թե՛ պառլամենտում, և թե՛ իր հրապարակային ելույթներում ֆրանսիական կառավարությունից պահանջում էր սկսել խաղաղության նախնական բանակցություններ։ Գաղափարական հիմնավորում ու գունավորում ունեցող նման պահանջներն էլ ավելի վտանգավոր էին դառնում այն պայմաններում, երբ Ֆրանսիայում արագորեն աճում էր այն մարդկանց թիվը, որոնք սկսում էին տարակուսել Ֆրանսիայի ռազմական հաղթանակի հարցում, որոնք հարց էին տալիս թե՞ որքանով են արդարացված իրենց արած զոհաբերությունները, և իրենցից պահանջված զոհողությունները։ Արդյունքում, նախ, հակապատերազմական տրամադրությունները սկսեցին թափանցել ֆրանսիական բանակ, հատկապես 1917թ. գարնանային հարձակման ձախողումից հետո։ 1917թ. մայիսին ֆրանսիական երկու ապստամբ զնդերը օգնության շտապեցին Փարիզի գործադուլավոր բանվորներին, և ապա, ուժեղացան ձախ տարրերի ազդեցությունը սոցիալիստական կուսակցության մեջ և

<sup>259</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 30-ը սեպտեմբերի, 1915թ.։

<sup>260</sup> «Մշակ», 27-ը դեկտեմբերի, 1916թ.։

<sup>261</sup> “Le Radical”, Paris, 4 novembre, 1916.

արհմիություններում, որոնց օգնություն էին ցուցաբերում Ֆրանսիայում գտնվող բուլշևիկները:<sup>262</sup> Նրանք իրենց «գաղտնի տպված և անանուն գրվածքներով, - անհանգստությամբ ահազանգում էր Ֆրանսիայի ռազմական գործոց նախարար Փենվլեն, - մեր զինվորներին խորհուրդ են տալիս զենքերը վայր դնել կամ չհնազանդվել»:<sup>263</sup>

Ահա թե ինչու ֆրանսիական պետական այրերը, և նրանց հավատարիմ ծառա-քարոզչությունը, որպեսզի ցույց տան թե Ֆրանսիան պատերազմ չի մղում հանուն կայսերապաշտական ընչաքաղցության, որոշեցին «վճռականությամբ և սառնասրտությամբ հակազդել ամեն մի քարոզչության, որը նպատակ է հետապնդում տկարացնել ֆրանսիական բանակի բարոյական ուժը և նրա հաղթելու կամքը»:

Այստեղ է, որ ֆրանսիական կառավարությունը և քարոզչությունը դարձյալ հրապարակ հանեցին իրենց բազմիցս ծանրակշիռ ծառայություններ մատուցած արևմտահայության ջարդերի և կոտորածների հաղթաթուղթը, որը իր մեջ, իրավամբ, պարունակում էր Ֆրանսիային այդքան անհրաժեշտ գաղափարա-քաղաքական ու ռազմական խնդիրները լուծելու գործառնությունները:

Այսպես, 1917թ. հուլիսի 7-ին Ֆրանսիայի խորհրդարանի նիստում պատասխանելով ամեն գնով հաշտություն կնքելու կողմնակից ծախ սոցիալիստ և պացիֆիստ պատգամավորներին, Ֆրանսիայի ռազմական գործոց նախարար Փոլ Փենվլեն, որը դեռ Սորբոնի հանրահայտ հավաքի ժամանակ, որպես հանրային կրթության նախարար, հիմքն էր դրել հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական պետական պաշտոնական քարոզչությանը, նորից հրապարակ բերեց արևմտահայության մարտիրոսության քարոզչական հաղթաթուղթը. «Ուրեմն, հարիր հազարներով երիտասարդ կեանքեր զոհված պիտի ըլլային, ...ուրեմն թշնամույն ձեռքն անցած մեր ազգաբանակչությունները պիղծ արջառի պես պիտի տեղա-

<sup>262</sup> Антохина – Московченко В. И., История Франции, 1870-1918гг. М., 1963, стр. 318-320.

<sup>263</sup> «Վերածնունդ», Փարիզ, Ա.տարի, 14-ը սնվտմնբնր, 1917թ., թիվ 3, էջ 76:

հանուէին, անարգուէին, չարչրկուէին, ուրեմն՝ հեռու Արևելքի մեջ՝ ամբողջ ժողովուրդ մը դահիճին մատնուած պիտի ըլլար ինչպես ոչխարներ սպանդանոցին, որպեսզի վաղը գերմանական տիրապետութիւնը գոռոզաբար յաղթանակէ աշխարհիս մեջ:

Ո՛չ, ո՛չ պարոններ, անկարելի՛է ասիկա»:<sup>264</sup>

Նույն ոգով և նույն քարոզչական նպատակադրումներից ելնելով, ֆրանսիական քաղաքական կարևորագույն անսագրերից մեկի՝ “L’Asie française”-ի տնօրեն, 1919-1921թթ. հայկական հարցը գերեզմանող գործիչներից մեկը՝ Ռոբեր դը Քեն գետեղեց «Դաշնակիցները և Թուրքիայի հետ առանձին հաշտությունը» վերտառությամբ հողվածը, ուր նա երեսպաշտության բարձրագույն դասընթացների փայլուն շրջանավարտի վարպետությամբ գաղափարապաշտական հուզաթավություն և հռետորական վերամբարձություն տալով իր խոսքին, որի բուն նպատակը Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի կայսերապաշտական շահերի և նվաճողական շահերի պաշտպանությունն էր, նախ, հարց տալիս իր գաղափարական հակառակորդներին թե « Թուրքիայից Հայաստանը ազատագրելու Դաշնակիցների ձգտումների մեջ արդյո՞ք որևէ կայսերապաշտական բան կա», և «արդյո՞ք արդար չի լինի *անմեղ զոհերի արյունով ներկված երկրի ազատագրումը*՝ նրանց կոտորողների իշխանությունից», և ապա, գալիս էր այն եզրակացության, որ ամեն գնով Թուրքիայի հետ առանձին հաշտություն կնքել պահանջողները ոչ միայն «միջազգային բարոյականության տեսանկյունից տգեղ, այլև անգործնական ծրագիր են հետապնդում»: Ուստի, Ռոբեր դը Քեն, ելնելով «ամենից հարգելի շահերից՝ մարդկության իսկ շահերից ու մտահոգությունից», գտնում էր, որ «Դաշնակիցները Թուրքիայի հետ միայն հաղթական հաշտություն պիտի կնքեն»:<sup>265</sup>

1917-1918թթ. ֆրանսիական քարոզչությունը նորից շրջանառության մեջ դնելով «բարբարոս թուրքերի կողմից հայերին ջարդելու» հաղթաթուղթը, իսկապես որ կարողացավ

<sup>264</sup> «Վերածնունդ», Ա.տարի, թիվ 3, 14-ը սեպտեմբեր, 1917թ., էջ 74-75:

<sup>265</sup> “L’Asie française”, Paris, mai-juin, pp. 6-7.

Ֆրանսիայի համար հայթայթել Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքում նրա հողային-կայսերապաշտական ձգտումները քողարկող, և Օսմանյան կայսրության ոչ թուրքական շրջանների ծրագրված անդամահատումն արդարացնող գաղափարական-քարոյական «հիմնավորումներ», և պատերազմը հաղթական ավարտին հասցնելու անհրաժեշտության «ապացույցներ»՝ հանուն «բնաջնջվող հայության ազատագրության»։ Լայնորեն օգտագործելով «կոտորածի երկիր Հայաստանի ազատագրության» հաղթաթուղթը իրենց քարոզչության մեջ, Ֆրանսիան ու բազմավորձ Անգլիան, առժամաբար գաղափարապաշտ դարձած աշխարհում՝ հաջողությամբ ետ մղեցին թե՛ համայնավարների, թե՛ ամերիկացիների, և թե՛ նրանց գաղափարակիցների հարձակումները, և կարողացան հաջողությամբ մրցակցել նրանց հետ։ Նրանց հստակացրեց շփոթեցնել և լռեցնել իրենց այն քննադատներին, որոնք Դաշնակիցներին ամբաստանում էին կայսերապաշտ պատերազմ մղելու մեջ, և նույնիսկ կարողացան գաղափարապաշտության և մարդասիրության գունավորում ու հնչեղություն հաղորդել իրենց՝ ամենևին էլ ոչ գաղափարապաշտ, ոչ մարդասեր, առավել ևս ոչ հայանպաստ նպատակներին։

Ֆրանսիայի կայսերապաշտ նպատակները քողարկելու համար կյանքի կոչված այդ երեսպաշտ քարոզչական հմարքը Ֆրանսիային օգնեց նաև իր՝ և իր դաշնակիցների օգնությանը սպասող, նրանց աջակցությամբ Հայաստանի ազատագրմանը հավատացող, և նրանց հետ համագործակցող հայության մեկ սովոր հատվածին գամված պահելու իրենց սայլին, քանզի այդ խաբեպատիր քարոզչությունը հայ ժողովրդի այդ հատվածի մոտ ստեղծում էր այն թյուր և իրականությունից շատ հեռու համոզմունք ու հավատը, որ «Հայաստանի մեջ կատարված հակամարդկային հրեշավոր եղեռնի մասին հիշելով, Ֆրանսիայի պետական այրերը եղբայրական նոր կապ են ստեղծում ֆրանսիական մեծ ազգի ու մեր հինավուրց փոքրիկ ժողովրդի միջև», որ Ֆրանսիան ու նրա դաշնակիցները «հանուն մեր բոլոր մեռելներուն և հանուն Սուրբ Դատին անթիվ մարտիրոսներուն չեն գործի այն դավաճանությունը, որպեսզի առանց արդարության գործն ամբողջապես կայտարելու, ա-

ռանց գերման և թուրք դահիճների պատուհասման, առանց հատուցման ու առանց պատժի, հապճեպ հաշտություն կնքեն մարդկությունն անպատված Գերմանիայի և Թուրքիայի հետ»։<sup>266</sup>

Եվ ինչպես վկայում էր Փ. Փենվելի գրասնյակի պետ Պ. Բուրգինյոնը, «Ֆրանսիայի պետական այրերը հայության անունից արվող նման ուղերձները ընդունում էին մեծ հաճույքով ու գոհունակությամբ»։<sup>267</sup>

Առաջին հերթին Ֆրանսիայի կայսերապաշտ շահերը պաշտպանելու շահագրգռվածությամբ, և ամենևին էլ ոչ թե ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ ունեցած անհանգստությամբ էր բացատրվում այն փաստը, որ ֆրանսիական պաշտոնամետ մամուլը, «ողջամիտ» ու «խոհական» եզրերով գնահատեց Կովկասահայոց որդեգրած վերաբերմունքը դեպի պատերազմը, և մեծ գոհունակությամբ թարգմանեց ու տարածեց, նախ, Թիֆլիսի ազգային Բյուրոյի բանաձևը, որը «դուպլի տիրական խնդիր համարում էր թշնամու նկատմամբ վճռական հաղթանակ տանելու համար ամեն տեսակ զոհողությունների անհրաժեշտությունը», և ապա Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվիրակության ողջույնի ուղերձը՝ Ժամանակավոր կառավարության Թիֆլիսի ներկայացուցիչներին, ուր ասվում էր. «Այս վերին աստիճանի կրիտիկական և սպառնալից պահին հայ հոգևորականությունը, հայոց ազգային դեմոկրատական եկեղեցին իր բարոյական-քաղաքացիական և նվիրական պարտքն է համարում աշխատել արտաքին թշնամուն հաղթելու ուղղությամբ, քարոզելով նվաճված ազատությունն ամրապնդելու անհրաժեշտությունը»։<sup>268</sup>

Անշուշտ, ռուսական հեղափոխության առաջին օրերից հրապարակ նետված «Հաշտություն առանց կցումների և առանց ռազմատուգանքների» սկզբունքի, և դեռ 1917թ. հունվարին ԱՄՆ-ի նախագահ Հ. Վիլսոնի կողմից առաջ քաշված «Խաղաղություն առանց հաղթության» բանաձևի դեմ համառ և

<sup>266</sup> «Վերածնունդ», Ա տարի, 1917թ., թիվ 2, 14-րդ օգոստոսի, էջ 52-53:

<sup>267</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>268</sup> «Վերածնունդ», Ա տարի, Փարիզ, 14-րդ հուլիսի 1917թ., թիվ 1, էջ 16-17:

անգիջում պայքար մղելու անհրաժեշտությամբ էր թելադրված այն փաստը, որ ֆրանսիական մամուլը, ելնելով Ֆրանսիայի պետական տեսակետների պաշտպանության թելադրանքից, առանց որոշակի ու հստակ հայտարարություն անելու Հայաստանի ապագայի մասին, «օրինակելի ճշտապահությամբ և մեկ կենտրոնէ լարված բազմերախ մեքենայի կարգապահութեամբ կհնչեցնէ միևնույն նոթը՝ բառերի ավելի կամ պակաս տարբերութեամբ, որ Հայաստանը չի կարելի վերադարձնել թուրքերի արյունոտ բռնակալութեան... և գազանաբարո մի ժողովրդի կամայականութեան...»<sup>269</sup>

Հայոց ցեղասպանության ֆրանսիական քարոզչության խոհանոցի, նրա ընթացքի և կիրառման պատկերը բացահայտող փաստաթղթերի ու իրողությունների մանրակրկիտ ու առարկայական ուսումնասիրությունն ու վերլուծությունը մեզ բերում են այն հաստատ համոզմանն ու եզրահանգմանը, որ Ֆրանսիան, այլևայլ գործոնների ու միջոցների հետ մեկտեղ, հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչական բազմաբնույթ և բազմագործառնույթ ներուժն օգտագործեց ամենից առաջ ֆրանսիական «ազգի սրբազան միասնականությունը» ամրապնդելու և դրան սպառնացող վտանգները չեզոքացնելու նպատակադրումներին հասնելու համար:

Բանն այն էր, որ 1914 թվականի աշնանն արդեն «շովինիստական շնուքը արագորեն ցրվում էր և շատ արհմիություններ և սոցիալիստական կուսակցության կազմակերպություններ սկսեցին «հանդես գալ սեփական ղեկավարության, «դասակարգային հաշտության» և «ազգի սրբազան միասնության» դեմ:

Պատերազմի տարիներին Ֆրանսիայում իր քարոզչական գործունեությունն ակտիվացրեց գերմանական հետախուզությունը, որը ձգտում էր ազդել Ֆրանսիայի հասարակական կարծիքի վրա: Նրա գործակալները կաշառում էին 800.000 օրինակով լույս տեսնող ազդեցիկ «Journal» ամենօրյա թերթի հրատարակիչներին և խմբագիրներին: Անարխիստական «Bonnet rouge» («Կարմիր գլխարկ») թերթի խմբագիր Վիգոն և

նրա աշխատակից Դյուվալը մեծ գումարներ էին ստանում... գերմանական հետախուզությունից»<sup>270</sup>:

Ֆրանսիայի քաղաքական ղեկավարությանը լրջորեն անհանգստացնող և «ազգի սրբազան միասնությունը» սպառնացող այդ և նման երևույթների մասին Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեն տագնապով գրում էր իր հուշագրում. «Վիվիանին ինձ զեկուցեց պարլամենտում և բնակչության մեջ իրեն զգացնել տվող դժգոհության մասին: ...Մեծացել է ինձ հղված սպառնալիքներով և վիրավորանքներով լի նամակների թիվը. «Մենք խաղաղություն ենք ուզում, – գրում են ինձ: Հակառակ դեպքում զգուշացեք հուլիսի 14-ից – հեղափոխությունից: Ձեզ հետ դատաստան կտեսնեն, ինչպես որ հարկն է»:<sup>271</sup>

Եվ եթե Ժորժ Կլեմանսոն ոչ մի տարբերություն չգտնելով պատերազմի դեմ հանդես եկող Ֆրանսիայի բանվորների, պատերազմից հոգնած զինվորների և գերմանական լրտեսների միջև, պահանջում էր անողորք «դատաստան տեսնել ինչպես մեկի, այնպես էլ մյուսների նկատմամբ»<sup>272</sup>, ապա Ֆրանսիայի նախագահը և կառավարությունը, սկզբունքորեն դեմ չլինելով պայքարի այդ մեթոդներին, այդուհանդերձ կարևորում էին նաև պայքարի մյուս միջոցների՝ գաղափարա-քարոզչական ազդեցության դերը, որպեսզի «խանգարվեր և արգելվեր *ազգի ոգու անկման տարածումը*», քանզի նրանք շատ լավ հասկանում էին, որ «*եթե ազգի կամքը սասանվի, ապա դա Ֆրանսիայի մահը կլինի*»:

Ահա թե ինչ խնդիրներ լուծելու նպատակներով «Ֆրանսիայի ազգային ոգու և կամքի ժամապահների» դերակատարությունը ստանձնած պետական այրերն ու կառույցները կարևորեցին և հետևողականորեն իրականացրին հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությունը, որպեսզի նաև նրա օգնությամբ պայքարեին «բնակչության այդ մտածելա-

<sup>270</sup> Д. П. Пицкер, Жорж Клемансо, М. 1983, стр. 196.

<sup>271</sup> Раймон Пуанкаре, Воспоминания., 1914-1918, М. 1936, стр. 459.

<sup>272</sup> Д. П. Пицкер, ук. соч., стр. 197.

<sup>269</sup> «Վերածնունդ», Ա տարի, Փարիզ, 14-ը հուլիսի 1917թ., թիվ 1, էջ 20-22:

կերպի դեմ և պահպանեին նրա *ոգու առույգությունը*<sup>273</sup>:

Խոսելով ֆրանսիական «ազգի սրբազան միաբանությունն» ապահովելու խնդիրների մասին, որոնք կայսերապաշտական նպատակներով առաջին աշխարհամարտի մեջ մտած պաշտոնական ֆրանսիայի համար առաջնահերթային ու կենսական կրկորություն ունեին, ռազմական գործոց նախարար Փոլ Փենկվեն Ֆրանսիայի պառլամենտում 1917թ. հուլիսի 7-ին արտասանած իր ճառում առանձնացնում էր պատերազմում ֆրանսիայի հաղթանակը ապահովող հետևյալ ռազմա-քաղաքական նպատակադրումների ձեռք բերումը. ա) «կանխել ֆրանսիական ազգի խորունկ միասնությանը սպառնացող, նրան պատառ-պատառ անել ձգտող ներքին պառակտումները», որոնք «մեր թշնամիների երազն են, նրա վերջին հույսը և նենգ ձեռնարկը», բ) թշնամու «ամենից հրեշավոր և ամենից ճարտարվեստականորեն պատրաստված ոճրին դիմադրելու համար անհրաժեշտ զորությունը պետք է գտնել *բոլոր դասակարգերի միաձույլ և ինքնազոհ ճիգով* իրենց կողմից իսկ իրենց պարտադրված *խիստ ու կատարյալ կարգապահությամբ*», գ) որպեսզի ֆրանսիական ազգի ի հայտ բերված այդ «կատարյալ կարագապահությունը տևի մինչև հաղթանակի գերագույն ժամը, որքան էլ որ ծանր լինեն այն տաժանակիր նեղությունները, որ մենք դեռ պետք է կրենք», անհրաժեշտ է թույլ չտալ որպեսզի «ո՛չ մի ինքնախաբեություն, ո՛չ մի անհամբերություն, ո՛չ մի մեքենայություն կարողանան պառակտել այդ դասակարգերին», դ) անհրաժեշտ է ապացուցել ֆրանսիական ազգին, որ «բոլոր անողորմ արյունահեղությունները և ամենից ցավազին որոշումներն արվում են այն ապահովությամբ և վստահությամբ, որ տառապանքի ու արյան մեջ է ծնունդ առնում նոր *մարդկությունը*, որը լինելու է *լավագույնն ու արդարագույնը*», ե) հրամայական անհրաժեշտություն էր սեպվում անգիջում պայքարը հանուն այն բանի, որպեսզի «մտածման ո՛չ մեկ նորություն (*բոլշևիզմը* – Ե.Գ.), ո՛չ մեկ հանդգնություն չկարողանան ազդել մեր ժողովրդի՝ կռվելու կամքի վրա», որպեսզի «վճռականությամբ և պաղարյունու-

թյամբ պայքար տարվի ցանկացած *պրոպագանդայի* դեմ, որը կարող է նպատակ ունենալ տկարացնելու մեր բանակի բարոյական ուժը և նրա հաղթելու կամքը»<sup>274</sup>:

Հիշատակված այս կարևորագույն ռազմա-քաղաքական բնույթի խնդիրների լուծմանն էլ ուղղորդվեցին Ֆրանսիայի կողմից հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության ողջ ներուժը, հազարավոր մարդկանց «մտքի ու սրտերի» վրա ազդելու, նրանց գործունեությունը և վարքագիծը ճշտելու ու հստակեցնելու, պատերազմի բնույթն ու նպատակադրումները «սրբացնելու», և այդ պատերազմը որպես «արդարագույնը» ներկայացնելու նրա բազմազորածառնության կարողունակությունները:

Ֆրանսիական «ազգի սրբազան միությանը» սպառնացող վտանգը ի դեմս հակապատերազմական, պացիֆիստական տրամադրությունների ու քարոզչության, այն աստիճանի էր հասել, որ Ռայմոն Պուանկարեն 1915թ. դեկտեմբերին իր «Օրագրում», նախ, արձանագրում էր, որ Ֆրանսիայի «մի շարք փոքր թերթերում ուրվագծվում է խաղաղասիրական պայքար մը, որը թափանցում է երեսփոխանական ժողովի նրբանցքներից ներս: Իսկ կարգ մը շրջանակներու մեջ մը կխտսին, թե Ֆրանսիայի երեսփոխաններից ոմանք... համաձայն են, Իտալիայի խաղաղասերների հետ, *հակապատերազմական պայքար մղելու*»,<sup>275</sup> և ապա, առաջնահերթ խնդիր էր համարում «քաջություն ու բարեացկամություն ունեցող մարդկանց հետ համատեղ պայքարը ամեն տեսակ *վհատեցուցիչ պրոպագանդի դեմ*»<sup>276</sup> Գաղտնիք չէր, որ ֆրանսիական պացիֆիստական շարժման առավել հայտնի և ազդեցիկ գործիչների ճնշող մեծամասնությունը պատկանում էր ֆրանսիական սոցիալիստների ձախ թևին, որոնք, ինչպես վկայում էր Հրանտ Ալեանաքը 1915թ. օգոստոսի 22-ին Թիֆլիսի «Հորիզոն» թերթում իր կողմից զետեղված «Նամակ Ֆրանսիայից» հոդվածում, «հակառակ Լուվենի ոճիրներուն և Ռ-էնսի ամենօրյա նա-

<sup>273</sup> Раймон Пуанкаре, Воспоминания., М. 1936, стр. 406, 443; 459.

<sup>274</sup> «Վերածնունդ», Ա տարի, Փարիզ, 14 սեպտեմբեր 1917թ., թիվ 3, էջ 75-76.

<sup>275</sup> «Հորիզոն» Մալոնիկ, 4-ը ապրիլի 1931թ.:

<sup>276</sup> «Հորիզոն» Մալոնիկ, 3-ը հունիսի 1931թ.:

հատակության, դեռ կհամառեին իրենց այլասիրական երագներուն հաստատ մնալ հանուն սկզբունքներու, որոնք պետք է վերագնահատումների ենթարկել:<sup>277</sup>

Ֆրանսիայի պետական քարոզչությունն «այդ պառակտումներուն մեջ գերմանական ներշնչման ու ոսկու կատարած դերը» մատնանշելուց հետո, նրանց վտանգավոր հայացքների դեմ պայքարելու, «ընկերվարական շրջանակներին իրենց մինչպատերազմական տրամադրություններից և ցնորքներից բժշկելու» նպատակներով, սկսեց լայնորեն գործի դնել նաև հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչական ներուժն ու կարողունակությունները: Եվ որպես արձանագրված փաստ պետք է դիտվի այն իրողությունը, որ Ֆրանսիայի պետական քարոզչությունը կազմակերպող ու ղեկավարող կազմակերպություններն ու պատկան մարմիններն, ի կատարումն պրեզիդենտ Պուանկարեի «ամեն տեսակ վիատեցուցիչ քարոզչության դեմ» անգիջում պայքար մղելու պահանջի, հայոց ցեղասպանության քարոզչության ողջ համալիրի դիպուկ նշանառությամբ արված հարվածների շնորհիվ, ոչ միայն կարողացավ զգալիորեն չեզոքացնել հակապատերազմական «վիատեցուցիչ» տրամադրությունները, և «մասամբ բժշկել նույնիսկ ընկերվարական շրջանակները», որոնք՝ «հատկապես երիտասարդ տարրերը ստվար թիվ էին կազմում սոցիալիստական կուսակցության և սոցիալիստ երեսփոխանների մեջ»,<sup>278</sup> այլև կարողացան հայ ժողովրդի գլխին եկած դժբախտության հմուտ քարոզչությամբ հասնել այն բանին, որ երեկվա շատ համոզված պացիֆիստներ դարձան «ճնշված ու բռնադատված ժողովուրդների իրավունքների ասպետական պաշտպան» Ֆրանսիայի մասնակցությունն աշխարհամարտին արդարացնող հայացքների առավել հետևողական կողմնակիցները: Այս առումով, խիստ բնութագրական է Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության ձախ թևի ճանչաված առաջնորդ, հակապատերազմական տրամադրություններով հայտնի *Մարսել Կաշենի* օրինակը, որը, անկասկած, հենց հայկական մարտի-

րոսության, կոտորվող հայ ժողովրդին օգնելու, նրա համար «տճրագործ թշնամու» հետ մինչև հաղթանակ պատերազմ մղելու քարոզչության արդեցության տակ էր, որ արտահայտելով արդեն իր նման մտածող երիտասարդ, նախկինում հայության մասին «աղոտ գաղափար» ունեցող սոցիալիստներից շատերի տեսակետը, 1915 թվականի դեկտեմբերի 19-ին դիմեց Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործոց նախարար Ար. Բրիանին, որտեղ, նախ, տեղեկացնում էր, որ «Ֆրանսիայի խորհրդարանի արտաքին գործոց հանձնաժողովը հայ ժողովրդի ամբողջական բնաջնջման մասին առաջինը տեղեկացվել է պատվարժան պարոն Ավ. Սիարոնյանի կողմից: Ցավոք, շուտով նշանավոր հայ գործչի տեղեկությունը միայն հաստատվեց ամերիկյան հյուպատոսների և միսիոներների զեկուցումներով, շվեյցարիացի ականատեսների վկայություններով», և ապա գտնելով, որ «*ոչ ոք չի կարող* անտարբեր մնալ բնաջնջման դատապարտված ժողովրդի ճակատագրի հանդեպ», նա անհրաժեշտ էր համարում, որպեսզի «Ֆրանսիան *բողոքի իր ձայնը* բարձրացնի այդ *դաժան ոճիրների դեմ*»:<sup>279</sup>

Ֆրանսիական հասարակության «խորունկ միությունը» և ժողովրդի «կատարյալ և միաձույլ կարգապահությունը» մինչև «հաղթանակի գերագույն ժամը» ապահովելու գործում հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության ներուժի օգտագործումը տնօրինող ֆրանսիական ուժերն ու կառույցները, պատերազմի ողջ ընթացքում, դրանք հետևողականորեն ուղղեցին նաև ֆրանսիական հասարակության ամենագալուն և գաղափարական ազդեցություններին հեշտությամբ հակվող հատվածի՝ ուսանող երիտասարդության և ֆրանսիական դպրոցների բարձր դասարանների աշակերտության «ժայրենասիրական» և «մարդասիրական» դաստիարակության խնդիրները լուծելուն:

Ուսանող երիտասարդության շրջանում, որը անշուշտ օրեցօր հյուծվող և թվապես նվազող Ֆրանսիական բանակի համալրման կարևորագույն աղբյուրն էր, հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության կազմակերպման գոր-

<sup>277</sup> «Հորիզոն» Թիֆլիս, 22 օգոստոսի, 1915թ.:

<sup>278</sup> «Հայրենիք», Բոստոն, 31-ը մարտի, 1931թ.:

<sup>279</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 153, p. 149.

ծում՝ իր ակտիվությամբ և հետևողականությամբ, առանձնա-  
նում էր «Փարիզի ուսանողաց ընդհանուր ընկերությունը», որը  
ոչ միայն ակտիվորեն մասնակցում էր Սորբոնում և այլուր  
կազմակերպվող բոլոր քարոզչական միջոցառումներին ու  
հանդեսներին, այլև ինքն էր դառնում բազմաթիվ հանդիպում-  
ների, բանախոսությունների և հավաքների նախաձեռնողն ու  
անցկացնողը, որոնց մասնակցելու էին հրավիրում Ֆրանսիայի  
պետական այրերի, ճանաչված հայասեր գրողների, հրապա-  
րակախոսների ու գիտնականների, ինչպես նաև հայության  
ներկայացուցիչների:<sup>280</sup>

Արդեն 1917թ. սկզբներին, անշուշտ, ոչ առանց ֆրանսի-  
ական շահագրգիռ կազմակերպությունների բարեհաճ օրհնու-  
թյան և աջակցության, Փարիզում լույս տեսավ «տիկին Աննա  
Ազարյանի հրատարակած “L’ Arménie” անունը կրող նոր  
գրքույկը, որը նվիրված էր «պատերազմում զոհված Ֆրանսիա-  
յի զավակներին: Ֆրանսիայի Հանրային կրթության նախարա-  
րը՝ տիկին Մոնիկը այդ գրքույկը բաշխել կուտայ Փարիզի բոլոր  
դպրոցներին մեջ: Բաշխումը հրամայող նախարարական  
շրջաբերականին մեջ ըսված է, թե վարժապետներն այդ գրքույ-  
կի մեջ պիտի գտնեն զրույցների համար նյութեր, որ իրենց ա-  
շակերտի սրտին մեջ համակրություն պիտի ծնեցնէ այնպիսի  
ժողովրդի մը հանդեպ, որի մարտիրոսացումը տարիներ ի վեր  
կանոնավորապես կազմակերպված են մեր բժնամիները»:<sup>281</sup>

Նույն նպատակադրումներից ելնելով, մեզ արդեն ծա-  
նոթ “France-Arménie” կազմակերպության քարոզչական  
հանձնաժողովի հանձնարարությամբ ու պատվերով ճանաչ-  
ված հայագետ և Փարիզի «Արևելյան Լեզուների» ինստիտու-  
տի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Անտուան Մեյյեն,  
“Le Revue Franco- Etrangère” հանդեսի 1917թ. մարտ-ապրիլ  
համարում «գետեղեց Հայոց պատմության և Հայկական Դա-  
տի մասին իր համառոտ և ամփոփ տեսությունը, որը պետք է  
ծառայէ իբրև առաջնորդ ‘France – Arménie’ կոմիտեին կողմէ  
ֆրանսիական դպրոցներու մեջ կազմակերպվելիք դասախո-

<sup>280</sup> «Մշակ», 12-ը օգոստոսի, 1915թ.:

<sup>281</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 22-ը հունիսի, 1917թ.:

ությունների շարքի համար»:<sup>282</sup>

Հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչու-  
թյունը որդեգրելու առաջին իսկ պահից Ֆրանսիայի քարոզչա-  
կան հզոր համալիրը տնօրինող ուժերն՝ այն լայնորեն օգտա-  
գործեցին Ֆրանսիայի համար կենսական նշանակություն ու-  
նեցող այնպիսի ռազմական ու քաղաքական խնդիր լուծելու  
նպատակով, ինչպիսին էր անգիջում պայքարը ֆրանսիական  
բանակի «բարոյական ուժը և անոր յաղթելու կամքը տկարաց-  
նելու ձգտող ամեն մի փրոփականտի չեզոքացումը», և այն հա-  
վատի ամրապնդումը, որ «այս անողորմ արյունահեղություն-  
ներն ու ցավազին որոշումներն արվում են հանուն նոր, լավա-  
գույն ու արդարագույն մարդկութան»:<sup>283</sup>

Արդեն 1916թ. ապրիլին, երբ Ֆրանսիայի պետական  
քարոզչությունը տնօրինող ուժերն ու մարմինները պլանավո-  
րում էին Ֆրանսիայի կողմից հայոց ցեղասպանության դատա-  
պարտման քարոզչությունը որդեգրելը պաշտոնապես ի լուր  
աշխարհին հայտատարել՝ Սորբոնի մեզ արդեն քաջածանոթ  
քարոզահանդեսի միջոցով, չնոռացան բազում այլ հրավիր-  
վածների շարքում «հարյուր տեղ հասկացնել վիրավոր զինվո-  
րականների համար»:<sup>284</sup>

Պատերազմի ողջ ընթացքում Հայոց ցեղասպանության  
մասին պատմող հրապարակումները մեծ պահանջարկ են ու-  
նեցել ֆրանսիական բանակի բարոյա-հոգեբանական վիճա-  
կով ու հայրենասիրական դաստիարակության հիմնախնդիր-  
ներով զբաղվող մարմինների ու կազմակերպությունների կող-  
մից: Այս իմաստով շատ բնութագրական է հայտնի ռազմական  
լրագրող Անրի Բարբիի հեղինակած “L’ Arménie martyre” գրքի  
օրինակը: Երբ այդ գիրքը 1917թ. սկզբներին լույս տեսավ  
Փարիզում, ֆրանսիական բանակին «Գրքեր մատակարարող  
ընկերությունը» անմիջապես, «արժեքավոր գտնելով գրքի նյու-  
թը, խնդրեց իր համար պահել այդ գրքի որքան հնրավոր շատ  
օրինակներ, որպեսզի դրանցից օգտվեն ռազմաճակատի սպա-

<sup>282</sup> «Վերածնունդ», Ա. տարի, 1917թ., թիվ 1, 14-ը հունիսի, էջ 27:

<sup>283</sup> «Վերածնունդ», Ա. տարի, 1917թ., թիվ 3, 14-ը սեպտեմբերի, էջ 75:

<sup>284</sup> «Արև», Բաքու, 5-ը ապրիլի, 1916թ.:

*ները, որոնք ընթերցանության գրքեր են պահանջում»:*<sup>285</sup>

Դարձյալ պատերազմի ողջ ընթացքում ֆրանսիական բանակում լայնածավալ ազիտացիոն-քարոզչական և նրան «հակապատերազմական ցնորային տրամադրություններից հեռու պահելու և «բժշկելու» կոչված “Les Efforts de la France et des ses Alliés” հզորագույն քարոզչական կազմակերպության վարչությունը ֆրանսիական բանակի սպաների ու զինվորների համար պարբերաբար կազմակերպում էր բանախոսություններ հայոց եղեռնի, Հայաստանի, և, անշուշտ, «փրկարար ու ազատարար Ֆրանսիայի» առաքելության վերաբերյալ: Այդ կարգի բանախոսություններ կազմակերպվում էին անգամ 1918թ. հոկտեմբերի վերջերին, երբ պատերազմի ավարտին հաշված օրեր էին մնացել:

Այսպես, 1918թ. հոկտեմբերի 22-ին Ա. Չոպանյանը այդ կազմակերպության վարչության կողմից հրավիրվեց Հայաստանի մասին բանախոսելու ֆրանսիական բանակի զինվորների հավաքույթներում: Միլի հավաքավայրում, 800 զինվորների ներկայությամբ, Ա. Չոպանյանը «հիշեց այս պատերազմում *հայ ազգի կրած զոհաբերությունները, նրա հույսերն ու քաղձանքները*:

Նախագահող հրամանատարը գոչելով «Կեցցե՛ Հայաստանը» դարձավ ներկաների զգացմանց թարգմանը:

Նույն օրը Չոպանյանը կրկնեց իր բանախոսությունը Քառանսի զինվորական հիվանդանոցներում, ուր զինվորները մեծ հիացմունքով լսեցին հայկական *դյուցազներգության և մարտիրոսության սյարգումը*»:<sup>286</sup>

Հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական լայնամասշտաբ քարոզչությունն ու նրա առանցքը կազմող բոլոր կոնցեպցիաները, Ֆրանսիան կյանքի էր կոչել և իրականացնում էր նաև դեպի հայ ժողովուրդը ունեցած իր շատ որոշակի ռազմա-քաղաքական նպատակադրումներին հասնելու մտադրությունից, թելադրանքներից ու հրամայականներից

<sup>285</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 26-րդ օգոստոսի, 1917թ.:

<sup>286</sup> «Վերածնունդ», Փարիզ, Բ. տարի, թիվ 24, 14-րդ դեկտեմբերի 1918թ., էջ 477:

ելնելով, քանզի հայ ժողովրդի ռազմական ու քաղաքական դիրքորոշումներից, կողմնորոշումներից ու որդեգրումներից շատ բանով կախված էր Ֆրանսիայի որոշակի ու ռեալ ռազմա-քաղաքական ձգտումների բախտը, նրանց լինել-չլինելու խնդիրը:

Ծավալելով Մեծ եղեռնի դատապարտման լայնամասշտաբ և արհեստավարժ քարոզչությունը, Ֆրանսիայի պետական այրերը, ի դեմս վարչապետ Ար. Բրիանի, որը 1916թ. հոկտեմբերի 14-ին հայոց ցեղասպանության հետ կապված, բացառապես քարոզչական նպատակներով արված իր հայտարարության մեջ, ուղղակի վստահեցնում էր, որ «հայ ժողովրդին իր կարեկցանքն ու խորը համակրանքը հայտնելու ոչ մի պատեհություն բաց չթողնող Ֆրանսիան... չի մոռանալու արդարության և իրավունքի մարտիրոս հայ ժողովրդին բաժին ընկած փորձությունները», և ապա խոստանում էր, որ իր դաշնակիցների հետ մեկ տեղ, երբ «հնչի օրինական փոխհատուցման ժամը՝ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնել, որպեսզի նրա համար երաշխավորի խաղաղ և առաջադիմական կյանք»:<sup>287</sup> Իհարկե, Մեծ եղեռնի դատապարտման ֆրանսիական քարոզչության և Ֆրանսիացի բարձրաստիճան պետական այրերի բոլոր նմանատիպ վստահեցումներն ու երաշխավորությունները կոչված էին ծառայելու Ֆրանսիայի երեսպաշտ, խարդախ ու նենգ նպատակներին, որոնց նա հետամուտ էր հասնելու ի հաշիվ, և շատ դեպքերում ի վնաս «արդարության և իրավունքի մարտիրոս» հայ ժողովրդի: Նրանց նպատակն էր, հանուն իրենց և միայն իրենց շահերի հասնել այն բանին, որ հայ ժողովուրդը՝ ի դեմս իր հեղինակավոր և ազդեցիկ քաղաքական գործիչների ու ուժերի, նախ ինքը հավատար, որ Ֆրանսիան ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի անկեղծ ու նվիրյալ պաշտպանն է, և նրա իրավունքների համար պատերազմող երկիրը, երկրորդ, որ հայ ժողովուրդը ինքն՝ ուրիշներին համոզեր ու հավաստեր, որ Ֆրանսիան հայ Դատի նման արդար ու արյունոտ դատերի համար

<sup>287</sup> “Le Temps,” 8 novembre, 1916, տե՛ս նաև “Les Grandes Puissances... Opt. cit., doc. N 281, pp. 260-261.



կովող դաշտապաշպանն է: Ֆրանսիայի կառավարող շրջանները շատ լավ գիտակցում էին, որ առանց հայ ժողովրդի անունից արվող նման հավաստիացումների, և առանց նրա կողմից իրեն տրված «*վստահության քվեի*», իր ողջ գաղափարա-քարոզչական պայքարը Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ, պարզապես հաջողության ոչ մի երաշխիք ունենալ չէին կարող, իսկ նրա կողմից թափող ջանքերն ու հավաստիացումներն այն մասին, թե ինքը պայքարում է հանուն անիրաված մարդկության, փոքր ու ճնշված ժողովուրդների իրավունքների համար, պարզապես մերկապարանոց, անհրաժեշտ և պահանջվող համոզվելությունն ու ազդեցությունը չունեցող հայտարարություններ կլինեին:

Եվ իսկապես, Ֆրանսիան, և իր հզոր քարոզչական ողջ ինդուստրիան կարողացան հասնել այն բանին, որ հայ ժողովրդի քաղաքական ու ազգային ղեկավարության գրեթե բոլոր ազդեցիկ ու կշիռ ունեցող ուժերն ու գործիչները, ցանկալին ընդունելով որպես իրականություն, սկսեցին, նախ, իրենք հավատալ, և ապա, մյուսներին հավատացնել, որ Ֆրանսիան, դրսևորելով «քաղաքացիական վսեմ առաքիճություն, հայկական տառապանքը խառնեց իր ցավին», և որ «պաշտոնական Ֆրանսիան ուզում է փրկել տարաբախտ հայ ցեղը իր դարավոր մարտիրոսությունից»,<sup>288</sup> որ «հայ ազգը միայն խորին երախտագիտության զգացմունք կարող է տաժել դեպի... վեհանձն, ազնիվ և ասպետական Ֆրանսիան», որ «սոսկալի աղետների ենթարկված, տառապյալ և հալածյալ հայ ժուրվուրդը ներկա պատերազմում իր փրկությունն որոնում է Ֆրանսիայի և նրա դաշնակիցների հաղթության մեջ»,<sup>289</sup> որ հայ ժողովրդը, ինչպես այդ մասին 1916թ. նոյեմբերի 8-ին, գրում էր Պողոս Նուբարը Ֆրանսիայի վարչապետ Ար. Բրիանին ուղղված իր շնորհակալական նամակում, «իր բախտը կապել է Իրավունքի, Արդարության և Ազգությունների սկզբունքի համար պատերազմող Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների հետ», որ «մենք անսասան *վստահություն* ունենք ճնշված ժողովուրդներ-

րի ավանդական պաշտպան Ֆրանսիայի նկատմամբ», որ «Ֆրանսիան... չի վարանի իր հովանու ներքո վերցնել ջարդված հայ ժողովրդին և նրան կերաշխավորի այն տեղն ու դերը քաղաքակիրթ աշխարհում, որոնց նա արժանի է իր անցյալով, և իր ազգային հատկություններով»,<sup>290</sup> և վերջապես, որ «հայերը այսօր չունեն *ավելի լավ բարեկամ քան Ֆրանսիան* ազատության այդ անձնագրի *ախտյանը*»:<sup>291</sup>

Ֆրանսիան, առանց խղճի խայթ զգալու, անտեսելով այն ողբերգական իրողությունը, որ արևմտահայության ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը տվել էր միլիոնավոր զոհեր, և գրեթե արյունաքամ էր եղել, մտքի ծայրով անգամ չանցկացնելով խնայելու ու պահպանելու անմարդկային մեծագույն ոճրի զոհ դարձած ժողովրդի արյունը, նա նենգորեն ձգտում էր, հանուն իր և իր Դաշնակիցների շահերի, օգտագործել արևմտահայության հրաշքով փրկված մնացորդների, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Ամերիկա մայրցամաքի հայկական սփյուռքի և արևելահայության մարդկային և ռազմական ներուժն ու կարողունակություններն:

Այսպես, երբ 1918թ. հունվարի 19-ին Հայոց Ծննդյան տոնի առթիվ Ազգային Պատվիրակության Նախագահ Պողոս Նուբար Փաշայի և Փարիզի «Հայ կամավորների կոմիտեի» նախագահ Ս. Սվաճյանի դիմումների շնորհիվ, ֆրանսիական կառավարությունն արտոնեց ֆրանսիական ճակատի վրա կռվող 60-ից ավելի հայ կամավորներին 48 ժամյա արձակուրդով ժամանել Փարիզ, “Hotel Terminus”-ի մեջ նրանց պատվին կազմակերպված ճաշկերույթին, որպես ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ շտապեց մասնակցել Տրապիզոնում Ֆրանսիայի նախկին հյուպատոս, իսկ այդ օրերին արտաքին գործոց նախարարության մեջ թրքահպատակ հայերի գործերի պատասխանատու *Ֆերդինան Վիեթթը*, որը իր ճառում, անշուշտ, չվարանեց ներկայացնել ֆրանսիական պաշտոնական քարոզչության կեղծ ու երեսպաշտ` հայ կամավորներին «մոլորեցնելու» և նրանց մարտական ու բարոյական ոգին

<sup>288</sup> Ավ. Ահարոնյան, «Ցավը», «Հորիզոն», Թիֆլիս, 20-ը օգոստոսի, 1917թ.:

<sup>289</sup> «Աշակ», 29-ը հոկտեմբերի, 1916թ.:

<sup>290</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 292, p. 266-267.

<sup>291</sup> «Աշակ», 21-ը օգոստոսի, 1916թ.:

քարձր պահելու ողջ «զինանոցը» :

Նա, նախ, ընդգծեց, որ «Դուք, *Իրավութի և Արդարության Հայրենիք*» Ֆրանսիային անգամ մը ևս գեղեցիկ կերպով ապացուցեցիք Ձեր ցեղին քաջության և անձնվիրության հատկությունները». և ապա հավաստիացրեց, որ «Ֆրանսիան *միշտ համակիր է եղած հայ ազգին*, իսկ հիմա, տեսնելով այս սրտազին խանդավառությունն ու անձնվիրությունը, որով Դուք եկած եք մասնակցելու մեր Հայրենիքի պաշտպանութեան, *ավելի քան երբեք կսիրէ և կհարգէ Ձեր ազգը, և ջերմորեն պիտի պաշտպանէ Ձեր Դատը*, երբ գա *հաշվեհարդարի ժամը*».<sup>292</sup>

Ցավալի, սակայն անհերքելի փաստ է, որ Ֆ. Վիեթի, ֆրանսիական այլ պետական այրերի, և նրանց հարյուրավոր ու հազարավոր հրապարակումներով, միջոցառումներով և ձեռնարկումներով երկրորդվող ֆրանսիական պետական քարոզչության մասնատիպ հավաստիացումներին և վստահեցումներին հավատացին ոչ միայն “Hotel Terminus”-ում հավաքված 60 հայ կամավորներն ու նրանց անունից կրակոտ ճառով հանդես եկած կամավոր Տիրացը, այլև հազարավոր այն հայ կամավորները, որոնք հայ քաղաքական կուսակցությունների ակտիվ մասնակցությամբ և կազմակերպական-քաղաքական ղեկավարությամբ, մտան ֆրանսիական բանակի շարքերը, հաստատ համոզված լինելով, որ «*կռվելով Ֆրանսիայի Դատին համար, իրենք նույն ատեն կկռվեն Հայկական Դատին համար, որոնք միևնույն Դատն են*».<sup>293</sup> Արդյունքում, իր սակավացած արյան երակները մեկ անգամ ևս բացող հայ ժողովուրդը, հավատալով ֆրանսիական նենգ ու տմարդի քարոզչությանը, ոչ մի շոշափելի և իրական ձեռքբերում չունեցավ իր ազգային իղձերի իրականացման առումով, իսկ ֆրանսիան գոհունակությամբ կարող էր շփել իր ձեռքերը, քանի որ զբաղվելով հայոց ցեղասպանության դատապարտման լայնամասշտաբ, երեսպաշտ քարոզչությամբ, նա հայ ժողովրդից *ստացավ այն ամենը*, ինչի համար նա այդքան քարոզչական ջանքեր թափեց ողջ պատերազմի ընթացքում:

Այս իմաստով կարելի է ամբողջովին համաձայնվել 1939թ. Ստ. Չաղեյանի կողմից գրված «Հայաստանը և Արևմտյան տերությունները» հոդվածում տեղ գտած և պատմական ճշմարտությանը լիովին համահունչ այն եզրահանգումների հետ, որ «Անտանտը՝ Անգլիան և Ֆրանսիան, ձգտելով իրադրությունն օգտագործել իրենց շահերի համար, նորից իրենց շոշափուկները սկսեցին տարածել դեպի հայ ժողովուրդը, և հանդիսավորությամբ հայտարարեցին, որ հայ ժողովուրդը կստանա իր ազատությունն ու անկախությունը, եթե հաղթանակի «իրավունքն ու ազատությունը», եթե հայ ժողովուրդը օգնի Անտանտին», որ «Անգլիան և Ֆրանսիան կարողացան այդ պահին, լիովին և ամբողջապես, իրենց շահերի համար օգտագործել հայերի հոգեվիճակը և տրամադրվածությունը», որ «հայ կամավորները միավորվելով լեգեոններում, կռվում էին ցանկալի ազատությունն իրենց ուժերով ձեռք բերելու համար», որ «հայերը հավատալով արևմտյան տերությունների խոստումներին» և կեղծ քարոզչությանը, «գնացին մի ուղիով, որը նրանցից պահանջեց անլուր գոհողություններ, այն ժամանակ երբ այդ պայքարն Անտանտի երկրները սնուցեցին միայն հանդիսավոր խոստումներով, և, ի վերջո, Հայաստանին թողեցին մեն-մենակ Թուրքիայի հետ»:<sup>294</sup>

Եվ իսկապես, ընդհուպ մինչև աշխարհամարտի վերջին օրերը ցեղասպանության զոհ դարձած և գործուն ռազմա-քաղաքական օգնության կարիքն ունեցող հայ ժողովրդին շռայլ խոստումներ, հավաստիացումներ պարունակող հայտարարություններ անելու գործում չզլացող պաշտոնական Ֆրանսիան և նրա քարոզչությունը 1918 թվականի զինադադարից հետո «ասես կախարդանքով իրենց հիշողությունից ջնջեցին ինչպես 1915թ. մայիսին Անտանտի երկրների համատեղ «Հայտարարության» մեջ Թուրքիայի հասցեին արված սպառնալիքները, այնպես էլ հայ ժողովրդին օգնելու մասին արված բազմապատիկ սրտակից հայտարարություններն՝ արձանագրելով միայն

<sup>292</sup> «Վերածնունդ», Փարիզ, 1918թ., N 4, 14-ը փետրվարի, էջ 78.

<sup>293</sup> «Վերածնունդ», Փարիզ, 1918թ., N 4, 14-ը փետրվարի, էջ 79.

<sup>294</sup> “Германские источники о геноциде армян”, Ер. 1991, ст. 330.

մերժումներ»<sup>295</sup>:

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Անահիտ Տեր-Մինասյանը նկատի ունենալով մեծ տերությունների՝ այդ թվում նաև Ֆրանսիայի կողմից հայոց ցեղասպանության և Հայկական հարցի չարաշահումը և անխնա օգտագործումը՝ քարոզչական նպատակներով, ցավով փաստում էր. «Պամֆլետները, գրքույկները, միտինգները, ճառերը և բանավեճերը մշտապես ուղեկցել են Հայկական հարցին՝ նրա բոլոր էտապներում, սակայն Մեծ Տերություններն երբեք ոչ մի արդյունավետ քաղաքական քայլ չձեռնարկեցին, քանի որ նրանք ավելի շուտ մտածում էին Օսմանյան կայսրությունում իրենց կապիտալներն արդյունավետորեն ներդնելու, քան թե հայ ժողովրդին օգնելու մասին»<sup>296</sup>:

### Գլուխ III. Ֆրանսիան և հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությունը չեզոք երկրներում

#### §1. Ֆրանսիայի գաղափարա-քարոզչական գործունեությունը ԱՄՆ-ում և հայոց ցեղասպանությունը

Պատերազմի սկզբնական շրջանում Ֆրանսիան և նրա «սրտակից» դաշնակից Մեծ Բրիտանիան, տեղի տալով մախորդ պատերազմների փորձառության իներցիայի ուժին, քիչ ջանք գործադրեցին ժողովուրդների երևակայության վրա ազդելու համար: Մինչդեռ Գերմանիան «ի սկզբանե միլիոններ էր ծախսում իր շահերը չեզոք երկրներում՝ Ամերիկայում, Սկանդինավյան երկրներում, Բալկաններում և այլուր տարածելու համար»<sup>297</sup>:

Դեռ 1914թ. օգոստոսի 13-ին Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեն, նկատի առնելով գերմանական դիվանագիտության լայնամասշտաբ և արդյունավետ քարոզչական գործունեությունը չեզոք երկրներում, տագնապով արձանագրում էր, որ «Գերմանիան շարունակում է իրենից կախված *ամեն բան* անել, որպեսզի իր կողմը գրավի չեզոք երկրներին»<sup>298</sup>:

Սակայն արագորեն կողմնորոշվելով, թե՛ Ֆրանսիան, և թե՛ Անգլիան, նախ, «անհանդուրժելի համարեցին իրերի այն կացությունը, երբ գերմանական գործակալները անարգել շարունակեցին իրենց տեսակետներով բացատրել գործերի դրությունը», և ապա ջանք ու ճիգ չխնայեցին իրենց ռիսերիմ թշնամու ձեռքից պատերազմում հաղթելու համար իր մեջ այդքան մեծ ներուժ ունեցող բարոյա-գաղափարական գործոնը խլելու, և այն նրա դեմ ուղղված գլխավոր և ազդու զենքերից մեկը դարձնելու նպատակով: Առավել ևս, որ դրա համար, «Թայմս» թերթի ղիպուկ գնահատմամբ, «խսկապես, որ *շատ քիչ բան էր հարկավոր*. մի *բանի մտավոր շարժում կառավարության կողմից, մի քիչ կազմակերպվածություն, շատ քիչ փող, և բնակա-*

<sup>295</sup> Moussa Prince, Un génocide impuni; l' Arménocide; Beyrou, t.II, 1975, p. 325.

<sup>296</sup> Ibid., p. 325.

<sup>297</sup> «Արև», 3-րդ սեպտեմբերի, 1915թ.:

<sup>298</sup> Раймонд Пуанкаре, Воспоминания, 1914-1918, М., 1936, стр. 51.

նարար, բավականաչափ եռանդ՝ նոր եչակետով գործելու համար».<sup>299</sup>

Չեզոք երկրներին Անտանտի կողմը գրավելն իր կարևորագույն խնդիրներից մեկը սեպած ֆրանսիական դիվանագիտությունն, ամենից առաջ, իր կառավարությունից պահանջեց և ստացավ հսկայական միջոցներ՝ ակտիվ քարոզչական գործունեություն ծավալելու համար: Ինչպես վկայում է Փարիզում Մեծ Բրիտանիայի դեսպան լորդ Բերտին. «1916թ. փետրվարին Ֆրանսիայի խորհրդարանը 28 մլն ֆրանկ վարկ բաց թողեց, որը պետք է օգտագործվեր ֆրանսիական քարոզչության կողմից միայն չեզոք երկրներում: Այդ գումարները տնօրինելու հանձնարարությունը դրվեց փորձված դիվանագետ Բերտելլոյի վրա».<sup>300</sup>

Ֆրանսիան, գաղափարա-քաղաքական պատերազմի գլխավոր խնդիրներից մեկը համարելով չեզոք երկրների հասարակական կարծիքի համար մղվող պայքարը, ի դեմս ֆրանսիական մամուլի ազդեցիկ օրգանների՝ “Temps”-ի “Libre parole”-ի “Matin”-ի և այլոց, սկսեց լայնորեն օգտվել հայոց ցեղասպանության դատապարտման բազմաբնույթ ու շռայլ քարոզչական ընձեռնումներից: Այս իմաստով հիրավի ծրագրային բնույթ ունեւր “Echo de Paris” լրագրի խմբագրականներից մեկը, ո՛րը աններելի սխալ համարելով արևմտահայության ցեղասպանության դատապարտման ընձեռնած քարոյա-գաղափարական և քարոզչական գործառնությունները հավուր պատշաճի չօգտագործելը, ֆրանսիական քարոզչության ողջ համալիրի առաջ դնում էր հետևյալ առաջնահերթ խնդիրները. «...Մեր քարոզչությունը, թե՛ Ֆրանսիայում և թե՛ չեզոք երկրներում, ընթանում է չափազանց խղճահարությամբ: Թուրքերը և գերմանացիները կրկնապատկում են իրենց ոճիրները ու սխալները:

Հանցագործություն է դրանցից չօգտվելը».<sup>301</sup>

<sup>299</sup> Տե՛ս «Մշակ», 23-ը դեկտեմբերի, 1915թ.:

<sup>300</sup> Лорд Берти, За кулисами Антанты, М.-Л., 1927, стр. 91.

<sup>301</sup> “Echo de Paris”, Paris, 23 août, 1916.

Ֆրանսիան իրեն թույլ չտվեց իր թշնամիների կրկնապատկվող ոճիրներից և սխալներից չօգտվելու «հանցագործության» շռայլությունը, և արդեն 1915 թվականի օգոստոս ամսից սկսած «հայկական ջարդերը Գերմանիայի կողմից կազմակերպված լինելու» ամբաստանության խաղաթուղթը ձեռքին, իր ավագ գործընկեր Անգլիայից ետ չննացող ջանադրությամբ, ձեռնարկեց լայնամասշտաբ քարոզչական հարձակում և անգիջում պայքար հանուն Ամերիկայի Միացյալ Նահանգների հասարակական կարծիքի, քաջ գիտակցելով, որ այդ մարտադաշտում ձեռք բերած թե՛ հաղթանակը և թե՛ կրած պարտությունը կարող են հավասարապես բախտորոշ հետևանքներ ունենալ Ֆրանսիայի համար:

Ֆրանսիայի կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքական դիրքորոշումների և հասարակական կարծիքի վրա ազդելու քաղաքականության հետևողական որդեգրումը հեռու էր ցեղասպանության ենթարկված արևմտահայությանը ունեւր և շոշափելի օգնություն հայթայթելու շահագրգռվածությունից: Ֆրանսիայի այդ քայլը, պարզապես, թելադրված էր ռազմավարական նշանակություն ունեցող հետևյալ առաջնահերթություններով. նախ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում կային բավականին ազդեցիկ քաղաքական ուժեր, որոնք ԱՄՆ-ի նախկին նախագահ Թեոդոր Ռուզվելտի գլխավորությամբ, դեմ էին նախագահ Վիլսոնի չեզոքության քաղաքականությանը և ունեւին ընդգծված հակազեման ուղղվածություն: Ուստի, նախ, Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների համար այդ ուժերին զորակցելը և գաղափարա-քարոզչական աջակցության ցուցաբերելը, պարզապես, անհրաժեշտություն էր, երկրորդ, Ֆրանսիան և Անգլիան, Գերմանիային շրջափակելու քաղաքականության անհրաժեշտությունը հիմնավորելու համար կարիք ունեւին «համոզիչ պատճառաբանությունների, առանց որոնց դժվար թե այդ քաղաքականությունը հավանության արժանանար չեզոք երկրների, ընդհանրապես, և Ամերիկայի Միացյալ Նահանգների հանրային կարծիքի և կառավարության կողմից, մասնավորապես, երրորդ, Ֆրանսիայի և Անտանտի բոլոր մյուս երկրների համար կենսական նշանակություն ունեւր ԱՄՆ-ի բարեկամությունը չկորցնելը, քանի որ նրանք պատե-

րազմ մղելու համար՝ ուղղակի կախման մեջ էին գտնվում ամերիկյան մատակարարումներից և ֆինանսական օգնությունից:

Գերմանիան, որ «հարյուրավոր միլիոններ էր ծախսում միայն այն նպատակով, որպեսզի չեզոք երկրներում ստեղծի իրեն համար նպաստավոր տրամադրություն, համաշխարհային քարոզչական շուկան լցնելով իր վարկն ու հեղինակությունը բարձրացնող գրքույկներով ու ակադեմիական ուսումնասիրություններով»<sup>302</sup>, պատերազմի սկզբնական շրջանում չեզոք երկրներում ավելի մեծ համարում և համակարանք էր վայելում, քան իր թշնամիները: Սակայն, արդեն 1915թ. գարնանը Գերմանիան ինքն իսկ լուրջ ու ծանր հարված հասցրեց իր միջազգային համբավին և հեղինակությանը՝ ջրասույզ անելով ամերիկյան «Լուզիտանիա» մարդատար շոգենավը, որին հետևեց ամերիկյան կառավարության 1915թ. մայիսի 20-ի խիստ ու կտրուկ հայտարարությունը. «Լուզիտանիան» զինված չէր և նրա վրա չկային զորքեր, արգելված բեռներ: Միացյալ Նահանգները չեն կարող թույլ տալ, որ ոտնահարվեն ամերիկացիների իրավունքները: Նմանը չունեցող հանգամանքներում սպանվեցին 100-ից ավելի ամերիկյան քաղաքացիներ՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը Գերմանիայի ուշադրությունն է հարվիրում նրա լուրջ պատասխանատվության վրա, և հայտարարում, որ Միացյալ Նահանգները պայքարում են մարդկության սրբազան իրավունքների համար, որոնք խախտելու իրավունք չունի և ո՛չ մի կառավարություն»:<sup>303</sup>

Իհարկե, Գերմանիան այն երկիրը չէր, որ անվրդով հաշտվեր ԱՄՆ-ի կառավարության և հասարակական կարծիքի համար մղվող պայքարում իր անհաջողությունների և իր վարկի անկման հետ: 1915 թվականի ամռանն արդեն, իր սասանված դիրքերն անրապնդելու և Անտանտի երկրներին վարկաբեկելու նպատակով, սկսեց մշակել և իրականացնել քարոզչական մի շարք ձեռնարկներ, որոնք ընդունակ էին ԱՄՆ-ում

լրջորեն խարխլել Անտանտի երկրների՝ իբրև արդար դատերի համար կռվող երկրների հեղինակությունը: Եվ պատմությունն, իրոք, Գերմանիային ընձեռեց ԱՄՆ-ում ծավալված գաղափարա-քարոզչական կռվում նախահարձակ լինելու պատեհությունը:

Բանն այն է, որ 1915թ. գարնանը Լեհաստանից նահանջելիս, ռուսական զորքերը դաժանություններ էին գործել տեղի հրեական բնակչության նկատմամբ, որից և չհապաղեցին օգտվել գերմանացիները՝ այդ իրադարձությունները դարձնելով «վայրագ ու բարբարոս» Ռուսաստանի և նրա դաշնակից Անգլիայի և Ֆրանսիայի հեղինակագրկման ու վարկաբեկման ազդու քարոզչական զենք: Այդ զենքը կարող էր շատ ծանր ու շոշափելի հարվածներ հասցնել թե՛ Ֆրանսիայի և թե՛ Անգլիայի հեղինակությանը, քանի որ, Գերմանիայի ակտիվ միջամտությամբ, այդ գործընթացին պատրաստվում էր մասնակցել ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական կյանքում մեծ ազդեցություն ունեցող ամերիկյան հրեական համայնքը: Գերմանիայի կողմից «դեպքերի վայրեր» հրավիրված ամերիկացի հրեաթղթակիցները Ռուսաստանի «վայրենությունները» մերկացնող հոդվածների հեղեղով լցրին ամերիկյան թերթերը, բորբոքելով հանրային կարծիքի զայրույթն այդ ամենը հանդուրժող և այդ ամենի նկատմամբ անտարբեր կեցվածք որդեգրած Անգլիայի և Ֆրանսիայի նկատմամբ:

Այսպես, արդեն 1916թ. փետրվարին, գերմանական քարոզչության ջանքերով, Նյու-Յորքի “American” հեղինակավոր թերթը կոչ արեց ամերիկյան ժողովրդին պահանջելու «քրիստոնյա Անգլիայից ու քրիստոնյա Ֆրանսիայից, որպեսզի նրանք զայն իրենց բարբարոս դաշնակցի վայրագությունները»:<sup>304</sup>

Ֆրանսիայի կառավարությունը, լրջորեն մտահոգված այն հեռանկարից, որ ամերիկյան հրեաները կարող էին իրենց ազդեցության և հզորության ողջ ծանրությունը դնել հակաքրիտանական և հակաֆրանսիական նժարին, այդ վտանգավոր

<sup>302</sup> «Արև», Բաքու, 3-ը սեպտեմբերի, 1915թ.:

<sup>303</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 2-ը հուլիսի, 1915թ.:

<sup>304</sup> “New York American”, 2 feb, 1916, տե՛ս նաև Ա.Նասիպյան, նշվ. աշխ., էջ 85:

գարգացման դեմն առնելու նպատակով, փորձեց օգտագործել իր երկրում ապրող հրեաների ներուժը, որով և բացատրվում է «*Ֆրանսահպատակ հրեաների կոչը*» վերտառությամբ փաստաթղթի լույս աշխարհ գալը: Կոչի հեղինակները, նկատի առնելով, որ «Ամերիկայում սկսել են զբաղվել հրեական շահերի խնդրով», դիմում էին չեզոք երկրներում ապրող իրենց բոլոր հայրենակիցներին. «Չմոռանանք թե ինչ բերեց Հուդայականությանը 1870 թվականը: Ազատության և Եղբայրության փոխարեն Գերմանիայում գորեղացան կոպտությունն ու ատելությունը հրեաների նկատմամբ: Գերմանական համալսարանները գիտության կեղծ ծածկոցի տակ գարգացնում էին ռասաների տեսությունը, որն անխուսափելիորեն տանում էր դեպի հրեատեցության:

Ամտիսեսնիտիզմը Եվրոպայի արևմուտքում անհաջողության հանդիպեց, արևելքում՝ բացառիկ գարգացում ունեցավ: Սակայն կան որոշակի հանգստացուցիչ նախադրյալներ, որոնք լավ ապագայի հեռանկարներ են բաց անում:

Արևմտյան ազատական մեծ երկրների և նրանց դաշնակից Ռուսաստանի հաղթանակով է միայն ձեռք բերվելու իրավունքի պաշտպանությունը:

Միայն այդ հաղթանակով Արևելքում իրականություն կդառնա մեր ազատագրությունը:

Անմտություն է փրկությունը սպասել գերմանական միլիտարիզմի հաղթանակից»:<sup>305</sup>

Սակայն, շատ շուտով Ֆրանսիայի կառավարող շրջանների համար ավելի քան ակնհայտ դարձավ այն իրողությունը, որ ԱՄՆ-ում օրեցօր ծավալվող անզիջում գաղափարա-քարոզչական պայքարում նման հակաքարոզչական ձեռնարկներն ու միջոցները Ֆրանսիային լավագույն դեպքում տրամադրում են միայն պաշտպանվելու և «արդարանալու» հնարավորություններ: Այդ բանն, անշուշտ, չէր կարող բավարարել ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումների վրա ազդելու և հանրային կարծիքի համակրանքին ու աջակցությանը արժանանալու նպատակներ հետապնդող Ֆրանսիային: Ուստի, Ֆրանսիայի

պետական ու կենսական շահերը հրամայաբար պահանջում էին գտնել, և լայնորեն օգտագործել գաղափարա-քարոզչական պատերազմում հարձակողական ռազմավարության առաջադրանքներին համապատասխանող, ավելի գորեղ ու ազդեցիկ քարոզչամիջոցներ, որոնց հետապնդումը կապահովեր Ֆրանսիայի ռիսերիմ թշնամու պարտությունը չեզոք երկրների համար մղվող պայքարում:

Ֆրանսիան, հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությունը դարձնելով ԱՄՆ-ի հանրային կարծիքի վրա ազդելու և *հակազերմանական լայնածավալ հարձակման գլխավոր զենքը*, հաջողության հասնելու միանգամայն հիմնավոր ակնկալիք և վստահություն կարող էր ունենալ, քանի որ ամերիկացիները, նախ, չեզոք երկրների բոլոր ժողովուրդներից ամենազգայունն էին դեպի հայ ժողովուրդին բաժին հասած տառապանքները, և ապա, նրանք զգայականորեն իրենց մյուսներից ավելի պարտավորված էին զգում այն պարզ պատճառով, որ ամերիկյան միսիոներները տասնամյակներ շարունակ ավելի շատ բան էին արել արևմտահայության համար, քան աշխարհի որևէ մարդասիրական կամ կրթական կազմակերպություն: Այդ կապակցությամբ Հայաստանում միսիոներական գործունեության մեծ վաստակ ունեցող և ԱՄՆ-ի քաղաքական շրջանակներում մեծ հեղինակություն վայելող *Ջորջ Հերիքը* «Հայերը և ամերիկյան շահերը Հայաստանում» ուշագրավ հոդվածում փաստում էր. «Ամերիկյան միսիոներության՝ քսանչորս կրթական և մարդասիրական հաստատությունների, և իրենց հսկողության տակ գտնվող 34 այլ կազմակերպությունների ջանքերով, հսկայական կրթա-լուսավորչական և մարդասիրական աշխատանքներ են կատարվել Թուրքիայի հայկական և հայաշատ գրեթե բոլոր վիլայեթներում:

Բոլոր այս հաստատություններն իրենց գործունեության 85 տարիների ընթացքում, մոտավորապես 40 մլն. դոլլար են ծախսել կրթական ու բարեգործական հաստատությունների ստեղծման ու կառավարման համար: Հիզգ միլիոն դոլլարից ավելի արժեք ունեցող այդ հաստատությունների պահպանման ու գործունեության համար ամերիկյան միսիոներությունը պատերազմից առաջ տարեկան ծախսում էր 1 մլն. դոլլարից

<sup>305</sup> «Արև» Բաքու, 8-ը հոկտեմբերի, 1915թ.:

ավելի»:<sup>306</sup> Դժվար չէ պատկերացնել թե ցասումի և զայրույթի ինչ պուրկում և ալիք կարող էր առաջացնել արևմտահայության ֆիզիկական բնաջնջումն ամերիկյան միսիոներության շրջանում, որը «իր առանձնաշնորհումն ու փառքն էր համարում այդ հնագույն քրիստոնյա ազգի *ղեկավարումն ու նրան բնաջնջումից ազատելը*»:<sup>307</sup>

Հայոց ցեղասպանության դատապարտման հարցում ամերիկյան միսիոներության և Ֆրանսիայի շահերի ընդհանրությունը և շատ հնարավոր սերտ դաշինքը ամուր հենք էին ստանում նաև այն պատճառով, որ ամերիկյան միսիոներությունը, *Ֆրանսիայի նման հայերի բնաջնջման գլխավոր պատասխանատու և մեղսագործ դիտում էր Գերմանիային*. «..Շուտով գերմանական ազդեցությունն առաջնություն գրավեց Թուրքիայում: Դրանում ամերիկացիները կատարելապես համոզվեցին «Չեսթերի ծրագրի» առթիվ, որի նպատակն էր 2000կմ երկարությամբ երկաթուղու կառուցումը Փոքր Ասիայում: Գործը դեռ չսկսված, այն դատապարտված էր անհաջողության, բայց ոչ թուրքերի մեղքով:

Եթե հաջողվեր այդ ծրագիրն, ապա այն Թուրքիային կրերեր մեծ բարգավաճում, սակայն Գերմանիայի ազդեցությունը և արդեն ձեռք բերված մենաշնորհները կատարելապես խափանեցին այդ ծրագիրը: Նրա իրականացումը ծանր հարված կլիներ Գերմանիայի ազդեցությանը, և անկասկած, այն միանալով անգլիական և ֆրանսիական ազդեցության հետ, դուրս պիտի նետեր Գերմանիային Թուրքիայից, և ներկա պատերազմում թուրքերը նրա կողմը բռնած չէին լինի»:<sup>308</sup> Հետևությունը ավելի քան պարզ է. հայոց *ցեղասպանության գլխավոր պատճառը գերմանական ազդեցությունն է*:

Ահա, ԱՄՆ-ում մեծ հեղինակություն և քաղաքական ազդեցություն ունեցող միսիոներական հենց այդ կազմակերպու-

թյուններն էլ դարձան այն գլխավոր ուժերից մեկը, որի վրա հենվելով, որին աջակցելով և որի հետ դաշնակցելով, Ֆրանսիան ծավալեց հայկական ջարդերի դատապարտման իր քարոզչությունը, նրան տալով իր համար առաջնահերթ կարևորություն ունեցող *հակազերմանական բովանդակություն ու ուղղվածություն*:

ԱՄՆ-ում Ֆրանսիայի քարոզչության հաջողությունն շատ բանով ապահովող և երաշխավորող հաջորդ ծանրակշիռ գործոնը ԱՄՆ-ի հարյուր-հազարանոց հայկական գաղութն էր, որի ներուժի օգտագործման համար կային ինչպես առարկայական բնույթի հնարավորություններ, այնպես էլ ֆրանսիական քաղաքական քարոզչական օրգանների ու մարմինների հետ սերտորեն համագործակցող հայ քաղաքական շրջանակների հավաստիացումները և խոստումները այդ հարցում Ֆրանսիային սատար կանգնելու մասին:

Այսպես, 1915թ. սեպտեմբերի 22-ին «Փարիզի Հայկական Կոմիտեի» նախագահ Արշակ Չոպանյանն արտահայտելով իր դժգոհությունը և պարսավանքը չեզոք երկրների կողմից Գերմանիայի նկատմամբ կրավորական դիրք որդեգրելու կապակցությամբ, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության «Ասիա-Օկեանիա» դեպարտամենտի ղեկավար Ժան Գուին, գրում էր. «Եթե խոսքը վերաբերում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին. ապա այնտեղի իմ հայրենակիցներն արել և անում են իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի ամերիկյան կառավարությունը եռանդուն գործի: Ես ինքս գրել եմ նախագահ Վիլսոնին...»:<sup>309</sup>

Եվ վերջապես, երրորդ կարևոր ուժը, որը կարող էր պայմանավորել Ֆրանսիայի քարոզչապայքարի հաջողությունն ԱՄՆ-ում, դա Անգլիայի հզոր և հմուտ քարոզչական գործունեությունն էր, որի հետ համագործակցելով, Ֆրանսիան հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությունը պետք է դարձներ Գերմանիայի հեղինակազրկման և Անտանտի երկրների վարկի բարձրացման ծանր հրետանին:

<sup>306</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 2-ը հուլիսի, 1915թ.:

<sup>307</sup> Նույն տեղում:

<sup>308</sup> Նույն տեղում:

<sup>309</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 96, p. 82.

Բնական էր, որ Ֆրանսիան՝ ամերիկյան հանրային կարծիքի վրա ազդելու նպատակով, լայնորեն օգտագործեր արևմտահայության նկատմամբ իր թշնամիների անմարդկային արարքների մասին պատմող և զանազան աղբյուրներից իրեն հասած տեղեկությունները: Եվ իրոք, ինչպես արդեն նշել ենք, Ժան Գուն, ծանոթանալով Ֆրանսիայի նախկին հյուպատոս Ա. Գիզի զեկուցագրի բովանդակությանն, անմիջապես կարգադրեց Ա. Գ. նախարարության մամուլի և հրատարակության հարցերով պատասխանատու Պոնտյին «այն *հրատարակել* ամերիկյան մամուլում որպես Ասիայից վերադարձած չեզոք ճանապարհորդի վկայություն»:<sup>310</sup> Այդ փաստաթղթում ֆրանսիական քարոզչությունը ղեկավարող «Քաղաքական գործերի ղեկարտամենտի» ուշադրությունը գրավում էր ոչ այնքան «Ադանայի Ձեյթունի, և Դիարբեքիի հայության դեմ գործադրված դաժանությունների մանրամասն ու փաստագրված պատկերը», որը ինքին կարևոր տարր էր զգայական ներագրման իմաստով, այլ այն, հաստատագրումը, որ «ողջ հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը, որ իրագործում էին երիտթուրքական կոմիտեի անդամները՝ Թուրքիայում *գերմանական ռազմական դիկտատուրայի շնորհիվ դառնում է իրականություն*»:<sup>311</sup>

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ում ծավալված քարոզչական պայքարում լայնորեն օգտագործելով հայոց ցեղասպանության վերաբերյալ իր տրամադրության տակ եղած փաստաթղթերն ու վկայությունները, Ֆրանսիայի քարոզչական համալիրի ղեկավարությունը, միաժամանակ, մեծ ջանադրությամբ լրացնում էր իր տրամադրության տակ եղած փաստաթղթերի ամբողջությունը շնորհիվ ԱՄՆ-ի քարոզչության հրապարակում ի հայտ եկած փաստաթղթերի, հատկապես, հայկական մամուլում տեղ գտած հրապարակումների:

1915 թվականի սեպտեմբերին արդեն հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության հարցում ԱՄՆ-ում սկսում է ձևավորվել շահագրգիռ կազմակերպությունների և

Ֆրանսիայի դեսպանության համագործակցությունը, որի պերճախոս վկայությունն էր ԱՄՆ-ում Ֆրանսիայի դեսպան Ժուսերանի 1915թ. սեպտեմբերի 22-ին զեկուցագիրը. «Ես հենց նոր նամակ ստացա «Հայերի Պաշտպանության Ամերիկյան Ազգային Միությունից, որտեղ ահազանգվում է հայերի ջարդերի ու տարագրությունների մասին, և ապա ասվում, որ այդ կազմակերպությունը, հանուն մարդասիրության, կոչ է հղել ԱՄՆ-ի կառավարությանը, որպեսզի վերջինս բողոքագրով դիմի Բ. Դռանը, և նրան նախազգուշացնի այդ դաժան հալածանքների կապակցությամբ»:

Այդ նույն նամակով «Հայերի Պաշտպանության Ամերիկյան Ազգային Միությունը» ցանկություն էր հայտնում, «որպեսզի Ֆրանսիայի և մյուս դաշնակից տերությունների դեսպանությունները նույն կարգի դիմումներ հղեն ամերիկյան ժողովրդին և կառավարությանը»: Չթաքցնելով իր գոհունակությունն ու ուրախությունն այդ առաջարկի հետ կապված, Ժուսերանը շտապում էր Դեյքասեին հավաստիացնել, «որ ինքն, առաջին իսկ հնարավորության դեպքում, ԱՄՆ-ի պետական քարտուղարի ուշադրությունը կհրավիրի Հայաստանի ողբալի վիճակի վրա»:

«Հայաստանի Պաշտպանության Ամերիկյան Ազգային Միությունը» շուտով համագործակցության առաջարկ պարունակող համաբովանդ նամակներով դիմեց նաև ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեին, ռազմական գործոց նախարար Ալ. Միլերանին և վարչապետ Վիվիանին:

Ինչպես նման դեպքերում ասվում է «Կույրն ինչ կուզեր, եթե ոչ երկու աչք»: Իրոք, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Դեյքասեն ոչ միայն չմերժեց այդ առաջարկը, այլև գործի կարևորության ողջ տարողությունն ըմբռնողի ջանադրությամբ, կարգադրեց «պ-րն. Ժուսերանին ուղարկել *այն ամենը ինչ որ մենք ունենք հայերի մասին*», և հատկապես, նա անհրաժեշտ համարեց Ամերիկա լայնորեն քարոզելու նպատակով ուղարկել «պր. Դեֆրանսի զեկուցումները՝ Ձեքել Մու-

<sup>310</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 96, p. 82.

<sup>311</sup> Ibid, p. 48-49.



սայի հայերի մասին»,<sup>312</sup> որոնցում Ֆրանսիան հանդես էր գալիս «փրկարարի» և «ազատարարի» լուսապսակով:

ԱՄՆ-ի կառավարության վրա ճնշում բանեցնելու խնդրին սկսեցին ակտիվորեն մասնակցել նաև Ֆրանսիայի մամուլի ազդեցիկ օրգանները: Այսպես «Humanité»-ն 1915թ. սեպտեմբերի 11-ի իր համարում տպագրելով «Դոռշակի» եվրոպական մամուլին ուղղված հեռագիրն, ուր քաղաքակիրթ աշխարհին կոչ էր արվում փրկել հայության մնացորդացին Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, իր կողմից ավելացնում էր. «Ամբողջ սրտով միանում ենք հայ ժողովրդի ներկայացուցիչների բողոքին:

Նրանց հետ մենք էլ ամբողջ հոգով կոչ ենք անում ազդու և անմիջական մի գործողություն ձեռնարկել թուրք իշխանավորների և նրանց պատասխանատու Դաշնակցի Բեռլինի կառավարության կողմից կատարված այդ հրեշային ոճրի դեմ:

Ակներև է, որ քաղաքակիրթ աշխարհի չեզոք մասը միայն կարող է ձեռնարկել այդ գործիչը, իսկ չեզոք երկրների մեջ ամենից առաջ Միացյալ Նահանգները:

Նախագահ Վիլսոնը Բելգիայի չեզոքության խախտման դեմ իր դիրքորոշումն արդարացնելու համար կարող էր ավելի կամ նվազ վիճելի պատճառներ բերել: Բայց այս խնդրում նա ինչով կարող է արդարացնել իր լուրջությունը: Ամբողջ մի ժողովուրդ բնաջնջվելու վրա է և մեծ հանրապետության նախագահը չի<sup>313</sup> բարձրացնելու իր մատը՝ փորձելու համար արգելել եղեռնի ամբողջական գործադրությունը:

Հազարավոր հայեր աշխատում են Միացյալ Նահանգներում և նրա քաղաքացիներն են արդեն դարձել: Թո՛ղ նրանք բարձրաձայն աղաղակեն, մինչև լսելի լինեն Սպիտակ տանը:

Եվ թո՛ղ նրանք հատկապես գործ պահանջեն, և ոչ թե միայն դիվանագիտական ծանուցագիր»<sup>313</sup>:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում օրեցօր բորբոք-

վող քարոզչական պայքարում իր և իր դաշնակից ուժերի դիրքերը նոր և անհերքելի փաստաթղթերով անրապնդելու նպատակով, շուտով, 1915թ. հոկտեմբերի 22-ին Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործոց նախարար Վիվիանին ժուսերանին ուղարկեց «Թուրքիայում հայերի վիճակի վերաբերյալ իմ դեպարտամենտին փոխանցված փաստաթղթերը, որոնք Ձեզ հնարավորություն կտան կատարելու անհրաժեշտ քայլեր հանուն այն գործի, որի մասին դուք հայտնում էիք Ձեր վերջին զեկուցագրում»:<sup>314</sup> Այդ փաստաթղթերը, որ Ֆրանսիայի Ա. Գ. նախարարությանն էր տրամադրել Հայոց Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, երկուսն էին. առաջինը Կ. Պոլսից Բուլղարիայի թեմի առաջնորդ Ղևոնդ Դուրյանին ուղարկված նամակն էր՝ հայկական ջարդերի մանրամասն և ճշգրիտ նկարագրությամբ, երկրորդը՝ Ղևոնդ Դուրյանի կողմից Պողոս Նուբարին ուղարկված հայոց եղեռնի ամփոփագիրն էր:

Այդ երկու փաստաթղթերը, որոնք լայնորեն օգտագործվեցին ամերիկյան հասարակական կարծիքի համար մղվող քարոզչապայքարում, իրենց մեջ պարունակում էին Ֆրանսիայի քարոզչության համար առաջնահերթ նշանակություն ունեցող այն մեղադրանք-եզրակացությունը, որ «մինչ այսօր, երբ Թուրքիայում անասելի դաժանությամբ իրականացվում է ողջ հայ ժողովրդի բնաջնջումը, ո՛չ Գերմանիան, ո՛չ Ավստրիան, չեն բռնել իրենց Դաշնակցի ձեռքը, որպեսզի իրենց ճակատից ջնջեն բարբարոսի խարանը»:<sup>315</sup>

Հայկական կոտորածների դատապարտման լայնածավալ քարոզչությունը, որն իր սուր ծայրով ուղղված էր Գերմանիայի դեմ, չէր կարող չանհանգստացնել ԱՄՆ-ում նրա պաշտոնական ներկայացուցիչներին, հատկապես Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Կոմս Բեռնշտրոմին: Նա, օգնության շտապելով իր դաշնակիցին, և ձգտելով ցույց տալ, «որ դաժանությունների դիմելը երեք կայսրությունների համար էլ օրինաչափ երևույթ չի, ինչպես ներկայացնում և մեղադրում են Ան-

<sup>312</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 98, p. 83.

<sup>313</sup> «L' Humanité», Paris, 11 septembre, 1915.; տես նաև «figaro», 14-ը septembre, 1915.

<sup>315</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 96, p. 82.

<sup>315</sup> Ibid, doc. N. 131, p. 132.

տանտի քարոզչության բոլոր միջոցները», 1915թ. սեպտեմբերի 28-ին «Washington Post»-ում հրատարակեց մի նամակ, ուր «դեսպանության կողմից ստացված ճշգրիտ և պաշտոնական գեկուցագրերի հիման վրա», նա վստահեցնում էր, որ «հայկական ջարդերի վերաբերյալ պատմությունները մաքուր կեղծիք են, և որ թուրքերը որևէ դաժանության ու հալածանք չեն կատարել», իսկ «Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարող է հակառակն ասել, սակայն չպետք է մոռանալ, որ նա կարող է կրկնել միայն այն, ինչ որ նրան ասում է ռուսական ցենզուրան»:<sup>316</sup>

Ոչ առանց գոհունակության իր կառավարությանը տեղեկացնելով, որ «Բեռնշդորֆի նամակի հրապարակումն առաջ է բերել ամերիկյան հասարակության բողոքների և հերքումների մի հզոր ալիք», որը «ցույց է տալիս, թե որքան լայն տարածում ունեն իրական տեղեկությունները հայերի ջարդերի մասին», Ֆրանսիայի դեսպան ժուսերանը միևնույն ժամանակ, տեղեկացնում էր, որ «վերջին օրերս նոր մանրամասներ են պարզվել հայերի ջարդերի մասին», և որոնք «իրենց հաստատումն են գտնում լորդ Բրայսի կոչերի և բողոքների մեջ, որի խոսքը այս երկրում շատ մեծ հեղինակություն ունի»:<sup>317</sup> Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարն իր դեսպանից այդ հաճելի, և իր գլխավոր թշնամու ջղածիզ վարքագծի մասին վկայող գեկուցումն ստանալով, կարգադրեց, որ «Բեռնշդորֆի նամակն անմիջապես փոխանցվի մամուլին և տպագրվի «Հայերի դեմ գործած թուրքական դաժանությունները և հալածանքներն արդարացվում և ղեկավարվում են Գերմանիայի կողմից» խորագրով»:<sup>318</sup>

Շուտով, ի լրումն լորդ Բրայսի «հեղինակավոր խոսքի», Ֆրանսիական քարոզչության տնօրինողները, Ամերիկայի հանրային կարծիքի և կառավարության վրա ազդելու ձգտումով այդ «գործընթացի» մեջ ներգրավեցին նաև մեկ ուրիշ, անշահախնդիր հայասերի համաբավ ու վաստակ ունեցող մարդու՝ Վիկտոր Բերարի «խոսքը», որը Կոչ-հորդորով դիմեց ԱՄՆ-ի

նախագահ Վիլսոնին. «Վերջին տարիների ընթացքում Ֆրանսիան, որպես թուրքական կառավարության հավատարիմ բարեկամ, միջնորդի դեր է կատարել սուլթան-խալիֆի և իր հպատակ քրիստոնյաների միջև:

Ֆրանսիայի խաղացած հաշտարարական այս դերն օգնել է ոչ միայն Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, այլևս մյուս բոլոր հպատակ ցեղերին: Եվ ֆրանսիական այս խնամակալությանն օգտակար էր թե՛ հպատակ ցեղերին և թե՛ իրենց տիրոջը:

Հայկական նահանգներում ամերիկյան միսիոներները մրցում էին Ֆրանսիացի միսիոներների հետ՝ կրթասիրական և մարդասիրական հիմնարկություններ հաստատելու համար, որոնք վերածնեցին այս դժբախտ ազգին, և նրան դարձրին Ամերիկայի և Ֆրանսիայի քաղաքակրթության ամենաընդունակ աշակերտը:

Չեր միսիոներները, պր. Նախագահ, հրաշքներ գործեցին Հայաստանը բարձրացնելու գործում, և հայերը զգացին, որ իրենք գտել են *երեք անկեղծ բարեկամներ*՝ Միացյալ Նահանգներին, Անգլիային և Ֆրանսիային, որոնց կարող էին դիմել նեղության ժամանակ:

Քանի դեռ բարեսեր պետությունների ազդեցությունը գերակշռում էր Կ. Պոլսում, թուրքական կառավարությունը բարեկամական ոգով էր նայում ամերիկյան և ֆրանսիական միսիոներների կրթական ջանքերի վրա և խոստովանում էր, որ նրանց գործը նպաստում է ամբողջ կայսրության հարստության բազմացմանը: Բ. Դուռը վարժվել էր հաճությամբ հայտարարել, թե հայերը՝ Չեր ամերիկյան և մեր ֆրանսիական դպրոցների սաները՝ «միլլեթի սաղրկ»՝ հավատարիմ ազգ են, որոնց սուլթանն իր քաղաքացիական վարչության մեջ վստահում էր ամենաբարձր և ամենակարևոր պաշտոններ:

Սակայն, երբ գերման ազդեցությունը գերակշռեց սուլթանների և իրենց կամարիլիաների վրա, հայրուր հազարավոր հայեր հալածվեցին, տանջվեցին և կոտորվեցին, և այդ անգթություններից փրկված շատ հայեր գաղթեցին դեպի Ամերիկա: Աբդուլ Համիդի հրամանով կատարված 1896 և 1909 թվերի ջարդերից հետո, երիտթուրքերը հանձն առան *սիստե-*

<sup>316</sup> Les Grandes Puissances,....Opt. cit., doc. N 110, p. 102-103.

<sup>317</sup> Ibid, doc. N 110, p. 102.

<sup>318</sup> Ibid.

մատիկաբար ջնջել հայ ազգին և բնաջնջման այդ գործը այսօր կատարվում է հենց այն նահագներում, որտեղ ակնկալվում է, ուր մի օր Բաղդատի երկաթուղով կտեղափոխվեն գերմանական զաղութաբնակները:

...Այսօր *Ֆրանսիան անգոր կանգնած է այս ոճրի դեմ:*

Չեր դեսպանը, պրն. Նախագահ, և հյուպատոսները ողջ աշխարհին հայտարարել են այն անգթությունների մասին, որ կատարվում են նրանց աչքերի առաջ:

Մենք *հավատում ենք, որ Չեր մի խոսքը կկանգնեցնի Կ. Պոլսի ջարդարարներին և Բեռլինի գրգռիչներին, և թերևս կզսպի նրանց:*

*Պատմության ատյանի առաջ Չեր ազգը հատկապես պատասխանատու կհամարվի այս ոճրի համար, եթե Միացյալ Նահագները քայլեր չձեռնարկեն վերջ դնելու ոճրին»*<sup>319</sup>:

1915թ. հոկտեմբերին ամերիկյան հանրային կարծիքի վրա հայկական ջարդերի դատապարտման քարոզչության ընթացքին ու զարգացումներին ուշադրությամբ հետևող, և ավելի ու ավելի շատ ընդգծվող հակազերմանական շեշտադրումներն ուրախությամբ արձանագրող Ֆրանսիայի դեսպան Ժուսերանը Ֆրանսիայի վարչապետ Վիվանիին տեղեկացնում էր ամերիկյան հանրային կարծիքի վրդովմունքի ընդարձակվող չափերի ու տարողության մասին, երբ «ի պատասխան Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի՝ հայերին օգնելու կոչին, ԱՄՆ-ի մի խումբ հեղինակավոր և ճանաչված քաղաքական ու հասարակական գործիչներ՝ Չարլզ Գրանը, Սամուել Դուտտոնը, Օսկար Ստրաուսը Նյու-Յորքում ստեղծեցին մի կոմիտե, որը «նպատակ ունի նախ, հանրությանը ծանոթացնել այդ դժբախտ ազգի նկատմամբ կիրառվող բարբարոսությունների հետ, և ապա նրան օգնելու համար ստեղծել նպաստամատույց ֆոնդ»։ Հաղորդելով այդ կոմիտեի նպատակների մասին, Ժուսերանը Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարին շտապում էր նաև տեղեկացնել, որ «վերջերս, նոր ի հայտ եկած տարբեր աղբյուրների հիման վրա, այդ կոմիտեն հրատարակել է նոր տվյալներ, որոնք ակնհայտ են դարձնում այն

<sup>319</sup> «Le Temps», 15 mai, 1916.

իրողությունը, որ ամիսներ շարունակ հայ բնակչության դեմ կիրառվող հալածանքներն ու դաժանությունները *ոչ այլ ինչ են, եթե ոչ հայ ազգի սիստեմատիկ բնաջնջան իրականացում»*: Եվ վերջապես, Ժուսերանի հայտնած տեղեկությունների մեջ Ֆրանսիայի համար ամենասրտամուտը և թանկը այն փաստն էր, որ «բազմաթիվ վկայություններից մեկն ապացուցում է, որ այդ սարսափելի տեսարանների համար մեծապես պատասխանատու է Գերմանիան, քանի որ գերմանացիները լռելյան հավանություն են տվել թուրքերի արածներին»<sup>320</sup>:

Ֆրանսիայի դեսպանը կարող էր նաև իր նախարարին փոխանցել այն հուսադրող փաստը, որ գերմանական քարոզչության հակազդեցության փորձերը շարունակվում են ձախողվել, քանի որ Գերմանիայի մեղսակցության մասին տեսակետները շարունակում էին իրենց համար ճանապարհ հարթել *հակառակ* Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Բեռնշդորֆի ջանքերի, հակառակ գերմանական պաշտոնական քարոզչության մյուս հայտնի խուսափողի՝ կոմս Ռեվենտլովի, որը ամերիկյան մամուլում տպված իր հողվածում պնդում էր «որ հայերի նկատմամբ թուրքերի կիրառած դաժան քայլերը ռեալ են, բայց արդարացված և անհրաժեշտ, և որ գերմանական կայսրության, ինչպես և նրա բոլոր քաղաքացիների պարտքն է կանգնել իր օթթման դաշնակցի կողքին, չընդունելով նրա հասցեին և ո՛չ մի քննադատություն»<sup>321</sup>:

Գերմանական քարոզչության անհաջողությունների և Գերմանիայի մեղսակցության ու պատասխանատվության մասին փաստող այդ տեղեկությունները Ֆրանսիայի քարոզչության ղեկավարությունն այն աստիճանի կարևորեց, որ անմիջապես Ֆրանսիայի Ա. Գ. նախարար Վիվիանին Ժուսերանից ստացած զեկուցագրի վրա մակագրեց. «Անմիջապես այդ վկայությունները փոխանցել մամուլին՝ հայ ժողովրդի դեմ գործադրված բոլոր դաժանությունները *գրանցելով Գերմանիայի հաշվին*»<sup>322</sup>:

<sup>320</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 126, p. 123.

<sup>321</sup> Ibid, doc. N 126, p. 123-124.

<sup>322</sup> Ibid, doc.N 110, p. 102.

Անշուշտ, Ֆրանսիան կարող էր գոհ լինել և գոհ էր, որ իր և մյուս շահագրգիռ ուժերի քարոզչության ջանքերի հետևանքով ամերիկյան հանրային կարծիքը, հակառակ թուրքական և գերմանական ապակողմնորոշ հաստատումների ու պնդումների, գրեթե միանշանակ ընդունեց, որ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ հայ ժողովրդի սխտեմատիկ բնաջնջում, որ հայերի ջարդերը ոչ մի կապ չունեն նրա «հեղափոխական» և «ղավաղրական» գործունեության հետ, որ հայերի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը մարդկության դեմ գործած մեծագույն ոճիր է: Այդ ամենի արդյունքում ամերիկյան զգայուն, և մարդասիրական հարուստ ավանդույթներով բնութագրվող հանրային կարծիքը վրդովմունքով դատապարտեց մի ամբողջ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը, և պահանջեց իր կառավարությունից ակտիվ և գործուն միջամտություն՝ հոգուտ այդ դժբախտ ժողովրդի:

Նմանապես, Ֆրանսիան չէր կարող գոհունակությամբ չարձանագրեր, որ հենց հանրային կարծիքի այդ սաստակցող ու բորբոքված վրդովմունքի ազդեցությամբ ու պահանջով, ԱՄՆ-ի կառավարությունը, նրա նախագահ Վիլսոնը «հրահանգեցին Կ.Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին հայտարարելու Թուրքիայի արտաքին գործոց նախարարին, որ եթե չդադարեցվեն հայերի կոտորածները և հալածանքները, ապա կվտանգվեն ԱՄՆ-ի և Թուրքիայի բարեկամական հարաբերությունները»:<sup>323</sup>

Սակայն Ֆրանսիան դեռևս չէր կարող ամբողջովին գոհ լինել հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության արդյունքներից, նախ, այն պատճառով, որ ԱՄՆ-ի պաշտոնական բողոքները «նկատի չունեին Բարձր Դռան հետ դիվանագիտական հարաբերությունների խզում, այլ միայն ենթադրում էին ամերիկյան ժողովրդի և օսմանյան ժողովուրդների բարեկամական հարաբերությունների խզում, այդ ձևով մատնանշելով Թուրքիային թե հայերի կոտորածների շարունակումն ինչ ազդեցություն կարող է ունենալ ամերիկյան հա-

<sup>323</sup> «Le Temps», 6 octobre, 1915.

սարակական կարծիքի վրա»:<sup>324</sup>

Այդուհանդերձ, Ֆրանսիայի դժգոհ լինելու գլխավոր պատճառը կապված էր մեկ այլ, Ֆրանսիայի համար առաջնահերթային նշանակություն ունեցող իրողության հետ: Վերջ ի վերջո Ֆրանսիայի համար որպես գլխավոր նպատակ համարվում և մնում էր Գերմանիայի և ԱՄՆ-ի քաղաքական ու տնտեսական հարաբերությունների վատթարացումը և դրանց սրումն այն աստիճանի, որ Անտանտի կողմում ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելը դառնա անխուսափելի:

Այդ դժգոհությունը բացահայտորեն արտահայտում էր ֆրանսիական կառավարության նկատմամբ կոշտ ընդդիմադիր կեցվածք որդեգրած Ժորժ Կլեմանսոն, որը Վիլսոնին համարելով «ուտոպիստ-իդեալիստ, ուղղակի պահանջում էր նրանից ոչ թե բավարարվել ոչինչ չտվող թղթե բողոքներով, այլ «անմիջապես խզել հարաբերությունները Գերմանիայի հետ»<sup>325</sup>:

Իհարկե, Ֆրանսիայի կառավարությունն ու նրա նախագահն չէին կարող իրենց թույլ տալ Կլեմանսոյի նման բացահայտորեն ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին՝ «մեծ դոկտրինյորին» ասել իրենց այդ ձգտումների մասին, և մի կողմ դնելով անհիմն շտապողականությունը: Եվ, հանուն իրենց ձգտումների իրականացման, նրանք շարունակեցին ԱՄՆ-ի հասարակական կարծիքի և նրա նախագահի հետնողական «քարոզչական մշակման» աշխատանքները: Ահա թե ինչու հայոց ցեղասպանության հետ կապված ԱՄՆ-ի կառավարության քայլերից դժգոհ Ֆրանսիան, իր կիսապաշտոնական օրգանի բերանով ասում էր, որ ինքը, ակնկալում էր, որ «Նախագահ Վիլսոնը դիմի Բեռնշտրեյնին, որպեսզի Գերմանիան պահանջի Թուրքիայից դադարեցնելու հայերի կոտորածը և տեղահանությունը», որ Վիլսոնը և իր կառավարությունն անսան Նյու-Ջերսիի դատավոր Օսթոնի և ամերիկահայության ներկայացուցիչների խնդրանքին՝ գործել Գերմանիային դիմելու և Գերմանիայից պահանջելու եղանակով»:<sup>326</sup>

<sup>324</sup> «Le Temps», 6 octobre, 1915.

<sup>325</sup> «L'Homme enchaîné», Paris, 4 février, 1915.

<sup>326</sup> «Le Temps», 5 octobre, 1915.

Այս իմաստով հասկանալի է Ֆրանսիայի ուշադիր և գոհունակ վերաբերմունքը դեպի Միացյալ Նահանգներում գործող այն ազդեցիկ քաղաքական ուժերը, որոնք ԱՄՆ-ի չեզոքությունը համարում էին աններելի սխալ:

Ֆրանսիայի «բոցավառ բարեկամ այդ ուժերը»՝ ԱՄՆ-ի նախկին նախագահ Թեոդոր Ռուզվելտի ղեկավարությամբ, դատապարտում էին ԱՄՆ-ի և նրա նախագահ Վիլսոնի «իզույթացիոնիզմը» և տատանումները, պահանջում «որ ԱՄՆ-ը օտարակիզմի ենթարկեն Գերմանիային և պատերազմի մեջ մտնեն Անտանտի կողմում»<sup>327</sup>:

Ֆրանսիայի կառավարությունը ոչ միայն բարյացակամորեն հետաքրքրվեց այդ ուժերով, այլ անգամ քաջալերեց և հովանավորեց նրանց: 1915 թվականի դեկտեմբերի 3-ին Ժուսերանը Վաշինգտոնից արտաքին գործոց նախարար Բրիանին էր ուղարկում Թեոդոր Ռուզվելտի նամակը հասցեագրված «Հայաստանի և Սիրիայի օգնության Ամերիկյան Կոմիտեի» քարտուղար դ-ր Դուտտոնին, որը 1915թ. դեկտեմբերի 1-ին տպագրվել էր «Նյու-Յորք Թայմս»-ում:<sup>328</sup> Այդ նամակում, Թ. Ռուզվելտը, իրոք որ ասում էր այն, ինչ որ Ֆրանսիան ու իր դաշնակիցները կուզեին և ձգտում էին լսել նախագահ Վիլսոնի բերանից՝ կապված հայկական ջարդերի ու սարսափների հետ. «Նախորդ մեկ և կես տարվա ընթացքում կուտակված սարսափներից բացառելով ու ուժասպառ ջղերի համար անգամ հայերին վիճակված սարսափելի ճակատագրի լուրը պետք է որ համակրանքի ու ցասումի պոռթկում առաջ բերեր: Սակայն համակրանքը և ցասումը արժեք չունեն, եթե նրանք պետք է վատնվեն միայն բառերով:

Նախորդ մեկ և կես տարվա բոլոր անօրինությունները, ներառյալ հայերի մեծածավալ սպանոյի գերագույն անօրինությունը, կարելի է վերագրել Գերմանիային, որը միչ այդ չեզոք Բելգիան գրավելու անիրավությունն էր գործել:

Սակայն Գերմանիայի ոճրագործ պատասխանատվու-

թյունը պետք է բաժանվի բոլոր չեզոք պետությունների միջև Միացյալ Նահանգների գլխավորությամբ, որոնք թերացան սկզբնական անիրավության դեմ իրենց բողոքների մեջ: Մենք մերժեցինք կատարել մեր պարտականությունը Բելգիայի հանդեպ, մենք մերժում ենք կատարել մեր պարտականությունը Հայաստանի, հանդեպ, որովհետև մենք աստվածացրել ենք «խաղաղություն ամեն գնով սկզբունքը»: Անիրավությունը պիտի կասեցվի միայն այն մարդկանց կողմից, որոնք քաջ են և արյար, որոնք նաև պատիվը վեր են դասում ապահովությունից, և որոնք չեն ընկրկում ոչ մի վտանգի, անգամ պատերազմի վճռակրան սպանոնալիքի առաջ, եթե դա անհրաժեշտ է և կոչված է ծառայելու արդարության մեծ դատին»:<sup>329</sup>

Ամերիկայի Միացյալ Նահանգներում և մյուս չեզոք երկրներում Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների քարոզչության հաջողություններն ու հաղթանակները՝ կապված հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչագեղեցի լայնածավալ օգտագործման հետ, չէր կարող չանհանգստացնել Գերմանիայի, ինչպես պաշտոնական – պետական շրջանակներին, այնպես էլ հասարակական–քաղաքական այլազան ուժերին, որոնք դեպքերի նման զարգացումը վտանգավոր էին դիտում իրենց երկրի միջազգային հեղինակության համար, և նրանցից յուրաքանչյուրը այդ վիճակը կարգավորելու նպատակով առաջարկում էր իր դեղատոմսը:

Գերմանական մամուլի հեղինակավոր օրաթերթերից մեկը «Die Hilfe»-ը, վեր հանելով չեզոք երկրներում հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի մեղսակցության ու պատասխանատվության մեղադրանքների լայն տարածման պատճառներն, իրավացիորեն եզրակացնում էր, որ «Գերմանիան չպետք է մոռանա, որ իրավացի, թե անարդար կերպով չեզոք երկրների կողմից Գերմանիան է, որ պատասխանատու պետք է նկատվի ներկայումս Թուրքիայում կատարված ամեն բանի համար:

Մինչև հիմա Գերմանիայում հայերին անգամ մի փոքր համակրություն հայտնելու համար ոչ մի ձայն չի բարձրացել:

<sup>327</sup> Раймонд пуанкаре, Воспоминания, 1914-1918, М., 1936, стр. 109, 403.

<sup>329</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N. 149, p. 146.

<sup>330</sup> Ա. Նասիպեան, նշվ. աշխ., էջ 79:

Դա մեծ սխալ է մեր կողմից. քանի որ Շվեյցարիայում, Հոլանդիայում, Շվեդիայում և Ամերիկայում շատ լավ գիտեն, որ Գերմանիայում հայերն երբեք մեծ համակրություն չեն ունեցել՝ ո՛չ 1895 - ին, երբ Արդուլ Համիդը կոտորում էր հայ ժողովրդի մի ստվար մասին, ո՛չ էլ 1909-ին՝ Ադալարի ջարդերից հետո»<sup>330</sup>:

Այդ «մեծ սխալը» ուղղելու և շակելու մտադրությամբ էին բեյադրված նաև գերմանաեր թերթի համբավ ունեցող շվեյցարական “Basler Nachrichten” ի առաջարկությունները. «Ո՛չ միայն վեհանձն մի ժեստ, այլև քաղաքակրթական խելացի քայլ կլինեն, եթե Գերմանիայի կողմից Թուրքիային հատուկ խորհուրդ տրվեր՝ դադարեցնելու հայերի նկատմամբ նրա գործելակերպը. որն բոլորովին էլ չի բխում պատերազմական անհրաժեշտությունից:

Այն Գերմանիան, որն ամեն օր չեզոք աշխարհը լցնում էր իր բողոքներով՝ թե՛ իր բշտամիներն իրենց բանակներում բռնությամբ ծառայության են քշում գուրբաններին, Սենեգալի սևամորթներին և մավրիտանցիներին, պետք է նկատի ունենա, որ ինքն է պատասխանատու դիտվելու այն ամենի համար, որ կատարում են նրա թուրք դաշնակիցներն Արևելքի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ, եթե նա *իր ողջ ուժը և ազդեցությունը*՝ չգործադրի Պոլսում՝ այդ ժողովուրդներին օգնելու համար»<sup>331</sup>:

Սակայն, ո՛չ գերմանական հեղինակավոր թերթերի «մեծ սխալը ուղղելու», ո՛չ «քաղաքական խելացի քայլ անելու», ո՛չ «միայն օրինական ճանապարհով մեղավորներին պատժելու առաջարկությունները», որոնք հետապնդում էին միմիայն Գերմանիայի միջազգային հեղինակության անկման թավազուր գործընթացը կանգնեցնելու նպատակներ, և ո՛չ էլ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայտնի գործիչներից բաղկացած և Փոքր Ասիա գործուղված «Հատուկ Հանձնաժողովի»՝ Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան կոմս Բեռնշտրոֆի ու թուրքական դեսպան Ռուստամ բեյի կեղծ արդարացումներն ու բացատրությունները մերկացնող «Տեղեկագրի» հստակ և մի-

անշահակ եզրահանգումներն այն մասին, որ «թուրքահայերի նկատմամբ ձեռք առնված միջոցները հանդիսանում են *հայերի լրիվ բնաջնջման գործադրություն*, որ հայկական ջարդերը Թուրքիայում կատարվում են Բեռլինի կառավարության լռելյան հավանությամբ»<sup>332</sup> չէին «սքսիեցնում» *երիտթուրքերի հանցագործությունն ամեն կերպ արդարացնող պաշտոնական Գերմանիային* և նրան, անվերապահորեն, աջակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչներին, ավելին կատաղեցնում և «դիվահար» էին անում նրանց: Այսպես այդ դիրքորոշումները պաշտպանող ամենահայտնի դեմքերից մեկը կոմս Ռեվենտոլվը “Deutsche Tageszeitung”-ի էջերում Թուրքիային կոչ էր անում «չվախենալ ամերիկյան սպառնալիքներից». ... իսկ գերմանական մամուլում տեղ գտած վերոհիշյալ առաջարկությունները «համարում էր քաղաքական սխալ ու անտակտություն», և գտնում էր, որ ամերիկյան մամուլը հայկական ջարդերի դատապարտման քարոզությամբ «հետապնդում է միմյան մեկ նպատակ՝ այն է երկպառակության որոմներ ցանել Գերմանիայի և Թուրքիայի միջև»<sup>333</sup>:

Մինչ այդ Ֆրանսիան ամենաբարձր պետական մակարդակով շարունակում էր ամենասերտ կապեր պահպանել ամերիկյան հանրային կարծիքի վրա մեծ ազդեցություն ունեցող հասարակական-քաղաքական ուժերի հետ, որոնք, հայկական ջարդերի դատապարտման իրենց քարոզությամբ, ամեն օր խորացնում էին ԱՄՆ-ի և Գերմանիայի միջև անվստահության և անբարյացկամության վաղուց արդեն բացված վիհը. որը սպառնում էր վերածվել դեպի պատերազմ տանող բշտամության մայրուղու: Չգտելով ոգևորել և աջակցել իր համար այդքան անհրաժեշտ ու քանկազին ծառայություն մատուցող ուժերին, 1916թ. փետրվարի 1-ին Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործոց նախարար Արիստիդ Բրիանը «Հայերի օգնության Ամերիկյան Կոմիտեի» Նյու-Յորքում գտնվող «Հանրության հետ կապերի կոմիտեի» նախագահ Ջոն Մոֆֆատին ուղղված նամակում շտապում էր «հավաստիացնել, որ ֆրանսիա-

<sup>330</sup> տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 15-ր նոյեմբերի, 1915թ.:

<sup>331</sup> Նույն տեղը:

<sup>332</sup> տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 9-ը դեկտեմբերի, 1915թ.:

<sup>333</sup> տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 26-ը դեկտեմբերի, 1915թ.:

կան կառավարությունը Ձեր և «Հայերի Օգնության Ամերիկյան Կոմիտեի» անդամ Ձեր մյուս կոլեգաների հետ է՝ այն շնորհակալ ու վեհանձն գործում, որին Դուք ձեռնարկել եք: Բոլոր քաղաքակիրթ ժողովուրդները սրտով ամերիկյան մեծ ժողովրդի հետ են, որպեսզի ծանր փորձառությունների մեջ հայտնված հայ ժողովրդին ցուցաբերեն այն համակրանքն ու աջակցությունը, որին նա արժանի է»:<sup>334</sup>

Միաժամանակ, ամերիկյան կառավարության և հանրային կարծիքի դիրքորոշումների, նկատմամբ շատ ուշադիր և զգայուն Ֆրանսիան իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցների օգնությամբ աշխույժորեն հետևում էր գերմանական կողմի ոչ միայն արտաքնապես տեսանելի և երևացող, այլև գաղտնի և քաքուն, քողարկված բնույթ կրող բոլոր այն քայլերին, որոնց նպատակն էր այս կամ այն չափով արդարացնել Գերմանիային ամերիկյան հանրային կարծիքի աչքերում՝ հայկական ջարդերի հետ կապված:

Այս իմաստով բավականին ակտիվ և աշխույժ աշխատանքներ էր տանում ֆրանսիական հետախուզությունը, որը հանրագումարի բերելով իր տրամադրության տակ եղած տվյալները, 1916թ. հուլիս 11-ին Ֆրանսիայի վարչապետ Ար. Բրիանին ներկայացրեց, իսկապես որ միայն փաստերի հիման վրա կազմված մի հուշագիր, որը «հետաքրքիր էր այն առումով, որ մատնացույց էր անում Գերմանիայի *կրկնակի խաղը Հայաստանում*, երբ նա ձգտում էր *միաժամանակ* խաղալ Արևելքի քրիստոնյա ժողովուրդների հովանավորի և այդ քրիստոնյա ժողովուրդներին կոտորող Թուրքիայի դաշնակցի դերը»:<sup>335</sup> Ֆրանսիական հետախուզության ղեկավարությունը Ֆրանսիայի կառավարության ղեկավարի ուշադրությունը հրավիրում էր գերմանական միսիոներների ամենաազդեցիկ և ակնառու դեմքերից մեկի՝ պրոֆ. Ռիխտերի 1916թ. հունիս 9-ի թվակիր նամակի և այլ վկայությունների վրա, որոնց վերլուծության հիման վրա արվում էին հետևյալ կարևորագույն բացահայտումներն ու եզրահանգումները. «1) Հայերի զարդերը իրավացի

վրդվումը են բարձրացրել Միացյալ Նահանգներում թուրքերի դեմ, և ամենակարևորը, բազմաթիվ են այն ձայները, որոնք իրենց դատապարտման մեջ չեն տարբերում Գերմանիային և Թուրքիային: Մասնավորապես, շատ մեծ եռանդով է գերմանական կառավարության դեմ հանդես գալիս Նյու-Յորքի “Missionary Review”-ն, որը եթե Գերմանիային չի մեղադրում հայկական ջարդերը կազմակերպելու մեջ, ապա գտնում է, որ նա արժանի է դատապարտման հենց միայն այն բանի համար, որ նա իր լուրջամբ քաջալերել է այդ ջարդերը»:<sup>336</sup>

2) Գերմանիացի միսիոներները, ինչպես և նրանց կառավարությունը շատ հիվանդագին են տանում այդ մեղադրանքները: Վիլիելմ II-ը շարունակելով մնալ Թուրքիայի դաշնակիցը, ջանում է իրեն ներակայացնել որպես Արևելքի քրիստոնյա ժողովուրդների հովանավոր»:<sup>337</sup>

3) Գերմանական դիվանագիտությունը շատ ճարպկորեն է դուրս գալիս այդ դժվար կացությունից. նա, նախ, թուրքերին հաճոյանալու համար, փորձեց վարկաբեկել հայերին, մատնացույց անելով հայերի մեջ հեղափոխական տարրերին և նրանց հռչակեց իբր ջարդերի միակ մեղավորներ: Նա այդ կապակցությամբ վերահրատարակեց Վանում և Էրզրումում Ռուսաստանի նախկին հյուսիսատոս Մակսկու գեկուցագիրը, և ապա այնտեղից բերելով բազմաթիվ օրինակներ հայկական հեղափոխական կուսակցությունների բռնի արարքների մասին, որոնք քաջալերվում էին Անգլիայի կողմից, գերմանական դիվանագիտությունը այդ կերպ պատճառաբանում և արդարացնում էր թուրքական հալածանքները:

Այդ գրքույկը, որի անկողմնակալությունը շեշտվում էր նրա հեղինակի ռուս լինելու փաստով, տպագրվեց ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով՝ «Հայկական ջարդերը» վերատառությամբ (1916), և լայնորեն տարածվեց: Գրքույկի կողմնակալությունը լավագույնս թաքցնելու համար ոչ մի տեղ չէր հիշատակվում նրա հրատարակության վայրը:<sup>338</sup>

<sup>336</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N 236, p. 215.

<sup>337</sup> Ibid., doc. N 236, p. 215.

<sup>338</sup> Ibid., doc. N 236, p. 215-216.

<sup>334</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N. 169, p. 162.

<sup>335</sup> Ibid, doc.N.236, p. 214-216.

4) Մյուս կողմից, գերմանական կառավարությունն ամեն կերպ խրախուսում էր գերմանացի միսիոներներին, որպեսզի նրանք, զոնե արտաքննապես, հայերի օգտին եռանդ և ջանք թափելու փորձեր կատարեն՝ քաղաքակիրթ աշխարհի մոտ հայնապաստ գործունեության պատրանք ստեղծելու նպատակով:<sup>339</sup>

5) Ահա այդ կապակցությամբ պրոֆ. Ռիխտերի վերոհիշյալ նամակն ակնառու ցույց է տալիս գերմանական միսիոներական շրջանակների խաղաղացած դերակատարությունը: Ներկայումս նրանց առաջ որպես *գլխավոր խնդիր* դրված է հայերին օգնություն հասցնելու նպատակով ստեղծված ամերիկյան կոմիտեների հետ «բարեկամական» հարաբերությունների հաստատումը, որպեսզի նրանք իրենց հավաքած դրամական և մյուս միջոցները ուղարկեն Գերմանիա, որը որպես Թուրքիայի դաշնակից, կարող է դրանք հասցնել հասցետերերին»:<sup>340</sup>

Գերմանական և ամերիկյան միսիոներների միջև ցանկացած համագործակցության հեռանկար իր մեջ իսկապես որ շատ անհանգստացնող սպառնալիքներ էր պարունակում Ֆրանսիայի համար: Ահա թե ինչու նրա սևեռուն ուշադրությանն էր արժանանում նման հեռանկարը իր մեջ բովանդակող ամեն մի փորձ և առաջարկություն, որով սկսեցին ակտիվորեն, թերևս ոչ միայն իրենց կառավարության հանձնարարությամբ, հանդես գալ գերմանական միսիոներության հեղինակավոր դեմքերը:

1916թ. ապրիլի 22-ին, դ-ր Կարլ Աքսենֆելդը մեզ արդեն քաջածանոթ դ-ր Ջոն Մոֆաթին գրած նամակում «եռանդով ժխտում էր Գերմանիայի որևէ մասնակցությունը հայկական կոտորածներին, և այդ հարցում Գերմանիայի դերը նույնացնում էր Անգլիայի այն դերի հետ, որ նա ստանձնել էր Ռուսաստանի նկատմամբ, երբ ռուսների կողմից կոտորվեցին և տարագրվեցին Լեհաստանի և Գալիցիայի հրեաները»:<sup>341</sup>

Ֆրանսիայի հետախուզության տեսադաշտից չէր վրիպել այն փաստը, որ 1915թ. դեկտեմբեր ամսին Եվրոպայում՝ որպես *“Federal Council of the Churches of Christ in America”* ազդեցիկ կազմակերպության լիազոր շրջագայության մեկնած Չարլզ Մակֆարլանդը «Բեռլինում ջերմ ընդունելություն գտավ իր նախկին պրոֆեսորի՝ “Protestant Week Letter”-ի հեղինակ Ադոլֆ Դիեմաննի կողմից, որը նրան ծանոթացրեց գերմանական միսիոներության բոլոր նշանավոր անձանց հետ:

Այդ ճանապարհով նա ծանոթացավ դ-ր Լեփսիուսի հետ, որը զբաղվում էր հատկապես Թուրքիայում գործող միսիոներական կազմակերպությունների գործունեությամբ: Նրանց միջև ծավալված զրույցի ժամանակ Յոհաննես Լեփսիուսը հմտորեն ներշնչում էր Մակֆարլանդին *“Deutschen Missonsausschuss”*-ի և *“Armenian Relief Committee”*-ի միջև համագործակցելու գաղափարը: Մակֆարլանդը այդ զրույցից հետո անմիջապես հեռագրեց ամերիկյան կոմիտեի նախագահ սրբ. հայր Ջեյմս Բարտոնին, նրան հրավիրելով կապ հաստատելու արտասահմանում գերմանական բոլոր միսիոներական կազմակերպությունների նախագահ պրոֆ. Յուլիուս Ռիխտերի և դր. Յ. Լեփսիուսի հետ»:<sup>342</sup>

Մանրակրկիտ վերլուծության ենթարկելով պրոֆ. Ժ. Ռիխտերի մեր կողմից քանիցս հիշատակված նամակը, Ֆրանսիայի հետախուզության կողմից կազմված «Հուշագրի» հեղինակներն իրենց վարչապետին տեղեկացնում էին, որ Ամերիկայում դ-ր. Յուլիուս Ռիխտերն «իր հարաբերությունները չի սահմանափակում միայն Ջեյմս Բարտոնով, այլ, անկասկած, նա սերտ կապեր ունի բոլոր այն անձանց հետ, որոնց նրան, հավանաբար, ներկայացրել ու երաշխավորել է Չ. Մակֆարլանդը: Պատասխանելով *“For Armenian and Syria Relief”*-ի անունից Ռ. Ռոքուելի՝ 1916թ. մարտի 3-ի թվակիր նամակին, Յ. Ռիխտերը նրան շնորհակալություն էր հայտնում այն բանի համար, որ նա վեր է կանգնել քաղաքական հանգամանքներից և կարողացել է հայերին օգնելու համար անհրաժեշտ դրամական միջոցներ հավաքել, որոնք տեղ հասցնելու համար

<sup>339</sup> Les Grandes Puissances..... Opt cit., doc. N. 236, p. 216.

<sup>340</sup> Ibid., doc. N 236, p. 216.

<sup>341</sup> Ibid., doc. N 236, p. 216.

<sup>342</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N. 236, p. 215-216.



գերմանական առաքելության քույրերը, հնարավորության սահմաններում, կանեն ամեն ինչ»:<sup>343</sup>

“Deutschen Missonsausschuss”-ի կազմում ստեղծված “Oriënt und Islam Kommission”-անունից հանդես եկող դ-ր Ռիխտերը «Հայաստանի և Սիրիայի օգնության ամերիկյան կոմիտեին» տեղակցնում էր, որ «1916թ. փետրվարին իր ղեկավարած Հանձնաժողովը համաձայնության է եկել գերմանական ավետարանչական միսիոներության ղեկավարների հետ՝ հայերին արդյունավետ օգնություն ցուցաբերելու նպատակով», և ապա հույս էր հայտնում, որ «ամերիկյան միսիոներները կհասկանան, թե ինչու են գերմանացի միսիոներները լուծում և չեն կարող բարձրաձայն խոսել այն աշխատանքների մասին, որ նրանք տանում են տարագիր հայերի տառապանքներն ու թշվառությունները մեղմելու ուղղությամբ, քանի որ այդ մասին բարձրաձայն հայտարարելը, նախ, նրանց օգնությունը կդարձնի նվազ արդյունավետ, և ապա կարող է բոբրոքել թուրքերի դժգոհությունը»:<sup>344</sup>

Ամենևին չբաժանելով գերմանական միսիոներների «լուծության» վերոհիշյալ պատճառաբանությունները, Ֆրանսիական հետախուզության կազմած «Հուշագրի» հեղինակները, այդ երևույթը մեկնաբանելիս, տալիս էին եղելությանը շատ ավելի մոտ այն բացատրությունը, որ «ճշմարտությունն այն է, որ ներկայումս գերմանացիները պարզապես ի վիճակի չեն օգնելու հայերին, և նրանց լուռ մնալու հանգամանքը ավելի շատ թելադրված է հեշտորեն մերկացվող կեղծիքներ թույլ տալու մտավախությամբ, քան թե քաղաքական դրդապատճառներով»:<sup>345</sup>

«Հուշագրի» հեղինակները Ֆրանսիայի վարչապետին տեղեկացնելով, որ պրոֆ. Ռիխտերն իր նամակագրին ուղարկել է գերմանացիների կողմից հրատարակված հոդվածների և գրքույկների ցանկը, որի օգնությամբ «նա ապացուցում էր թե հայկական հարցը խորապես հուզել է Գերմանիայի միսիոներ-

<sup>343</sup> Les Grandes Puissances..... Opt cit., doc. N 236, p.215-216.

<sup>344</sup> Ibid, doc. N. 236, p. 216.

<sup>345</sup> Ibid., doc. N 236, p. 216.

հրաժեշտ փաստաթղթերը, որոնք այդ երկրներին հնարավորություն են տալիս ճանաչելու երիտթուրքերի գործած ոճիրները, և մի ամբողջ ժողովրդի բնաջնջման հրեշավոր ծրագիրը»:<sup>352</sup>

Ընդգծելով, որ «առաջին անգամն է, որ *Ֆրանսիան անգոր է թուրքիայում* իր քաղաքակրթող առաքելությունը հետապնդելու, և նրա կառավարիչների բարբարոսության դեմն առնելու գործում», Ա. Բրիանը հանուն «մարդկության» հույս էր հայտնում, որ «չեզոք պետությունների մի մասի կողմից արդեն արված վրդովմունքի բողոքները կօգնեն, որ հայ ժողովուրդը խուսափի նոր կոտորածներից»:<sup>353</sup>

Ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի հասցեին «կարեկցանքի ու հարգանքի» մասին Ֆրանսիայի բարձրաստիճան պետական ղեկավարության կողմից արված այս շռայլ հավաստիացումները ժամանակագրական առումով համապատասխանեցին ԱՄՆ-ում հայոց Մեծ եղեռնի դատապարտման քարոզչության կողմից արձանագրած ամենաակնառու հաջողությունների հետ, որոնք կարծես հիշեցնում էին աշնանային առատ բերքահավաք: Քարոզչական այդ հաջողությունների մասին Ֆրանսիայի վարչապետին շտապեց տեղեկացնել Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան Ժուսերանը. «Պատիվ ունեմ Ձեզ ուղարկելու «Հայերի և սիրիացիների օգնության Ամերիկյան Կոմիտեի» անդամների ցուցակը:

«Ամերիկյան Կարմիր Խաչի» և «Բողոքական եկեղեցիների Միավորման» հետ լրիվ համաձայնության գալով, այս Կոմիտեն հույս ունի հայերին օգնելու նպատակով 1916թ. հոկտեմբերի 22-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ զանգվածային հանգանակության օգնությամբ մեծ միջոցներ հայթայթել: Շատ կարևոր է այն փաստը, որ նպատահավաքի այդ զանգվածային արշավն իրավորվելու է, ինչպես ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշման, այնպես էլ նախագահ Վիլսոնի՝ ԱՄՆ-ի քաղաքացիներին ուղղված «Դիմումի» համաձայն:

Ձեզ եմ ուղարկում ինչպես նախագահ Վիլսոնի, այնպես էլ «Հայերի ու սիրիացիների օգնության Ամերիկյան Կոմիտեի»

<sup>352</sup> Les Grandes Puissances..... Opt cit., doc. N 281, p. 261.

<sup>353</sup> Ibid, doc. N 281, p. 261.

դիմում-շրջաբերականի մի օրինակը, որով հիշյալ կազմակերպությունը բոլորովին վերջերս դիմել է «Ամերիկայի Միացյալ Նահանգների բոլոր քրիստոնյաներին»:

Ըստ մամուլում տեղ գտած տեղեկությունների, այդ Կոմիտեն մտադիր է ԱՄՆ-ի 120.000 եկեղեցիներում հավաքել ավելի քան 5 մլն. դոլար»:<sup>354</sup>

Ստանալով իր երկրի համար այդքան ախորժալուր և հաճելի տեղեկություններ իր դեսպանից, Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործոց նախարար Ա. Բրիանը, իրոք, անմիջապես արժեվորեց թե ինչ հսկայական հասարակական ու քաղաքական ազդեցություն կարող է ունենալ նման զանգվածային միջոցառումը, որի «ժամանակ միլիոնավոր ամերիկացիներ, իրենց Նախագահի հետ միասին «վրդովմունքով բողոքելու էին հայերի բնաջնջման հրեշավոր հանցագործության պատասխանատու Գերմանիայի դեմ, և պահանջելու էին ԱՄՆ-ի կառավարությունից հստակցենել իր դիրքորոշումները հանցապարտ Գերմանիայի նկատմամբ»: Ահա թե ինչու ծանոթանալով Ժուսերանի կողմից իրեն ուղարկված «Հայերի ու սիրիացիների օգնության Ամերիկյան Կոմիտեի» կոչ-դիմումին, Ա. Բրիանը նրա վրա արեց հետևյալ հետաքրքրական ու բնութագրական մակագրությունը. «Պարոն Վիեթին՝ խնդրում եմ, որ այս կոչը տպագրվի մեր մամուլում: Այն իրենից ներկայացնում է գեղեցիկ այուժե մեր քարոզչության համար, քանի որ իր մեջ պարունակում է չեզոք երկրների և ԱՄՆ-ի նախագահի կողմից այն փաստի անվերապահ ընդունումն, որ երիտթուրքերի կողմից հայերի նկատմամբ գործած ոճրագործությունները կատարվել են Գերմանիայի թույլտվությամբ»:<sup>355</sup>

1916 թվականի աշնանը, Ֆրանսիան ու իր դաշնակիցները հանրագումարի բերելով հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության միջոցով ԱՄՆ-ի՝ նախ, հանրային կարծիքի, և ապա, կառավարության դիրքորոշումների վրա ազդելու նպատակով ձեռնարկած եռամսհուն աշխատանքների արդյունքները, կարող էին գոհունակությամբ արձանագրել, որ

ԱՄՆ-ի և Գերմանիայի փոխհարաբերությունները սրվել էին այն աստիճանի, որ պատերազմը կողմերի միչև դարձել էր անխուսափելի: Ակնհայտ էր, որ ԱՄՆ-ի նման ռազմական ու տնտեսական հզոր ներուժ ունեցող տերության անցումն Անտանտի կողմը շատ բանով կանխորոշելու էր նրա հաղթանակը Գերմանիայի դեմ:

Անշուշտ, ասել թե Ֆրանսիայի և Անգլիայի կողմից հայոց ցեղասպանության դատապարտման օգնությամբ ձեռնարկված վճռական ու անգիջում քարոզարշավն է *վճռական զաղեցություն գործել ամերիկյան կառավարության դիրքորոշումների վրա*, և իրենով պայմանավորել Գերմանիային պատերազմ հայտարարելու ամերիկյան վճիռը (1917թ. ապրիլի 6-ը), անշուշտ, ճիշտ չէր լինի, քանզի ԱՄՆ-ի կառավարությունը նման որոշում ընդունելու համար ավելի էական ու կարևոր ռազմաքաղաքական ու տնտեսական դրդապատճառներ ուներ:

Սակայն, նույնչափ սխալ կլիներ, եթե չընդգծվեր այն անվիճելի փաստը, որ ինչպես Ֆրանսիայի ու իր դաշնակիցների, անպես էլ ԱՄՆ-ի ներսում եղած հասարակական – քաղաքական շահագրգիռ ուժերի կողմից ձեռնարկված հայոց ցեղասպանության դատապարտման հետևողական և արդյունավետ քարոզչությունը դարձավ *այն զլխավոր քարոյա-զաղափարական գործունը*, որը շատ բանով կանխորոշեց և «հիմնավորեց» ԱՄՆ-ի կառավարության՝ Գերմանիային պատերազմ հայտարարելու որոշումը, քանի որ ամերիկյան ժողովրդի լայն զանգվածների մեջ հայ ժողովրդի նկատմամբ համակրանքի ու կարեկցանքի, նրան օգնելու և աջակցելու լայնատարած մոտեցումներն, ինչպես նաև «զլխավոր» հանցագործ այսպանվող Գերմանիային պատժելու արմատավորված պահանջները, դառնում էին այն բարոյական նեցուկն ու պատվարը, որոնք օգնելու էին ԱՄՆ-ի կառավարող շրջաններին բոլորովին այլ նպատակներով սանձազերծված պատերազմին իր մասնակցությունն արդարացնելու համար:

Բարոյական ու զաղափարական պատերազմի այս ճակատում Գերմանիայի կրած պարտության փաստի ու գնահատության մասին թերևս ոչ ոք այնպես ճիշտ արժեվորում չտան,

<sup>354</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N 289, p. 265.

<sup>355</sup> Ibid.

ինչպես իրենք գերմանացիները:

1916թ. նոյեմբերի 16-ին «Բեռլինի միսիոներական Միության» նախագահ դ-ր. Կարլ Ակսենֆելդը Գերմանիայի կանցլեր Բետտման-Նոլվեգին ուղղված «Դիմում»-ի մեջ նշելով, որ «չեզոք երկրներում Գերմանիայի հասցեին լայնորեն տարածվում են մեղադրանքներ այն մասին, որ նա ոչ միայն անվրդով դիտում է, այլև աջակցում է քրիստոնյա մի ամբողջ ժողովրդի եղեռնի իրագործմանը», արձանագրում էր, որ այդ քարոզչությունը «չեզոք երկրների վրա թողել է կործանարար ազդեցություն՝ *հատկապես Ամերիկայի վրա, որտեղ հայկական սարսափների մասին քարոզչության ունեցած ազդեցությունը հազիվ թե կարելի է գերազնահատել*»:<sup>356</sup>

1918թ. հունվարի 6-ին «Գերմանա-հայկական Միության» անունից Պաուլ Ռոյբախը, Էդվալդ Կիրը և Մարտին Ռադեն Գերմանիայի կառավարությունից Հայաստանի համար ավտոնոմիա պահանջող իրենց դիմումի մեջ ուղղակի փաստում էին, որ «հայկական իրադարձությունները *մեծ ջանադրությամբ և հաջողությամբ օգտագործվեցին Անտանտի կողմից*, որպեսզի վարկաբեկեն և հեղինակագրկեն Գերմանիային, համաշխարհային հանրային կարծիքը տրամադրեն նրա դեմ, և, այդ, նպատակը, հակառակ չեզոք երկրների՝ մեր նկատմամբ ունեցած ավանդաբար բարեհամբյուր վերաբերմունքի, զգալի չափով ձեռք է բերվել»:<sup>357</sup>

Իսկ պատերազմից հետո, արդեն «Քրիստոնեական աշխարհ» թերթի 1919թ. մարտի 20-ի համարում լույս տեսած «Գերմանիան և Հայաստանը» ուշագրավ հոդվածում մատնացույց էր արվում, որ «հարցերից մեկը, որտեղ բարոյական-գաղափարական տարրի... անտեսումը Գերմանիայի համար դարձավ *ճակատագրական Հայկական հարցը եղալ*:

...Բելգիայի հետ մեկտեղ, Հայաստանը դարձավ *այն գլխավոր փաստարկը, որն արդարացնում էր Անտանտի արշավանքը Գերմանիայի դեմ, և անգամ Ամերիկան, պատերազմ հայտարարելով Գերմանիային, պատճառ էր բռնում Հա-*

րական հասարակայնությանը», առանձնահատուկ տազնապով արձանագրում էին, որ գերմանական միսիոներությունը փորձում է նաև լուծել Գերմանիայի հեղինակության բարձրացման քաղաքական կարևոր խնդիրը, պնդելով. որ «Գերմանիայի կառավարությունը նույնպես հայերին օգնելու ուղղությամբ հնարավոր ամեն ինչ արել է թուրքական կառավարության վրա ազդելու համար»: Իր նամակի վերջում պրոֆ. Ռիխտերը «հույս էր հայտնում, որ նկատի ունենալով Գերմանիայի այդ քարյացկամությունը հայերի նկատմամբ, ամերիկացիները կհամոզվեն, որ Գերմանիայի ազնվագարն կայսրը, նրա ազնիվ ու աստվածավախ կանցլերը և նրա կառավարությունը ոչ մի կերպ մեղավոր ու պատասխանատու չեն հայերի դժբախտ ճակատագրի համար, որ նրա դեմ ուղղված բոլոր մեղադրանքները կեղծիքի և զրպարտությունների շարան են միայն»:<sup>346</sup>

Իրողությունների այս ողջ շարքը վեր հանելուց հետո, ֆրանսիական ռազմական ցենզուրայի կողմից կազմված հուշագրի հեղինակները այն լուրջ մտավախությունն էին հայտնում, որ գերմանական միսիոներները զթասրտության ծխածածկույթի տակ կարող են նպաստել Գերմանիայի ներթափանցմանը հայերին օգնություն ցուցաբերելու նպատակներով ստեղծված ամերիկյան ֆոնդերը, և այդ ճանապարհով ծավալեն մեզ թշնամական քարոզչություն»:<sup>347</sup>

Բնական, որ Ֆրանսիայի քաղաքական քարոզչության վարիչները չէին կարող թույլ տալ ամերիկյան հանրային կարծիքի վրա ազդելու իրենց հիմնական և ազդեցիկ դաշնակցի՝ «*ամերիկյան միսիոներության*» ո՛չ ապաքաղաքականացումը, առավել ևս ո՛չ նրա անցումը թշնամական քարոզչության ճամբարը և ո՛չ էլ նրա համագործակցությունը գերմանական միսիոներության հետ, որն այդ հարցում ոչ միայն և ոչ այնքան ձգտում էր հանգստացնել իր «քրիստոնեական խիղճը» և փրկել իր վարկը, որքան որ ջանում էր կատարել գերմանական կառավարության պատվերը:

Այս նպատակով ֆրանսիական կառավարությունը զգա-

<sup>356</sup> «Геноцид армян и армянский вопрос...», стр. 411-412.

<sup>357</sup> Там же, стр. 463.

<sup>346</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N 236, p. 215-216.

<sup>347</sup> Ibid, doc.N.236, p. 216.

լիորեն ակտիվացրեց Փարիզի «Ամերիկյան ակումբի» գործունեությունը, որի հավաքների ու ժողովների ժամանակ արծարծված նյութերը և հարցադրումները մեծ օպերատիվությամբ հայտնվում էին ամերիկյան մամուլի էջերում, դրանով իսկ նպաստում, ինչպես հայերի ջարդերի և տարագրության նկատմամբ ամերիկյան ժողովրդի վրդովմունքի տարողության հարստացման, այնպես էլ Գերմանիայի դեմ վրդովմունքի սաստկացման և հանրային կարծիքը հոգուտ Անտանտի երկրների դարձնելու գործին:

1915թ. նոյեմբերի 18-ին Փարիզի «Ամերիկյան ակումբը»՝ Տարսոնի ամերիկյան քոլեջի նախկին ուսուցիչ և հայտնի հայասեր Հերբերտ Ադամս Գիբոնի առաջարկությամբ, իր շաբաթական հավաքին, որին ներկա էր Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպանը, հրավիրեց Արշակ Չոպանյանին՝ նրանից խնդրելով մի բանախոսությամբ պարզել հայկական հարցի արդի կացությունը: Շուտով ամերիկյան մամուլում լույս տեսած իր այդ բանախոսության մեջ Ա. Չոպանյանը անդրադառնալով գերմանական և թուրքական քարոզչության կողմից Միացյալ Նահանգներում և մյուս չեզոք երկրներում լայնորեն տարածվող այն պնդումներին թե հայերի կոտորածների մասին պատմությունները հերյուրանքներ են, «իսկ թուրքական կառավարությունը պատժել է միայն հանցավորներին, և նախազուրկության համար մի քանի շրջանների հայ բնակչությանը հեռացրել է դեպի երկրի խորքերը», նա իրավացիորեն հարց էր տալիս. «Միթե՞ որևէ մեկն իրավունք ունի Թուրքիոյ հայերը պատասխանատու բռնել օտար երկրների իրենց ազգակիցներու վարմունքին համար: Թուրքիոյ հայերը երկրին հանդեպ կորեկտ ընթացք մը ունեցան, իրենց բոլոր պարտականությունները կատարեցին, հանձն առան դրամապես օգնել կառավարութեանը:

Կարծու՞մ էք այդ հրեշտություններն անհրաժեշտ էին օսմանյան պետութեան անվտանգութեան ապահովման համար: Ո՛չ, այստեղ կար ազգ մը սպանելու «կանխորոշ դիտավորություն», ազգ մը, որին թուրքերն ատում են նույնիսկ իր քաղաքակրթութեան համար, ինչպես նշում էր “Matin”-ը մի քանի

օր առաջ»:<sup>348</sup>

Վճռականորեն հերքելով ԱՄՆ-ում Թուրքիայի հյուպատոսներից մեկի կողմից հարատարակված նամակում առաջ քաշված այն շինծու պնդումները, թե հայոց ցեղասպանության դատապարտման իրենց քարոզչությամբ ամերիկյան միսիոներները «հետապնդում են գաղտնի շարժառիթներ, որոնց նպատակն է երևակայական խժոժությունների նկարագրությունները տարածելու ճանապարհով վնասել Թուրքիային», Ա. Չոպանյանը կտրուկ և միանշանակ հաստատում էր, որ «ամերիկյան միսիոներներուն շարժառիթները ուրիշ ոչինչ են, եթե ոչ մարդասիրության զգացումը, արդարության և ճշմարտության սերը»:<sup>349</sup>

Ֆրանսիայի քաղաքական շահերին հետամուտ քաղաքական քարոզչությունը տնօրինող ուժերը, որոնք հեռու էին հայոց ցեղասպանության հարցում «մարդասիրության զգացումին, արդարության ու ճշմարտության սիրուն» առանջնահերթ կարևորություն տալուց, 1916թ. ամռանն ու աշնանը մշակեցին ու իրականցրին քարոզչական բնույթի մի շարք ձեռնարկներ, որոնք նպատակ ունեին հայոց ցեղասպանության դատապարտման ընձեռնած քարոզչական հնարավորություններն օգտագործելով՝ էլ ավելի վարկաբեկել Գերմանիային չեզոք երկրների՝ առաջին հերթին ամերիկյան հանրային կարծիքի աչքերում, և նույն չափով էլ բարձրացնել Ֆրանսիայի՝ որպես տառապյալ հայ ժողովրդի կարեկից բարեկամի և անշահախնդիր օգնողի վարկը:

1916թ. սեպտեմբերի 12-ին սենատոր Լուի Մարթենն արտաքին գործոց նախարարության «Քաղաքական գործերի դեպարտամենտի» տնօրեն Դ՝Մարթերիին գրում էր. «Պատիվ ունեմ Ձեզ ուղարկելու իմ նամակը՝ ուղղված Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանին, որը վերաբերում է Հայաստանին: Այս նամակի հետ կապված, պարոն վարչապետը գերադասելի համարեց այնպիսի պրոցեդուրա, որպեսզի թե՛ իմ այս նամակը, և թե՛ նրա պատասխանը փոխանցվեն մամուլին:

<sup>348</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 23-ը հունվարի, 1916թ.:

<sup>349</sup> Նույն տեղը:

Ես իմ կողմից պարոն վարչապետին եմ թողնում այդ հարցի հետ կապված բոլոր խնդիրների կարգավորման իրավունքը»:<sup>350</sup>

Ինչպես ակնառու երևում է այդ փաստաթղթից, 1916թ. աշնանը ֆրանսիական կառավարությունը շահագրգռված էր այն բանում, որպեսզի Ֆրանսիայի հեղինակավոր ու ազդեցիկ քաղաքական գործիչներից մեկը, որը նաև պետք է ունենար հայասերի ու հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամի համբավ, հրապարակավ դիմեր ֆրանսիական կառավարությանը, նրանից պահանջելով «ազդարարել՝ ի լուր աշխարհի, ինչպես դա վերջերս արեց Անգլիան, հայերի ազատագրության և նրանց դահիճներին պատժելու մասին: Եվ իրոք, սենատոր Լուի Մարթենը, որը բավարարում էր վերոհիշյալ բոլոր պահանջներին, իր այդ նամակով «պահանջեց» վարչապետ Ար. Բրիանից հրապարակավ՝ Ֆրանսիայի անունից դատապարտել հայերի կոտորածները. «Դատապարտման Չեր հզոր ձայնը հոգուտ բարբարոսության զոհ դարձած հայ ժողովրդի, կարող է չեզոք երկրներին, որոնցից ամենահզորը՝ ԱՄՆ-ն արդեն արտահայտել է իրենց զգացումները, առաջնորդել դեպի այն վճիռը, որ եկել է պահը, երբ պետք է թուրքական կառավարությանը և նրան վեհապետորեն կառավարող Գերմանիային հասկացնել տալ, որ իրենք հայ ժողովրդի սիստեմատիկ կոտորածը նույնպես դիտում են որպես մարդկության հանդեպ անպատվություն և նրա դեմ գործած հանցագործություն»:<sup>351</sup>

1916թ. հոկտեմբերի 14-ին Արիստիդ Բրիանը հրապարակով պատասխանեց սենատոր Լուի Մարթենին՝ իր «ազնիվ» և «հզոր» ձայնը բարձրացնելով «հոգուտ արդարության և իրավունքի մարտիրոս հայ ժողովրդի», որտեղ, նախ, հայտարարում էր, որ «Ֆրանսիան բաժանում է քաղաքակիրթ ազգերի բոլոր այն զգացումները, որ նրանք տածում են դաժան ոճիրների զոհ դարձած հայ ժողովրդի նկատմամբ», և ապա շեշտում, որ «չեզոք երկրներում Ֆրանսիայի պաշտոնական ներկայացուցիչների տրամադրության տակ դրվել են բոլոր ան-

յաստանը»:<sup>358</sup>

Քննարկվող հիմնահարցի համակողմանի պարզաբանումը, անշուշտ, թերի ու անկատար կլիներ եթե անպատասխան թողնվեր խնդրի հետ սերտորեն առնչվող, և նրա բաղկացուցիչ մասը կազմող այն հարցերի շարքը՝ թե հայկական կողմը՝ ի դեմս Հայոց Ազգային Պատվիրակության և նրա նախագահ Պողոս Նուբարի, Փարիզի «Հայ մտավորականության Միության» և նրա նախագահ Արշակ Չոպանյանի, ամերիկահայ գաղութի քաղաքական ու կրոնական կազմակերպությունների, որոնք ակտիվորեն մասնակցելով և իրենց նպաստը բերելով Ֆրանսիայի և նրա դաշնակիցների կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգների հանրային կարծիքի համակրանքը ձեռք բերելու, նրա աչքերում Գերմանիային վարկաբեկելու և հեղինակազրկելու, ամերիկյան կառավարության դիրքորոշումների վրա ազդելու նպատակով հայոց ցեղասպանության դատապարտման օգնությամբ ձեռնարկված քարոզարշավի հաջողությունը, նախ, ի՞նչ սպասելիքներով ու ակնկալիքներով մտան այդ գործընթացի մեջ, և ապա, արդյունքում, հայկական կողմը ի՞նչ ստացավ Ֆրանսիայի ու նրա Դաշնակիցների գաղափարաքարոզչական այդ «փառավոր» հաղթանակից, և ի վերջո, ինչպիսի՞ ընդհանուր և բաժանող եզրեր ունեին այդ հարցում հայկական կողմի և Ֆրանսիայի կառավարության նպատակադրումներն ու ձգտումները:

Ինչ վերաբերում է այն հարցին թե ի՞նչ չափով, և ո՞ր հարցերում էին հայկական կողմի նպատակներն ու ակնկալիքները համահունչ ֆրանսիական կողմի նպատակադրումներին, ապա կարելի է փաստել, որ ֆրանսիական քարոզչության մեջ հայկական կողմի համար միանգամայն ընդունելի և հայ ժողովրդի շահերից բխող նպատակադրումներ կային:

Եվ իրոք, այնքանով, որքանով ֆրանսիական քարոզչությունը ձգտում էր ԱՄՆ-ի լայն հասարակայնությանը՝ կառավարությանը և հանրային կարծիքին տեղյակ պահել հայոց ցեղասպանության ճշմարտության մասին, և հասնել հայ ժողովրդի նկատմամբ համակրանքի ու կարեկցանքի համատա-

<sup>350</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N 257, p. 233.

<sup>351</sup> Ibid, doc. N. 257, p. 234-236.

<sup>358</sup> “Германские источники о геноциде армян...”, Ер. 1991, стр.303.

րած արմատավորմանը, այդքանով այն համապատասխանում էր հայկական կողմի ձգտումներին:

Սակայն, այդ փուլից սկսած ֆրանսիական պետական քարոզչությանը օգնելու ու աջակցելու համար իր քարոզչական ու բարոյական ներուժը տրամադրող հայկական կողմի նպատակադրումներն ու ակնկալիքներն սկսում էին բաժանվել ֆրանսիական քարոզչության նպատակադրումներից, տարանջատվել և նույնիսկ հակադրվել:

Հայկական կողմն ամենից առաջ ձգտում էր և ակնկալում, որ Թուրքիայի և նրա դաշնակից Գերմանիայի վրա ներգործելու կարողություն ունեցող ամենահզոր և հեղինակավոր երկիրը՝ ԱՄՆ-ն միավորելով բոլոր շահագրգիռ չեզոք երկրների ջանքերը, կհասնի այն բանին, որ կձեռնարկվեն *գործնական և ազդու քայլեր* արևմտահայության ամբողջական բնաջնջումը կանխելու, տարագիր հայության վիճակը բարելավելու, և նրան օգնություն հասցնելու համար: Այդ սպասելիքներն ու ակնկալությունները Արշակ Չոպանյանը՝ 1916թ. սեպտեմբերի 14-ին արտահայտեց Ֆրանսիայի վարչապետ Արիստիդ Բրիանին ուղղված դիմումի մեջ, որտեղ նրան կոչ էր անում իր «հեղինակավոր ձայնը բարձրացնել չեզոք երկրների վրա ազդելու համար. ԱՄՆ-ի կառավարությունն արդեն մի քանի դեմարշներ է արել, և ձեռք է բերել հայ տարագիրներին դրամական օգնություն ուղարկելու թույլտվություն: Սակայն, մյուս չեզոք երկրների կառավարությունները դեռևս ոչինչ չեն արել որպեսզի դադարեցվի հայերի ոչնչացումը կամ էլ, առնվազն, թեթևացվի հայրենի օջախներից թշված և Միջագետքի անպատներում հայտնված դժբախտ տարագիրների վիճակը:

...Բոլոր չեզոք պետությունների կողմնակից և եռանդուն դեմարշը հոգուտ քաղաքակրթության և քրիստոնեության մարտիրոսների՝ անարդյունք չի մնա: Թուրքական կառավարությունից պետք է պահանջել.

1. Դադարեցնել Թուրքիայում մնացած հայերի դեմ հալածանքներն ու դաժանությունները: Զանգի թե՛ Ղուրանը և թե՛ Աստվածաշունչն արգելում են խփել ծայրաստիճան թշվառության մեջ գտնվողներին,

2. Թույլ տալ չեզոք երկրների ներկայացուցիչներից

բաղկացած առաքելություններին օգնություն ցուցաբերել տարազիրներին, բուժել հիվանդությունները, տեղծել աշխատատեղեր *նրանց համար*՝ ովքեր կարող և ուզում են աշխատանքով վաստակել իրենց հացը:

Կոչ արե՞ք, պարոն Նախագահ, բոլոր չեզոք երկրներին, որպեսզի նրանք կատարեն իրենց պարտքը:՝<sup>359</sup> Թեև Ֆրանսիայի կառավարության նախագահը 1916թ. հոկտեմբերի 14-ին, պատասխանելով սենատոր Լուի Մարթենի դիմումին, իրոք որ դիմեց չեզոք երկրներին՝ «իրենց «պարտքը»՝ կատարելու կոչով ու հորդորով այդուհանդերձ, մեր կարծիքով, Ֆրանսիան այս հարցում բոլորովին այլ նպատակադրումներ, սպասելիքներ ու շահագրգռվածություն ուներ, որոնք ամենևին էլ թելադրված չէին մահվան ճիրաններում հայտնված արևմտահայության սարսափները դադարեցնելու և կամ նրա վիճակն ամոքելու մտահոգությամբ: Ինչպես արդեն նշել ենք, Ֆրանսիային *ոչ մի կերպ ձեռնառու չէր*, և չէր *կարող բավարարել այն արդյունքը*, որ իր քարոզչական ջանքերի հետևանքով, Ամերիկայի Միացյալ Նահանգները միայնակ կամ մյուս չեզոք երկրների գլուխն անցած՝ իրենց համար գլխավոր նպատակ համարեին և հասնեին այն բանին, որ, ազդելով Գերմանիայի, և ապա Թուրքիայի վրա, դադարեցվեր արևմտահայության ամբողջական բնաջնջումը, և էապես բարելավվեր տարազիրների վիճակը:

Դժվար չէ նկատել, որ մնան արդյունքի դեպքում, որը հայության շահերից էր բխում, անշուշտ, նախ զգալիորեն կմեղմանար ԱՄՆ-ի և Գերմանիայի հարաբերությունների սրվածությունը՝ առնվազն հայկական խնդրի հետ առնչություն ունեցող հատվածի չափաբաժնով, երկրորդ Գերմանիան, թեկուզ և մասնակիորեն, հնարավորություն կստանար բարձրացնելու իր՝ որպես «քրիստոնյա», «գթասիրտ», և «քաղաքակիրթ» պետության վարկը, իսկ այդքան քարոզչական և այլ ջանքեր թափած Ֆրանսիան և նրա դաշնակիցները, ոչ թե կուրախանային ու գոհ կմնային, որ իրենց ջանքերի շնորհիվ կփրկվեին տասնյակ հազարավոր անմեղ հայերի կյանքեր, այլ խիստ դժգոհ կմնային մնան արդյունքից, որը նրաց կգրկեր ԱՄՆ-ի և

<sup>359</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 262, p. 238-239.

Գերմանիայի հարաբերությունները պատերազմի ուղղությամբ սրելու պատեհությունից, իսկ Ֆրանսիային ու նրա դաշնակից-ներին այլևս հնարավորություն չէր ընձեռնի հանդես գալու «մարտիրոս» հայ ժողովրդի «միակ» և «վեհանձն» պաշտպանի վարկով:

Ցավոք, պատմությունն այս անգամ էլ բարեհաճ չգտնվեց, և հայկական կողմին՝ զրկեց իր սպասելիքների ու ակնկալիքների իրականցումը տեսնելու հնարավորությունից, քանի որ հայկական ցեղասպանության դատապարտման լայնածավալ քարոզչությունը, որ իրականցրեցին ֆրանսիական քարոզչությունն ու նրա հետ համագործակցող հայկական պաշտոնական և ոչ պաշտոնական հանգամանք ունեցող կառույցներն ու անձերը Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ ի վիճակի չեղավ ստիպելու Գերմանիային՝ և նրա միջոցով Թուրքիային, հանուն ԱՄՆ-ի հետ խաղաղ և չեզոք հարաբերությունների պահպանման, որդեգրելու ավելի մեղմ ու հանդուրժող քաղաքականություն արևմտահայության կենդանի մնացած հատվածի նկատմամբ: Իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, նախ, չհաջողվեց այդ նպատակի շուրջը միավորել բոլոր չեզոք երկրների ջանքերը, և ապա չհաջողվեց խաղաղ, դիվանագիտական ու այլ կարգի ներազդման միջոցներով հասնել հայ ժողովրդի համար քիչ թե շատ ընդունելի և գործնական այնպիսի լուծումների, որոնք հնարավորին չափ նվազագույնի կհասցնեին արևմտահայության գլխին թափած սարսափներն ու նրա կրած կորուստները:

ԱՄՆ-ի և մյուս չեզոք երկրների համատեղ ջանքերի շնորհիվ արևմտահայության վիճակը բարելավելու և նրա ամբողջական սպանող դադարեցնելու սպասելիքներով Ֆրանսիայի քարոզչական գործունեությանն աջակցող հայկական կողմը՝ ԱՄՆ-ի կողմից Գերմանիային պատերազմ հայտարարելու լուրն ընդունեց, ի տարբերություն Ֆրանսիայի, որը չէր թաքցնում իր ուրախությունն ու գոհունակությունը, անհագստությամբ ու տանգնապով, քանի որ պարզ էր ու որոշակի, որ Գերմանիայի դեմ ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելը ոչ մի իրական ու շոշափելի դրական արդյունք չէր խոստանում դեռևս ցեղասպանության ճիրաններում գալարվող արևմտահայության

մնացորդացին: Ավելին, այն սպառնում էր մինչ այդ ԱՄՆ-ի կողմից տարագիր հայության օգտին ձեռք բերված նվազագույն ձեռքբերումների գոյությանն իսկ:

Հուսախափ, տագնապահար և բոլորովին այլ արդյունքներ ակնկալող հայկական կողմը, շատպեց դյուրությունն ինչ որ ձևով փրկել և «անտեր» մնացած տարագիր հայությանն օգնելու խնդրանքով դիմել Ֆրանսիային, որպեսզի նա կոնկրետ քայլեր ձեռնարկի հանուն այն կոտորվող ժողովրդի, որի ցեղասպանության դատապարտման քարոզչությունն այդպիսի մեծ ծառայություն էր մատուցել ԱՄՆ-ի և մյուս չեզոք երկրների նկատմամբ իր ռազմաքաղաքական նպատակադրումները հետապնդող Ֆրանսիային: Այսպես, 1917թ. ապրիլի 14-ին՝ ԱՄՆ-ում Ֆրանսիայի քարոզչական արշավին ակտիվ մասնակցության վաստակը ունեցող Արշակ Չոպանյանը՝ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Ռիբոյին և ռազմական գործոց նախարար Փենլվեին ուղղված նամակներում ահազանգում էր, որ «Ամերիկայի Միացյալ Նահանգների մուտքը պատերազմի մեջ Դաշնակիցների կողմում դաժան հետևանքներ է ունենալու Միջագետք և Միրիա տարագրված հայության համար: Նրանց վիճակն արդեն ողբալի է. Թուրքական կառավարությունն ամեն ինչ անում է նրանց սովի և հիվանդությունների միջոցով ոչնչացնելու համար:

Միացյալ Նահանգների հյուպատոսներն այդ դժբախտների միակ հենարանն ու հովանավորն էին. նրանք հաճախ իրենց վրա էին վերցնում նրանց պաշտպանելու, ամերիկյան մարդասերների և արտասահմանի հայության հանգանակած դրամական օգնությունը նրանց հասցնելու գործը:

Պարզ է, որ ամերիկյան հյուպատոսների մեկնելու դեպքում, հայ տարագրյալները կմնան առանց աջակցության»:

Թերևս միայն դիվանագիտական էթիկետի և սիրալիրության նորմերը չխախատելու անհարժեշտությամբ կարելի է բացատրել այն փաստը, որ արևմտահայության մնացորդացի համար այդպիսի ծանր հեռանկարները մատնանշող նամակում, միաժամանակ տեղ են գտել նաև հավաստիացումներն այն մասին. թե «Ամերիկայի Միացյալ Նահանգների մուտքը պատերազմի մեջ... ամենաերջանիկ իրադարձությունն է, և

ազատական ուժերի այդ հզորացումից հայ Դատը կարող է շահել, և այդ փաստը խորապես ուրախացնում է հայերին»:

Նամակի մեջ նշված դառն իրականությանը չհամապատասխանող և Ֆրանսիային սիրաշահելու և չվիրավորելու միտված այդ ռեվերանսային հավաստիացումներն անելուց հետո, Արշակ Չոպանյանը Ֆրանսիայի կառավարությանը խնդրում էր «բարի գտնվել և չեզոք երկրների կառավարություններին, հանուն մարդկության, հրավիրել՝ իրենց վրա վերցնելու Թուրքիայի տարագիր հայության հովանավորի դերը»:<sup>360</sup>

Վերջում, Արշակ Չոպանյանը վստահություն էր հայտնում, որ «չեզոք երկրների կառավարություններն, անշուշտ, չեն հրաժարվի, հանուն մարդկային գթասրտության, իրենց վրա վերցնելու տարագիր հայության հովանավորի դերը, եթե այդ մասին նրանց իր՝ հարգանքի արժանի բարձր ձայնի ողջ հզորությամբ խնդրի Ֆրանսիան»:<sup>361</sup>

Մակայն Արշակ Չոպանյանին ու նրա նման մտածողներին սպասում էր նոր հուսախաբություն, քանի որ ամենահզոր չեզոք տերության՝ Անտանտի կողմում պատերազմի մեջ մտնելուց հետո, Միջազգետքի անպատեհները տարագրված հայերի ողբալի վիճակի մասին մինչ այդ քարոզչական նպատակներով Ֆրանսիայի կողմից լայնորեն օգտագործվող «խաղաթուղթը» կորցրեց իր նախկին կարևորությունը Ֆրանսիայի համար: Եվ նա փորձեց ստեղծված «ներբանկատ» վիճակից «պատվով» դուրս պրծնելու ուղիներ փնտրել:

Եվ իրոք, Ֆրանսիան, որը անշուշտ խորապես գոհ էր ու բավարարված, որ տնտեսական և ռազմական մեջ հզորության տեր չեզոք երկիրը պատերազմի մեջ է մտնում Անտանտի կողմում, դյուզն իսկ չանհանգստանալով, որ այդ դեպքում տարագիր արևմտահայությունը կորցնում է իր միակ հովանավորին, փորձեց իր օձիքը ազատել հայերի թախանձագին խնդրանքներից գործնական ոչ մի արդյունք չխոստացող հավաստիացումներով, հայերի գլխի տակ «փափուկ» բարձ դնող գրասեն-

<sup>360</sup> Les Grandes Puissances..... Opt. cit., doc. N 350, p. 349-350.

<sup>361</sup> Ibid, doc. N 350, p. 350.

յակային խուսազրություններով, որ «Ֆրանսիան արդեն դիմել է Ամերիկայի Միացյալ Նահանգներին հարցումով, թե նրանք ի՞նչ դեմարշներ են մտադիր անելու չեզոք երկրների մոտ՝ Միջազգետք տարագրված հայերին օգնելու համար, և հայտնել նրանց, Ֆրանսիան պատրաստ է աջակցելու նրա այդ դեմարշներին»:<sup>362</sup>

Ֆրանսիական կառավարության և հայկական կողմի շահերն ու ակնկալիքներն ոչ մի կերպ չէին համապատասխանում, նաև, նախ, ԱՄՆ-ի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու, և ապա, ամերիկյան զորքերը փոքրասիական ռազմաճակատներում օգտագործելու հարցերում:

Հայկական կողմն, ելնելով հայ ժողովրդի կենսական շահերից, գերադասելի էր համարում, որ Միացյալ Նահանգներն առաջինը պատերազմ հայտարարեին ոչ թե ցեղասպանության գոհ դարձած հայ ժողովրդի հայրենիքից շատ հեռու գտնվող Գերմանիային, այլ առաջին հերթին Թուրքիային, ուր ուղարկելով իրենց զորքերը, նրանք օր առաջ կազատագրեին մարտիրոս ժողովրդի մնացորդացին ու նրա հայրենիքը, կօգնեին ամոքելու նրա վերքերը, և իրական պայմաններ կստեղծեին Հայաստանի ինքնուրույն քաղաքական զարգացման համար: Այս իմաստով շատ բնորոշ է Պողոս Նուբարի պատասխան նամակը դ-ր Բարտոնին, որը արտահայտում էր ամերիկյան միսիոներական ազդեցիկ շրջանակների տեսակետները, իսկ նրա «փաստարկները հավանություն էին ստացել պրեզիդենտ Վիլսոնի կողմից»:<sup>363</sup> Իր նամակում Պողոս Նուբարը, որը դրա մի օրինակը փոխանցեց Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության «Ասիա» դեպարտամենտի տնօրեն Ժան Գուին, իսկ վերջինս էլ հատուկ «Հուշագրով» այն ներկայացրեց «Զաղաքական գործերի դեպարտամենտի» տնօրեն դը Մարժերիին, խորը ցավով արտահայտեց իր կարծիքն այն փաստարկների մասին, որով դ-ր Բարտոնը փորձում էր հիմնավորել թե ինչու ԱՄՆ-նահանգները անհնար են համարում Թուրքիային պատերազմ հայտարարելը. «Դ-ր Գիբոնը ինձ փոխանցեց Ձեր

<sup>362</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., Ibid., doc. N 351, p. 350.

<sup>363</sup> Ibid,doc. N 664, p. 649.



նամակը: Ինչ վերաբերում է Ձեր այն փաստարկներին, որոնց միջոցով Դուք փորձում ելք բացատրել թե ինչու՞ ԱՄՆ-ը խուսափում են պատերազմ հայտարարել Թուրքիային, ապա ես լիովին հավանություն եմ տալիս դրանց:

Մեզ համար կարևորն այն է, որ ԱՄՆ-ի այդ ջանքերը թելադրված չեն Թուրքիայի գործած ոճիրները մոռանալու հրամայականով, և այն, որ անկախ այն բանից թե ԱՄՆ-ը Թուրքիայի հետ պատերազմի մեջ կգտնվեն թե ոչ, վերջնական կարգավորման ժամանակ նրանք վճռականորեն պահանջելու են, որ հայերը բացարձակապես ազատ լինեն թուրքական ...տիրապետությունից:

Ձեր այս ծրագիրը, որը ես վստահ եմ նաև պրեզիդենտ Վիլսոնինն է, մեզ վստահություն և հավատ է ներշնչում ապագայի նկատմամբ:

Ձեր փաստարկումների մեջ կա մեկը՝ 10-րդը, որից պարզվում է թե ինչու ԱՄՆ-ի համար անհնար է գորքեր ուղարկել որևէ այլ ռազմաճակատ, բացի արևմտյանից, ուր վճռվում է աշխարհի բախտը: Միանգամայն *օրինական են Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի* պահանջներն այն մասին, որպեսզի ԱՄՆ-ի կողմից տրամադրվելիք գորքերն անհապաղ օգնության հասնեն *ֆրանսիական և իտալական ռազմաճակատներին*, ուր ռուսական ռազմաճակատի հաշվին 1 մլն. մարդով ուժեղացված գերմանական բանակներն անցել են հարձակման:

Հասկանալի է, որ նման պայմաններում սահմանափակվել Թուրքիային *միայն* պատերազմ հայտարարելով, ոչ միայն սխալ, այլև վտանգավոր քայլ կլիներ:

*Իմ սիրտը ճնշվում է այն մտքից, որ արևմտյան ճակատի հրամայական պահանջներն այս պահին թույլ չեն տալիս ձեր կառավարությանը Թուրքիայի դեմ դուրս բերել նրան պարտության մատնելու համար ահրաժեշտ 200-300.000-ոց բանակ»:*<sup>364</sup>

Հայոց Ազգային Պատվիրակության նախագահին, և ընդհանրապես հայ ժողովրդին սրտի *կսկիծ* ու *խորը ցայ* պատճառող այս *իրողությունները*, կարող էին միայն ուրա-

խացնել թե Պ.Նուբարի և թե դ-ր Բարտոնի նամակներին *քաջածանոթ Ֆրանսիայի արտաքին գործոց ղեկավարությանը*, քանզի Ֆրանսիան ընդհանրապես դեմ էր, որ ԱՄՆ-ը պատերազմ հայտարարեր Թուրքիային, և առաջին հերթին շահագրգիռ էր, որ ԱՄՆ-ի ռազմական ուժերն օգնության հասնեին արևմտյան ճակատի իր ուժասպառ զորագնդերին, և որքան հնարավոր է հեռու մնային իր տարածքային նկրտումների շրջաններից՝ Թուրքիայի միջերկրածովյան ափամերձ և նավթով հարուստ տիրույթներից, ուր մուտք գործելու և հաղթանակներ տանելու դեպքում ԱՄՆ-ը, նախ, ֆրանսիական զորքերի բացակայության պայմաններում կստանային այդ շրջանների ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի «ազատարարի» լուսապսակը, և, ապա այդ տարածքները գրավողի իրավունքով, կարող էին ընդհանրապես չհեռանալ տարածաշրջանից՝ ստանալով ազատարգված ժողովուրդների բարոյական օրհնությունը և ռազմաքաղաքական աջակցությունը:

Այս ամենը պարզ ու ակնհայտ էր դարձնում *այն անվիճելի և նույնքան էլ ցավալի իրողությունը*, որ ԱՄՆ-ում՝ Ֆրանսիայի կողմից նաև հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության միջոցով ձեռք բերած ռազմա-քաղաքական արդյունքները, որոնց կայացմանն ակտիվորեն մասնակցել, օգնել ու աջակցել էին նաև հայկական տարբեր շահագրգիռ ուժեր ու կազմակերպություններ, ոչ մի կերպ չբավարարեցին և չարդարացրին հայկական կողմի էական ու կենսական նշանակություն ունեցող ակնկալիքներն ու սպասելիքները, և ընդհակառակը, ամբողջովին ծառայեցին Ֆրանսիայի հետապնդած թե՛ զաղափարաքաղաքական և թե՛ ռազմաքաղաքական շահերին, հայությանը թողնելով այն՝ եթերային հույսով մխիթարվելու մենաշնորհը, որ գոնե «վերջնական կարգավորման ժամանակ», Ֆրանսիան ու նրա Դաշնակիցները «կանեն ամեն ինչ, որպեսզի հայ ժողովուրդը ազատագրվի թուրքական տիրապետությունից»<sup>365</sup>:

<sup>364</sup> Les Grandes Puissances..... Opt. cit., doc. N 66, p. 651.

<sup>365</sup> Les Grandes Puissances..... Opt cit., doc. N 281, p. 260-261.

## §2. Ֆրանսիան և հայոց ցեղասպանության շուրջը ծավալված գաղափարա-քարոզչական պայքարը Շվեյցարիայում

Եվրոպայի չեզոք երկրների շարքում, ուր Ֆրանսիան անհաշտ պայքար էր ծավալել առանցքի երկրների՝ գլխավորապես Գերմանիայի դեմ, թե՛ իր կարևորությամբ և թե՛ Ֆրանսիայի թափած ու ներդրած քարոզչական ջանքերի մեծությամբ, անշուշտ, առաջին տեղը գրավում էր «հավերժ» չեզոք Շվեյցարիան, ինչն ուներ իր տարաբնույթ, տեսանելի ու անտեսանելի, բացահայտ ու թաքուն պատճառները :

Նախ և առաջ, թե՛ Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների, և թե՛ նրա թշնամիների համար գաղտնիք չէր, որ պատերազմի տարիներին հենց Շվեյցարիան էր դարձել գաղափարա-քարոզչական պատերազմի ելքը շատ բանով կանխորոշող այն գլխավոր ռազմադաշտը, որտեղ ձեռք բերված հաջողություններն ու հաղթանակներն դառնում էին վճռորոշ, իրենցով պայմանավորելով պայքարի ընթացքը մյուս՝ երկրորդական ճակատներում: Եվ իսկապես, Շվեյցարիան գաղափարական գնահատումների ու արժևորումների, տեսակետների, մոտեցումների և գերապատվությունների մի յուրահատուկ և ազդու կենտրոն էր, որտեղ հաղթանակած գաղափարներն ու քարոզչական հայեցակարգերը մեծ արագությամբ տարածվում էին մյուս երկրներում՝ էապես ազդելով այդ երկրների հասարակական կարծիքի, հասարակական ուժերի գործունեության ուղղվածության ու բովանդակության, և վերջապես, այդ պետությունների քաղաքական որդեգրումների և դիրքորոշումների վրա: Պատկերավոր ասած, Շվեյցարիան գաղափարական գերապատվություններին տոն և ուղղություն տվող «մոդայի» և դրանց արտահանության ճանաչված կենտրոն էր:

Գաղափարա-քարոզչական պատերազմում Շվեյցարիայի առաջնային դերակատարությունը պայմանավորող մյուս գործոնը կապված էր այն իրողության հետ, որ այս երկրում էին կենտրոնացված պատերազմի թոհ ու բոհի մեջ ներքաշված, իրենց իրավունքների համար պայքարող փոքր ու ճնշված ժողովուրդների քաղաքական փտարանդիության և ընտրանու ազ-

դեցիկ ուժերը, որոնց քաղաքական դիրքորոշումներից ու գաղափարական որդեգրումներից շատ բանով կախված էր իրար հետ գաղափարա-քարոզչական պատերազմ մղող երկու բշնամական խմբավորումների հաջողությունն ու պարտությունը:

Այս ամենը հասկանալի ու բացատրելի են դարձնում թե ինչու՞ Ֆրանսիան՝ գաղափարա-քարոզչական պատերազմում իր հաղթանակները կռելու, իր գլխավոր բշնամուն պարտության մատնելու, համաշխարհային հանրային կարծիքի համակրանքն, գաղափարական և գործնական աջակցությունը ձեռք բերելու, չեզոք երկրների կառավարություններին հակազերման գործողությունների, քայլերի ու ելույթների ծիրի մեջ առնելու համար հենց Շվեյցարիայում կենտրոնացրեց իր քարոզչական ինդուստրիայի ճիգերի ու եռանդի առյուծի բաժինը:

Ֆրանսիայի քարոզչական ողջ համալիրը տնօրինող, նրա գործունեության ռազմավարությունն ու մարտավարությունը պլանավորող և իրականացնող կառույցների ու ծառայությունների ղեկավարությունը, առնվազն 1915թ. աշնանից, սկսեց քաջ գիտակցել, որ Շվեյցարիայում բորբոքված գաղափարա-քարոզչական պատերազմում հաղթելու համար իր նախընտրած հիմնական քարոզչական ու գաղափարական զենքը՝ հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչությունն այս երկրում ունի հաջողության հասնելու և հաղթանակներ տանելու մի շարք անվիճելի ու իրական հավանականություններ, որոնք կապված էին հետևյալ երաշխիքային գործոնների հետ:

Այս համատեքստում ամենից առաջ աչքի էր զարնում այն իրողությունը, որ Շվեյցարիան, ուր կային խոր արմատներ ունեցող ժողովրդավարական կառույցներ, քաղաքացիական քաջությամբ և բացառիկ ազնվությամբ բնութագրվող հասարակական կարծիք, որը շատ դեպքերում կարողանում էր ազդել կառավարության քաղաքական դիրքորոշումների վրա, երկիրը ուներ անտարբերության դեմ պայքարի, մարդասիրության դարավոր ավանդույթներ և քաղաքական մշակույթ, չէր կարող անտարբեր մնալ և չպայքարել մարդկության դեմ գործած մի այնպիսի աղաղակող ոճրի դեմ, ինչպիսին էր հայոց ցեղասպանությունը:

Շվեյցարիան, անկախ որևէ մեկի շահերից ու ձգտումներից «գրելու էր հայ ժողովրդի ցավի մասին, ճանչել էր տալու նրա ցավը, բողոքելու էր քաղաքակիրթ մարդկության առաջ և հրավիրելու էր աշխարհիս հզորներին՝ պահպանել Արևելքի այդ հերոսական ու կուլտուրական ժողովուրդը»<sup>366</sup>։ Ուստի, ֆրանսիական քարոզչության գլխավոր հոգսը դառնում էր այդ վճռական բողոքի ձայնին համապատասխան գաղափարաքարոզչական, հայեցակարգային կաղապարում և քաղաքական ուղղվածություն տալու խնդիրը։

Հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության հաջողությունն երաշխավորող հաջորդ գործոնը կապված էր այն իրողության հետ, որ Շվեյցարիան մինչ առաջին աշխարհամարտն արդեն ուներ տասնամյակների փառավոր կենսագրություն ունեցող, հարգանքի ու խոնարհումի արժանի բազում գործերով հռչակված հայասիրական ուժեղ շարժում, որը, անշուշտ, ի դեմս նրա ճանաչված ղեկավարների՝ Լեոպոլդ Ֆավրի, Կրաֆտ-Բոնարի և այլոց, իրենից կախված ամեն ինչ անելու էր ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի շահերը պաշտպանելու, նրան բնաջնջող ուժերի դեմ պայքարելու, հայոց գողգոթայի ողջ պատկերը պարզելու, նրան կարելույն չափ գործնական օգնություն ցուցաբերելու համար։

Ըիշտ է շվեյցարական հայասիրական շարժումն այդ ամենն անուլու էր անկախ այս կամ այն պետության ձգտումներից, սակայն նույնքան ճիշտ է, որ այդ շարժումն օբյեկտիվորեն դառնալու էր Ֆրանսիայի դաշնակիցն ու գործընկերը վերջինիս քարոզչական պայքարում, և նրա հաջողությունն ապահովող կարևոր գործոններից մեկը։

Իր կարևորությամբ երրորդ գործոնը Շվեյցարիայում գործող քրիստոնեական՝ բողոքական ու կաթոլիկ միսիոներությունն էր՝ իր ուսումնական, ակադեմիական-գիտական հիմնարկներով, բարեգործական կառույցներով, հասարակական որոշակի կարծիք ստեղծելու և պետական իշխանության վրա ազդելու ունակ մամուլի օրգաններով, որը տասնյակ տարիներ

<sup>366</sup> «Արև», Բաքու, 30-ը հոկտեմբերի 1915թ.։

Արևմտյան Հայաստանում լուսավորչական ու բարեգործական մեծ աշխատանքներ էր իրագործել։

Պարզ է, որ հասարակական-քաղաքական այդ ազդեցիկ ուժը նույնպես կանգնելու էր հայ ժողովրդի պաշտպանության դիրքերում, պայքարելու էր նրան ոչնչացման դատապարտող ուժերի դեմ, և այդքանով դառնալու էր Ֆրանսիայի քարոզչական պայքարի հաջողությունն ապահովող ոչ աննշան գործոններից մեկը։

Եվ վերջապես, հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչության հաջողությունն ապահովող գործոններից մեկն էլ կապված էր այն իրողության հետ, որ Շվեյցարիան տասնամյակներ շարունակ դարձել էր հայ ազդեցիկ քաղաքական կուսակցությունների և ուժերի հզոր կենտրոններից մեկը, որի դիրքորոշումից մեծավ մասամբ կախված էր լինելու այն հարցի պատասխանը, թե ո՞րի գոհ դարձած ժողովրդի անունից ո՞ր խմբավորումը կամ կոնկրետ երկիրն է այսպանվելու որպես *գլխավոր մեղավոր ու պատասխանատու*, թե ո՞ր երկրին է վստահվելու «հայ ժողովրդի արդար դատը պաշտպանելու» իրավունքը և մենաշնորհը։ Ֆրանսիան, ցավոք, չնայած իր հետապնդած ոչ հայանպաստ ռազմա-քաղաքական նպատակադրումներին, կարողացավ արժանանալ Շվեյցարիայի հայ գաղութի թե՛ քաղաքական և թե՛ գաղափարա-քարոզչական աջակցությանը, որից և նա առատորեն օգտվեց պատերազմի ողջ ընթացքում։

Նկատի առնելով այն փաստը, որ 1915 թվականի ամռանը գերմանական Շվեյցարիայի մամուլը բացարձակապես, իսկ ռոմանականը գրեթե լռություն էր պահպանում հայոց ցեղասպանության իրողության նկատմամբ, Ֆրանսիայի քարոզչության գլխավոր կառույցի՝ արտաքին գործոց նախարարության «Քաղաքական գործերի դեպարտամենտի» ղեկավարներից մեկը՝ Ժան Գուն 1915թ. սեպտեմբերի սկզբներին Արշ. Չոպանյանին գրած նամակում իր դժգոհությունն էր հայտնում, և «պարսավանքի ենթարկում» այդ անտարբերության ու լռության համար։

Սակայն Ֆրանսիայի քարոզչական կառույցների հետ սերտ համագործակցության մեջ գտնվող Ա. Չոպանյանն՝ ար-

դեն 1915թ. սեպտեմբերի 22-ի թվակիր իր նամակում, շտապում էր հանգստացնել տազնապի մեջ գտնվող ժան Գուին, նրան հաղորդելով, որ Շվեյցարիայում, հատկապես “Journal de Genève”-ում 1915թ. սեպտեմբերի 9-ին «Մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը» հողվածի հրապարակումից հետո, տեղի է ունեցել շրջադարձ և բեկում հանրային կարծիքի մեջ, որի հետևանքով «Շվեյցարիան կարող է և կանի քայլեր այն ուղղությամբ, որ Դուք մատնանշել էիք Ձեր նամակում»:<sup>367</sup>

Եվ իրոք, իր լավատես կանխագուշակումների մեջ Արշ. Չոպանյանը չէր սխալվում: Ինչպես վերոհիշյալ փուլենշանային, այնպես էլ “Journal de Genève”-ում Փարիզում գտնվող թուրք ընդդիմության ղեկավար Շերիֆ փաշայի 1915թ. սեպտեմբերի 18-ին լույս տեսած «Նամակ «Ժուռնալ դը Ժնևի» խմբագրությունը» հողվածներից հետո, ոչ միայն ռամանական Շվեյցարիան իր հզոր բողոքի ձայնը բարձրացրեց ընդդեմ հայ ժողովրդի գլխին պայթած աղետի, ինչն ինքնին հաճելի էր Ֆրանսիային, այլև, որն ավելի կարևոր ու արժեքավոր էր նրա գաղափարա-քարոզչական պայքարի համար, գերմանական Շվեյցարիայի մամուլը շատ որոշակի և կտրուկ սկսեց խոսել ընդդեմ այդ ոճրի:

Անտանտի համար շատ կարևոր այդ բեկումնային շրջադարձը չվրիպեց նաև Բեռնում Ռուսաստանի դեսպանի ուշադրությունից, որը 1915թ. հոկտեմբերի 28-ին Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Ս. Դ. Սազոնովին ուրախությամբ հաղորդեց. «Շվեյցարական հասարակական կարծիքը և մամուլը վերջին ժամանակներս մեծ վրդովմունքով է հետևում թուրքերի կողմից հայերի կոտորածներին, և շվեյցարական մամուլում արդեն երևան են եկել բազմաթիվ հողվածներ ընդդեմ թուրքական զազանությունների»:

Չնայած իր նախնական չկամությանը, երբ նա հրաժարվում էր մամուլի իր օրգաններում տպագրել հաղորդագրություններ այդ հարցի վերաբերյալ, հիմա արդեն գերմանական Շվեյցարիայի մամուլը վճռվեց տպագրելու հողվածներ հայերի հուսահատ վիճակի մասին: Այդ բանը տեղի ունեցավ ականա-

տեսների կողմից ստուգված այն բազմաթիվ փաստերի ազդեցության տակ, որոնք պարզեցին քրիստոնյա հայ բնակչության բնաջնջման ցնցող պատկերը:<sup>368</sup>

Այդ բեկումը կրկնակի կարևորություն ուներ իր նպատակները հետապնդող Ֆրանսիայի համար, քանի որ «գերմանական Շվեյցարիան պատերազմի սկզբից արտահայտում էր գերմանասիրական տրամադրություններ, անգամ գերմանական Շվեյցարիայի ազատական ու դեմոկրատական մամուլի օրգանները Ցյուրիխում, Բազելում, Լյուցեռնում և Բեռնում իրենց համակրություններով հարում էին դեպի Գերմանիան, պաշտպանում նրան և կամենում նրա հաղթանակը: Մինչև անգամ այնպիսի մի բացարձակ բռնարարք, – ինչպիսին էր Բելգիայի չեզոքության խախտումը, – որոշ արադարցում գտավ այդ օրգաններում»:<sup>369</sup>

Սակայն հայոց ցեղասպանության խնդրում, այդ նույն օրգաններն արտահայտվեցին բոլորովին այլ կերպ: Նրանք այդ ոճրագործության ողջ պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության և Թուրքիայի հետ կապված այն հզոր տերությունների վրա, որոնք կարող էին բռնել թուրք մարդասպանի արյունոտ ձեռքը, սակայն չարեցին այդ քայլը:

Այս իմաստով ամենաբնութագրական և իսկապես ուղենիշային հրապարակումը 1915թ. սեպտեմբերի 16-ին Բազելում լույս տեսնող “Basler Nachrichten” գերմանալեզու ազդեցիկ օրաթերթում «Մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը» թղթակցությունն էր, ուր պատասխանելով այն հարցին «Քե ի՞նչ է տեղի ունեցել Հայաստանում», նախ, տրվում էր հայ ժողովրդի լիակատար ոչնչացման իրական պետկերը, մեթոդներն ու միջոցները, և ապա, ի ուրախություն Ֆրանսիայի, և բնականաբար, ի վնաս Գերմանիայի, որը ամեն կերպ պաշտպանում էր իր դաշնակցին և անհիմն մեղադրանքներ ներկայացնում հայ ժողովրդին ու նրա քաղաքական ղեկավարությանը, երբեմնի գերմանասեր թերթն ըմբոստանում էր «թուրքական կառավարության և նրա եվրոպական պաշտպանների այն ժխտողա-

<sup>367</sup> Les Grandes Puissances, .....Opt. cit, doc. N 98, p. 83.

<sup>368</sup> А. В. П. Р., Полигтархив, д. 3492, л. 14-15.

<sup>369</sup> «Արև», Բաքու, 1 նոյեմբրի 1915թ.:

կան փորձերի դեմ, որոնք նպատակ ունեին քողարկել հայ ժողովրդի ընդհանուր տարագրության և սիստեմատիկ ոչնչացման իրողությունը», և վճռականորեն հերքում էր թե՛ նրանց կողմից տարածվող կեղծ մեղադրանքները հայ ժողովրդի հասցեին և թե՛ թուրքերի անհիմն արդարացումները. «Թուրքական պաշտոնական հաղորդագրություններում վկայակոչվում են ռազմական նկատառումներ, և հայերի այն ելույթները, երբ հայերը՝ հրահրված թուրքերի նենգ սպանություններից և կոտորածի պլանաչափ նախապատրաստություններից (ինչպես օրինակ՝ Վանում և Շապին-Գարահիսարում), ստիպած էին դիմել ինքնապաշտպանության: Այդ ելույթները նրանց կողմից որակվում էին որպես հեղափոխական բռնկումներ, և որպես զաղտնի համագործակցություն բշնամու հետ: Չնայած կեղծ փաստաթղթերին ու ստորագրություններին, որ հավաքվում էին խոշտանգումների միջոցով, ո՛չ ոք չէր կարողանում ապացուցել, որ հայերի որևէ քաղաքական ու կրոնական կազմակերպություն պլանավորել կամ գոնե մտադիր է եղել հեղափոխական ապստամբություն բարձրացնել, կամ էլ թշնամական գործողություն կատարել: Այդ ստապատիր մեղադրանքները չեն կարող հայ ժողովրդի և նրա առաջնորդների մաքուր խիղճն արատավորել»:

Հրապարակավ հայտնելով, որ «ոչ մի ռազմական նկատառում չի կարող արդարացում ծառայել հայ ժողովրդի ոչնչացման համար», միախոնդերական ուղղվածություն և նախկինում գերմանասեր տրամադրություններ ունեցող օրաթերթը, արտահայտելով իրեն հետևող հասարակական-քաղաքական շրջանակների տրամադրությունները, որոնք, անշուշտ, խիստ նպաստավոր էին Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների համար, «քաղաքակիրթ մարդկության» անունից, նկատի ունենալով ամենից առաջ Գերմանիային, պահանջում էր Թուրքիայում դեռևս ներկայացված տերությունների դեսպաններից ու հյուպատոսներից հանդես գալ թուրքական կառավարության առաջ, և պահանջել, որ նա դադարեցնի հայ ժողովրդի պլանավորված ոչնչացումը, և ապահովի տեղահանված բնակչության

կյանքն ու անվտանգությունը»:<sup>370</sup>

Այս ուղղվածության ու բովանդակության հարյուրավոր հրապարակումների, իսկ շուտով նաև հրապարակային բազմամարդ միջոցառումների արդյունքում Շվեյցարիայի անտարբերության հետ կապված Ֆրանսիայի նախկին դժգոհությունն իր տեղը զիջեց գոհունակության: Չեզոք Շվեյցարիան, շնորհիվ “Journal de Genève”-ի, “Gazette de Lausanne”-ի, “Tribune de Genève”-ի, “La Suisse”-ի, “Basler Nachrichten”-ի և այլ ազդեցիկ օրգանների կողմից 1915թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հրապարակված բազմազան փաստաթղթերի, վկայությունների և լրջամիտ հոդվածների *սկսեց բարձրաձայն խոսել* հայկական *ողբերգության մասին*, և հակառակ պաշտոնական Գերմանիայի, որը ամեն կերպ արդարացնում էր օսմանյան արյունոտ ձեռքը, *ըմբոստացավ, գայրացավ, բողոքեց* և պահանջեց աշխարհի հզորներից, և առաջին հերթին ոճիրն արդարացնող Գերմանիայից, հանդես գալ թուրքական կառավարության առաջ, որ դադարեցվի հայ ժողովրդի ծրագրված և սիստեմատիկ բնաջնջումը: Արձանագրելով Շվեյցարիայի հասարակական կարծիքում տեղի ունեցած՝ Ֆրանսիայի համար շատ կարևոր ու հուսադրող բեկումնային այդ փոփոխությունը, ֆրանսիական կիսասապաշտոնական “Le Temps”-ը 1916թ. ապրիլի 9-ին՝ «Ֆրանսիան և Հայաստանը» խմբագրական հոդվածում գրում էր, որ «Գերմանիայի նյութած պատերազմն առանձնապես դաժան եղավ փոքր ազգերի համար:

Հայ ժողովուրդը դարձավ մեծագույն ոճրի զոհը...: Չեզոք երկրների գայրույթն ուժգնացավ, որի հետևանքով Թուրքիան ստիպված եղավ հանդես գալ բացատրություններով, և փորձեց պատասխանատվությունը նետել զոհերի վրա՝ նրանց ներկայացնելով իբր ապստամբներ»:<sup>371</sup>

Իհարկե, և դա պետք է ընդգծել, ի տարբերության Ֆրանսիայի, շվեյցարական, հատկապես ռոմանական մասի՝

<sup>370</sup> «Արև», Բաքու, 1-նոյեմբերի 1915թ.: Տե՛ս նաև «Հայերի ցեղա սպանությունը Օսմանյան կայսրությունում», փաստաթղթերի և նույն. ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբ.: Եր. 1991թ. էջ 435-442:

<sup>371</sup> “Le Temps”, 9 avril 1916 .

ընկերվարական-քաղաքական ու գրական-եկեղեցական մամուլին, և նրանց ետևում կանգնած հասարակական-քաղաքական ուժերին ոչ այնքան հետաքրքրում էին Գերմանիային վնասելու և նրան վարկաբեկելու խնդիրները, որքան հայ ժողովրդի բնաջնջման դժոխսային ծրագրին՝ Գերմանիայի միջամտությամբ վերջ տալու, և նրա տառապանքներն ամոքելու խնդիրները: Եվ հենց այդ նպատակից ելնելով էր, որ նրանք սկսեցին միավորել իրենց ուժերը, որի սկիզբը դրեց 1915թ. սեպտեմբերին՝ Նեոշատելում տեղի ունեցած բողոքի ցույցը, ուր «քազմահազար ամբոխը՝ համախմբված քաղաքի աչքի ընկնող հրապարակներից մեկում, քվեարկեց մի բանաձև, որով իր բողոքն էր հայտնում թուրքական բռնակալության դեմ, և հեռագիր հղում ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին՝ պահանջելով ազդու միջոցներ ձեռք առնել՝ հայ ժողովրդի բնաջնջմանը վերջ տալու համար»:

Այդ բողոքի, և մամուլում նրա ունեցած հսկայական արձագանքների հետևանքով հայասիրական կոմիտեներ կազմակերպվեցին Ժնևում, Լոզանում, Ֆրիբուրգում, Նեոշատելում, Բեռնում, Ցյուրիխում և Բազելում, որոնց ներկայացուցիչների հիմնադիր առաջին համագումարը կայացավ 1915թ. հոկտեմբերի 6-ին՝ Բեռնում, որը և մշակեց իր գործունեության ծրագիրն ու եղանակը:

Նկատի առնելով Շվեյցարիայում հայանպաստ և հայասիրական կազմակերպությունների ստեղծման գործում գերմանական Շվեյցարիայի ակտիվ մասնակցությունը բացատրող պատճառներն ու գործոնները, Բեռնում Ռուսաստանի դեսպանը բացի « մամուլում տեղի ունեցած շրջադարձից», կարևորում էր նաև «ամերիկյան կառավարության և Հռոմի պապի բողոքները՝ թուրքական կառավարությանը, որոնք այստեղ և՛ գերմանական Շվեյցարիայում, ապացուցեցին թե չեզոք երկրներում ընդհանրապես որքան ուժեղ է հասարակական զայրույթը հայերի սիստեմատիկ բնաջնջման դեմ»:

Այս ամենի ազդեցությամբ Շվեյցարիայում կազմավորվեց «Հայերի օգնության կոմիտեն», որի կազմի մտան ականավոր շվեյցարական գործիչներ՝ անկախ նրանց քաղաքական

համակրանքներից»<sup>372</sup>:

Այդ կոմիտեի նախաձեռնությամբ 1915թ. հոկտեմբերին ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով հրատարակվեց շվեյցարիացի 110 նշանավոր քաղաքացիների՝ Շվեյցարիայի գերմանական ու ռոմանական կանտոնների ճանաճված գիտնականների, հրապարակագիրների ու հասարակական գործիչների հանրահայտ «Կոչը»՝ ի պաշտպանության հայ ժողովրդի: Այդ կոմիտեն 1915թ. սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 7-ին Բեռնի «Salle Centrale»-ում կազմակերպեց հրապարակային դասախոսություններ, իսկ 1915-1916թթ. կազմեց և հրապարակեց մեկ արդեն ծանոթ հայ ժողովրդի ողբերգությունը բացահայտող երեք փաստաթղթային ժողովածուներ, և իրականացրեց այլևայլ ձեռնարկումներ:

Հարկավ, միամտություն կլիներ կարծել, որ այդ բոլոր ձեռնարկումներում Ֆրանսիային հետաքրքրում էր այն բանը, թե Շվեյցարիայի բոլոր կանտոնները ներկայացնող այդ հզոր հասարակական կազմակերպությունները «արդար ցատումով էին վեր հանում հայ ժողովրդի ազգային վերքը, այն սեպտեմբերից հանուր մարդկության վերք, պահաջում, որ քաղաքակիրթ մարդկությունն ուշք դարձնի այդ ծանր վերքի վրա և *ամեն միջոց* գործադրի այն բուժելու համար»:<sup>373</sup>

Շվեյցարական քարոզչական ռազմաքննարկում ակտիվ, մեթոդիկ և հետևողական ճակատամարտեր մղող Ֆրանսիային ու նրա համապատասխան կառույցներին, ամենից շատ, ուրախացնում էր և ոգևորում այն փաստը, որ այդ բոլոր քարոզչական քայլերում և ձեռնարկներում հնչում էին պահանջներ ուղղված «օսմանյան մայրաքաղաքում ազդեցություն ունեցող պետությանը՝ Գերմանիային, որից պահանջում էին ապահովել հայ ժողովրդի անվտանգությունը», որ հրապարակավ հնչում էին մեղադրանքներ ու պնդումներ այն մասին թե «երխտորուքերը հայ ժողովրդի բնաջնջումը իրագործում են հենվելով յուրենց հին քարեկամ Վիլիելմի խորհուրդների վրա»,<sup>374</sup> որ նրանց

<sup>372</sup> А. В. П. Р., Политархив, л. 3492, л. 15.

<sup>373</sup> «Արև», Բաքու, 7-ր նոյեմբրի, 1915թ.:

<sup>374</sup> Լուս տեղում:

հրատարակած փաստաթղթային ժողովածուներում զետեղվում էին «գերմանացի ականատեսների այն վկայությունները, որոնք մեղադրանքի լուրջ ակտեր էին գերմանական ...կառավարության դեմ և ապացույցներ թե ինչպես են «ազատար» գերմանացիներն ապահովում ամենից ճնշված և թույլ ժողովրդի իրավունքները»:<sup>375</sup> Ֆրանսիան և նրա քարոզչական աշխատանքները ղեկավարող կառույցները շատ լավ հասկանում էին և քաջ գիտեին, որ Գերմանիայի անտարբերության և հայ ժողովրդին իրական օգնություն ցուցաբերելուց հրաժարվելու, ամեն կերպ իր թուրք դաշնակցին հովանավորելու ու պաշտպանելու պայմաններում, ուշ թե շուտ շվեյցարական հասարակական կարծիքում տիրապետող կղառնային Գերմանիայի նկատմամբ հավատի կորուստը, նրա միջազգային վարկանիշի անկումը, Գերմանիային դատապարտելու և նրան մեղադրելու տրամադրությունները: Այդ ամենը ֆրանսիական քարոզչական կառույցների համար պարարտ հող կստեղծեր Շվեյցարիայում հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության «գաղիական» կոնցեպցիայի պատկերման միջոցով Գերմանիայի դեմ լիակատար և վերջնական հաղթանակ տանելու համար:

Հայոց ցեղասպանության շուրջն ընթացող գաղափարաքարոզչական պատերազմում այդպիսի ազդեցիկ և գործուն դաշնակից ձեռք բերելով, Ֆրանսիան իր ուժերի և ջանքերի մեծ մասը կենտրոնացրեց թուրք-գերմանական քարոզչության այն բոլոր փորձերի դեմ, որոնք նպատակ ունեին արդարացնելու ոճրագործ Թուրքիային ու նրա մեղսակից Գերմանիային:

Թուրքական կառավարությունը, որը միջոցներ չէր խնայում Եվրոպայի չեզոք երկրներում իր համար նպաստավոր հանրային կարծիք ստեղծելու համար, առանձնակի եռանդով էր գործում հայասիրական ուժեղ և բուռն հոսանք ունեցող Շվեյցարիայում, որտեղ բոլոր աշխատանքների համակարգումն ու ղեկավարումը կենտրոնացվել էր Բեռնում օսմանյան դեսպան՝ Ֆուադ Սելիմ բեյի ձեռքում<sup>376</sup>, որը թուրքական քա-

րոզչական լայն ցանց ու կենտրոններ էր ստեղծել Լոզանում, Ժնևում և ֆանսախոս Շվեյցարիայի մյուս քաղաքներում: Նրա ջանքերով ստեղծվել էին ֆրանսերեն լեզվով լույս տեսնող թուրքական օրգաններ. միայն Լոզանում լույս էին տեսնում “La Revue de Turquie” լրագիրը և «եվրոպական հայտնի հրապարակախոսների շրջանում իր աշխատակիցներն ունեցող “La Revue Politique internationale” հանդեսը:

Օսմանյան կառավարությունը Շվեյցարիայում քարոզչության շրջանառության մեջ նետեց «հայերի կարծեցյալ դավադրությունները վկայակոչող» և իր գործողություններն արդարացնող բազում հողվածներ, նկարագարող ալբոմներ և քարոզչական գրքույկներ, պետական-պաշտոնական հաղորդագրություններ և նոտաներ՝ թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով:

Այս կարգի բազմաթիվ հրապարակումների մեջ հիշատակման արժանի են ֆրանսիական քարոզչության հակադարձման առարկա դարձած՝ 1915թ. հոկտեմբերին “Tribune de Genève”-ում լույս տեսած «*Մյուեզիհի տղան*» վերտառությամբ երկարաձիգ հոդվածը, 1916թ. մարտի 25-ին “Gazette de Lausanne”-ում հրատարակված «X-ի հողվածը», որը գրված էր Կ. Պոլսից եկած մի շվեյցարացու կողմից», 1916 թվականին Կ. Պոլսում ֆրանսերեն լեզվով լույս տեսած “Vérité sur le Mouvement Révolutionnaire Arménien et les mesures gouvernementales” («Ճշմարտությունը հայկական հեղափոխական շարժման և կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին») ժողովածուն, 1916թ. վերջերին ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով լույս տեսած երկու պատկերագրող ալբոմները՝ «Հայերի և հայկական հեղափոխական կոմիտեների գործողությունները», վերտառությամբ, Վանում և Էրզրումում ռուսական նախկին հյուպատոս Մայնսկու զեկուցագիրը, որը «Հայերի ջարդերը» վերտառությամբ տպագրվեց ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով<sup>377</sup>: Այս և բազում այլ հրապարակումների օգնությամբ, սկզբում, հայերի ցեղասպանության փաստն իսկ ժխտող թուրքական իշխանությունները

<sup>375</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc.N.312, p. 306-307.

<sup>376</sup> Ibid, doc.N.318, p. 310.

<sup>376</sup> Ibid, doc. N 236, p. 214.

պնդում էին, որ «հայերի տարագրությունը եղել է ռազմական անհրաժեշտություն, քանի որ հայերը փորձելով օգտվել պատերազմից՝ համագործակցել են Թուրքիայի թշնամիների հետ, և ընդհանուր զինված ասպատակություն կազմակերպել, ինչը կարող էր բերել թուրքական բանակի ոչնչացմանը»:<sup>378</sup>

Չեզոք երկրների հանրային կարծիքն իրենց համար նպաստավոր դաժնելուն, նրան մոլորեցնելուն, հայ ժողովրդին՝ զոհից մեղավոր դարձնելուն, Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների քարոզչությանը «սնունդից զրկելուն» միտված թուրքական իշխանությունների այս եռանդուն գործունեությունը Շվեյցարիայում ընթանում էր Գերմանիայի և նրա համապատասխան ծառայությունների հետ սերտ համագործակցության և դաշինքի պայմաններում»:<sup>379</sup>

Շվեյցարիայում Ֆրանսիայի քարոզչական ողջ գործունեությունը ղեկավարող կառույցները, որոնց մեջ, անշուշտ, գլխավոր դերը պատկանում էր Բեռնում Ֆրանսիայի դեսպանատանը, աչալրջորեն հետևում էին թե՛ թուրքական, և թե՛ գերմանական քարոզչությանը, և ժամանակին կազմակերպում դրանց հակահարվածը:

Այս իմաստով խիստ հետաքրքրական ու բնութագրական է Բեռնում ֆրանսիաի դեսպան Բոի՝ 1917թ. հունվարի 17-ին վարչապետ Ար. Բրիանին ուղղված զեկուցագիրը, որտեղ հենվելով «գաղտնի գործակալներից ստացված տեղեկությունների վրա», նա, նախ, հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական ողջ քարոզչությունը ղեկավարող վարչապետին տեղեկացնում էր, որ «Բեռնում Թուրքիայի մինիստր-դեսպան Ֆուադ Սելիմ բեյն արդեն երկար ժամանակ է, որ անձամբ զբաղվում է հայերի հարցով, և արդեն մի քանի շաբաթ է, որ նա նախապատրաստում է Առանցքի երկրների պատասխան նոտան Անտանտին և ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին», և ապա պարզում էր այն կարևոր փաստը, որ գերմանական իշխանությունների հետ սերտորեն կապված և նրա տեսակետներն արտահայտող՝ Յուրիխում լույս տեսնող *“Blatter fur*

*Diplomatie”* հանդեսի խմբագիր Վեյցինգերը 1916թ. դեկտեմբերի 21-ին խնդրել է «թուրքական կառավարության ներկայացուցիչներից մեկին՝ նախապատրաստել մի հոդված, որպեսզի *չեզոքացվի այն վատ ազդեցությունը, որ չեզոք երկրների վրա թողնում են Հայաստանում կատարվող իրադարձությունները*: Իհարկե, – շարունակում էր Բեռնում Ֆրանսիայի դեսպանը, – այդ մտահոգությունը առաջին հերթին թելադրված է Գերմանիային, և ապա նոր Թուրքիային արդարացնելու, անհրաժեշտությամբ:

Թուրքական կառավարության ներկայացուցիչն արդեն պատրաստել է այդ հոդվածը. որը հիշյալ ամսագրում կտպվի Սելիմ–Ֆուադի կողմից սրբագրվելուց և խմբագրվելուց հետո»:  
Փաստորեն հայոց ցեղասպանության մեկնաբանման թուրքական բոլոր քարոզչական հայեցակարգերն ամփոփող այս ծավալուն հոդվածը, որի ձեռագիրը մի քանի ժամով ձեռք էր բերել Ֆրանսիայի աչալուրջ դեսպանը, իսկ նրա կրկնօրինակը ուղարկել Փարիզ, ֆրանսիական քարոզչությանն ամենից առաջ հետաքրքրում էր այն առումով, որ «մի քանի օրից *“Blatter fur Diplomatie”*-ում կամ էլ *“Rundschau des Auswärtigen Dientes”*-ում լույս տեսնվելիք այդ հոդվածը, նրան հնարավորություն էր տալու «պարզել թե գերմանական օրգանը ի՞նչ փոփոխություններ և ավելացումներ է արել, ինչն իր հերթին մատնանշելու էր թե ի՞նչ *տարածայնություններ գոյություն ունեն թուրքական դեսպանի և գերմանական տեսակետներն արտահայտող լրագրի միջև*»:<sup>380</sup>

Իհարկե, Ֆրանսիայի շահերը պաշտպանող և գաղափարաքարոզչական պատերազմում նրա հաղթանակն ապահովելու կոչված քարոզչությունը տնօրինող ծառայություններն ու նրանց ղեկավարները չէին կարող անտարբեր մնալ հայ ժողովրդին զրպարտող և «քաղաքակիրթ աշխարհի առաջ արդարանալ ձգտող» թուրք-գերմանական քարոզչության հանդեպ, քանզի այդ քարոզչությունը և նրա հնարավոր հաջողությունը Ֆրանսիային, պարզապես, կզրկեին գաղափարաքարոզչական պատերազմում իր ունեցած գլխավոր՝ *անմեղ, քա-*

<sup>378</sup> “Германские источники о геноциде армян”, Ер. 1991, стр. 204-205.

<sup>379</sup> Там же.

<sup>380</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 318, p. 311.



ղաքակրթական քարենմասնություններ ունեցող, կոստրվող, ոճ-  
րի գոհ հայ ժողովրդի և այդ ամենի համար պատասխանատու  
զլխավոր ոճրագործ և զլխավոր մեղավոր այսպանվող Գերմա-  
նիայի հաղթաթղթերից:

Ահա թե ինչու ֆրանսիական քարոզչությունն՝ իր տրա-  
մադրության տակ եղած բոլոր ուժերն ու միջոցները զինակո-  
չեց, որպեսզի ամենակտիվ ձևով հակադարձի հայ ժողովրդին  
զրպարտող, և այդ հիման վրա, արդարանալ ձգտող թուրք-գեր-  
մանական քարոզչությանը:

Առաջիններից մեկը, որ Ֆրանսիայի կողմից ներգրավ-  
վեց թուրք-գերմանական պաշտոնական քարոզչության դեմ  
ծավալված պայքարի մեջ՝ դա Փարիզում գտնվող, իրեն երիտ-  
թուրքական վարչակարգի թշնամի հայտարարող, թուրքական  
ընդդիմադիր ուժերի «Միության» նախագահ Շերիֆ փաշան էր,  
որը արդեն 1915թ. սեպտեմբերի 10-ին “Journal de Genève”-ի  
խմբագրությանն ուղղված իր նամակում, նախ, «իր վրդով-  
մունքն էր արտահայտում ...բացահայտորեն Գերմանիայի  
կողմը կանգնած «Միության և Առաջադիմության» արյունար-  
բու կոմիտեի կողմից կիրառվող մեթոդների նկատմամբ, որոնց  
օգնությամբ մեր աչքի առաջ ոչնչացվում է շռայլորեն օժտված  
մի ժողովուրդ», և ապա, հակառակ հայ ժողովրդին ներկայաց-  
վող պաշտոնական՝ սին ու անհիմն մեղադրանքների, ընդգծում  
էր «որ, եթե կա մի ժողովուրդ, որը մեծ ծառայություններ է մա-  
տուցել Թուրքիային՝ շնորհիվ այն պետական գործիչների ու  
տաղանդավոր պաշտոնյաների, ովքեր դուրս են եկել նրա  
միջավայրից, իրենց մտավոր ընդունակությունների շնորհիվ,  
որոնք դրսևորվել են բոլոր՝ առևտրի, արդյունաբերության, գի-  
տության և արվեստի ասպարեզներում, *ասպա դա հայ ժողո-  
վուրդն է*»: Թվարկելով հայ բանաստեղծներին, գրականագետ-  
ներին, պատմիչներին, իրավաբաններին և խոշոր ֆինանսիստ-  
ներին, որոնցից «շատերը պատիվ կբերեին Եվրոպայի ցանկա-  
ցած երկրին», Շերիֆ փաշան իր նամակի վերջում բերում էր  
անգլիական պառլամենտի պատգամավոր Լինչի կողմից  
1902թ. արված այն հայտարարությունն, ուր ասվում էր. «Հայե-  
րը բացառիկորեն ընդունակ են այն բանին, որպեսզի նոր քա-  
ղաքակրթության կրողներ լինեն ... Նրանք եվրոպական կուլ-

տուրայի նոր նվաճումները յուրացնում են մեծ ազահությամբ, և  
դրանց տիրապետում են այնպիսի կատարելությամբ, որին եր-  
բեք չի կարող հասնել մեկ ուրիշ ազգ»<sup>381</sup>

Հակաթուրք քարոզչական արշավին շուտով միացավ  
Ֆրանսիայի կիսապաշտոն “Le Temps”-ը, որը, նկատի ունենա-  
լով “Tribune de Genève”-ում մի երիտթուրքի երկարածիզ հող-  
վածը, ուր նա «փաստաբանում էր ի նպաստ թուրքերի, և  
նկրտում ապացուցել, որ իր շնորհաշուք տերը՝ սուլթանը երբեք  
ոչ մի հայ չի կոտորել», 1915թ. հոկտեմբերի 13-ի համարում զե-  
տեղված «Մյուեզինի տղան» վերատառությամբ հողվածով  
«ստանձնեց այդ այլանդակ պաշտպանողականին պատաս-  
խանելու գործը»:

Ի պատասխան «ղժվար պաշտպանելի գործի պաշտոնը  
ստանձնած այդ փաստաբանի այն պնդումների, թե հայ ժո-  
ղովրդի կոտորածները հնարվել են Անտանտի բարեկամների  
կողմից, որպեսզի դրանով հարվածեն և վնասեն Մեհմեդ V-ի և  
Էնվեր փաշայի դաշնակից գերմանացիներին և ավստրիացինե-  
րին», Ֆրանսիայի զլխավոր լրագիրը հարցադրման ձևով պար-  
զում էր. «Ուրեմն իզու՞ր էին սուլթանի կողմից պաշտոնապես  
հրահանգված սրայտղիտղումների ականատես վկաներն ի-  
րենց արդարախոս համարատվությունների մեջ մատնանշում  
օրը, ժամը և վայրը այն սրածոթյանց, որ նրանք ճշգրտորեն  
ցուցահանեցին քաղաքակիրթ Եվրոպայի առաջ: Ս. Ս. տղան  
*աչքերը փակում է այս տեսարանների վրա. նա ոչինչ չի ուզում  
տեսնել. նա ոչինչ չի ուզում իմանալ, և քիչ է մնում վրդովվի այս  
գարշելի ոճիրների դեմ աշխարհում բարձրացրած բողոքի  
ձայնից*»:

Անդրադառնալով «Մյուեզինի տղայի» մյուս «նրբամիտ  
պատճառաբանություններին», որոնց օգնությամբ նա փորձում  
էր արդարացնել երիտթուրքերի պարագլուխներին՝ «անհնար  
համարելով ենթադրությունն իսկ այն մասին, որ Էնվեր փաշա-  
յի նման քաղցրաբարո մարդը կարող է հակված լինել նման  
ծայրահեղությունների, որոնք հակառակ են նրա՝ բոլորին  
հայտնի բնավորության ու բարքերի հեզահամբյուր մեղմությա-

<sup>381</sup> “Journal de Genève”, 18 septembre, 1915.

ընդ, և կան Ահմեդ Ռիզան, որը Աբդուլ Համիդի կողմից դատապարտվել էր մահվան, և Փարիզում լույս տեսնող թերթում բացահայտել է Կարմիր սուլթանի մահասարսուռ ոճիրները: Եվ միթե՞ հայտնի չէ, որ երիտթուրքական Կոմիտեի այս պարոններն էին, որ իրենց բնաբան վերցրին մահվան հանգանակին հասած Օզյուստ Կոնտի այն վերջին երկու բառերը՝ «Միություն» և «Առաջադիմություն», որ նա հանձնարարել էր իր աշակերտ Պիեռ Լաֆիտի խոսկումներին», «Le Temps –ը շեշտում էր, որ «թուրք բաշիբոզուկների և զեյպեքների սուսերաց տակ արյան հորդառատ գետեր հոսեցին այն պահից սկսած, երբ Էնվերը աստրախանի իր գլխարկը սարայի պատերի վրայից դուրս նետեց, որպեսզի նրա փոխարեն դնի Ֆոն Դեր Հոլց փաշայի բարեսրտությամբ առաջարկած սրածայր սաղավարտը: Ահմեդ Ռիզայի բաճկոնը և զլանված գլխարկը տեղի տվին մուշտակազարդ վերարկուին և կանս-կարմիր ֆեսին: Շատ շուտով Օսմանյան պառլամենտի նախկին նախագահը նմանվեց իր նախկին թշնամիներին, որոնք դարձել էին նրա մեղսակիցները: Արդարև, երիտթուրքերը *ավելի թուրք դարձան* քան ծեր թուրքերը՝ ստանձնելով վերջիններիս գործի շարունակողի դերը»:

Տարօրինակ կլիներ, որ ֆրանսիական քարոզչության ծանր հրետանին՝ «Le Temps»-ը շրջանցեր և չկարևորեր իր գլխավոր թշնամու դերը այդ ամենի մեջ. «Գերմանացիների հետ նրանց դաշնակցությունը և փրենց այս նոր ուսուցիչներից վերցրած դասերը ուժգնորեն բորբոքեցին անգթության նրանց ժառանգական բնագոյները, որոնց արդյունքում այն ինչ որ Սուլթան Համիդի օրոք իր աչքերով տեսավ Ֆրանսիայի հավատարմատարը Ղալաթիայի արվարձաններում, այն ինչի մասին վկայեցին Ֆրանսիայի հյուպատոսներ պր-ք Բերթերոնը և Սիլիեռը, Բառնիների պաշտոնական համարատվություններն, այդ ամենը մենք նորից տեսնում ենք այնտեղ՝ *գերմանացած թուրքիայում*»:

Վերջում «Le Temps»-ը յուրահատուկ կոչով դիմում էր բոլոր նրանց, ովքեր իրենց, «սրտաբուխ ձայնն են բարձրացնում» ի պաշտպանություն ոչնչացվող հայության և հույս հայտնում, որ «այդ սրտաբուխ ձայները, որոնք Անգլիայում,

Ֆրանսիայում, և բոլոր ազատ երկրներում այս չարագործությունների պատասխանատու հեղինակների դեմ տիեզերական վրեժխնդրության հրավեր են կարդում, դառնան շատ ավելի հզորաշունչ, քան սեպուխ միուեզիմի տղայի *երկշտ առարկությունները*»:<sup>382</sup>

Թուրքական կառավարությունն ու քարոզչությունն, այլևս անկարող լինելով ժխտել հայոց ցեղասպանության փաստը, սկսած 1916թ. սկզբներից շվեյցարական քարոզչական շուկան հեղեղեցին այդ ամենի համար հայ ժողովրդին մեղադրող հողվածներով, բրոշյուրներով ու արժաններով: Այս իմաստով խիստ բնութագրական էր 1916թ. մարտի 25-ին «La Gazette de Lausanne»- ում զետեղված «Հայկական հարցը» խորագրով հողվածը, որի «շվեյցարացի» հեղինակը, գտնում էր, որ «մենք չպետք է հավատանք թե թուրքական կառավարությունն է եղել ջարդերի դրդիչն ու մեղսակիցը», և «ստույգ աղբյուրների վրա հենվելով», պնդում էր «թե Կ. Պոլսում գտնվող Առանցքի երկրների ներկայացուցիչներն անտարբեր չեն մնացել, և թուրքական կառավարությունից պահանջել են կասեցնել կոտորածը»:

Պոլսում հանդիպելով թուրքիայի պառլամենտի նախկին նախագահ և արտաքին գործոց նախարար Խալիլ բեյի հետ, հողվածագիրը, ըստ էության դառնալով նրա խոսափողը, տպագրում է հայոց եղեռնի պատճառները բացատրող՝ թուրքական կառավարությանն արդարացնող նրա հայտարարությունն այն մասին, որ «երբ ռուսները մտան մեր երկիրը, հայերը ոչ միայն չդիմադրեցին, այլ ընդհակառակը, դառնալով նրանց առաջապահը՝ մտան Վան և կողոպտեցին հասարակական հաստատությունները: Դա արդեն ծանր դավաճանություն էր:

Կառավարությունն այլևս չէր կարող անտարբեր գտնվել այդ դեպքերի հանդեպ: Նա հարկադրված եղավ մի տեղ կենտրոնացնել բոլոր հայերին, և նրանց տեղափոխել ռազմադաշտից հեռու շրջաններ: Դժբախտաբար, քրդերը, որ գիտեին հայերի դավաճանության և Վանում նրանց դաժանությունների

<sup>382</sup> «Le Temps», 13 octobre, 1915.

մասին, աշխատեցին վրեժ լուծել, և առաջ եկան ցավալի փոխ-վրիժառություններ»:<sup>383</sup>

Թուրքական կառավարության տեսակետն արտահայտելուն, նրա ոճրագործությունները «պատճառաբանելուն ու արդարացնելուն» միտված այդ և այլ հրապարակումների դեմ ֆրանսիական քարոզչությունը հրապարակ նետեց իր, և իր դաշնակից հասարակական-քաղաքական շրջանակների բոլոր ուժերը, որոնց ջանքերով էլ հերքվեցին հայ ժողովրդին ներկայացվող բոլոր հերյուրածին մեղադրանքները:

Թուրքական քարոզչության այդ կեղծիքները վճռակա-նորեն հերքվեցին Ֆայեզ էլ Խոսեյնի կողմից, որը լինելով ծագումով բեդուին և Խարբեռդի նախկին կայմագամ, ֆրանսերեն լեզվով լույս տեսած իր «Արաբ մուսուլմանի վկայությունը ... հայերի կոտորածների մասին» վերտառությամբ գրքույկում, նախ, հայտարարում էր և հավաստում «որ ինքն այդ հարցն ուսումնասիրել է ամենավստահելի և ամենահեղինակավոր աղբյուրների հիման վրա», և ապա անդրադառնում բուն խնդրին. «Եթե Թուրքիայում կառավարությանը հարցնելու լինեն հայերի բնաջնջման, նրանց պատվի պղծման, ունեցվածքի բռնագրավման և կողոպտման դրդապատճառների մասին, ապա նա կպատասխանի, թե Վանում հայերը կոտորել էին մուսուլմանների, թե նրանք արգելված գենք ու ռումբեր էին պահում, թե հայտնաբերվել են հայոց պետականությունը խորհրդանշող դրոշմեր և այլն: Այդ ամենն, իբր, ապացույց են այն բանի, թե հայերը չեն հրաժարվել իրենց դավերից և սպասում էին հարմար առիթի, որ խռովություններ բորբոքեն և սպանեն մուսուլմաններին՝ ապավինելով Ռուսաստանի օգնությանը:

Այսպիսին են թուրքական կառավարության վկայակոչումները:

...Ես Դիարբեքի այցելած վանեցի մուսուլման բնակիչներին և պաշտոնյաներին հարց ու փորձ եմ արել, թե Վանում կամ վիլայեթի սահմաններում հայերը արդյո՞ք սպանել էին մուսուլմաններին: Բոլորը ժխտում էին դա, և ասում, որ կառավարությունը շատ ավելի շուտ էր հրամայել բնակիչներին հե-

ռանալ քաղաքից, քան ռուսները կմտնեին այնտեղ կամ կսպանվեր թեկուզ մի մարդ:

...Մյուս նահանգներում իշխանությունները հայերին հավաքել և քշել էին երկրի խորքը, որտեղ ոչնչացնում էին նրանց, չնայած, որ ոչ մի թուրք ծառայող կամ քուրդ չէր սպանվել նրանց կողմից:

Ինչ վերաբերում է Դիարբեքիին, ապա այնտեղ չէր եղել և ոչ մի միջադեպ, ոչ մի սպանություն կամ անդորրի խանգարում, որը թուրքական կառավարության համար կարող էր պատրվակ դառնալ՝ հայերի դեմ զազանություններ գործադրելու համար»:<sup>384</sup>

1917թ. թուրք-գերմանական քարոզչությունը՝ հրապարակ եկած բազում և նորանոր հրապարակումների համոզվել և փաստերով լի հարվածների ներքո ծանր պարտություններ կրեց Շվեյցարիայում: Այսպես “Cazette de Lausanne”-ի 1917թ. օգոստոսի 15-ի և 16-ի համարներում հրապարակվեց Շվեյցարիայի ամենատաղանդավոր հրապարակախոսներից մեկի՝ Բեն-ժամեն Վալլտոնի հոդվածը, ուր վեր էին հանվում հայ ազգի բոլոր քաղաքակրթական արժանիքներն ու հատկությունները և, հերքվում բոլոր հայատեսացների գրպարտությունները նրա հասցեին, իսկ “Journal de Genève” –ի 1917թ. օգոստոսի 6-ի համարում զետեղվեց մի հոդված՝ Ռեմեն Փինոնի “Le suppression des Arméniens” գրքի մասին, որի հեղինակը ցույց էր տալիս թուրքական և գերմանական քարոզչության՝ հայ ժողովրդի հանդեպ գործած իրենց ոճիրը արդարացնելու բոլոր փորձերի՝ «ինչպես անհիմն, այնպես էլ շնական լինելը»:<sup>385</sup>

Ֆրանսիական քարոզչության և նրան աջակից ուժերի նպատակասլաց ջանքերի շնորհիվ թուրք-գերմանական քարոզչության բոլոր ջիգերը՝ հայ ժողովրդին վարկաբեկելու և սեփական ոճրագործություններն արդարացնելու գործում, լիակատար ձախողում կրեցին, ինչը արձանագրում էր «Մշակի» շվեյցարական թղթակիցը. «Շվեյցարական մամուլում թուրքա-

<sup>384</sup> Faiez el Ghocein. “Témoignage d’un Arabe musulman sur l’innocences et le massacre des Arméniens” Bombay, 1917, p. 39-40.

<sup>385</sup> «Վերածնունդ», 1917, Ա տարի, թիվ 3, էջ 86:

<sup>383</sup> “La Gazette de Lausanne”, N 84, 25 mars, 1916.

կան ոճիրների բազմաթիվ խարազանումների արդյունքում *թուրքերը* իբրև *գերմանացոց դաշնակիցներ կորուսած են ամեն մի համակրանք*, իսկ *հասարակական* կարծիքը սաստիկ գայրացած է *թուրք-գերմանացոց դեմ*»:<sup>386</sup>

Հայերին մեղադրելու ճանապարհով ինքնարդարանալու քարոզարշավի ձախողումն այն աստիճանի ակնհայտ էր դարձել, որ անգամ գերմանական միսիոներական շրջանակների ներկայացուցիչները հարկ էին համարում իրենց նամակներում հերքել գերմանական մամուլում առաջ քաշված «հայերի համընդհանուր դավադրության մասին պնդումները»: Այս առումով խիստ բնութագրական են «Գերմանական Ավետարանչական միսիոներական օգնության» տնօրեն Ա. Շրայբերի կողմից 1917թ. օգոստոսին Գերմանիայի արտաքին գործոց նախարարությանն ուղարկված պաստոր Շտիրի նամակում տեղ գտած համոզիչ հերքումները, որոնք հենվում էին հետևյալ փաստերի վրա. «1915թ. հունիսի 4-ին թուրքական պաշտոնական հաղորդագրությունը, որը ընդունվել էր ի պատասխան 1915թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների հայտարարության, հաստատում էր, որ "Havas" գործակալության միջոցով փոխանցված հայտարարության մեջ նշված շրջաններում հայերը ոչ մի հանցանք չեն գործել, որոնք կարող էին խախտել հասարակական անդորրն ու կարգը:

Դեռևս 1915թ. օգոստոսի 27-ին Ժնևում Թուրքիայի գլխավոր հյուպատոսը, մամուլի համար արված մի հաղորդագրության մեջ, թեև ողջ արևմտահայությունն արդեն արքորված էր, պնդում էր որ «ողջ բնակչությունը գտնվում է լիակատար անվտանգության մեջ և օգտվում է իշխանությունների պաշտպանությունից, իսկ գավառային դատարանների կողմից դատապարտվել են ընդամենը մի քանի հայեր»:

1915թ. թուրքական հինգ պաշտոնական հաղորդագրություններում նշվում էր միայն մի հայ պատգամավորի անուն, որը պատերազմից առաջ փախել էր Ռուսաստան և այնտեղ Թուրքիայի դեմ պայքարելու համար կազմակերպել պարտիզանական խմբեր, 2 հայերի անուններ, որոնք կազմակերպել

<sup>386</sup> «Մշակ», 24-ը հուլիսի, 1917:

էին գնացքների խորտակումներ, մեկ հայի անուն, որը հրաժարվել էր ճանապարհային աշխատանքներից և սպանել ժանդարմին:

Ոչ մի փաստ չկա, որպեսզի հիմնավորվի այն մեղադրանքը, թե Անգլիան է հրահրել հայերին ընդհանուր ապստամբություն բարձրացնել»:

Նշելով, որ Բեռլինի թուրքական դեսպանությունը միայն 1916 թվականին Վոլֆ գործակալության միջոցով տարածեց տեղեկատվություն հայերի զինված ապստամբությունների ու ոճրագործությունների մասին, պաստոր Շտիրը շերտում էր այն իրողությունը, որ «այդ հայտարարության մեջ, ինչպես 1915թ. հրապարակված հաղորդագրության մեջ, ոչ մի տարբերություն չէր դրվում արևելահայերի, որոնք որպես ռուսահպատակներ պարտավոր էին ծառայել ռուսական բանակում, և ազատ էին մտնելու Ռուսաստանում ստեղծվող պարտիզանական ջոկատների մեջ, և թուրքահայերի միջև:

Նույն կերպ թուրքական կառավարությունը թաքցնում և կեղծում էր իրականությունը՝ լուսանկարների այն ժողովածուի հետ կապված, որ նա հրատարակել էր «Հայ հեղափոխականների ըղձանքները և շարժումը» վերնագրով՝ թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն տեքստերով:

Իրազեկ մարդու համար այդ ալբոմից պարզ է դառնում, թե թուրքերը որքան քիչ փաստեր ունեն հայերի դավադրական գործունեության մասին:

Լուսանկարների կեսի վրա պատկերված են հայերից խլված զենքերը, մոռանալով, ընդամենը, որ արևելքում ցանկացած ժողովուրդ զինված է:

Մնացած լուսանկարները վերաբերվում են մինչ սահմանադրական շրջանին, երբ երիտթուրքերն իրենք նույնպես հեղափոխական կուսակցություն էին»:<sup>387</sup>

Հակառակ պաշտոնական Գերմանիայի, շուտով գերմանական միսիոներական այդ կազմակերպությունը «կարողացավ տարածել իր նախագահի կողմից գրված հերքումը

<sup>387</sup> «Армянский вопрос и геноцид армян в Турции, (1913-1919)», Ер. 1995, ст. 456-457.

քուրքերի կողմից տարածվող լուսանկարների այն ժողովածուի մասին, որի միջոցով երիտօրքերը փորձում էին՝ «փաստերով» ապացուցել հայերի ապստամբությունը»:<sup>388</sup>

Աշխարհամարտի ողջ ընթացքում Շվեյցարիայում իրար դեմ անհաշտ գաղափարա-քարոզչական պայքար մղող Ֆրանսիան և գերմանա-թուրքական խմբավորումը նույնքան անհաշտ և հետևողական պայքար էին մղում նաև շվեյցարական հայկական գաղութի համար, ձգտելով օգտագործել նրա գաղափարական ու քաղաքական ներուժը, հաստատել իրենց հսկողությունը և գերիշխանությունը հայկական գաղութի քաղաքական դիրքորոշումների և գերապատվությունների վրա:

1916թ. հունիսի 16-ին Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործոց նախարար Ար. Բրիանը ստացավ իր համար շատ հաճելի տեղեկատվություն Ժնևի հայկական գաղութի մասին, որը կազմել էր Ֆրանսիայի ռազմական գործոց նախարարությունն՝ իր հետախուզական ծառայությունների ճշգրտված տվյալների հիման վրա:

Այդ գեկուցման մեջ նշվում էր, որ «Ժնևի հայկական գաղութը ամենամեծ թվաքանակն ունի տեղի օտարեկրյա բոլոր գաղութների համեմատ: Դա նորություն չէ:

Դեռ պատերազմից առաջ հայերը զանգվածաբար գաղթում էին Շվեյցարիա՝ գլխավորապես Ժնև, ուր նրանք գտնում էին իրենց հզոր կազմակերպության՝ «Դաշնակցության» հովանավորությունը:

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց ի վեր, մեծ թվով հայեր թողեցին Կ. Պոլիսը և տեղափոխվեցին Շվեյցարիա: Նրանց մեջ կան բժիշկներ, հայտնի գործարարներ, քաղաքական գործիչներ և ուսանողներ»: Ֆրանսիայի վարչապետին, անշուշտ, ոգևորում և զոհացնում էր այն իրողությունը, որ «այդ բոլոր մարդիկ *բացահայտորեն արտահայտում են իրենց հավակրանքը Ֆրանսիայի հանդեպ՝ նրանից և Անգլիայից ակնկալելով Հայաստանի ազատագրումը*»:

Կարևորելով Ժնևի հայ գաղութում «հայերի ամենահզոր կազմակերպության՝ «Դաշնակցության» դերը, որից շատ բա-

նով կախված էին հայ գաղութի քաղաքական գերապատվություններն ու որդեգրումները, գեկուցման հեղինակները Ֆրանսիայի վարչապետին նախ, տեղեկացնում էին «Դաշնակցության» նպատակների մասին. «Պայքարել Հայաստանի ազատագրության համար, արտասահմանում կազմակերպել “Pro-Armenia” շարժում, օգնել արտասահմանում գտնվող հայերին», և ապա ընդգծում, որ «այդ կազմակերպությունն իր նպատակին հասնելու համար միջոցների ընտրության հարցում խտրականություն չի դնում»:<sup>389</sup>

Շնորհիվ այն փաստի, որ Շվեյցարիայի հայ գաղութը «բացահայտորեն իր համակրանքն էր տաժում դեպի Ֆրանսիան», ֆրանսիական քարոզչությանը հաջողվեց չեզոքացնել գերմանա-թուրքական այն քարոզչական ձեռնարկները, որոնց օգնությամբ նրանք ձգտում էին իրենց կողմը գրավել Շվեյցարիայի հայ գաղութին, սահմանել իրենց «հսկողությունը հայոց շարժումների, շվեյցարական հայանպաստ կոմիտեների վրա, և հայերին հեռու պահել հակաթուրք քարոզչությունից»:<sup>390</sup>

Հենց այդ առաքելությամբ էլ 1916թ. հունիսին Շվեյցարիա ուղարկվեց Իթթիհատի նախկին լիդեր և ծերակուտական Ահմեդ Ռիզա բեյը, որի այցելության մասին 1916թ. հունիսի 17-ին “Gazette de Lausanne”-ը գրում էր. «Ահմեդ Ռիզան Շվեյցարիա է եկել, որպեսզի մերձեցում առաջ բերի թուրքական կառավարության և Շվեյցարիայում գտնվող թուրք ընդդիմադիրների միջև: Իր հերթին, Լոզանի հայ գաղութը անկեղծ սեպելով հայկական ջարդերի դեմ նրա բողոքները թուրքական սենատում, ի պատիվ Ահմեդ Ռիզա բեյի հացկերույթ է տվել»:<sup>391</sup>

Նույն տեղեկությունը 1916թ. հունիսի 20-ի իր համարում հաստատում էր նաև Ժնևի “La Suisse” թերթը, դարձյալ շեշտելով, որ Լոզանի հայ գաղութն «անկեղծ գտնելով նրա բողոքները՝ նրա պատվին հացկերույթ է սարքել»:<sup>392</sup>

Այն փաստը, որ հայ-թուրքական մերձեցում առաջա-

<sup>389</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 231, p. 211.

<sup>390</sup> «Մշակ», 24-ը հուլիսի, 1916թ.:

<sup>391</sup> “La Cazette de Lausanne”, 17 juin, 1916.

<sup>392</sup> “La Suisse”, 20 juin, 1916.

նելու թուրք-գերմանական ձեռնարկի մասին տեղեկացնող այդ լուրը շվեյցարական մամուլից անմիջապես հետո նույնությամբ արտատպեցին ֆրանսիական շատ թերթեր, և հատկապես “Le Temps”-ը, անշուշտ, խոսում էր այն մասին, որ Ֆրանսիան աչալրջորեն հետևում էր իր շահերի համար խիստ վտանգավոր այդ իրադարձություններին: Եվ իսկապես, Ֆրանսիան, իր այդ շահերը չվտանգելու համար, շատ օպերատիվորեն գործադրեց իր քաղաքական ազդեցությունը՝ հայկական շրջանակներին այդ քայլից հեռու պահելու և այն ձախողելու համար:

Շատ շուտով Ֆրանսիան և նրա պաշտոնական քարոզչությունը տնօրինող ուժերը կարող էին գոհունակությամբ արձանագրել, որ թուրք-գերմանական ինքնաարդարացման նպատակներ հետապնդող այդ ձեռնարկն աղմուկով ձախողվել է, քանի որ, ինչպես վկայում էր Ժնևում «Արև» թերթի թղթակից Մ. Ղազարյանը, «այդ լուրի տարածվելուն պես հայկական արդար զայրույթի և բողոքի ձայներ բարձրացան աշխարհի չորս կողմից: Ցնցվել և բարկության շանթեր էին արձակում ամերիկահայ գաղութը, Եգիպտոսի ազգային շրջանակները, Փարիզի, Մարսելի և եվրոպական հայ գաղութները, և վերջապես, Կովկասը»<sup>393</sup>: Լոզանի հայ գաղութը 1916թ. հունիսի 28-ին նույն այդ “Gazette de Lausanne”-ում հերքում տվեց, պարզաբանելով, որ «այդ տգեղ ակտի գործադրողը ոչ թե Լոզանի հայ գաղութն է, այլ հայ ծերակուտական Գաբրիել Նորատունկյանը»<sup>394</sup>:

Շվեյցարիայում գտնվող գերմանական դիվանագիտական ծառայությունները քաջատեղյակ էին Ահմեդ Ռիզայի առաքելությանը, և ուշադրությամբ հետևում էին տեղի հայերի հետ նրա ունեցած հանդիպումներին: 1916թ. հուլիսի 4-ին Բեռնից Գերմանիայի ռախսականցիեր Բետման-Հելվեգին, «գաղտնի» գրիֆով, ուղարկված իր զեկույցում գերմանական առաքելության ղեկավար Յակոբին, նախ, տեղեկացնում էր, որ «իր ժամանումից անմիջապես հետո Ահմեդ Ռիզա բեյը հեռախոսով դիմեց Եսայանին, նրանից խնդրելով Գաբրիել Էֆենդի Նո-

րատունկյանի հասցեն», և ապա պարզաբանում էր նա առաքելության, թերևս, գլխավոր խնդիրը. «հանգստացնել հայերին, և հասնել այն քանին, որ Լոզանում հրավիրվելիք «ազգությունների կոնֆերանսն» անցնի խաղաղ ձևով»,<sup>395</sup> այսինքն՝ հայերի մասնակցությամբ:

Մեկ շաբաթ անց՝ 1916թ. հուլիսի 13-ին նույն Յակոբին ռախսականցիերին հասեագրված զեկույցի մեջ ցավով արձանագրում էր, որ «Անտանտի գործակալների գործունեության հետևանքով ... Ահմեդ Ռիզայի առաքելությունը՝ ընդդիմադիր թուրքերին ու հայերին երիտթուրքերի հետ հաշտեցնելու պլանը, լիակատար ձախողում ապրեց, և նա ստիպված է թողնել Շվեյցարիան»:<sup>396</sup>

Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների գործունեության հետևանքով Ահմեդ Ռիզայի առաքելության լիակատար ձախողման տրամաբանական շարունակությունն եղավ Գերմանիայի ու նրա դաշնակից Թուրքիայի՝ շվեյցարական հայկական շրջանակներին «ազգությունների համագումարին» մասնակից դարձնելու համառ փորձերի ոչ պակաս լիակատար ձախողումը: 1916թ. հուլիսի կեսերին Լոզանում «մեծագույն աղմուկով տեղի ունեցավ «Ազգություններու համագումար»-ը, որուն ներկա են եղել շուրջ 20 ազգություններու ներկայացուցիչներ: Կազմակերպիչները և նախաձեռնողները կարող է անկեղծ անհատներ են եղել, սակայն, ի վերջո, անոնք անգիտակցորեն գերմանական ծուղակին մեջ ընկած են, որոնց կազմակերպած ազգութեանց համագումարը կորսունցուցած է իր լրջությունը և կարևորությունը:

Անշուշտ, համագումարի հռչակած ազգութեանց իրավունքները տեսականի մեջ շատ գեղեցիկ են ... Սակայն ներկաներու մեծամասնությունը բողոքեց Ռուսաստանի ու նրա դաշնակիցներու դեմ: Շատ քիչ ու աննշան բողոքներ եղան Գերմանիայի և Ավստրիայի դեմ, իսկ ամենակարևորը ոչ մեկ բողոք տեղի ունեցավ Թուրքիայի ոճրագործ և ավազակ կառա-

<sup>393</sup> «Արև» Բաքու, 1-ը հոկտեմբերի, 1916թ.:

<sup>394</sup> “La Gazette de Lausanne”, 28 juin, 1916, 274

<sup>395</sup> “Армянский вопрос и геноцид армян”, Ер. 1995г., стр. 355.

<sup>396</sup> “Армянский вопрос и геноцид армян”, Материалы полигтархива МИД Кайзеровской Германии (1913-1919гг.), Ер. 1995г. стр. 361-362.

վարության դեմ:

Համագումարը այն տպավորությունը կթողնու, որ ուղղված է Դաշնակիցներու դեմ: Բոլոր այս պարագաները նկատի ունենալով և որոշ չափով կանխագուշակելով՝ հայերս հրաժարվեցանք մասնակցել»: <sup>397</sup>

Բեռնում գերմանական դիվանագիտության ներկայացուցիչները Գերմանիայի ռայխսկանցլերին ուղարկած իրենց զեկուցագրում, արձանագրելով թուրք-գերմանական քարոզչական հերթական ձեռնարկի ձախողումը, «գերմանական ծուղակից հայերի խուսափումը՝ նրանց հրաժարվելը այդ համագումարին մասնակցելուց, բացատրում էին հետևյալ պատճառներով. «1. Ելնելով Թուրքիայում դեռևս բնակվող իրենց հայրենակիցների շահերից, 2) այն վախից, որ պատերազմը կարող է ավարտվել Անտանտի երկրների հաղթանակով, և 3) այն հուսախաբությամբ, որ նրանք կապում էին Ահմեդ Ռիզա բեյի առաքելության հետ», և վերջապես, իրենց անհաջողության պատճառների շարքում գերմանական կողմը տհաճությամբ, սակայն փաստում էր, որ «այդ գործում շատ որոշակի դեր է կատարել Ֆրանսիայի ու նրա Դաշնակիցների գործակալների գործունեությունը, որոնք հայերին խորհուրդ տվեցին չմասնակցել կոնգրեսին»: <sup>398</sup>

1917 թվականի ամռանը Շվեյցարիայի հայ գաղութի գործունեության հետևանքով ձախողվեց թուրքական իշխանությունների՝ ինքնաարդարացման նպատակներով, ձեռնարկած քայլերից ևս մեկը: 1917թ. օգոստոսի 13-ին “Journal de Genève”-ը հաղորդեց, որ «Ստոկհոլմ են հասել թուրք ընկերվարականները, որոնք ուժեղ պաշտպանողական են ներկայացրել հայերի ջարդերն իրագործած երիտթուրքական կառավարությանը», հայտարարելով, որ «հայերը մշտապես վարվել են իբրև Հայրենիքի թշնամիներ, և երիտթուրքական կառավարության ընթացքը գնահատելիս անհրաժեշտ է, որ նկատի առնվի այդ փաստը»: <sup>399</sup>

Եվ այն օրից, «երբ թերթերը հաղորդեցին թե թուրք ընկերվարականները (!) պարագլուխ ունենալով Պոլսոյ նախկին ոստիկանապետ արյունկգակ մարդագազան Ջամփուլաղը, որոշել են երթալ Ստոկհոլմ», Շվեյցարիայի հայ գաղութը փութաց Ֆրանսիայի հայտնի և ազդեցիկ ընկերվարական գործիչների միջոցով շվեդ ընկերվարների պարագլուխ պարոն Բրանդինգին՝ և ռուս ընկերվարական պարագլուխներին տալ հարկ եղած տեղեկությունները ընկերվարական դիմակին տակ թուրքական այս նոր մեքենայութեանց մասին»: <sup>400</sup>

Թուրքիայի այդ «նոր մեքենայություններին» ամեն կերպ օգնելու և աջակցելու գործունեություն ծավալած Գերմանիան, ի դեմս Բեռնի և Ժնևի գերմանական դիվանագիտական ծառայությունների, որոնք ձգտում էին իրենց հետ հարաբերությունների մեջ գտնվող հայկական որոշ շրջանակներին նույնպես ներգրավել այդ գործի մեջ, դարձյալ ստիպված էին արձանագրել, որ Շվեյցարիայի հայկական շրջանակները ոչ մի կերպ չեն համաձայնվում այդ առաջարկներին, և ինչպես ռայխսկանցլեր Բեռնման Հելվեգին գրում էր Բեռնի գերմանական դեսպանատան խորհրդական Մարումը, Ժնևի հայության ազդեցիկ ներկայացուցիչները, ի դեմս պաստոր Միքայելյանի «թուրք սոցիալիստների մեկնումը Ստոկհոլմ բնորոշում են որպես բլեֆ, քանի որ, նրա կարծիքով, Թուրքիայում անգամ պատկերացում չունեն սոցիալիզմի մասին»: Գերմանացի դիվանագետը միաժամանակ չէր թաքցնում իր «տպավորությունն այն մասին, որ պաստոր Միքայելյանը և նրա կողմնակիցները գտնվում են Անտանտի տեսակետների ու շահերի պաշտպանության ֆարվատերում, որ, առանց կասկածի, նրանք կապ ունեն Անտանտի գործակալների հետ»: <sup>401</sup>

Դեռ 1916 թվականի հուլիսին Ֆրանսիայի ռազմական հետախուզությունն, իր տրամադրության տակ եղած տվյալների վերլուծության հիման վրա, Ֆրանսիայի վարչապետ Ար. Բրիանին ահազանգում էր. «Գերմանիայի կրկնակի խաղի

<sup>397</sup> «Մշակ», 24-ը հուլիսի, 1916թ.:

<sup>398</sup> “Армянский вопрос и геноцид армян”, Ер., 1995г., стр. 362.

<sup>399</sup> “Journal de Genève”, 13 août, 1917.

<sup>400</sup> «Արձանագրություն», Ա. տարի, Փարիզ, թիվ 3, 1917թ., էջ 86-87:

<sup>401</sup> “Армянский вопрос и геноцид армян”, Материалы политархива МИД Кайзеровской Германии (1913-1919гг), Ер., 1995г. стр. 443-446.

մասին՝ նա մի կողմից ուզում է հավատարիմ մնալ իր դաշնակից Թուրքիային, իսկ մյուս կողմից, հատկապես չեզոք երկրներում, օգտագործելով գերմանական միսիոներական կազմակերպությունների ներուժն ու կարողունակությունները, որոնք ազդեցություն ունեն հայ տարբեր շրջանակներին պատկանող գործիչների վրա, փորձում է հանդես գալ որպես Արևելքի քրիստոնյաների հովանավոր»:<sup>402</sup>

Եվ իսկապես, Շվեյցարիայում գործող գերմանական դիվանագիտական ու ոչ դիվանագիտական ծառայությունները 1916-1918թթ. այդ ուղղությամբ որոշակի և նպատակասլաց գործունեություն էին ծավալել, որի հաջողությունն, իհարկե, կարող էր լուրջ հարված հասցնել ֆրանսիական ողջ քարոզչությանը:

Իրենց այդ նպատակներին հասնելու համար գերմանական դիվանագիտությունը փորձում էր իր քարոզչության մեջ ներգրավել, գլխավորապես, հայ այն հոգևոր գործիչներին, որոնք հանուն այն բանի, որպեսզի ինչ-որ օգնություն հասցվի Միջագետքի անապատներում ամեն օր մահվան մանգաղով հնձվող հայությանը, սերտ կապեր էին հաստատել գերմանական միսիոներական կազմակերպությունների հսկողության տակ գտնվող տարբեր նպաստամատույց միությունների ու կոմիտեների հետ, և անշուշտ, որոշակի հույսեր էին կապում Գերմանիայի աջակցությամբ հայ տարագիրների վիճակը մեղմելու հեռանկարի հետ:

Այդ կարգի գործիչների շարքին էր պատկանում հայ կաթոլիկ քահանա, Ֆերյբուրգի համալսարանի պրոֆեսոր Գաբրիել Միքայելյանը, որին Բեռնի գերմանական դեսպանատան աշխատակիցները «փորձում էին կապել գերմանական ռախսատագի կաթոլիկ Կենտրոնի պատգամվոր Էրցբերգերի հետ»: Հետաքրքիր է, որ Գ. Միքայելյանը նման հանդիպում ունենալու ցանկություն հայտնել էր «դեռ» 1917թ. մայիսին՝ Բեռլինից ԺՆԵ եկած միսիոներական միության նախագահ Գրինֆիլդի խորհրդով, որպեսզի նրան և նրա կուսակցությանը շա-

հագրգռի հայկական հարցով»<sup>403</sup>:

Գերմանիան որոշակի հույսեր էր կապում հայկական վերոհիշյալ շրջանակներին երիտթուրքերի հետ հաշտեցնելու հեռանկարի հետ, որը իհարկե հնարավորություն կտար գերմանա-թուրքական բլոկին ավելի ակտիվ և արդյունավետ քարոզչական պայքար մղելու Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների դեմ:

Սակայն 1917թ. ամռանը Գերմանիան իր համար պարզեց, որ թե՛ առաջին և թե՛ երկրորդ խնդիրների լուծումը գործնականորեն ձախողվել է, և այդ գործում շատ որոշակի դեր են ունեցել Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների քարոզչությունը Շվեյցարիայում ղեկավարող ուժերը:

1917թ. օգոստոսի 25-ին գերմանական քարոզչական աշխատանքները Շվեյցարիայում կազմակերպող ու ղեկավարող անձերից մեկը՝ Բեռնում գերմանական դեսպանատան խորհրդական Մարումը՝ ռախսականցլեր Բետման-Հելվեգին հասցեագրված իր զեկուցման մեջ, ստիպված էր փաստել Գերմանիայի քարոզչական ծրագրերի ձախողումը վկայող այն իրողությունները, որ նախկինում Գերմանիայի հետ որոշակի հույսեր կապող և որոշ չափով նրա ազդեցության տակ գտնվող հայկական շրջանակներն «այսուհետ հարկ են համարում *հրապարակայնորեն* հանդես գալ հանուն հայկական շահերի պաշտպանության», որ «նրանք բացառում են որևէ հաշտեցում թուրք կառավարության հետ, որ նրանք որդեգրել են թուրքական կառավարության դեմ բացահայտ պայքար մղելու տակտիկան, որով և բացատրում են շվեյցարական մամուլում հարյուրավոր հոդվածների ի հայտ գալը՝ ի պաշտպանություն հայկական պրոպագանդայի», որ «այլևս հայկական բոլոր կուսակցությունները միասնական են», որ «այլևս Պողոս Նուբարի և Միքայել Վարանդյանի միջև ոչ մի հակասություններ չկան», և որ «բոլոր հայ կուսակցությունների միջև տիրում է լիակատար համաձայնություն», որ այդ ուժերն արդեն «ամբողջովին գտնվում են Անտանտի տեսակետների ու շահերի պաշտպանության նավարկուղում», և որ նրանք ամենասերտ կապերի

<sup>402</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 234, p. 214.

<sup>403</sup> “Армянский вопрос и геноцид армян в Турции”, Ер., 1995г., стр. 443.



մեջ են մտել Ֆրանսիայի քարոզչական կառույցների հետ համագործակցող հայ քաղաքական կազմակերպությունների ու նրանց ղեկավարների հետ՝ ի դեմս Պողոս Նուբարի, որը «Էվիանում բուժման մեջ գտնվելով, աննկատ այցելեց Ժնև և հանդիպում ունեցավ պաստոր Միքայելյանի և այլոց հետ», ի դեմս Միքայել Վարանդյանի «որը Փարիզից մի քանի օրով այցելելով Ժնև, հանդիպել է նրանց հետ, և Ստոկհոլմ մեկնելուց առաջ, անձամբ պաստոր Միքայելյանին է նվիրել վերջերս Ժնևում իր կողմից հրատարակած գրքույկը՝ «L' Arménie et la Question arménienne», (Laval, imprimerie Moderne, p. 64), որտեղ առաջ են քաշվում հայկական հարցի լուծման նույն պահանջները»:<sup>404</sup>

Շվեյցարիայում գտնվող հայ քաղաքական տարբեր ուժերին իր քարոզչական պայքարի նավարկուղում պահելու գործում Ֆրանսիան նոր հաղթանակ արձանագրեց 1917թ. վերջերին և 1918թ. սկզբներին, որի մասին Բեռնում Ֆրանսիայի դեսպան Բոն շատպում էր տեղեկացնել արտաքին գործոց նախարար Ստեփան Պիշոնին՝ 1918թ. հունվարի 10-ի իր զեկուցագրում. «1917թ. դեկտեմբերի 10-ի թվակիր իմ նամակով, ես արդեն Չեզ հաղորդել եմ իմ հավաքված առաջին տեղեկությունները թուրքական նոր «Խաղաղություն և Ազատություն» խմբավորման մասին, որը ստեղծվել է Միդիատ Բեյի նախաձեռնությամբ:

...Զենալ Միդիատը, իր Կոմիտեի մասին մամուլում կոմյունիկե տպագրելուց հետո, կոչով դիմեց հայերին: Դատապարտելով հայերի կոտորածները, նա հայերին հրավիրում էր միավորվելու իր Կոմիտեի շուրջը՝ նրանց «անկեղծորեն և հավատարմորեն» պարզելով իր ձեռքը:

Այդ կոչին հայերը արձագանքեցին բազմաթիվ բողոքներով, որոնք տպագրվեցին “La Gazette de Lausanne”-ում, ուր 1918թ. հունվարի 3-ին լույս տեսավ Մի Հայի՝ “Réponse à l’appel de la Ligue Ottomane”, “Paix et Libération”-ում, “La Tribune de Genève”-ում, ...ուր 1918թ. հունվարի 6-ին լույս տեսավ Լ. Բա-

րոնյանի “La Turquie libérale et les Arméniens” հոդվածը: Այդ հոդվածներում հայերին իր շարժման հետ միավորելու՝ Միդիատ Բեյի փորձը, որակվում է որպես թակարդ, որի նպատակն է Անտանտի տերությունների մոտ ստեղծել հայ-թուրքական համաձայնության պատրանք...: Արամջյան ազգանունով մի հայ 1918թ. հունվարի 4-ին “Gazette de Lausanne”-ում տպագրված իր՝ «Մեկ ուրիշ հայի պատասխանը «Միդիատ Բեյին» հոդվածում հրաժարվում էր սեղմել Զենալ Միդիատի «անուժ և հաշմված ձեռքը»:

Ավելի չափավոր բողոքողները բավարարվում են հայտարարելով, որ այդ կոմիտեի մասին իրենք դատելու են ըստ նրա գործերի»:<sup>405</sup>

Այս նույն իրադարձություններին ուշադրությամբ հետևող և դրանցից շատ որոշակի ակնկալիքներ ունեցող գերմանական դիվանագետները, ոչ առանց դառնության 1918թ. հունվարի 31-ին Բեռնից տեղեկացնում էին ռայխսկանցլերին, որ «հայտնի հրապարակագիր Լ. Բարոնյանը 1918թ. հունվարի 6-7-ին, և 1918թ. հունվարի 26-ին “La Tribune de Genève”-ում տպագրված իր հոդվածներում, հայ ժողովրդի ...անունից բացահայտորեն մերժեց «Խաղաղություն և Ազատություն» միության հետ միավորվելու առաջարկը, որով հանդես էր եկել Ժնևում գտնվող Միդիատ բեյը:

Հայերը ... ընհանրապես ոչինչ չեն ուզում լսել Թուրքիայի մասին, և ցանկանում են լինել ինքնուրույն»<sup>406</sup>: 1918թ. ապրիլի 9-ին Բեռնում Ֆրանսիայի ռազմական կցորդ գնդապետ Պաժոն շտապում էր Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոյին տեղեկացնել, որ Շվեյցարիայի հայ քաղաքական ուժերին՝ թուրք լիբերալների հետ հաշտեցնելու թուրք-գերմանական պլանները վերջնականապես ձախողվել են. Շվեյցարիայում գտնվող հայերին թուրքերի հետ միավորելուն ուղղված բոլոր փորձերը քիչ թե շատ նշանակալի արդյունքներ չեն արձանագրել:

*Գերմանական և թուրքական քարոզությունը ձախողվել*

<sup>404</sup> “Армянский вопрос и геноцид армян в Турции”, Материалы политархива МИД Кайзеровской Германии. (1913-1919гг), Ер., 1995г., стр. 444-445.

<sup>405</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 482, p. 464-465.

<sup>406</sup> “Армянский вопрос и геноцид армян в Турции”, Ер., 1995, стр. 468-469.

է հանդիպելով հայերի հայրենասիրությանն ու անկախ ապրելու հաստատակամությանը :

Միայն մի քանի դժբախտներ են, որ դիմում են շվեյցարական այն նպաստամատույց կազմակերպություններին, որտեղ զգացվում է գերմանական ազդեցությունը:

Հայերի ինքնուրույնությունը փաստող հաջող գործերից կարելի է առանձնացնել երկուսը, - «Օգնության Հայկական կոմիտեի» ստեղծումը, որը կարողացավ հաջողությամբ պայքարել ռուսահայերի և թուրքահայերի միջև եղած անվստահության դեմ, և պրոֆ. Միքայելյանի գլխավորությամբ «Հայկական տեղեկատվական Բյուրոյի ստեղծումը»<sup>407</sup>:

Խնդրո առարկա հարցի տարբեր ծալքերը վեր հանելու հրամայականից ելնելով, անհրաժեշտ է ընդգծել այն փաստը, որ պատերազմի տարիներին իր դաշնակից Անգլիայի հետ տարբեր ռազմա-քաղաքական խնդիրների շուրջն անդադար մրցակցային պայքար մղող Ֆրանսիան միանգամայն անթույլատրելի էր համարում նման պայքարը հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության հարցերում, և անվերապահորեն գերապատվությունը տալիս էր համագործակցությանը: Եվ երբ, Փարիզում գտնվող ֆրանսիական քարոզչական կենտրոնին հայտնի էին դառնում չեզոք երկրներում, հատկապես Շվեյցարիայում, հայկական շրջանակների հետ տարվող աշխատանքներում, նման մրցակցության դեպքեր են տեղի ունենում, ապա նա վճռականորեն կասեցնում էր դրանք:

Այսպես, երբ 1918թ. հունվարի 10-ին Բեռնում Ֆրանսիայի դեսպան Բոն արտաքին գործոց նախարարին ահազանգում էր, որ անգլիական դիվանագետները և նրանց գործակալները մեծ ակտիվություն են ցուցաբերում հայկական շրջանակներին Քեմալ Միդհատ բեյի «Խաղաղություն և Ազատություն» միության հետ հաշտությունից և միավորվելուց հեռու պահելու համար, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության «Քաղաքական գործերի դեպարտամենտի» ազդեցիկ ղեկավարներից մեկը հարկ համարեց զգուշացնել Շվեյցարիայում աշխատող ֆրանսիական դիվանագետներին, որ

«...գաղտնի գործակալների այդ մրցակցությունը ծիծաղելի է», և ապա, անհրաժեշտ համարեց պահանջել Ֆրանսիայի դեսպան Բոնից, որ «նա բանակցի Բեռնում Անգլիայի դեսպան Հորացիո Ռումբոլտի հետ, և հասնի այն բանին, որ երկու երկրների գործակալներն իրար խանգարելու փոխարեն, *համագործակցեն* և օգնեն *միմյանց*»:<sup>408</sup>

Իհարկե, հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության հարցերում իր դաշնակիցների հետ մրցակցությունն ավելորդ և վնասակար համարող Ֆրանսիան, քաջ գիտակցում էր, որ Շվեյցարիայում իրեն է պատկանում Անտանտի քարոզչական նվազախմբի առաջին ջութակի դերը և նա ջանք չէր խնայում իր այդ առաքելությունն արդարացնելու համար:

1918թ. Բրեստի հաշտությունը, որով Թուրքիային էին անցնում ռուսների կողմից 1915-1916թթ. գրավված հայկական նահանգները, և դրան հաջորդած թուրքական գորքերի առաջխաղացումը դեպի Անդրկովկաս և արևելահայության գլխին կախված ցեղասպանության իրական սպառնալիքը, նոր առիթներ տվեցին Ֆրանսիային այդ ամենն քարոզչական նպատակներով օգտագործելու համար: Բեռնում Ֆրանսիայի նոր դեսպանը՝ Դյուտաստան վարչապետ Կլեմանսոյից հանձնարարություն ստացավ, օգտագործել շվեյցարական հայկական գաղութի անհանգստությունը և «շվեյցարական մամուլում կազմակերպել լայն քարոզչական կամպանիա, և այդ հարմար առիթը ծառայեցնել՝ հայերի նկատմամբ թուրքական ոճրագործությունները չկանխվող, և, նույնիսկ, Թուրքիային աջակցող, Գերմանիային վարկաբեկելու գործին»:<sup>409</sup>

Ֆրանսիայի ծրագրած և լայնորեն իրականացվող հակազերման այս նոր քարոզարշավին քաջատեղյակ և նրա զարգացումներին ուշադրությամբ հետևող Բեռնի գերմանական դեսպանատան պատասխանատու աշխատակից Յակոբին, 1918թ. մարտի 30-ին Բեռլին ուղարկած՝ «Ֆրանսիայի Հայկա-

<sup>408</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N 464-465.

<sup>409</sup> «Армянский вопрос и геноцид армян в Турции», Материалы политархива МИД Кайзеровской Германии (1913-1919гг), Ер., 1995г. стр. 479.

<sup>407</sup> Les Grandes Puissances.....Opt cit., doc. N 582, p. 584-549.

կան ազիտացիան Շվեյցարիայում» բնութագրական խորագիրը կրող գեկուցման մեջ, փաստում էր, որ Ֆրանսիայի քարոզչական նոր հարձակումը Գերմանիայի դեմ «արդեն տալիս է իր պտուղները: 1918թ. սկզբներին, ինչպես տեղեկացա ... հայ բարեկամներից, ... ֆրանսիացի հրապարակախոս Վիկտոր Բերարը՝ “L’ institut de France”-ից, ժամանել էր ԺճՆ՝ այնտեղ գիտական գեկուցումներ կարդալու պատրվակով: Իրականում, նա ԺճՆ էր եկել Կլեմանտոյի հանձնարարությունը կատարելու առաքելությամբ: Այդ նպատակով նա կապեր հաստատեց ԺճՆում գտնվող հայ ազիտատորների հետ, և բժիշկ Ջերեջյանի տանն անցկացրեց գաղտնի ժողով, որին մասնակցում էր նաև հայերի շվեյցարացի հայտնի բարեկամ Լեոպոլդ Ֆավրը՝ ԺճՆից:

Այդ ժողովում Բերարը խոսել է Հայկական հարցի մասին և հատուկ ընդգծել, որ ֆրանսիական կառավարությունը սպասում է, որ հայերը բոլոր միջոցներով դիմադրություն ցույց կտան Թուրքիային, որի համար ֆրանսիական կառավարությունը հանույքով կտրամադրի ֆինանսական օգնություն:

Թուրքերի դեմ պորպագանդա մղելու համար Բերարը ներկա գտնվող հայերին խորհուրդ է տվել միավորվել մի միության մեջ, և ավելացրել, որ նրանք կարող են վստահ լինել, որ մշտապես կստանան Դաշնակիցների օգնությունը:

Բերարյան ազիտացիայի հաջողության ապացույցներից կարելի է համարել այն փաստը, որ ԺճՆում գտնվող հայերը վերջերս կապեր են հաստատել Յուրիխում գտնվող այն հայերի հետ, որոնք նախկինում սերտ կապեր են ունեցել հայերի հանդեպ բարեկամաբար տրամադրված գերմանացի մի շարք գործիչների հետ»:<sup>410</sup>

Բեռնի գերմանական դեսպանատունը ֆրանսիական այս նոր քարոզարշավին, որի իսկությունը հաստատվում է ոչ միայն գերմանացի դիվանագետի ձեռք բերած, իսկապես որ, հավաստի տեղեկություններով, այլև Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության արխիվում տեղ գտած տասնյակ

փաստաթղթերով,<sup>411</sup> փորձեց հակադարձել, նախ, Շվեյցարիայի հայասերների հետ սերտ կապեր ունեցող գերմանացի ճանաչված միսիոներ Ալսենֆելդի միջոցով, որը «հակագերման քարոզչությունից հեռու մնալու նամակ-հորդոր գրեց Լեոպոլդ Ֆավրին», և ապա Բյուլնի «Կյուլնիշե Ցայտունգ» թերթի միջոցով 1918թ. ապրիլի 6-ին տարածեց գերմանական պետական «Վոլֆ» գործակալության հաղորդագրությունը՝ Բերարի ԺճՆում գտնվելու իսկական նպատակների մասին: Սակայն, այդ քայլերը ոչ մի էական ազդեցություն չունեցան Շվեյցարիայի հայ զաղութի վարքագծի և որդեգրումների վրա, որի ներկայացուցիչները՝ ի դեմս ֆրանսիական քարոզչական կենտրոնների հետ համագործակցող Եր. Ադաթունի, նախ, հրապարակավ ժխտեցին հայերի դիրքորոշումների վրա ֆրանսիական որևէ ազդեցության փաստը, շեշտելով, որ «քաղաքական և կամ այլ բնույթի որևէ կոնֆերանս ոչ ԺճՆում և ոչ էլ Շվեյցարիայի մեկ այլ քաղաքում հայերը չեն անցկացրել, որ կապի բացակայության պայմաններում, պարզապես անհնար էր, որ Շվեյցարիայի հայերը որևէ հեռագիր ուղարկեին Թիֆլիս՝ որտեղ խորհուրդ տրվեր թուրքերին դիմադրություն ցույց տալ, և որ Փարիզի համալսարանի պրոֆեսոր Վիկտոր Բերարը ԺճՆ էր եկել ոչ թե տեղի հայերին խորհուրդ տալու, այլ Անտիկ Հունաստանի մասին դասախոսություններ կարդալու նպատակով»,<sup>412</sup> և ապա, հակառակ այդ բողոքներին, ակտիվորեն մասնակցեցին Ֆրանսիայի կողմից Գերմանիային վարկաբեկելու այս նոր քարոզարշավին թե՛ Շվեյցարիայում և թե՛ այլուր:

Հակագերման ուղղվածության հայ քաղաքական գործիչների ու հրապարակախոսների գրչի տակից դուրս եկած բազմաթիվ հողվածներից, որ մանրակրկիտ ջանադրությամբ հավաքում էին գերմանացի դիվանագիտական ծառայությունները, Բեռնի գերմանական առաքելության ղեկավարներից մեկը՝ Ա. Մոնգելասը առանձնացրեց Միքայել Վարանդյանի

<sup>410</sup> “Армянский вопрос и геноцид армян в Турции”, Ер., 1995г., стр. 479-480.

<sup>411</sup> Այդ մասին տես “Les Grandes Puissances ...et les Arméniens” ժողովածուի մեջ տեղ գտած NN 426, 430, 464, 467, 474, 479, 487, 495, 499, 528, 535, 570, 588 փաստաթղթերը:

<sup>412</sup> “Армянский вопрос и геноцид армян в Турции”, Ер., 1995г., стр. 488-489.

բաց նամակը, որը նա 1918թ. մայիս 16-ին գետեղել էր «Le populaire» թերթում՝ ուղղված «Ֆրանսիայի պառլամենտի սոցիալիստական փոքրամասնության լիդեր՝ Ժան Լոնգեին, որի մեջ բողոքելով «Ռուսահայաստանում թուրքերի կողմից հայ խաղաղ բնակչության՝ կանանց և երեխաների կոտորածների դեմ», այդ ամենի «պատասխանատվությունը դնում էր գերմանական կառավարության վրա»:<sup>413</sup>

1918թ. կեսերին Ֆրանսիան իր շահերի և գաղափարաքաղաքական նպատակադրումների համար խիստ վտանգավոր սեպեց Բեռլինում ընթացող հայ-գերմանական բանակցությունները, որոնց մասին Ժնևում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոս Փարլոնը 1918թ. հուլիսի 17-ին արտաքին գործոց նախարար Ստ. Պիշոնին տալիս էր հետևյալ տեղեկությունները. «Գերմանացիները մի կողմից ճնշում են բանեցնում Կ. Պոլսի վրա, որպեսզի նա ճշտորեն կատարի Բրեստի հաշտության պայմանները, իսկ մյուս կողմից, ջանում են կարգավորել Ռուսաստանի կազմի մեջ մտնող հայկական նահագների ճակատագիրը՝ թուրքերից բացարձակապես անկախ ձևով:

Գերմանացիները նպատակ ունեն ...ստեղծել անկախ Հայաստան, որը կգտնվի գերմանական ազդեցության տակ: Նրանք կարողացել են հասնել այն բանին, որ հայ հեղափոխական կուսակցությանը (Հ.Յ.Դ. - Ե.Գ.) պատկանող Հայաստանի ներկայիս կառավարությունը Բեռլին ուղարկի իր երկու բանազնացներին՝ Չուրաբովին և Օհանջանյանին: Նրանց և Գերմանիայի արտաքին գործոց նախարարության միջև ընթանում են ակտիվ բանակցություններ: Հայ պատվիրակներն եկել են այն ... եզրակացության, որ ներկա պայմաններում ավելի լավ լուծում գտնել հնարավոր չէ:

Չուրաբովը և Օհանջանյանը նամակ են գրել Ժնևում գտնվող հեղափոխական կուսակցության որոշ անդամներին, ուր բացատրում են իրադրությունը, և խնդրում Բեռլին գործուղել որևէ մեկին, որը կօգնի նրանց իր խորհուրդներով:

Այդ նպատակով կիրակի օրը՝ հուլիսի 14-ին գերմանական թրծվածքի մտավորական Ավ. Իսահակյանը Ժնևից մեկ-

նել է Բեռլին:<sup>414</sup>

Այս ամենը դիտելով միայն որպես «Բեռլինի արդյունավետ քարոզչության արդյունք և հաջողություն»,<sup>415</sup> Ֆրանսիան ոչ մի կերպ չէր ուզում համակերպվել և ընդունել, որ հայ ժողովրդի քաղաքական ղեկավարությունն ի դեմս «Հայոց Ազգային խորհրդի», այն պայմաններում, երբ ո՛չ Ֆրանսիան և ո՛չ էլ նրա դաշնակից Անգլիան ո՛չ մի իրական քայլ չէին ձեռնարկում իր գոյության համար մաքառող հայ ժողովրդին ռազմական օգնություն ցուցաբերելու համար, միանգամայն ճիշտ էր վարվում, երբ հանուն հայ ժողովրդի շահերի, հանուն այն բանի որ փրկի, ինչ որ հնարավոր է փրկել, բանակցությունների մեջ էր մտնում Գերմանիայի հետ:

Ընդհակառակը, հրաժարվելով հասկանալ և ընդունել հայ քաղաքական ղեկավարության միանգամայն իրատես և բացատրելի, հայ ժողովրդի շահերի տեսակետից արդարացի դիրքորոշումը, Ֆրանսիան, նկատի առնելով այն հանգամանքը, որ հայ քաղաքական ղեկավարության այդ դիրքորոշումների հետևանքով կարող է կորցնել իր քարոզչության գլխավոր հաղթաթղթերից մեկը՝ «ոճրագործ Գերմանիայի» խաղաքարտը, իսկ Գերմանիան լավ հնարավորություն կստանա արդարանալու և հայտարարելու համար, որ ինքը հայ ժողովրդի բարեկամն է, փորձեց այդ ամենը ներկայացնել խեղաթյուրված ձևով, և սկսեց հայ քաղաքական ղեկավարության վարքագիծը բացատրել՝ վկայակոչելով պատմական իրականության և ճշմարտության հետ ոչ մի աղերս չունեցող պատճառներ:

Ահա այդ նպատակով, կյանքի կոչվեցին սին պնդումներն այն մասին, որ այդ ամենն իրականություն է դարձել ոչ թե այն պատճառով, որ հայ քաղաքական ղեկավարությունն այդ քայլին դիմել է միմիայն առաջնորդվելով իր ժողովրդի շահերով, և ընտրել է չարիքներից փոքրագույնը, այլ այն պատճառով, որ, նա, իբր, սերտորեն համագործակցել է գերմանական հատուկ ծառայությունների հետ, և կատարել նրա հրամանները, իրագործել նրա պլանները՝ հակառակ հայ ժողովրդի շահե-

<sup>414</sup> Les Grandes Puissances.....Opt. cit., doc. N 653, p. 641-642.

<sup>415</sup> Ibid, doc. N 641, p. 628.

<sup>413</sup> «Армянский вопрос и геноцид армян в Турции», Ер., 1995г., стр. 505-506.

րի:

Այս առումով շատ բնութագրական է Ֆրանսիայի վարչապետ Կլեմանտյուն հասցեագրված գաղտնի գեկույցը, որը կազմվել էր Ֆրանսիայի հետախուզության կողմից. «Ինչ վերաբերում է կովկասյան տարածաշրջանի հայությանը, ապա նա ռուսական հեղափոխությունից առաջ ոչ մի վստահություն չէր տածում դեպի Գերմանիան:

Միայն հեղափոխությունից հետո, շնորհիվ ... ռուսահայ որոշ քաղաքական գործիչների գաղտնի գործունեության, որոնք Գերմանիայի վճարովի գործակալներն էին՝ հանդիսանում, Բեռլինը ... հաջողացրեց ուղղակի հարաբերությունների մեջ մտնել հայերի հետ: Հայկական հարցին խաղաղ լուծում տալու նպատակով:

Դրանց շարքում պետք է նշել Հ.Յ.Դ. անդամ, ճարտարապետ Հ. Քաջազնունուն, Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Ա. Խատիսյանին, Պետական Դումայի նախկին պատգամավոր Մ. Պապաջանյանին, որոնք գտնվում են գերմանական «Քաղաքական դեպարտամենտի» ծառայության մեջ:

Հայկական միջավայրում ճարպկորեն վաստակելով գաղափարի մարդկանց վարկ և հայրենասերների համբավ, այս անձինք իրենց դիրքերը չարաշահեցին ի վնաս իրենց հայրենիքի: Իրականում նրանք դարձան միայն գերմանական հրահանգների կատարողներ, և աշխատեցին հոգուտ Գերմանիայի՝ նպատակ ունենալով տարածել գերմանասիրությունը, և ձեռք բերել հայ ժողովրդի համակրանքը գերմանական գործի նկատմամբ:

Գերմանիայի ընդհանուր քաղաքականության շրջանակներում նրանք բանակցություններ սկսեցին օսմանյան կառավարության հետ՝ հետապնդելով Գերմանիայի հովանու տակ Միացյալ իր մեջ թրքահայ և ռուսահայ նահագները ընդգրկող, Հայաստանի ստեղծման նպատակը:

Հայաստանի անկախության հռչակումը և կառավարության կազմում գերմանական գործակալներին բարձր պաշտոնների նշանակումն՝ այդ ծրագրի առաջին փուլն է կազմում, և Բեռլինի քարոզչության առաջին արդյունավետ հաջողությու-

նը»<sup>416</sup>:

Իհարկե, Ֆրանսիայի նման մոտեցման մեջ ոչ մի անբացատրելի, հանելուկային ու առեղծվածային բան չկար: Պարզապես, այս դեպքում ևս Ֆրանսիան ապացուցում էր, որ հայ ժողովրդի նկատմամբ նրա ողջ քաղաքականությունը, ընդհանրապես, և հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչական քաղաքականությունը, մասնավորապես, կրում էր բացարձակ գիշատչային բնույթ, որ նա ոչ մի պարագայում չէր կարող և չէր ուզում հաշտվել, առավել ևս ըմբռնումով վերաբերվել բոլոր այն քաղաքական ու ռազմական զարգացումների հետ, որոնք կարող էին իրական, շոշափելի արդյունքներ բերել իր գոյության համար մաքառող հայ ժողովրդին, սակայն քաղաքական ու գաղափարա-քարոզչական շահաբաժիններ չբերել Ֆրանսիային: Ավելին, Ֆրանսիան չէր կարող հաշտվել հայ ժողովրդին ընդունելի և նրա ողբալի դրությունը քիչ թե շատ անոքող այն ռազմա-քաղաքական զարգացումների հետ, որոնք Գերմանիային հնարավորություն էին տալիս արձանագրել «արդյունավետ քարոզչական հաջողություններ», և հաջողությամբ հակադարձել իր դեմ Անտանտի երկրների ծավալված հզոր քարոզարշավին:

Սակայն, հուրախություն Գերմանիայի «առաջին քարոզչական հաջողություններից» անհանգստացած Ֆրանսիայի, արագորեն դեպի պարտություն գլորվող Գերմանիան ժամանակ չունեցավ ինչպես հարկն է օգտվել իրեն համաշխարհային հանրության առաջ արդարանլու իրական հնարավորություններ պարունակող «այդ արդյունավետ հաջողություններից», իսկ Ֆրանսիան ու նրա դաշնակիցներն երկարատև և արյունահեղ պատերազմն ավարտեցին ոչ միայն ռազմական, այլև գաղափարա-քարոզչական բնույթի լիակատար ու տպավորիչ հաղթանակներով:

Այսպիսով, 1915-1918թթ. չեզոք երկրները ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդին իսկապես որ «տվեցին այն միակ իշխանությունը, որ իրականում նրանք ունեին՝ խոսելու, հրապարակելու և հանրային կարծիքը ոտքի հանելու իշխա-

նությունը:

Չեզոք երկրների խորհրդարաններում և եկեղեցիներում հնչեցին բողոքի բարձր ձայներ, իսկ գաղափարական և կրոնական տարբեր ուղղությունների պատկանող բազում մտավորականներ, սոցիոլոգներ և հոգևորականներ դատապարտեցին մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը»<sup>417</sup>:

Ցավոք, այդ ամենից հայ ժողովուրդն իրական ու գործնական ոչինչ չստացավ, իսկ հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունն իր գաղափարա-քարոզչական պայքարի հիմնական զենքը դարձրած Ֆրանսիան՝ անընդհատ կրկնելով «ազատության ու ասպետականության» մասին, անընդհատ խոստանալով «ազատագրել առաջադիմության և քաղաքակրթության մարտիրոս հայ ժողովրդին», ճիզվիթային անամոթությամբ, հայ մեծ գրող Ավ. Իսահակյանի շատ դիպուկ ու ճշգրիտ խոսքերով ասած, այդ ամենն օգտագործելով՝ կարողացավ իրականացնել «իր դիվային, ճիզվադային և ճիզվիթային նպատակը մեր մարտիրոսացումով սրբագործեց իր ավազակային դատը և ապա թքել մեզ վրա»<sup>418</sup>:

<sup>417</sup> Moussa Prince, Opt.cit., p. 326.

<sup>418</sup> Գ.Ա. Թ., Ավ. Իսահակյանը՝ Ա. Չոպանյանին, 13-ը դեկտեմբերի, 1921թ., Ա. Չ. Փ., բ. 1, ց. 5, N 2764.

## Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Այսպիսով, որպես փաստարկված ճշմարտություն կարող ենք արձանագրել այն իրողությունը, որ 1914-1916թթ. հայոց ցեղասպանությունը կանխելու և արևմտահայությանը բնաջնջումից փրկելու հարցերում Ֆրանսիան որդեգրել ու հետապնդել է միմիայն և բացառապես իր ծավալապաշտ շահերից բխող քաղաքականություն:

Ֆրանսիան, պատերազմ հայտարարելով Թուրքիային, որդեգրեց *ոչ թե արևմտահայության ցեղասպանությունը կանխելու և հայկական հարցին հայանպաստ լուծում խոստացող Օսմանյան կայսրության արագ պարտությունն երաշխավորող ռազմավարություն*, այլ երկարատև, դանդաղ և մաշեցնող պատերազմ մղելու դիրքորոշում: Դա, անշուշտ, բացառում էր արևմտահայության ցեղասպանության կանխումը:

Ակնհայտ է որ, Ֆրանսիայի որդեգրած և հետապնդած ռազմական, դիվանագիտական և քաղաքական բնույթի քայլերն ու ձեռնարկումները կուղղվեին արևմտահայության ցեղասպանության կանխմանը, և ապա բնաջնջող հայ տարագիրների փրկությանը միայն այն դպեքում, եթե, նախ՝ արևմտահայության ֆիզիկական բնաջնջումից փրկելու խնդիրը 1914-1916թթ. դառնար իր ռազմական, քաղաքական, դիվանագիտական ու տարածքային ծավալապաշտական շահերը հետապնդող Ֆրանսիայի կենսական ու առաջնահերթ նպատակներից մեկը: Երկրորդ, եթե այդ խնդիրը դառնար Ֆրանսիայի շահերի ու ձգտումների հաղթանակը պայմանավորող ոչ զանցառելի ու գլխավոր միջոցներից մեկը:

Սակայն, ի դժբախտություն Ֆրանսիայից գործնական, ռազմական, քաղաքական ու դիվանագիտական օգնություն ակնկալող արևմտահայության, պատմությունն առարկայական զարգացման իր ընթացքով ոչ միայն բացառեց Ֆրանսիայի և հայ ժողովրդի շահերի զուգորդման վերոհիշյալ երկու տարբերակներն, այլև, ընդհակառակը, արևմտահայության անվտանգության խնդիրը մշտապես հակադրեց պատերազմում միմիայն իր շահերն հետապնդող Ֆրանսիայի նպատակներին:

Այդ ամենը հայ ժողովրդի պատմական դժբախտության միայն կեսն էր: Հայ ժողովրդին բաժին ընկած դժբախտության մյուս կեսի հարցերին անդրադառնալիս, անտրամաբանական ու հակագիտական կլինի, եթե չշեշտվեն և չառանձնացվեն հայոց ցեղասպանության գործում Ֆրանսիային բաժին ընկած պատասխանատվության մասին վկայող այն բազմաթիվ փաստարկված ապացույցները, որոնք հիմք են տալիս անելու հետևյալ սկզբունքային եզրակացությունները.

ա) բնաջնջվող արևմտահայությանը գործնական, առավել ևս ռազմական օգնություն ցուցաբերելու ոչ մի ցանկություն ու մտադրություն իսկ չունեցող Ֆրանսիան չարաշահեց հայ քաղաքական կազմակերպությունների և ուժերի վրա ունեցած իր անվիճելի ազդեցությունը՝ նրանց մղելով քաղաքական ու ռազմական այնպիսի ձեռնարկումների ու քայլերի որդեգրմանն ու հետապնդմանը, որոնք հետագայում ծանր անդրադարձ ունեցան բնաջնջվող արևմտահայության ճակատագրի վրա և հայ ժողովրդից պահանջեցին, շատ առումներով ոչ մի կերպ չարդարացվող և անտեղի զոհաբերություններ ու զոհություններ:

բ) Ֆրանսիան գիտակցաբար իր ստորագրությունը դրեց հայոց ջարդերը դատապարտող ու երիտթուրքերին պատասխանատու սեպող այն անուժ և անատան հայտարարության տակ, որը կյանքի էր կոչվել «ամենից առաջ, իր դաշնակից Ռուսաստանի ռազմական շահերը բավարարելու, և ապա Անտանտի երկրների «մարդասեր», «ազատության» և «արդարության» առաջամարտիկների վարկն ամրապնդելու նպատակներով, իսկ բնաջնջվող արևմտահայությանն այն «պարզելու» էր նոր տառապանքներ ու բարբարոս թուրք ցեղասպանների վրեժխնդրական նոր պոռթկումներ:

գ) Ֆրանսիան այնքան շահամոլ ու հաշվենկատ գտնվեց, որ զլացավ ու հրաժարվեց Միջագետքի ամապատնեքում դանդաղ մահով ոչնչացող, տեղահանված ու տարագրված արևմտահայությանը նյութական նպաստ և աջակցություն ցուցաբերել միայն այն պատճառով, որ այդ, հիրավի, մարդասիրական ձեռնարկն իրեն և իր դաշնակիցներին ոչ մի իրական ու ազդու քաղաքական բաժնեմաս չէր խոստանում: Արձանա-

գրման արժանի է նաև այն իրողությունը, որ ճիշտ այդ նույն տարիներին հայոց ցեղասպանության մեջ արևմուտքի «բարբարոս» Գերմանիային անվերապահորեն գլխավոր մեղսակից ու պատասխանատու այպանող, այդ նույն ոճրագործության թողտվության և ծավալման գործում չքմեղացող Ֆրանսիան, հայ ժողովրդի «անշահախնդիր բարեկամի» ու «սրտակից» կարեկցողի վարկը և գաղափարագրու կերպարն ամեն կերպ պահպանելու միտումով փորձում էր իր հայավնաս քաղաքականությունը արդարացնել ոչ այլ կերպ, քան թե պատմական ճշմարտության հետ դյուզն իսկ առնչություն և ընդհանրապես աղերս չունեցող այն երեսպաշտ պատճառաբանությամբ, թե իր ռազմական, քաղաքական ու դիվանագիտական քայլերն ձեռնարկելիս, ինքն իբրև մշտական մտահոգության և հուզածության առարկա է ունեցել արևմտահայությանը ջարդերից գերծ պահելու և կամ նոր ջարդերի տեղիք չտալու հրամայականները:

Առաջին աշխարհամարտի տարիներին հայոց ցեղասպանության շուրջը ծավալված գաղափարաքարոզչական պայքարի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆրանսիան որդեգրեց հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության միջոցով պատերազմում իր հետապնդած գաղափարաքարոզչական և ռազմաքաղաքական նպատակադրումներին հասնելու ռազմավարություն:

Այդ խնդրի լուծման ճանապարհին ֆրանսիական պետական քարոզչությունը տնօրինող պաշտոնյաները և իրազեկ կառույցները ամենից առաջ ստեղծեցին հայոց Մեծ եղեռնի իրողությունն ու ճշմարտությունը հստատող և նրա համալիր պատկերը վեր հանող առարկայական, ազդու, հավատներշնչող փաստաթղթերի ժողովածու: Ֆրանսիայի կողմից այդ գործն այն աստիճան կարևորվեց, որ հայոց ցեղասպանության ամբողջական և լիապատում պատկերը վեր հանող փաստաթղթային ժողովածուի ստեղծման աշխատանքների ղեկավարմամբ ու կազմակերպմամբ անմիջապես զբաղվեցին Ֆրանսիայի արտաքին գործոց բոլոր նախարարները՝ Դելքասեն, Վիվիանին, Բրիանը, Ռիբոն, Բարտուն և Պիշոնը, որոնք, բացի Ստ. Պիշոնից, միաժամանակ զբաղեցնում էին նաև երկրի

վարչապետի պաշտոնը:

Հիրավի հզոր ու տպավորիչ, հավաստի և ապացուցողական անժխտելի մեծ ներուժ ունեցող, հասարակական կարծիքի վրա լրջորեն ազդելու ստակ և ունակ այդ փաստաթղթային ժողովածուի մտածված և լայնամասշտաբ քարոզչության շնորհիվ Ֆրանսիան կարողացավ Գերմանիայի դեմ ծավալված գաղափարա-քարոզչական պատերազմի առաջին՝ «զգացմունքային» փուլը ավարտել իր անվերապահ հաղթանակով, քանզի նա կարողացավ առարկայնությամբ ու համոզկերությամբ, հուզական մեծ ներազդեցությամբ բնորոշվող փաստաթղթերի օգնությամբ առաջ բերել, նախ, «համընդհանուր կարեկցանքի ու գութի» զգացմունքներ ոճրագործության զոհ հայ ժողովրդի հանդեպ ոչ միայն Ֆրանսիայում, այլև գրեթե բոլոր չեզոք երկրներում, և երկրորդ, «համընդհանուր դժգոհության, վրդովմունքի ու բողոքի» մի հզոր ալիք, որը սասանում էր ոճրագործ Թուրքիայի հզոր դաշնակից և Ֆրանսիայի գլխավոր թշնամի Գերմանիայի միջազգային հեղինակությունն ու վարկը:

Հայոց ցեղասպանության դատապարտմամբ, լուսաբանմամբ և մեկնաբանմամբ զբաղվող ֆրանսիական քարոզչության խոհանոցի և ընթացքի ծալքերը բացահայտող փաստաթղթերի մանրակրկիտ վերլուծությունը, մեզ բերել է այն հաստատ եզրահանգմանը, որ 1) հայ ժողովուրդը Ֆրանսիային հետաքրքրեց ու շահագրգռեց իր գլխավոր թշնամուն՝ Գերմանիային գաղափարա-քարոզչական պատերազմում պարտության մատնելու, իր այլևայլ ռազմաքաղաքական նպատակադրումներին ծառայեցնելու, և ոչ թե Մեծ եղեռնը կանխելու, բնաջնջվող արևմտահայությանը ռազմագործնական օգնություն ցուցաբերելու, առավել ևս ոչ ցեղասպանության զոհ դարձած ժողովրդի ազգային ու քաղաքական օրինական ձգտումները պաշտպանելու համար: Այլ կերպ ասած ֆրանսիական պետական քարոզչությունը որդեգրել և առաջնորդվում էր «*հայ ժողովուրդը միայն ցեղասպանության դատապարտման քարոզչության համար*», և «*հայոց ցեղասպանության միայն Ֆրանսիային ձեռնտու և շահաբեր մեկնաբանություն*» բանաձևերը, 2) ելնելով վերոհիշյալ նպատակադրումներից ֆրանսի-

ական քարոզչությունը կյանքի կոչեց և որպես հայոց ցեղասպանության քարոզչության առանցքային կոնցեպցիա լայնորեն քարոզեց Գերմանիային որպես արևմտահայության ֆիզիկական բնաջնջման գլխավոր մեղավոր, գլխավոր կազմակերպիչ և գլխավոր պատասխանատու այսպանող «գաղիական» կոնցեպցիան, 3) առաջին աշխարհամարտի տարիներին ֆրանսիային գաղափարա-քարոզչական պատերազմում փայլուն և տպավորիչ հաղթանակներ բերող ինչպես առանցքային՝ «գաղիական», այնպես էլ նրան սպասարկելու կոչված մյուս արբանյակային կոնցեպցիաների ծագումնաբանության, բովանդակության, փաստարկումների ու հիմնավորումների ուսումնասիրությունը մատնանշում է այն ակներև իրողությունը, որ *հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչության ողջ համալիրը մշտապես ունեցել է հակազեման բնույթ, ուղղվածություն և բովանդակություն, իսկ* հայոց Մեծ եղեռնի *գլխավոր հանցագործ և պատասխանատու Թուրքիայի դեմ ուղղված նրա քարոզչությունը եղել շատ ավելի թույլ և երկրորդական*, 4) Ֆրանսիայի հետ համագործակցող հայ ազգային ու քաղաքական կազմակերպությունների, առաջին հերթին Պողոս Նուբար փաշայի գլխավորած Հայոց Ազգային պատվիրակության սկզբնական «հաշտվողական» դիրքորոշումը «գաղիական» կոնցեպցիայի լայնամասշտաբ քարոզչության նկատմամբ բացատրվում էր այն հույսով ու ակնկալիքով, որ ֆրանսիական քարոզչության կողմից Գերմանիային հայոց եղեռնի գլխավոր հանցագործ սեպոդ մեղադրանքները «կսքափեցնեն» և կստիպեն Թուրքիայի վրա անժխտելի մեծ ազդեցություն ունեցող Գերմանիային հանուն իր միջազգային հեղինակության ու վարկի պահպանման, դիմելու գործնական քայլերի արևմտահայության մնացորդային ոչնչացումից փրկելու և իր դեմ ուղղված մեղադրանքները հերքելու համար: 5) հանուն պատմական ճշմարտության պետք է առանձնացնել այն փաստագրված հաստատագրումը, որ Ֆրանսիան որդեգրելով Գերմանիային հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատու այսպանող կոնցեպցիան, *երբեք ոչ մի ձգտում, նպատակ ու շահագրգռվածություն չի ունեցել որպեսզի իր քարոզչությունը հանգեցնի դեպքերի հենց*



այդպիսի՝ հայ ժողովրդի տատապանքները մեղմող և նրա վեր-  
քերին շատ բանով բախասան անող գործնական զարգացման:  
Ակնհայտ էր, որ հակագերման քարոզչության նման գործնա-  
կան արդյունքն պարզապես *ձեռնտու չէր Ֆրանսիային, որը  
ձգտում էր* իր գլխավոր թշնամուն՝ Գերմանիային ներկայաց-  
նել, որպես *անուղղելի ոճրագործ*, 6) երբ հայոց ցեղասպանու-  
թյունը դարձավ համաշխարհային հանրության սեփականու-  
թյունը, երբ այլևս նրան չէր սպառնում պատմության մեջ ան-  
հայտ ոճրագործություն մնալու վտանգը, որում իր ծանրակշիռ  
ավանդն ու դերն էր ունեցել նաև ֆրանսիական քարոզչությու-  
նը, երբ հայության համար պարզ ու ակնհայտ դարձավ, որ  
Ֆրանսիայի հակագերման քարոզչությունը ոչ մի գործնական  
և շոշափելի արդյունքներ չի կարող բերել բնաջնջվող  
արևմտահայությանը, և վերջապես, երբ պարզ դարձավ, որ հա-  
յոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական հակա-  
գերման քարոզչությունը կարող է լուրջ վնաս հասցնել հայ Դա-  
տին, հայ քաղաքական ղեկավարությունը հրաժարվեց «գաղի-  
ական» կոնցեպցիայի հետ հաշտվելու դիրքորոշումներից, և  
նրա ամենտարբեր ներկայացուցիչները բարձրաձայն հայտա-  
բարեցին, որ ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի  
համար չի կարող ընդունելի լինել ֆրանսիական «գաղիական»  
առանցքային կոնցեպցիայով բնորոշվող քարոզչությունը, քա-  
նի որ հայոց ցեղասպանության *միակ գլխավոր ոճրագործ*  
*Թուրքիային* երկրորդական, իսկ Գերմանիային գլխավոր հան-  
ցագործ սեպող ֆրանսիական քարոզչական կոնցեպցիաները,  
նախ, չէին համապատասխանում պատմական ճշմարտությա-  
նը, երկրորդ, արդարացի չէին, և երրորդ, չէին բխում ցեղասպա-  
նության զոհ դարձած հայ ժողովրդի շահերից, ավելին այլևայլ  
քաղաքական զարգացումների դեպքում կարող էին լուրջ  
կռվան դառնալ Մեծ եղեռնի միակ գլխավոր հանցապարտ  
*Թուրքիայի ձեռքին՝ Գերմանիայի զոհի և իլու գործակատարի*  
*դերով* համաշխարհային հանրության դատին ներկայանալու  
համար, 7) հարկավ, հայոց ցեղասպանության դատապարտ-  
ման ֆրանսիական բոլոր քարոզչական կոնցեպցիաներն  
ունեին նաև հակաթուրք ուղղվածություն և բովանդակություն,  
սակայն դրանք խստագույնս դրվավորված էին և երբեք դուրս

չեկան «*Թուրքիան միայն Գերմանիայի կամակատարան էր*» և  
«*գերմանական աշխատանքը կատարող գործիքը*» կարգա-  
խոսներրի սահմաններից, 8) Ֆրանսիան, հայոց ցեղասպանու-  
թյան դատապարտման իր քարոզչական կոնցեպցիաները թե՛  
երկրի ներսում և թե՛ արտասահմանում լայնորեն տարածելու և  
նրանցից սպասվող ռազմա-քաղաքական ու բարոյա-գաղա-  
փարական արդյունքներն ապահովելու համար, ստեղծեց և  
շարժման մեջ դրեց լավ *մտածված և գործուն մի հսկայական  
քարոզչական համալիր*, 9) իր քարոզչության մեջ Ֆրանսիան  
շատ որոշակի տեղ հատկացրեց հայ ժողովրդի քաղաքակրթա-  
կան ու մշակութային արժեքների, նրա ստեղծագործ ոգու և և  
փառավոր անցյալի մասին փաստող «*քույր Հայաստանի*»  
կոնցեպցիային: Լայնորեն քարոզելով այդ կոնցեպցիան,  
ֆրանսիական քարոզչությունը ոչ միայն և ոչ այնքան ձգտում  
էր Ֆրանսիայում և չեզոք երկրներում լրացնել հայ ժողովրդի  
վերաբերյալ գիտելիքների պակասն ու բացը՝ որքան որ հե-  
տապնդում էր այն դարձյալ ու դարձյալ Գերմանիայի դեմ  
ուղղելու, նրան նորից ու նորից վարկաբեկելու նպատակը,  
10) «*քույր Հայաստանի*» կոնցեպցիան լայն հասարակայնու-  
թյան համար ընդունելի և հավատ ներշնչող դարձնելու համար  
ֆրանսիական քարոզչության դերաբաշխ կառույցներն այն  
քարոզելու առաջնահերթությունը վստահեցին անցյալում հայ  
ժողովրդի հետ կապված հարցերում մաքուր խիղճ ու ձեռքեր,  
հայ ժողովրդի աննշահախնդիր ու անկեղծ բարեկամների  
վարկանիշ ու համբավ ունեցող մարդկանց՝ ֆրանսիացի հայա-  
սերներին, 11) ամենից առաջ կարևորելով «*քույր Հայաստանի*»  
կոնցեպցիայի հայանպաստ գործառնությունները, հայ քաղա-  
քական տարբեր ուժերն ու գործիչները շտապեցին մասնակցել  
այդ կոնցեպցիայի քարոզչությունը: Ֆրանսիայի հետ համա-  
գործակցող հայ քաղաքական ու ազգային կազմակերպու-  
թյուններն ու գործիչները հույս ունեին, որ «*քույր Հայաստանի*»  
կոնցեպցիայի լայն տարածման շնորհիվ հայ ժողովուրդը հնա-  
րավորություն ու իրավունք կստանա ստանձնելու բողոքողի և  
իր սեփական, ամբողջական, ազատ և անկախ պետությունը  
պահանջողի դերը, ակնկալելով, որ այդ գործում կստանա  
«*քույր Ֆրանսիայի*» ոչ միայն և ոչ այնքան բարոյական, որ-

քան ռազմաքաղաքական օգնությունն ու աջակցությունը, 12) եղեռնի զոհ դարձած հայ ժողովրդի ողբերգության բարոյական հսկա ներուժը ֆրանսիական պետական քարոզչության կողմից իր գործնական արժեվորումն ու նպատակդրումն ստացան հայոց ցեղասպանության դատապարտման հայեցակարգային քարոզչության բարձրակետը հանդիսացող «ազատարար Ֆրանսիայի» մասին ավետող կոնցեպցիայում, որի օգնությամբ Ֆրանսիան քարոզում էր, որ ինքը միլիոնավոր մարդկանց համաշխարհային սպանդանոց է նետել հանուն մարտիրոս հայ ժողովրդի ազատագրման, հանուն «արդարության, իրավունքի և ազատության» հաղթանակի, 13) աշխարհամարտի վերջին տարիներին, հատկապես 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, արևմտահայության ցեղասպանությունը դատապարտող քարոզչությունը ֆրանսիական կառավարության կողմից հաջողությամբ օգտագործվեց իր կայսերապաշտ նպատակներին գաղափարապաշտական գունավորում տալու, ֆրանսիական հասարակության՝ երիտասարդության, հատկապես ֆրանսիական բանակի բարոյական ուժը և հաղթելու կամքը ամրապնդելու նպատակով, 14) Չբավարարելով ձեռք բերածով և անտեսելով այն ողբերգական իրողությունը, որ արևմտահայության ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը տվել էր միլիոնավոր զոհեր և գրեթե արյունաքամ էր եղել, մտքի ծայրով անգամ չանցկացնելով խնայելու և պահպանելու անմարդկային մեծագույն ոճրի զոհ դարձած ժողովրդի արյունը, Ֆրանսիան անմարդկային, սին ու խաբեպատիր խոստումների, երդումների, կոչերի ու հրավերների շնորհիվ հասավ այն բանին, որ անհագուրդ Մոլոխի նման, հանուն իր ծավալապաշտ շահերի, օգտագործեց արևմտահայության՝ հրաշքով փրկված մնացորդների, Եվրոպայի, Մերձավոր արևելքի ու Ամերիկայի հայկական սփյուռքի մարդկային ու ռազմական ներուժը:

Արխիվային և ոչ արխիվային, առանձնապես չեզոք երկրներում Ֆրանսիայի դիվանագիտական կառույցների 1915-1918թթ. գործունեությունն արձանագրող և արտացոլող փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը պարզում են այն ակնբախ իրողությունը, որ որդեգրելով հայոց ցե-

ղասպանության դատապարտման քարոզչությունը, Ֆրանսիան հսկայական և հետևողական, տեսանելի ու անտեսանելի ճիգ ու եռանդ է թափել նրա օգնությամբ և միջոցով չեզոք երկրներում իր հետապնդած բազմաբնույթ նպատակադրումներին հասնելու համար՝ այդ ճանապարհին ձեռք բերելով ակնհայտ հաղթանակներ :

Չեզոք երկրներում ֆրանսիական քարոզչական կառույցները լայնորեն տարածեցին պատմական ճշմարտությունը ոտնահարող, հայ ժողովրդին իրական փրկության ձեռք մեկնելու հնարավորությունից զուրկ Ֆրանսիայի պատկերը, ինչը Ֆրանսիային բարոյական իրավունք էր տալիս դիմել այդ երկրներին և նրանց հրավիրել ակտիվացնելու իրենց բողոքներն ու ճնշումները Թուրքիային «վեհապետորեն կառավարող» Գերմանիայի դեմ:

Առաջին աշխարհամարտի տարիներին բորբոքված գաղափարա-քարոզչական պատերազմում իր հաղթանակները կռելու, իր գլխավոր թշնամուն պարտության մատնելու, համաշխարտային հանրային կարիքի համակրանքը, գաղափարական ու գործնական աջակցությունը ձեռք բերելու, չեզոք երկրների կառավարություններին հակազերման քայլերի, ելույթների ու գործողությունների ծիրի մեջ առնելու համար Ֆրանսիան իր քարոզչական ինդուստրիայի ճիգերի ու եռանդի առյուծի բաժինը կենտրոնացրեց Շվեյցարիայում և ԱՄՆ-ում:

1915թ. աշնանը ֆրանսիական քարոզչությունն իր ակտիվում գրանցեց այն կարևոր հաղթանակը, որ հայ ժողովրդի գլխին պայթած աղետի դեմ բողոքի իր հզոր ձայնը բարձրացրեց ոչ միայն ռոմանական Շվեյցարիան, այլև գերմանական Շվեյցարիայի մամուլը, որը, պահանջեց աշխարհի հզոր տերություններից, և առաջին հեթին այդ ոճիրն արդարացնող Գերմանիայից դադարեցնել հայ ժողովրդի սխտեմատիկ բնաջնջումը:

Շվեյցարիայում հայոց ցեղասպանության դատապարտման միջոցով ու օգնությամբ գաղափարա-քարոզչական պատերազմ մղող ֆրանսիական քարոզչությունը զինակոչեց իր տրամադրության տակ եղած բոլոր ուժերն ու միջոցները հայ ժողովրդին զրպարտող և այդ հիման վրա արդարանալ ձգտող

թուրք-գերմանական քարոզչությանը հակազդելու համար:

Ֆրանսիական քարոզչությանը հաջողվեց, նախ, հասնել այն բանին, որ Շվեյցարիայի հայկական գաղութի բոլոր քաղաքական ուժերն իրենց համակարանքն ու գերապատվությունը հայտնեցին Ֆրանսիային, և ապա, շնորհիվ այդ հանգամանքի կարողացավ չեզոքացնել ու ձախողել գերմանա-թուրքական դիվանագիտության և քարոզչության այն բոլոր ծրագրերն ու ձեռնարկները, որոնց օգնությամբ նրանք նպատակ ունեին իրենց կողմը գրավել Շվեյցարիայի հայկական գաղութը:

1915թ. օգոստոս ամսից սկսած Ֆրանսիան հայկական ջարդերը Գերմանիայի կողմից կազմակերպված լինելու ամբաստանության հաղթաթուղթը ձեռքին անգիջում քարոզչական պայքար սկսեց հանուն Ամերիկայի Միացյալ Նահանգների հասարակական կարծիքի, քաջ գիտակցելով, որ այդ մարտադաշտում ձեռք բերած թե՛ հաղթանակը և թե՛ կրած պարտությունը կարող են բախտորոշ հետևանքներ ունենալ Ֆրանսիայի համար:

1916թ. աշնանը, Ֆրանսիան, հանրագումարի բերելով իր և իր դաշնակից բոլոր ուժերի՝ հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչության միջոցով ԱՄՆ-ի հանրային կարծիքի և ապա կառավարության դիրքորոշումների վրա ազդելու նպատակով ձեռնարկած աշխատանքները, գոհունակությամբ արձանագրեց, որ ԱՄՆ-ի և Գերմանիայի փոխհարաբերությունները վատթարացել ու սրվել էր այն աստիճան, որ պատերազմը կողմերի միջև դարձել էր անխուսափելի:

Անշուշտ, ասել ու պնդել թե՛ Ֆրանսիայի, Անգլիայի ու նրանց դաշնակից ու աջակից ուժերի կողմից հայոց ցեղասպանության դատապարտման օգնությամբ ձեռնարկած հետևողական և անգիջում քարոզարշավն է վճռական ազդեցություն գործել ամերիկյան կառավարության դիրքորոշումների վրա և իրենով պայմանավորել Գերմանիային պատերազմ հայտարարելու ամերիկյան վճիռը, անշուշտ, ճիշտ չէր լինի, քանզի ԱՄՆ-ի կառավարությունը մնան որոշում ընդունելու համար ավելի էական և կարևոր ռազմաքաղաքական ու տնտեսական դրդապատճառներ ունեւր:

Սակայն նույնչափ ճիշտ չի լինի, եթե շընդգծվի այն անվիճելի փաստը, որ Ֆրանսիայի և նրա դաշնակից հասարակական-քաղաքական ուժերի կողմից ձեռնարկած հայոց ցեղասպանության դատապարտման հետևողական և արդյունավետ քարոզչությունը դարձավ այն զլխավոր բարոյա-գաղափարական գործոնը, որը շատ բանով պայմանավորեց և «հիմնավորեց» ԱՄՆ-ի կառավարության՝ Գերմանիային պատերազմ հայտարարելու որոշումը, քանի որ ամերիկյան ժողովրդի լայն զանգվածների մեջ հայ ժողովրդի նկատմամբ համակրանքի ու կարեկցանքի, նրան օգնելու և աջակցելու լայնատարած մտեցումները, ոճրագործ այպանվող Գերմանիային պատժելու պահանջները դարձան այն բարոյական պատվարն ու նեցուկը, որոնք օգնեցին թե՛ ԱՄՆ-ի և թե՛ Անտանտի երկրների կառավարություններին իրենց մղած անարդարացի պատերազմին գաղափարապաշտ ու բարոյական նպատակներ վերագրել:

Հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչության ամերիկյան ծալքի ուսումնասիրությունը մեկ անգամ ևս բացահայտում է այն իրողությունը, որ այդ քարոզչությանը ակտիվորեն մասնակցած հայկական կողմի նպատակները ու ակնկալիքները միշտ չէ, որ համահունչ են եղել Ֆրանսիայի հետապնդած ռազմա-քաղաքական աննպատակադրումներին, ընդհակառակը, շատ դեպքերում դրանք կրել են տրամագծորեն հակադիր բնույթ:

Եվ իրոք, այնքանով, որքանով ֆրանսիական քարոզչությունը ձգտում էր ԱՄՆ-ի կառավարությանը և լայն հասարակայնությանը տեղյակ պահել հայերի ցեղասպանության ճշմարտության մասին, և հասնել հայ ժողովրդի նկատմամբ համատարած համակրանքի ու կարեկցանքի տարածմանը, այդքանով այն համապատասխանում էր հայկական կողմի ձգտումներին:

Սակայն այդ փուլից սկսած Ֆրանսիական պետական քարոզչության և նրան օգնելու համար իր քարոզչական ներուժն ու բարոյական աջակցությունը տրամադրող հայկական կողմի նպատակադրումներն ու ակնկալիքները սկսում էին իրարից տարանջատվել և նույնիսկ հակադրվել իրար:

Ֆրանսիան, խորապես գոհ ու բավարարված էր, որ տնտեսական ու ռազմական մեծ հզորության տեր ԱՄՆ-ը պատերազմի մեջ էին մտնում իր և իր դաշնակիցների կողմում, և նրան բոլորովին չմտահոգեց այն հանգամանքը, որ այդ դեպքում տարագիր հայությունը կորցնում էր իր միակ հովանավորին ու հենարանին:

Ավելին, Ֆրանսիան ամեն ինչ արեց, որ ԱՄՆ-ն իրենց բանակներով առաջին հերթին օգնության հասնեին արևմտյան ճակատին, և որքան հնարավոր է հեռու մնային իր տարածքային նկրտումների շրջաններից՝ Թուրքիայի միջերկրածովյան շրջաններից և նավթով հարուստ տիրույթներից, վախենալով որ հաղթանակներ տանելու դեպքում ԱՄՆ-ը, նախ, ֆրանսիական զորքերի բացակայության պայմաններում, ձեռք կբերեին այդ շրջանների ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի «ազատարարի» լուսապսակը, և ապա, տարածքները գրավողի իրավունքով կարող էին ընդհանրապես չհեռանալ՝ ստանալով ազատագրված ժողովուրդների բարոյական օրհնությունն ու ռազմական աջակցությունը:

Այս ամենը պարզ ու ակնհայտ է դարձնում այն անվիճելի և ցավալի իրողությունը, որ հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական լայնածավալ քարոզչության միջոցով ձեռք բերված ռազմաքաղաքական արդյունքները, որոնց ձեռք բերման գործին ակտիվորեն մասնակցել, օգնել ու աջակցել էին նաև հայկական ամենատարբեր ուժերն ու կազմակերպությունները, ոչ մի կերպ չբավարարեցին ու չարդարացրին հայկական կողմի էական ու գլխավոր նշանակություն ունեցող ակնկալիքներն ու սպասելիքները, և ընդհակառակը, հայկական կողմի ձգտումներն ու նպատակները երբեք իր քաղաքական առաջնահերթությունների մեջ չընդգրկող Ֆրանսիան այդ արդյունքներն ամբողջովին ծառայեցրեց իր հետապնդած թե՛ գաղափարա-բարոյական և թե՛ ռազմա-քաղաքական շահերին՝ հայ ժողովրդին թողնելով այն եթերային հույսով մխիթարվելու մենաշնորհը, որ գոնե վերջնական կարգավորման ժամանակ Ֆրանսիան ու իր դաշնակիցները կանեն ամեն ինչ, որպեսզի հայ ժողովուրդը ազատագրվի թուրքական լծից:

Պարզապես այս դեպքում ևս Ֆրանսիան ապացուցում

էր, որ հայ ժողովրդի նկատմամբ որդեգրած նրա ողջ քաղաքականությունն, ընդհանրապես, և հայոց ցեղասպանության դատապարտման քարոզչական քաղաքականությունը, մասնավորապես, առաջին աշխարհամարտի տարիներին կրել է բացարձակ գիշատչային բնույթ, որ Ֆրանսիան ոչ մի կերպ չի հաշտվել և ըմբռնումով չի վերաբերվել բոլոր այն քաղաքական ու ռազմական զարգացումների հետ, որոնք կարող էին իրական և շոշափելի արդյունքներ բերել իր գոյության համար մաքառող հայ ժողովրդին, սակայն քաղաքական, ռազմական և գաղափարա-բարոյական շահաբաժիններ չբերել Ֆրանսիային:

Անշուշտ, առաջին աշխարհամարտի տարիներին հայոց ցեղասպանության նկատմամբ Ֆրանսիայի որդեգրած ռազմական, քաղաքական, դիվանագիտական, և առանձնապես քարոզչական քայլերի, ձեռնարկումների և դիրքորոշումների էության ու բովանդակության փաստարկված վերլուծությունն գիտական և ճանաչողական նշանակությունից զատ ունի նաև շատ մեծ ու անժխտելի գործնական-արդիական կարևորություն:

Ժամանակակից Ֆրանսիայում, և մի շարք այլ երկրներում, հայոց ցեղասպանության դատապարտման շուրջը ծավալված քարոզչության նկատելի ակտիվության պայմաններում անցյալի դառը փորձի փաստարկված իմացությունը մեզանից հրամայաբար պահանջում է խուսափել սեփական ձեռքերով, սեփական շահերի ու դատի հաշվին, ուրիշների համար կրակից շագանակներ հանելու հերթական գայթակղությունից, անտեղի ոգևորությունից և ոչ իրական հուսադրումներից, հայ ժողովրդին օտար շահերի և նպատակների համար ձեռնարկած քարոզչության ծուղակի մեջ ընկնելուց: Այդ փորձի իմացությունը մեզանից հրամայաբար պահանջում է նաև հասկանալ, որ մեր օրերում ևս նոր փորձեր են արվում հայերի ցեղասպանության դատապարտման հսկայական բարոյական ներուժը հերթական անգամ օգտագործելու ոչ թե հանուն հայ ժողովրդի արդար և օրինական ձգտումների, այլ առաջին հերթին իրենց շահադիտական նպատակադրումների:

Հայոց ցեղասպանության շուրջը այսօր Ֆրանսիայում ծավալվող քաղաքական քարոզչությունն ունեցել է իր ակունք-

ները և պտմությունը, որոնք մեզ հուշում և հորդորում են, որ մինչ այդ գործընթացի նկատմամբ մեր վերաբերմունքը ճշտելը, մինչ նրան «վստահության» և «հավանության» մեր քվեն տալը, անհրաժեշտ է պարզել թե ինչու<sup>օ</sup>, ի՞նչ դրդապատճառներից ելնելով և ի՞նչ նպատակադրումներով է այսօր ակտիվացել հայոց ցեղասպանության դատապարտման ֆրանսիական քարոզչությունը, թե ի՞նչ է տալիս այդ քարոզչական ակտիվությունը հայ ժողովրդին, թե որքանով և ինչ չափով են նրա կողմից կարևորվում և առաջնահերթ սեպվում հայ ժողովրդի շահերը, թե ինչու XXդ. մեծագույն ոճիրը որակելիս նրանք հանուն դեռևս մեզ մութ մնացող ինչ-ինչ քաղաքական ու այլ կարգի առաջնահերթությունների, անտեսում են պատմական ճշմարտությանը հաստատագրված իրողությունները, թե ինչու նրանք անտեսում են ֆրանսիացի հայասերների արժանավոր հետևորդներ հանդիսացող այն գիտնականների ու քաղաքական գործիչների առաջարկները, որոնք պահանջում են չբավարարվել հայոց ցեղասպանության հարցում կիսատ-պռատ, հայ ժողովրդի էական շահերն անտեսող որոշումներով ու բանաձևերով, այլ ցուցաբերել պատմական ճշմարտությունը հարգելու և հայ ժողովրդի էական շահերը չանտեսող հետևողականություն և արմատականություն՝ հայոց ցեղասպանության պատասխանատուների ուղղակի մատնանշում, հայ ժողովրդին արդարացի փոխհատացում տալու անհրաժեշտություն, Մեծ եղեռնի տեղի ու ժամանակագրության հստակեցում:

Անցյալի դառը, հիասթափություններով և հուսալքումներով լի, պարզաբանված և փաստարկված փորձը այսօր մեզ ուսուցանում, ահազանգում և զգուշացնում է, որ առանց վերոբերյալ հարցադրումների ճշգրտման անհնար է որդեգրել հավասարակշիռ, մեզ նոր հիասթափություններից և հուսախաբություններից զերծ պահող դիրքորոշումներ:

**ERVAND GASPARIAN**  
**La France et le Grand Génocide Armenien**  
**(1915-1918)**  
(résumé)

A l'étude de ce problème de base ayant une grande importance historique et d'actualité a servi pour base la riche documentation de caractéristique que l'auteur a recueillie dans les archives des Ministères des Affaires Etrangères de Russie, à la chancellerie d'Etat d'Histoire d'Arménie, dans les fonds du musée de Littérature et d'Art Tcharents, dans la presse arménienne et française de l'époque, dans les recueils de documentations d'archives publiés et dans la littérature de mémoires.

Y sont aussi étudiés et examinés impartialement et scientifiquement les œuvres des auteurs arméniens et français liées de tel ou tel manière avec le problème étudié et dont les acquisitions scientifiques ont contribué à l'éclaircissement et à la résolution de beaucoup de problèmes étudiés dans l'ouvrage cité ci-dessous.

Dans le premier chapitre, "La France et le Grand génocide Arménien (1914-1916)", l'auteur a mis à jour et a commenté les problèmes suivants ayant une importance considérable pour l'étude du problème sous tous les aspects.

a) Quand et dans quelles conditions a apparu le problème du sauvetage des Arméniens de l'Arménie Occidentale et, premièrement, de ceux de Cilicie?

b) C'était sous la dictée de quels arguments de base qu'une partie considérable des dirigeants politiques arméniens se sont adressés avec toutes leurs orientations à celle de France et se sont attendus à leur soutien politico-militaire et diplomatique pour conjurer l'extermination physique des Arméniens occidentaux ou pour limiter ses frontières?

c) Quels étaient les buts politico-militaires français ayant une importance primordiale pendant la guerre, et dans quel rapport se sont trouvés avec eux la question arménienne en général et le

problème du sauvetage des Arméniens de l'extermination physique, particulièrement?

d) Quels rôle et influence ont eu la non-conformité et la concurrence interalliée anglo-françaises et franco-russes dans l'adoption par la France des directions mesurées, négatives et d'oppositions diplomatiques dont la réalisation comprenait en elle le sauvetage des Arméniens de l'extermination physique ou les possibilités réelles de limiter considérablement les englobements du génocide, et enfin,

e) Quelles démarches a faites la France pour inciter les forces politiques et organisations dirigeantes arméniennes à des orientations et actions politiques ayant des résultats non favorables pour le peuple arménien?

Dans le deuxième chapitre, "La propagande officielle française et le Grand génocide (1915-1918)", sont analysés sur des faits réels et appréciés les questions et problèmes suivants:

a) Dans quels buts intéressés la France a-t-elle apprécié et réalisé avec un grand zèle la propagande de la condamnation du génocide arménien?

b) Quelles sont les bases de documentations sur lesquelles la France a organisé sa campagne de propagande prouvant le fait du Grand génocide, et quels étaient ses critères d'approche de recueils, de choix et d'appréciations des documents?

c) Quelles étaient les bornes de convergence et de différence que l'image réelle du génocide arménien avait avec celle présentée par la propagande française?

d) Quelles conceptions principales étaient développées par les "fourgerons" de la forge propagandiste française à l'aide même desquels ils ont accompli leurs buts avec de multiples plans et hétérogènes liés avec la propagande de la condamnation du génocide arménien?

e) Quel système de propagande a créé la France pour la propagande de la condamnation effective et active du génocide arménien?

f) Quels espoirs et attentes avaient les organisations et forces arméniennes politiques ayant une part active dans la

propagande française de la condamnation du génocide arménien?

g) Et enfin, quelles leçons sont possibles et nécessaires à tirer de cette étude d'aspect de l'histoire du génocide arménien?

Dans le troisième chapitre, "La France et la propagande de la condamnation du génocide arménien dans les pays neutres", sont étudiés en détail et ont trouvé leurs explications les problèmes suivants:

a) Quelle activité de propagande et de diplomatie a développée la France pour influencer sur l'opinion publique et l'orientation d'Etat des pays neutres par sa propagande de la condamnation du génocide arménien, dans les buts d'isolement international et de compromis de l'Allemagne?

b) Quels desseins politico-militaires, idéologiques et de moral étaient poursuivis par la France dans les pays neutres, surtout aux Etats-Unis et en Suisse par sa propagande sur une grande échelle de la condamnation du génocide arménien?

c) Avec quelles forces politiques et non politiques s'est alliée et a collaboré la France dans le but de développer la propagande de la condamnation du génocide arménien et à l'aide de celui-ci de résoudre ses problèmes dans les pays neutres?

d) Quelle participation ont eu les forces et organisations politiques arméniennes dans la campagne de propagande de la condamnation du grand génocide arménien dans ces pays-là?

e) Quels sont les efforts, les méthodes et les entreprises propagandistes que l'industrie de la propagande française a utilisés dans les pays neutres pour neutraliser celles de l'Allemagne et de la Turquie et pour démontrer leur insolvabilité et la pauvreté de leur propagande antiarménienne?

f) Et enfin, quel est le rôle de la propagande de la condamnation successive et effective du Grand génocide Arménien de la France sur les scènes d'hostilités de guerre idéologique et propagandiste, premièrement, pour infliger une défaite à l'Allemagne et, deuxièmement, pour rendre prisonnière d'illusions politiques une grande partie du peuple arménien?

Ներածություն.....3-28

Վերջաբան.....291-304

**Գլուխ I. Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1914 - 1916 թ.թ.)**

§1. Ֆրանսիայի պայքարը Կիլիկիայում ռազմա-  
կատ քացելու դեմ և արևմտահայության գոյության  
խնդիրը.....29-82

§2. Ֆրանսիական դիվանագիտությունը և արևմտա-  
հայության ցեղասպանությունը .....82-88

§3. Ֆրանսիայի քաղաքական նպատակները և Մեծ  
եղեռնը..... 88-105

Ամփոփում (ֆրանս.) .....305-307

**Գլուխ II. Ֆրանսիական պաշտոնական քարոզչությունը և  
Մեծ եղեռնը**

§1. Ֆրանսիական քարոզչությունը և հայոց ցեղա-  
սպանության դատապարտման փաստաթղթային  
ժողովածուի ստեղծումը..... 106-138

§2. Ֆրանսիայի գաղափարաքաղաքական նպա-  
տակադրումները և հայոց ցեղասպանության հայե-  
ցակարգային մեկնաբանությունները

ա) Մեծ եղեռնի պատասխանատվության հիմնա-  
հարցը և «գաղիական» հայեցակարգը .....139-164

բ) «Քույր Հայաստանի», «ազատարար Ֆրանսի-  
այի» հայեցակարգերը և նրանց գործառնություննե-  
րը.....165-204

**Գլուխ III. Ֆրանսիան և հայոց ցեղասպանության դատա-  
պարտման քարոզչությունը չոզոք երկրներում**

§1. Ֆրանսիայի գաղափարա-քարոզչական գործու-  
նությունը ԱՄՆ-ում և հայոց ցեղասպանու-  
թյունը.....205-249